# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎ. ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1–2 (67–68). 2011

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

**«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»**

**«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**

## ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

## СОВЕРШЕНСТВОВАНИЕ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ

## IMPROVEMENT OF THE TROOP STRUCTURE

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը
ելույթ է ունենում
Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում.
Ստրասբուրգ, 2011 թ. հունիսի 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

**1–2** (67–68). **2011**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Քոթանջյան Հ. Ս.**
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակաահաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)

**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)

**Այդինյան Ռ. Ա.**
**Ապրիամով Է. Ա.**
**Ավետիսյան Վ. Պ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
**Բաբայան Ն. Մ.**
**Գասպարյան Վ. Ս.**
**Գասպարյան Տ. Շ.**
**Դավթյան Ա. Մ.**
**Թունյան Վ. Վ.**
**Իսախանյան Մ. Ռ.**
**Խաչատուրով Յու. Գ.**
**Կարապետյան Մ. Ն.**
**Կարապետյան Մ. Ս.**
**Մաթևոսյան Ի. Ժ.**
**Մարգարյան Վ. Հ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
**Մարտիրոսյան Ս. Ս.**
**Մարտիրոսով Լ. Ա.**
**Միրզաբեկյան Ա. Ռ.**
**Նազարյան Ա. Ս.**
**Սեդրակյան Ս. Գ.**
**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
**Տոնոյան Դ. Է.**
**Փարսադանյան Ա. Մ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

*ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի* ելույթը ՀՀ ԶՈՒ-ի երիտասարդ սպաների համաբանակային առաջին համաժողովում . . . . . 9

*Յու. Գ. Խաչատուրով,* Զորային կառույցի բարեփոխումները՝ որպես ՀՀ պաշտպանական բարեփոխումների գերակա խնդիր . . . . . 11

*Ա. Մ. Դավթյան,* Զորքերի օպերատիվ պատրաստման որոշ հարցեր զորային կառույցի բարեփոխումների տեսանկյունից . . . . . 26

*Լ. Ա. Մարտիրոսով,* Զորային կառույցի կատարելագործման առաջադիմական մոդելների հարցի շուրջ . . . . . 35

*Լ. Գ. Այվազյան,* Եվրոպական զորային կառույցների և ռազմական արվեստի զարգացման դինամիկան պատմական հոլովույթում . . . . . 44

*Ա. Ռ. Ավետիսյան,* Զինվորա-քաղաքացիական հարաբերությունների որոշ մոդելներ ՀՀ զորային կառույցի արդիականացման տեսանկյունից . . . . . 62

*Վ. Պ. Ավետիսյան, Մ. Ա. Փարվանյան,* ՀՀ հանրային կառավարման, տնտեսական և իրավական համակարգերին զորային կառույցի կառուցվածքային և գործառութային ներդաշնակեցման որոշ հարցեր . . . . . 74

*Ա. Մ. Պետրոսյան,* ԶՈՒ-ի ղեկավարման միջազգային փորձը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զինված ուժերի օրինակով . . . . . 83

*Տ. Մ. Անտոնյան,* Իրանի Իսլամական Հանրապետությունում տարածքային պաշտպանության կազմակերպման որոշ հարցեր ՀՀ զորային կառույցի բարեփոխման տեսանկյունից . . . . . 97

**ՀԱՊԿ-Ի ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

*Հ. Ս. Քոթանջյան,* ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության նոր ռազմավարական հայեցակարգի մշակման մասին . . . . . 107

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*Մ. Մ. Մարգարյան,* Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը» . . . . . 116

## ՏԵՂԵԿՈՒԹՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Կ. Ռ. Մուրադյան, Ա. Ա. Մուրադյան,* Ազգային անվտանգության դեմ ուղղված համակարգչային սպառնալիք . . . . . 129

## ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Ա. Հ. Բաղիյան,* Պինդ վառելիքով հրթիռային շարժիչների օպտիմալացման մեթոդիկա . . . . . 143

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

*Ա. Ս. Սեդրակյան,* Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի Երրորդ Հանրապետությունում . . . . . 152

## ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

*Գ. Վ. Թունյան, Ա. Մ. Փարսադանյան, Գ. Ս. Ոսկանյան և ուրիշներ,* Ստամոքսամուտքային-կերակրափողային անցումի քաղցկեղի վիրահատական բուժման փորձից . . 163

*Ա. Պ. Հակոբյան, Ա. Գ. Դանիելյան, Ս. Գ. Սեհինյան,* Մաշկանց ողնապլաստիկան՝ որպես ողնաշարի հենաշարժողական ֆունկցիայի վերականգնման մեթոդ . . . . . 167

*Լ. Ս. Ժամագործյան, Ա. Ս. Գալստյան,* ՀՀ ՊՆ ԿԿԶՀ-ում կոնքի ոսկրերի կոտրվածքի վիրահատական բուժման դեպքի նկարագրություն . . . . . 171

*Գ. Վ. Թունյան, Ա. Մ. Փարսադանյան, Ա. Ս. Զոհրաբյան և ուրիշներ,* Ստամոքսամուտքի ախալազիայի վիրահատական բուժման հարցի շուրջ . . . . . 175

*Լ. Ռ. Ավետիսյան, Լ. Գ. Հովհաննիսյան, Ա. Հ. Քոթանյան,* ՀՀ տարբեր կլիմայական գոտիներում տեղակայված զորամասերի ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում եղանակազգայուն հակազդումների տարածվածությունը և առանձնահատկությունները . . . . . 178

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ս. Ա. Անտոնյան,* Արտաքին ու ներքին գործոններով խթանվող շարժառիթների և հուզական սպառման համախտանիշի փոխպայմանավորվածությունը հրամանատարի գործունեության արդյունավետության համատեքստում . . . . . 194

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

*Վ. Հ. Տեր-Մաթևոսյան,* Թուրքիայում 2011 թվականի խորհրդարանական ընտրությունները . . . . . 205

*Լ. Ռ. Մովսիսյան,* Ընդհանուր թյուրքական լեզվի գաղափարը թուրք-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում. ադրբեջանական մոտեցումներ . . . . . 217

*Մ. Մ. Աբրահամյան,* Կասպից ծովի անվտանգության համակարգը տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների համար մրցակցության համատեքստում . . . . . 227

## ՀԱՅԱԶԳԻ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

*Կ. Ռ. Փահլևանյան,* 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական բանակի հրետանային զորքերի հայ գեներալները. մարտական ուղին . . . . . 247

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Ք. Վ. Փիրոյան, Դ. Ս. Չիլինգարյան,* Համարի բառարան . . . . . 255

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 1—2** (67—68)**. 2011**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Котанджян Г. С.*, доктор политических наук (РФ), Действительный член Российской Академии военных наук, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. П.* (зам. гл. редактора), *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Бабаян Н. М.*, *Гаспарян В. С.*, *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*, *Карапетян М. С.*, *Маргарян В. Г.* (зам. гл. редактора), *Мартиросов Л. А.*, *Мартиросян С. С.*, *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*, *Парсаданян А. М.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Тунян В. В.*, *Хачатуров Ю. Г.*

## СОДЕРЖАНИЕ

### ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: СОВЕРШЕНСТВОВАНИЕ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ

Выступление *Президента РА Сержа Саргсяна* на Первом общеармейском форуме молодых офицеров ВС РА . . . . . 9

*Ю. Г. Хачатуров.* Реформирование войсковой структуры—приоритетная задача оборонных реформ в РА . . . . . 11 (23)*

*А. М. Давтян.* Некоторые вопросы оперативной подготовки войск с точки зрения реформирования войсковой структуры . . . . . 26 (33)

*Л. А. Мартиросов.* К вопросу о прогрессивных моделях совершенствования войсковой структуры . . . . . 35 (41)

*Л. Г. Айвазян.* Динамика развития европейских войсковых структур и военного искусства в историческом измерении . . . . . 44 (58)

*А. Р. Аветисян.* Некоторые модели военно-гражданских отношений в аспекте модернизации войсковой структуры РА . . . . . 62 (71)

*В. П. Аветисян, М. А. Парванян.* Некоторые вопросы структурной и функциональной гармонизации войскового звена с системой государственного управления и экономической и правовой системами РА . . 74 (80)

*А. М. Петросян.* Международный опыт руководства ВС на примере Вооруженных сил Федеративной Республики Германия . . . . . 83 (94)

*Т. М. Антонян.* Некоторые вопросы организации территориальной обороны в Исламской Республике Иран в аспекте реформирования войсковой структуры РА . . . . . 97 (103)

### МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ ОДКБ

*Г. С. Котанджян.* О разработке новой стратегической концепции коллективной безопасности ОДКБ . . . . . 107

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

**ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ**

*М. М. Маргарян.* Проблемы модернизации системы глобальной безопасности и «Армянский мир» . . . . . 116 (126)

**ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*К. Р. Мурадян, А. А. Мурадян.* Компьютерная угроза национальной безопасности . . . . . 129 (141)

**ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ**

*А. А. Багиян.* Методика оптимизации ракетных двигателей твердого топлива . . . . . 143 (150)

**ВОЕННОЕ ПРАВО**

*А. С. Седракян.* Перспективы правового обеспечения национальной безопасности в Третьей Республике Армения . . . . . 152 (161)

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*Г. В. Тунян, А. М. Парсаданян, Г. С. Восканян и др.* Из опыта хирургического лечения рака кардиоэзофагеального перехода . . . . . 163 (184)

*А. П. Акопян, А. Г. Даниелян, С. Г. Сеинян.* Перкутантная вертебропластика как метод восстановления опорно-двигательной функции позвоночника . . . . . 167 (185)

*Л. М. Жамагорцян, А. С. Галстян.* Описание случая оперативного лечения перелома костей таза в ЦКВГ МО РА . . . . . 171 (186)

*Г. В. Тунян, А. М. Парсаданян, А. С. Зограбян и др.* К вопросу хирургического лечения ахалазии кардии . . . . . 175 (187)

*Л. Р. Аветисян, Л. Г. Оганисян, А. Г. Котанян.* Распространенность и особенности метеопатических реакций среди военнослужащих срочной службы войсковых частей, расположенных в различных климатических зонах РА . . . . . 178 (188)

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ**

*С. А. Антонян.* Взаимообусловленность внутренне стимулируемых и внешне стимулируемых мотивов и синдрома эмоционального выгорания в контексте эффективности деятельности командира . . . . . 194 (203)

**РЕГИОНАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ**

*В. А. Тер-Матевосян.* Парламентские выборы 2011 года в Турции . . 205 (239)

*Л. Р. Мовсисян.* Идея общего тюркского языка в контексте турецко-азербайджанских отношений. Азербайджанские подходы . . . . . 217 (240)

*М. М. Абраамян.* Система безопасности Каспийского моря в контексте соперничества за энергетические ресурсы региона . . . . . 227 (241)

**АРМЯНЕ-ПОЛКОВОДЦЫ**

*К. Р. Пахлеванян.* Армяне-генералы артиллерийских войск Российской армии конца XIX—начала XX вв.: боевой путь . . . . . 247 (252)

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, К. В. Пироян, Д. С. Чилингарян.* Словарь номера . . . . . 255 (257)

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**№ 1—2** (67—68)**. 2011**
Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Kotanjian H. S.,* Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apreamov E. A.,*
*Avetisyan V. P.* (Deputy Editor-in-Chief), *Babayan N. M., Davtyan A. M.,*
*Gasparyan T. Sh., Gasparyan V. S., Idynyan R. A., Isakhanyan M. R.,*
*Karapetyan M. N., Karapetyan M. S., Khachatourov Yu. G.,*
*Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S., Martirossov L. A.,*
*Matevossyan I. Zh., Mirzabekyan A. R., Nazaryan A. S., Parsadanyan A. M.,*
*Sedrakyan S. G., Ter-Grigoryants N. G., Tonoyan D. E., Tounyan V. V.*

## CONTENTS

**THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: IMPROVEMENT OF THE TROOP STRUCTURE**

The speech of the *RA President Serzh Sargsyan* at the First All-Army Congress of Young Officers of the RA Armed Forces . . . . . 9

*Yu. G. Khachaturov*. Reformation of the troop structure as a priority task of the RA defense reforms . . . . . 11 (24)*

*A. M. Davtyan.* Some issues of the troops' operational training in terms of troop structure reformation . . . . . 26 (34)

*L. A. Martirosov*. On the issue of advanced models for the improvement of the troop structure . . . . . 35 (42)

*L. G. Ayvazyan*. The dynamics of the European troop structure and military art development in the historical dimension . . . . . 44 (60)

*A. R. Avetisyan.* Some models of civil-military relations in the aspect of the RA troop structure modernization . . . . . 62 (72)

*V. P. Avetisyan, M. A. Parvanyan.* Some issues of the structural and functional harmonization of the troop level with the RA system of public administration and the economic and legal systems . . . . . 74 (81)

*A. M. Petrosyan*. The international experience of the Armed Forces guidance after the example of the Armed Forces of the Federal Republic of Germany . . . . . 83 (95)

*T. M. Antonyan.* Some issues on organizing the territorial defense in the Islamic Republic of Iran in the aspect of reformation of the RA troop structure . . . . . 97 (104)

**CSTO INTERNATIONAL CONFERENCE**

*H. S. Kotanjian.* On the elaboration of a new strategic concept of the collective security of the CSTO . . . . . 107

* Numbers in brackets mean the page of the text in English.

**POLITICAL SCIENCE OF SECURITY**

*M. M. Margaryan.* The problems of global security system's modernization and the «Armenian World» . . . . . 116 (127)

**INFORMATION SECURITY**

*K. R. Muradyan, A. A. Muradyan.* Computer threat to national security . . . . . 129 (142)

**MILITARY ENGINEERING**

*A. H. Baghiyan.* The method of optimizing the solid propellant rocket engines . . . . . 143 (151)

**MILITARY LAW**

*A. S. Sedrakyan.* Perspectives for legal support of national security in the Third Republic of Armenia . . . . . 152 (162)

**MILITARY MEDICINE**

*G. V. Tunyan, A. M. Parsadanyan, G. S. Voskanyan and others.* From the experience of the surgical treatment of cardioesophageal passage cancer . . . . . 163 (189)

*A. P. Hakobyan, A. H. Danielyan, S. G. Sehinyan.* Percutaneous vertebroplasty as a method of reconstructing the locomotive function of spine . . 167 (190)

*L. M. Zhamagortsyan, A. S. Galstyan.* The description of the case of surgical treatment of pelvic fracture in the Central Clinical Military Hospital of the Ministry of Defense of the Republic of Armenia . . . . . 171 (191)

*G. V. Tunyan, A. M. Parsadanyan, A. S. Zohrabyan and others.* To the problem of the surgical treatment of cardial achalasia . . . . . 175 (192)

*L. R. Avetisyan, L. G. Hovhannisyan, A. H. Qotanyan.* The prevalence and peculiarities of meteopathic reactions among draftees in military units located in different climatic zones of the Republic of Armenia . . . . . 178 (193)

**MILITARY PSYCHOLOGY**

*S. A. Antonyan.* Interdependence of extrinsic and intrinsic motivations and the emotional burnout syndrome in the context of the efficiency of commander's activity . . . . . 194 (204)

**REGIONAL PROCESSES**

*V. H. Ter-Matevosyan.* Parliamentary elections of 2011 in Turkey . . . 205 (243)

*L. R. Movsisyan.* The idea of a common Turkic language in the context of Turkish-Azerbaijani relations. Azerbaijani approaches . . . . . 217 (244)

*M. M. Abrahamyan.* The security system of the Caspian Sea in the context of the rivalry for energy resources of the region . . . . . 227 (245)

**GENERALS OF ARMENIAN ORIGIN**

*K. R. Pahlevanyan.* The Generals of Armenian origin of the Russian Army's artillery troops in the late 19th and early 20th centuries: combat path . . . . . 247 (253)

**MILITARY TERMINOLOGY**

*N. S. Mkrtchyan, L. H. Papikyan, Q. V. Piroyan, D. S. Chilingaryan.* Volume Dictionary . . . . . 255 (259)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

# ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: СОВЕРШЕНСТВОВАНИЕ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ

# THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: IMPROVEMENT OF THE TROOP STRUCTURE

# ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀՀ ԶՈՒ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՊԱՆԵՐԻ ՀԱՄԱԲԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

(Երևան, 2011 թ. հուլիսի 9)

*Հարգելի՛ սպաներ,*

*ՈՒրախ եմ մասնակցելու Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի երիտասարդ սպաների համաբանակային 1-ին համաժողովին: Ողջունում եմ բոլորիդ: Խիստ կարևորում եմ համաժողովի կազմակերպման փաստը և մաղթում, որ այն իսկապես լինի արդյունավետ ու դառնա ավանդական:*

*Այսօր ուզում եմ ձեզ մի քանի պատգամ հղել, որ կարևոր եմ համարում հատկապես իրենց առաջին քայլերն անող երիտասարդ սպաների համար:*

Առաջին. *ժամանակակից բանակների սպաների նախատիպերը միջնադարյան Եվրոպայում ասպետներն էին, Հայաստանում՝ նախարարական և իշխանական տների ներկայացուցիչները: Ազգի զինվորականության կորիզը տվյալ ազգի ազնվականությունն էր: Չկա այդ կազմակերպված ուժը՝ չկա պետություն: Թվում է, թե 21-րդ դարում պատմական այս զուգահեռները հնացած են: Բայց սա մակերեսային տպավորություն է: Կարդացեք միջնադարում հայերի տված ճակատամարտերի ցանկացած նկարագրություն և կտեսնեք, որ ամենապատասխանատու կետերում ազնվական տների զավակներ էին, որոնք պաշտպանում էին բառի ուղղակի իմաստով իրենց հոր տան պատիվը, բայց մեծ հաշվով՝ հայրենիքը: Իմ առաջին պատգամն է ձեզ՝ հիշել, որ ձեր՝ երիտասարդ սպաներիդ ուսերին այսօր նույն պատասխանատվությունն է և նույն առաքելությունը՝ պաշտպանել հայրական տան պատիվը, այսինքն՝ հայրենիքը: Այո՛, փոխվում են դարաշրջաններն ու իրողությունները, բայց ազնվականության առաքելության այսօրվա կրողները, ռազմական ավանդույթների ժառանգորդը դուք եք: Եթե չեք, պետք է դառնաք:*

Երկրորդ. *այդ ժառանգությունը ենթադրում է համապատասխան վարք ու կեցվածք: Մեր հասարակությունը գրեթե մոռացել է, որ սպայությունը բարձրագույն կրթություն ստացած մտավորականություն է: Այո՛, ձեր գործը խիստ առանձնահատուկ է, բայց, միևնույն է, դուք ազգի մտավորականության կարևոր թևն եք: Մեր հասարակության ընկալումներից, առաջին հերթին ձեր շնորհիվ, պիտի արմատախիլ արվի բռի և անտակտ զինվորականի կերպարը, մանավանդ որ կառավարչական գործառույթ եք նաև իրականացնում: Դուք մտավորականներ եք: Եթե չեք, պետք է դառնաք:*

Երրորդ. *սպայականությունը պետության ողնաշարն է: Այն ամուր է և ուղիղ այնքան, որքան նրա սպայականությունը: Որևէ երկրի ողնաշարը ջարդելու մի ճանապարհ կա՝ ոչնչացնել սպայականությունը: Սա նշանակում է, որ դուք մտավորականության այն թևն եք, որը թշնամու առաջին թիրախն է: Այսպիսով՝ դուք եք հայրենիքի առաջին պատվարը, և մենք՝ իշխանություն ու ժողովուրդ, գիտենք դա: Գիտենք և ձեզ համար պատրաստ ենք անելու հնարավորն ու անհնարինը: Առաքելություն իրականացնելու*

*առումով դուք մեր հասարակության ամենապատրաստված շերտն եք թե՛ հոգեբանորեն, թե՛ գիտելիքներով, թե՛ ֆիզիկապես: Եթե չեք, պետք է դառնաք:*

*Չորրորդ. կարգապահություն, խիզախություն, մարզվածություն, կրթվածություն. սրանք պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններ են հայ սպայի նկարագիրն ամբողջացնելու համար: Կա հինգերորդը՝ հաղթողի հոգեբանությունը: Ձեր շուրջն ապրում և հաճախ ձեր կողքին ծառայում են Արցախյան ազատամարտի փառավոր հաղթանակները կռած մարտիկներ: Նրանք գիտեն, թե դա ինչ է: Ձեր սրբազան պարտականությունն է ավագ սերնդից ընդունել նաև ա՛յդ հերթափոխը: Հիշե՛ք՝ թշնամին ձեզնից վախենում է, որովհետև աչքի առաջ ունի ձեր հայրերի և ավագ եղբայրների օրինակը: Այսօրվա ու վաղվա օրինակը դուք եք: Եթե չեք, պետք է դառնաք:*

*Հարգելի՛ սպաներ,*

*Վերջին պատերազմում հայ ռազմիկի հարվածներից խորտակվել են բոլոր ամրությունները: Այդ հարվածների թափը թշնամու շարքերում սերմանել է խուճապ և հուսահատություն: Արդյունքում նույնիսկ շարքեր չեն մնացել: Մենք պարբերաբար տեսել ենք անկանոն փախուստի մատնված թշնամու թիկունքը: Մեր կրակահերթերն ու համազարկերը մարդու և ազգի ազատության, մարդու և ազգի արժանապատվության փառաբանումներ էին: Մեր ռազմիկների հարաբերությունները՝ հրամանատարներից մինչև զինվորներ, ընկերասիրության, փոխօգնության ու զենքի եղբայրության դասագրքային օրինակներ էին:*

*Մենք չենք ընկրկել ո՛չ անփորձ նորակոչիկների, ո՛չ փորձված վարձկանների և ո՛չ էլ հակառակորդի բազմապատիկ ավելի գլխաքանակի առաջ: Դրանք մեզ համար զգոնության լրացուցիչ ազդակներ էին:*

*Այո՛, մենք հաղթեցինք տևական, ծանրագույն և անհավասար պատերազմում: Ոմանք «անհավասար պատերազմ» ասելով նկատի ունեին այն իրողությունը, որ Ադրբեջանն ուներ ավելի շատ փող, ավելի շատ տեխնիկա և կենդանի ուժ: Դա ճիշտ է, բայց ինձ համար պատերազմն անհավասար էր, որովհետև ուժեղը կռվում էր թույլի դեմ, և ուժեղը մենք էինք: Ազատասերը կռվում էր զավթիչի դեմ, և ազատասերը մենք էինք: Արդարը կռվում էր անարդարի դեմ, և արդարության մարմնավորումը մենք էինք:*

*Այսօր էլ մենք խաղաղության կողմնակիցն ենք, բայց եթե զավթիչների ու անարդարների մտքով նոր արկածախնդիր մտադրություն անցնի, վայրկյան անգամ չեմ կասկածում՝ նորից անհավասարություն կլինի, ու մենք էլի կլինենք ուժեղը, որովհետև հայրական տունն ու հայրենիքը պաշտպանողը անպարտ է ու անկասելի:*

*Հարգելի՛ սպաներ,*

*Այդ «մենք»-ի մեջ առաջին հերթին հիմա դուք եք: Հավատացնում եմ ձեզ՝ դա իսկապես մեծ պատիվ ու բախտավորություն է ձեզնից յուրաքանչյուրի համար:*

*Մաղթում եմ ձեզ հաջողություն և անփորձանք ծառայություն:*

*Հավատում եմ ձեզ, հպարտ եմ ձեզնով, և Աստված ձեզ պահապան:*

*Շնորհակալություն:*

# ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐ

*Յու. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ*

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», որը տվյալ ոլորտում պետության գործունեությունն ուղենշող առավել կարևոր քաղաքական փաստաթղթերից է, որպես անվտանգության հիմնարար արժեք նշում է «պետության և ժողովրդի պաշտպանվածությունը», այն է՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը»[1], այսինքն՝ ռազմական անվտանգությունը: Ըստ «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի»՝ «Ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիքը մարտունակ, արդիական սպառազինությամբ զինված, մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու չեզոքացմանը պատրաստ Զինված ուժերն է»[2]:

Զինված ուժերի բարձր մակարդակի մարտունակության ապահովումը շարունակական գործընթաց է: Սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման գործում և ըստ այդմ՝ ռազմական արվեստում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, Հարավկովկասյան տարածաշրջանում ծավալվող քաղաքական, ռազմաքաղաքական, ռազմատնտեսական ու ռազմական գործընթացները մեզ պարտադրում են էապես վերանայել ռազմական տեսության դրույթները, մարտական գործողությունների պլանավորման ու վարման ձևերն ու եղանակները, կոնկրետ փոփոխությունների ենթարկել զորային կառույցը, այդ թվում՝ զորքերի կառավարման համակարգը:

Վերջին տարիներին հավանական հակառակորդը անթաքույց կերպով սպառնում է Ղարաբաղյան հակամարտությունը լուծել զինված պայքարի՝ պատերազմի վերսկսման ճանապարհով, ուստի ջանքեր է գործադրում իր ռազմական ներուժի շարունակական մեծացման ուղղությամբ՝ խախտելով տարածաշրջանում ուժերի փուխր հավասարակշռությունը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Աստանայում կայացած ԵԱՀԿ գագաթնաժողովում նշել է, որ «Ադրբեջանը եվրոպական մայրցամաքում ինձ հայտնի

[1] «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 14:

[2] «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 34:

միակ երկիրն է, որը հպարտությամբ է խոսում իր ռազմական բյուջեի բազմապատկման մասին: Եվրոպայում սովորական սպառազինությունների թույլատրելի սահմանների շեշտակի խախտման դեմ ոչ միայն չեն ձեռնարկվում անհրաժեշտ միջոցներ, այլև իրականացվում է այդ տեսակի սպառազինությունների վաճառք, այդ թվում և ԵԱՀԿ անդամ պետությունների կողմից: Այս ամենը համեմվում է Ադրբեջանի ղեկավարության բացահայտ հայատյաց ելույթներով, թշնամանք, ագրեսիա, բռնություն սերմանող կոչերով: …Ադրբեջանի փորձերը ուժի սպառնալիքով կորզելու միակողմանի զիջումներ ոչ միայն ի սկզբանե դատապարտված են ձախողման, այլև շարունակում են մնալ փոխզիջումային տարբերակով խնդրի կարգավորման հիմնական խոչընդոտը: Իսկ վերջին մեկ շաբաթվա մեջ ես կրկին համոզվեցի, որ այս փուլում Ադրբեջանը հետաքրքրված չէ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծմամբ: Նրա միակ նպատակը Հայաստանին առավելագույն վնաս հասցնելն է:

Հայաստանը կտրականապես չի ընդունում Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման տարբերակը: Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիան վերսկսելու դեպքում Հայաստանը չի ունենա այլ ընտրություն, քան ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դե յուրե և իր բոլոր հնարավորությունները ներդնել Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման համար»[3]:

«Վարելով գաղութարարական պատերազմի բացահայտ քարոզչություն՝ պաշտոնական Բաքուն, հակառակ Մինսկի գործընթացի տրամաբանությանը, իր բնակչությանը մոբիլիզացնում է Ղարաբաղը ուժով վերադարձնելու համար: Պատերազմին Ադրբեջանի պատրաստությունների կոնկրետ վկայությունն է ԵՍԶՈՒ պայմանագրով նախատեսված սահմանափակումների նրա նպատակասլաց գերազանցումը»[4]:

Այսպես. Ադրբեջանը էապես գերազանցում է ՍՈՏ-ի համար ԵՍԶՈՒ պայմանագրով սահմանված թույլատրելի «առաստաղը», ինչի վառ ապացույցն է ռազմական ծախսերի մշտական և կտրուկ աճման դինամիկան (տես աղյուսակը):

Միջպետական հարաբերությունների ամբողջ պրակտիկան այն բանի ընդհանրական վկայությունն է, որ ուժերի հաշվեկշռի արհամարհումը որպես կանոն հանգեցնում է ամենածանր հետևանքների, ընդհուպ մինչև պատերազմ: Հարկ է նշել, որ ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգում ուժերի հաշվեկշիռը անմիջականորեն կապված է պետությունների անվտանգության ապահովման շահերի հետ: Եթե որևէ պետություն խախտում է ուժերի առկա հաշվեկշիռը, ինչը վտանգի տակ է դնում ռազմավարական կայունությունը և ռեալ սպառնալիք ստեղծում այլ պետությունների անվտանգության համար, ապա վերջիններս ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ տվյալ հավանական հակա-

[3] «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԵԱՀԿ գագաթնաժողովում» (http://president.am/events/statements/arm/?search=%D4%B1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A1&id=78):

[4] *Հ. Ս. Քոչանջյան,* Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում–Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս–Աֆղանստան: Ե., 2009, էջ 135:

*Աղյուսակ*

2008—2010 ԹԹ. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ[5]

| Պաշտպանության վրա կատարված ծախսերը (մլն ԱՄՆ-ի դոլար) | | | | ՀՆԱ-ից %-ով (արդյունքում՝ միջին արժեքը) | | | | Աճումը (նվազումը) ՀՆԱ-ից %-ով՝ 2011 թ. տվյալները 2010 թ. համեմատությամբ (արդյունքում՝ միջին արժեքը) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2008 թ. | 2009 թ. | 2010 թ. | 2011 թ. | 2008 թ. | 2009 թ. | 2010 թ. | 2011 թ. | |
| 1300 | 1446 | 1585 | 3100 | 3,6 | 2,76 | 3,95 | 6,2 | + 3,8 |

ռակորդին ռազմավարորեն զսպելու* և խախտված հավասարակշռությունը վերականգնելու նպատակով[6]:

Հայաստանի Հանրապետությունը տեսնում է իր պաշտպանական անվտանգության ապահովման երկու ուղի.

– պաշտպանական ներուժի հզորացմամբ զսպել հավանական հակառակորդին՝ ի պատասխան ագրեսիայի նրան երաշխավորված անընդունելի վնասներ պատճառելու սպառնալիքով,

– միջազգային երաշխիքների ստեղծմամբ հակառակորդին հետ պահել ագրեսիա ձեռնարկելու մտադրությունից:

Ընդսմին ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ԱՂՀ ռազմանյութական գերազանցությունը համակշռելու և միևնույն ժամանակ ԶՈՒ-ն տնտեսության համար մեծ բեռ չդարձնելու նպատակով շեշտը դնում է հայ զինծառայողների մարտական վարպետության, կազմակերպվածության և բարոյահոգեբանական ոգու բարձրացման վրա: Մենք համոզված ենք, որ հայ զինվորի մարտական հմտությունը, տոկունությունն ու արիությունը, անգամ արյան գնով իր ազգն ու Հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությունը ի չիք կդարձնեն հավանական հակառակորդի բանակի թվային ու տեխնիկական գերազանցությունը:

Սակայն դա ամենևին չի նշանակում, թե մենք պետք է ձեռքներս ծալենք ու ոչինչ չձեռնարկենք: Ըստ այդմ Հայաստանի Հանրապետությունը, ղեկավարվելով վերը նշված երկու սկզբունքներով, ձեռնամուխ է եղել՝

[5] Տես «Национальная армия Азербайджана» (http://ru.wikipedia.org/wiki/%D0%9D%D0%B0%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D0%B0%D1%8F_%D0%B0%D1%80%D0%BC%D0%B8%D1%8F_%D0%90%D0%B7%D0%B5%D1%80%D0%B1%D0%B0%D0%B9%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD#.D0.A7.D0.B8.D1.81.D0.BB.D0.B5.D0.BD.D0.BD.D0.BE.D1.81.D1.82.D1.8C):

* Ռազմավարական զսպումը այն փոխկապված քաղաքական, դիվանագիտական, տեղեկատվական, տնտեսական, ռազմական և այլ միջոցների համալիրն է, որոնք նպատակաուղղված են որևէ պետության (պետությունների դաշնադրության) կողմից սպառնալիքների և ագրեսիվ գործողությունների զսպմանը, նվազեցմանը և կանխմանը՝ պատասխան գործողությունների միջոցով նրան անընդունելի վնասներ պատճառելու սպառնալիքով: Ռազմավարական զսպման կարևոր (բայց ոչ միակ) բաղադրիչներից է միջուկային զսպումը (տես *М. А. Гареев.* Стратегическое сдерживание: проблемы и решения. ИА «REGNUM» (http://www.regnum.ru/#full1065985#ixzzlTrUKZich)):

[6] Տես *Ն. Ի. Տուրկո, Ս. Ա. Մոդեստով*, Ժամանակակից աշխարհաքաղաքականության մեխանիզմները: «ՀԲ», 1998, հմ. 4:

– պաշտպանական բարեփոխումների իրականացմամբ մեր պաշտպանական համակարգի, այդ թվում՝ զորային կառույցի, արդիականացմանը,

– ռազմական ու ռազմաքաղաքական ոլորտներում այլ պետությունների և միջազգային ու տարածաշրջանային անվտանգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ ու գործընկերությամբ համապատասխան միջազգային ռազմաքաղաքական-անվտանգային միջավայրի ձևավորմանը:

Այս համատեքստում շատ կարևոր են ազգային և միջազգային հնարավորությունների ճշգրիտ գնահատումն ու հարաբերակցումը: Եթե ռազմական անվտանգության ապահովման երաշխիքը ժամանակակից մարտահրավերներին ու սպառնալիքներին համարժեք պատասխան տալու ունակ պաշտպանական համակարգի, այդ թվում՝ Զինված ուժերի, ստեղծումն է[7], ապա ռազմական անվտանգության ապահովման գործում միջազգային հնարավորությունների կիրառումն արտահայտվում է անվտանգության համակարգերի շրջանակներում դաշնակցային ու գործընկերային հարաբերությունների շարունակական զարգացման ձևով: Հայաստանի դեպքում դրա կարևոր բաղադրիչներն են, մի կողմից, համագործակցության զարգացումը ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնության հետ և անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, մյուս կողմից՝ բարձր մակարդակի հարաբերությունների հաստատումը ՆԱՏՕ-ի ու նրա անդամ պետությունների (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Լեհաստան և այլն), ինչպես նաև Չինաստանի և այլ առանձին ուժային կենտրոնների հետ[8]:

Ե՛վ պաշտպանական բարեփոխումների հաջող իրականացումն ու ավարտը, և՛ միջազգային կառույցներին ինտեգրումը (այդ թվում՝ մասնակցությունը բազմազգ ուժերի խաղաղարարական օպերացիաներին) ենթադրում են առաջատար պետությունների փորձի ուսումնասիրություն ու տեղայնացում, նրանց ու մեր պաշտպանական համակարգերի համատեղելիության ապահովում: Միևնույն ժամանակ, «բարեփոխումների նպատակն է այնպիսի արդյունավետ պաշտպանական համակարգի ստեղծումը, որը ոչ թե ձևականորեն կրկնօրինակի որևէ գործող մոդել, այլ, օգտագործելով հայրենական ու միջազգային փորձը, լինի բնույթով ազգային, քանի որ Հայաստանի Հանրապետության անվտանգության միջավայրը յուրահատուկ է. թեև կան այլ երկրների հետ նմանություններ, սակայն առկա են նաև հիմնարար տարբերություններ»[9]:

Տվյալ առումով հատկապես ուսանելի է թվում Գերմանիայի փորձը, քանի որ այդ պետությանը հաջողվեց հաղթահարել ամբողջատիրական կարգերի և պրուսական ռազմական տեսության ավանդույթներն ու կապանքները և կառուցել ժողովրդավարական արժեքների վրա խարսխվող, այլ արևմտյան պետութ-

[7] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 34:

[8] Տես *Դ. Է. Տոնոյան,* Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում: «ՀԲ», 2008, հմ. 4:

[9] *Ս. Մ. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները: «ՀԲ», 2008, հմ. 2 – 3:

յունների բանակների հետ հուսալիորեն համագործակցող բանակ՝ Բունդեսվերը*:

Ժամանակակից բանակաշինության համաշխարհային փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու հետևյալ միտումները.

– համազորային միավորումների առկա կազմակերպահաստիքային կառուցվածքի օպտիմալացում՝ մեծ շարժունակությամբ օժտված այնպիսի մարտավարական կազմավորումների ստեղծմամբ, որոնք ունակ լինեն երկար ժամանակ ինքնուրույնաբար վարելու ակտիվ մարտական գործողություններ, այդ թվում նաև ազգային տարածքի սահմաններից դուրս,

– վրագետնյա խմբավորումների կառավարման համակարգի արդյունավետության մեծացում, բոլոր մակարդակներում զորքերի կառավարման համակարգում ավտոմատացման միջոցների ակտիվ ներդրում,

– սպառազինության մեջ առկա ՍՌՏ արդիականացում և սպառազինության մեջ ՍՌՏ այնպիսի նոր նմուշների ընդունում, որոնք օժտված լինեն հակատանկային միջոցների և պայթուցիկ սարքերի ներգործությունից պաշտպանության արդյունավետ միջոցներով,

– ստորաբաժանումների և զինծառայողների հանդերձանքի նոր անհատական ու խմբային լրակազմի մշակում և ներդրում զորքերում,

– ըստ թվաքանակի և մարտական կազմի ավելի փոքր, սակայն ավելի մեծ մարտական հնարավորություններ ունեցող այնպիսի ավիացիոն կազմավորումների ստեղծում, որոնք ունակ լինեն ինքնուրույնաբար կամ ցամաքային ու ռազմածովային ուժերի զորամիավորումների ու զորամասերի հետ գործակցությամբ կատարելու լայն շրջանով խնդիրներ ցանկացած ՌԳԹ-ում, հիմնականում՝ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի բազմազգ խմբավորումների կազմում:

ՀՀ պաշտպանական անվտանգության համակարգի հիմքը Զինված ուժերն են, որոնք ապահովում են արտաքին զինված հարձակումից ՀՀ անկախության, ինքնիշխանության, բնակչության ֆիզիկական գոյության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության զինված պաշտպանությունը:

Հարկ է նշել, որ 2008 թ. նոյեմբերի 27-ին ընդունվեց «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենք, որում որպես ԶՈՒ-ի հիմնական գործառույթներ ներկայացված են՝

1) Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովումը,

2) ազգային անվտանգության հիմնարար արժեքների պաշտպանությունը,

3) Հայաստանի Հանրապետության վրա հնարավոր զինված հարձակման կանխումը, կասեցումը, լարվածության օջախի չեզոքացումը, պատերազմական գործողությունների իրականացումը, հրադադարի կամ հաշտության պարտադրումը՝ Զինված ուժերի մասնակի կամ լրիվ ծավալմամբ,

4) մասնակցությունը արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր

* Նկատի ունենք այն հանգամանքը, որ ռուսական ու խորհրդային (ուստի և մեր) բանակների հիմքում դրված էին պրուսական ռազմատեսական ու կազմակերպական մոտեցումները:

հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին ու քաղաքացիական պաշտպանության, տարահանման, որոնողափրկարարական, փրկարարական, վթարավերականգնողական և մարդասիրական միջոցառումներին,

5) ռազմական սպառնալիքների բացահայտումը և դիմակայումը դրանց,

6) ՍՌՏ և նյութական ռեսուրսների անհրաժեշտ մարտական և զորահավաքային հնարավորությունների ապահովումը,

7) ռազմավարական (օպերատիվ) կիրառման և զորահավաքային ծավալման պլանների կատարումը,

8) միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարումը, ներառյալ՝ միացյալ զինված ուժերի կազմում մասնակցությունը միջազգային մարդասիրական և փրկարարական, խաղաղապահական և կայունացման գործողություններին,

9) մասնակցությունը դիվերսիոն-հետախուզական և ահաբեկչական գործողությունների կանխմանը և չեզոքացմանը,

10) պաշտպանության բնագավառում տեղեկատվական անվտանգության ապահովումը:

Այդ գործառույթներից են բխում զորային կառույցի բարեփոխումների հետևյալ նպատակները.

– ՀՀ ԶՈՒ-ի կարողությունների համապատասխանեցում ռազմական վտանգներին երաշխավորված դիմագրավելու պահանջներին,

– ռազմավարական զսպման համակարգի կատարելագործում:

Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. հստակեցնել ՀՀ Զինված ուժերի գործառույթներն ու խնդիրները, կատարելագործել կառուցվածքը,

2. կատարելագործել զորքերի համակողմանի ապահովման համակարգը:

ՀՀ «Ռազմական դոկտրինում» առանձնահատուկ կարևորություն է տրվում պետության պաշտպանությանը ԶՈՒ-ի պատրաստման աշխատանքների կազմակերպմանը: Հիմք ընդունելով այդ դրույթները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ պրոբլեմային հարցերը.

– Զինված ուժերի հետագա կատարելագործում, համալրում անձնակազմով, սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով, նյութական պաշարների ստեղծում,

– անհրաժեշտ զորամիավորումների, միավորումների և զորամասերի ստեղծում, դրանց նպատակահարմար տեղաբաշխում և մարտունակության, մարտական ու զորահավաքային պատրաստության ապահովում, օպերատիվ և ռազմավարական պլանավորում, մարտական և օպերատիվ պատրաստման համակարգերի կատարելագործում՝ ժամանակակից մեթոդիկաների ներդրմամբ,

– զորքերի ղեկավարման կազմակերպում, զորքերի և դրանց ղեկավարման օղակների օպերատիվ, մարտական ու զորահավաքային պատրաստության ապահովում՝ ցանցային պատերազմի վարման տարրերի ներմուծմամբ,

– անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության ապահովում[10]:

ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբը պաշտպանական բարեփոխումների շրջանակում զորային կառույցի բարեփոխումները դիտում է որպես առաջնային խնդիր: Տվյալ բարեփոխումները ծավալվել են ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայման համալիր ծրագրի շրջանակներում և լիովին համատեղելի են «ՀՀ Պաշտպանական բարեփոխումների 2010–2015 թթ. ծրագրի» հետ[11]: Ավելին. ՀՀ Պաշտպանական բարեփոխումների 2010–2015 թթ. Ծրագրային փաթեթի մշակմամբ հիմք է դրվել նաև զորային կառույցի բարեփոխումների ծրագրի մշակման համար:

ՀՀ Զինված ուժերի զորային կառույցի բարեփոխումներն իրագործվում են հնարավոր պատերազմի ռազմավարական բնույթի, հնարավոր պատերազմում օպերացիաների և ռազմական գործողությունների վարման օպտիմալ միջոցների, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի, զորահավաքային ռեսուրսների առկայության, ինչպես նաև ռազմատեխնիկական համագործակցության շրջանակներում ներմուծվող ՍՌՏ թվաքանակի և ներկայիս իրավիճակի, մեր ու հավանական հակառակորդի մարտական կարողությունների (ներուժի) հարաբերակցության հաշվառմամբ:

Զորային կառույցի բարեփոխումների ծրագրով, մասնավորապես, նախատեսված է՝

1. ՀՀ Զինված ուժերի համազորային զորամիավորումների, զորամասերի, ինչպես նաև զորատեսակների օպտիմալ կազմի, կառուցվածքի, թվաքանակի որոշում, սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում,

2. զորքերի համակողմանի ապահովման համակարգի կատարելագործում:

Պատահական չէ, որ ռազմական գործողությունների (օպերացիաների) մարտական ու թիկունքային ապահովման արդյունավետությունը մեծացնելու նպատակով որպես ՀՀ ԶՈՒ-ի մարտական և թիկունքային ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններ են սահմանվել՝

– զորքերի (ուժերի), սպառազինության և մարտական տեխնիկայի արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտ միջոցների ու պաշարների պահուստների ստեղծումը՝ ռազմական գիտության նվաճումների, ռազմական արվեստի պահանջների, ռազմատեխնիկական առաջընթացի և կուտակված փորձի հաշվառմամբ,

– ՀՀ ԶՈՒ-ի ապահովման համակարգի զարգացման ու կատարելագործման ծրագրերի մշակումն ու իրականացումը՝ նպատակաուղղված պաշտպանական բարեփոխումների առաջադրված խնդիրների կատարմանը,

– ՀՀ ԶՈՒ-ում գործող ապահովման համակարգի, ինչպես նաև ներդրվող առաջավոր համակարգերի համար ընտրված չափանիշների կատարելագոր-

[10] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 43:

[11] Տես «ՀՀ Պաշտպանական բարեփոխումների 2010–2015 թթ. ծրագիր», 2010, էջ 2:

ծումը՝ ռազմական սպառնալիքներին արագ արձագանքելու կարողությունների զարգացման նպատակով,

– Զինված ուժերի կառուցվածքի, պատրաստության ապահովման պահանջների, սպառազինության ու ռազմական տեխնիկայի ձեռքբերման և արդիականացման գործում սահմանված գերակայությունների, ռազմաարդյունաբերական համալիրի և ենթակառուցվածքների զարգացման ուղղությունների, անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների և առկա ռեսուրսների հաշվառմամբ պահեստային ուժերի և մոբիլիզացիոն կարիքների որոշումը,

– բարձր մակարդակի շարժունակությամբ ու մարտունակությամբ օժտված արդիական Զինված ուժերի ստեղծման համար անհրաժեշտ միջոցների, այդ թվում՝ ՍՌՏ տեսակների ու թվաքանակի, որոշումն ու ապահովումը, որպեսզի դրանք ունակ լինեն արագ արձագանքելու ՀՀ ռազմական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին, պաշտպանական ոլորտում ապահովելու Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումը, իրականացնելու ազգային ու միջազգային տարատեսակ ռազմական առաքելություններ,

– Զինված ուժերի կադրային քաղաքականության հիմքերի մշակումը՝ կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը, պահանջարկի վերլուծության, կադրային ռեսուրսների ճիշտ պլանավորման, պաշտոնների հստակ բնութագրերի սահմանման միջոցով,

– ՀՀ ԶՈՒ-ի ապահովման համակարգի զարգացման ու կատարելագործման արդյունավետ գործունեության ապահովմանն ուղղված հաստիքակառուցվածքային փոփոխությունների կատարումը,

– Զինված ուժերի հուսալի, ճկուն, տնտեսապես շահավետ, արագ մատակարարումների և ծառայությունների մատուցման ապահովումը[12]:

Քանի որ զորքերի մարտունակության մակարդակի բարձրացումն զգալի չափով պայմանավորված է սպառազինության և ռազմական տեխնիկայի կարողություններով ու կիրառման բնույթի փոփոխմամբ, անհրաժեշտություն է ծագում վերականգնման և նյութատեխնիկական ապահովման խնդիրների լուծումը հասցնելու նոր որակական մակարդակի, ինչպես նաև մշակելու և իրականացնելու միջոցառումներ՝ ուղղված տեխնիկան շահագործող ու սպասարկող անձնակազմի պատրաստման որակի բարձրացմանը, տեխնիկական ապահովման համակարգի, կառավարման միջոցների, ձևերի ու մեթոդների կատարելագործմանը: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է շարունակել և զարգացնել տեխնիկական ապահովման գծով մասնագետների մասնագիտական գիտելիքների հարստացման ու հմտությունների ձևավորման գործընթացները, կրտսեր օղակի մասնագետների պատրաստման համար նախատեսել պետպատվեր, ինչպես նաև շարունակել համապատասխան մասնագետների

[12] Տես *Յու. Խաչատուրով*, Ռազմական գործողությունների օպերատիվ, բարոյահոգեբանական, տեխնիկական և թիկունքային ապահովման հիմունքները. ՀՀ ԶՈՒ-ի ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2010, հմ. 3:

պատրաստումը արտասահմանյան ռազմակրթական հաստատություններում[13]:

Հավանական հակառակորդի քանակական առավելությունը չեզոքացնելու, ինչպես նաև առաջադրված խնդիրների արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով ԶՈՒ-ի զորային կառույցի բարեփոխումները նպատակահարմար է իրականացնել հետևյալ ուղղություններով.

ա) *կազմակերպահասպիրքային կառուցվածքի օպտիմալացում,* ըստ որի նախատեսվում է վերանայել՝

– զորատեսակների միջև առկա համամասնությունը,

– մարտական ու ապահովման զորամասերի հարաբերակցությունը,

բ) *ռազմավարական զսպման միջոցների զարգացում,* քանի որ ներկայիս փուլում ռազմական զսպումը ՀՀ պաշտպանական անվտանգության ապահովման տեսանկյունից համարվում է ամենակարևոր և արդիական հարցը: Այսինքն՝ հավանական հակառակորդին պետք է պարզ լինի, որ մեզ վրա հարձակվելու դեպքում նա կրելու է անհամեմատ ավելի մեծ վնաս, քան ագրեսիայի միջոցով ակնկալվող ձեռքբերումներն են (անընդունելի վնասներ),

գ) *մարտական գործողությունների հստակ ու հաշվենկատ պլանավորում,* քանի որ հավանական հակառակորդի ռազմականացումն ու ռազմատենչ քարոզչությունը վկայում են, որ նա որպես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հիմնական ուղի դիտում է ռազմական գործողությունների վերսկսումը: Այսինքն՝ «հակառակորդը նախապատրաստվում է պատերազմի. մենք պետք է մեր աշխատանքում հետևողական լինենք, ամեն ինչ հաշվի առնենք՝ ամեն մի ուղղություն....»[14]:

Ըստ այդմ՝ ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումներում կարելի է առանձնացնել ԶՈՒ-ի զարգացման հետևյալ հիմնական խնդիրները՝ խաղաղ և պատերազմական շրջաններին բնորոշ առանձնահատկությունների և պետության տնտեսական հնարավորությունների հաշվառմամբ[15].

1. **ՀՀ ԶՈՒ-ի և մյուս զորքերի բաղադրատարրերի կառուցվածքի, կազմի և թվաքանակի բավարար համապատասխանեցում պաշտպանական անվտանգության ապահովման կարիքներին**: Ընդսմին տվյալ պրոբլեմի լուծումը հնարավոր է, եթե նախապես կատարվել է՝

– ռազմաքաղաքական իրադրության գնահատում, Հայաստանի համար հնարավոր ռազմական սպառնալիքների վերլուծություն և հավանական հակառակորդի զորքերի վիճակի գնահատում,

– ռազմական սպառնալիքները ոչ ռազմական մեթոդներով չեզոքացնելու հնարավորության ուսումնասիրություն,

[13] Տես նույն տեղում:

[14] «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի 2011 թ. տարեմուտի ուղերձը ՀՀ ԶՈՒ-ի ողջ անձնակազմին»: Ե., 2011, էջ 20:

[15] Տես *Յու. Գ. Խաչատուրով*, Պաշտպանությանը պետության և նրա Զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2009, հմ. 3:

– հավանական հակառակորդի հնարավոր զինված հարձակման հետմղման համար ՀՀ ԶՈՒ-ի և մյուս զորքերի խնդիրների ճշգրտում:

Դրանից հետո միայն կարելի է ձևակերպել, որոշել և առաջադրել ռազմավարական խնդիրներ, ՀՀ ԶՈՒ-ի համար մշակել ստանդարտներ, քանակական ու որակական բնութագրեր և կազմը,

2. **ՀՀ ԶՈՒ-ի շինարարության, զարգացման և կիրառման նորմատիվ իրավական հիմքի, ինչպես նաև հասարակության հետ հարաբերությունների համակարգի կատարելագործում՝** ըստ պետության ու հասարակության զարգացման համար որդեգրված ժողովրդավարական արժեքային համակարգի պահանջների:

«Երկու տասնամյակների ընթացքում Հայաստանն իրականացրել է ժողովրդավարության լայնամասշտաբ շինարարություն: Անկախության ձեռքբերումից ի վեր և հատկապես 2005 թ. Սահմանադրության համապատասխան փոփոխություններից հետո զգալի աշխատանք է կատարվել ժողովրդավարության, իրավական պետության հետագա կայացման և մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Մեր երկիրը լրջորեն ու անդառնալիորեն իր կենսակերպը համահունչ է դարձրել ժողովրդավար և ազատական աշխարհի կանոններին: Այս գործընթացում մեզ համար խիստ կարևոր են եղել Վենետիկի հանձնաժողովի, ԵԱՀԿ տարբեր կառույցների, վերջին շրջանում նաև Եվրոպական հանձնաժողովի խորհրդատվական, հաստատութենական և ռեսուրսային աջակցությունը: Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ վերպետական այդ եզակի ու կարևոր հաստատության դրական ազդեցությունն այսօր ուղղակիորեն զգացվում է մեր երկրում»[16]:

Պետության ու հասարակության զարգացման սկզբունքներին ՀՀ բանակաշինության ուղղությունների համապատասխանեցումը ենթադրում է բանակում մարդու իրավունքների գերակայություն, զինծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացում, աստիճանակարգության ձևավորում ոչ թե զուտ մեխանիկական կարգապահության, այլ գիտակցված համագործակցության հենքի վրա՝ յուրաքանչյուր զինծառայողի պատասխանատվության ոլորտի հստակ սահմանմամբ ու պահպանմամբ: Տվյալ մոտեցումը լավագույնս արտահայտված է Բունդեսվերի «Ներքին ղեկավարման» *(Innere Führung)* հայեցակարգում, որի ելակետն է «զինծառայողը զինվորական համազգեստով քաղաքացի է» դրույթը: Այդ հայեցակարգի նպատակներից է զինծառայողների գիտակցությանը հասցնել զինվորական գործողության բարոյական, իրավական, քաղաքական ու հասարակական հիմնավորումները և դրա հետ մեկտեղ՝ ռազմական առաջադրանքի իմաստը, մասնավորապես՝ այն պարզ ու հասկանալի դարձնել արտասահմանյան առաքելությունների ժամանակ:

Տվյալ մոտեցումը, մեր համոզմամբ, խիստ պահանջներ է ներկայացնում ինչպես հրամկազմին, այնպես էլ նրա ենթականերին, քանի որ ենթադրում է

[16] «Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում», 22.06.2011 (http://president.am/events/statements/arm/?id=91):

ղեկավարման ու հրամանների կատարման նոր ոճ, երբ հրամանը ներառում է, թե *ինչ* պետք է արվի, իսկ ենթական որոշում է, թե *ինչպես* պետք է արվի: ՈՒստի և զորային կառույցի հուսալի գործառումը մեծապես պայմանավորված կլինի գրագետ ու արհեստավարժ կադրերի առկայությամբ: Այդ կադրերի պատրաստումը պետք է կազմակերպվի այնպես, որ ցանկացած մակարդակի հրամանատար կարողանա գործել ինքնուրույնաբար, առանց վերադասի մշտական վերահսկողության՝ մնալով մարտի ընդհանուր մտահղացման շրջանակներում: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր հրամանատար պետք է օժտված լինի գիտելիքների այնպիսի պաշարով և այնպիսի հմտություններով, որոնք անհրաժեշտ են իրենից երկու աստիճանով բարձր հրամանատարներին:

Ժամանակակից բանակը դժվար է պատկերացնել առանց արդիական մարտական տեխնիկայի ու սպառազինության, որոնք պահանջում են մշտական խնամք ու նորոգում: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ-ում պետք է զարգանա ռազմական արդյունաբերությունը, որի հարուստ խորհրդային ավանդույթներն ու անհրաժեշտ կադրերը դեռ պահպանվում են: Բացի այդ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ ռազմական արդյունաբերության զարգացումը խթանում է մյուս ճյուղերի և ընդհանրապես տնտեսության զարգացումը:

Այս առումով կարևոր է հաշվի առնել ռազմաարդյունաբերական բնագավառում հավանական հակառակորդի՝ Ադրբեջանի պատրաստությունները և մեր համապատասխան մրցունակության ապահովման անհրաժեշտությունը[17]:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա լավագույն միջոցներից են Զինված ուժերի քաղաքացիացումը և դրանց նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության արդյունավետ համակարգի գործարկումը: Ընդսմին նպատակահարմար է ուսումնասիրել հատկապես զինծառայող–քաղաքացի հարաբերությունների մոդելները, և ազգային մտածողության, սովորույթների և ավանդույթների, տիրող իրավիճակի ու հեռանկարային զարգացման միտումների հաշվառմամբ ընտրել այն մոդելը, որն առավելագույնս կապահովի զինվորականների կողմից ռազմաքաղաքական ղեկավարության որոշումների արդյունավետ ու արհեստավարժ կատարումը,

3. **ՀՀ ԶՈՒ-ի ղեկավարման ու կառավարման համակարգերի կատարելագործում**, ինչի համար նպատակահարմար է թվում հաշվի առնել ամերիկյան մոդելը, որի հիմնական սկզբունքներն են ղեկավար ու կառավարող մարմինների տարանջատվածությունը և որոշումների մշակման ժամանակ խորհրդատվական մակարդակով մասնագիտական-փորձագիտական աջակցությունը[18]:

Մեր կարծիքով, որը հիմնվում է ՀՀ Սահմանադրության պահանջների ոչ ձևարկված (ֆորմալացված) ընկալման վրա, պաշտպանական համակարգի ռազմաքաղաքական ղեկավարման գործառույթները պետք է վերապահված

[17] Տես *Յու. Գ. Խաչատուրով, Պ. Ա. Շաղյան, Կ. Ա. Դաղալյան*, Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները: «ՀԲ», 2008, հմ. 1:

[18] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան*, ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության համակարգի ղեկավարման ու կառավարման փորձի մասին: «ՀԲ», 2008, հմ. 4:

լինեն պաշտպանության նախարարին՝ իր իրավասությունների սահմաններում և ըստ այդմ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներին՝ որպես ապահովող օղակի, որոնք պետք է ԳԾ մասնակցությամբ մշակեն ԶՈՒ-ի զարգացման հեռանկարային քաղաքականությունը, իսկ ըստ այդ քաղաքականության կառավարումը պետք է իրականացնի Գլխավոր շտաբի պետը, որը խաղաղ ժամանակ կատարելու է ԶՈՒ-ի ղեկավարման գործառույթներ: Ընդսմին ներկայիս ԳԾ զորատեսակային վարչությունները պետք է բաժանվեն. մշակման գործառույթներ կատարող մասը մնա ԳԾ կազմում, իսկ կառավարման գործառույթներ իրականացնող մասը վերածվի զորատեսակային հրամանատարության և հանդես գա որպես յուրաքանչյուրն իր զորատեսակի հրամանատարին առընթեր շտաբ: Կարծում ենք՝ բանակում միանձնյա կառավարման սկզբունքը պահանջում է, որ բանակի կառավարման մարմին պետք է լինի հրամանատարների հաստատությունը, իսկ վարչություն-շտաբները վերածվեն հրամանատարներին առընթեր խորհրդատվական օղակների:

Ինչպես վերը նշվեց, մեր ապագա հաջողությունների գրավականն են հայ զինվորի տոկունությունն ու արիությունը: Գաղտնիք չէ, որ Զինված ուժերի մարտունակության կարևոր բաղադրիչներից մեկն է անձնակազմի կայուն բարոյահոգեբանական վիճակը (ԲՀՎ), որը զորքերի բարոյահոգեբանական ապահովման արդյունքն է: ԲՀՎ պատշաճ մակարդակի ապահովման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ԶՈՒ-ի հրամանատարական կազմի համադասված գործունեությամբ, այլև բնակչության ու երիտասարդության շրջանում համապատասխան գերատեսչությունների կողմից տարվող նպատակային աշխատանքներով: ՈՒստի և պաշտպանությանը պետության պատրաստումն ընդգրկում է ԶՈՒ-ն (խաղաղ ժամանակ՝ նաև մյուս զորքերը), բնակչությունը, տարածքը, տնտեսությունը, ինչպես նաև տրանսպորտի և կապի, քաղաքական-դիվանագիտական, իրավական, տեղեկատվահոգեբանական, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության և այլ ոլորտներ:

Պետության պաշտպանությանը ԶՈՒ-ի պատրաստման կարևոր խնդիրներից են արհեստավարժ պահեստազորի ստեղծումը և ԶՈՒ-ի համալրման սկզբունքի որոշումը: Այսօր մեր բանակը համալրվում է զորակոչով: Դա հնարավորություն է տալիս ձևավորելու մեծաքանակ պահեստազոր: Միևնույն ժամանակ, ԶՈՒ-ի մարտունակությունը պարբերաբար՝ զորակոչի շրջանում, որոշակիորեն նվազում է: Կարծում ենք, որ այս առումով հնարավոր արդյունավետ լուծումներից է տարածքային պաշտպանության համակարգի ներդրումն ու զարգացումը: Այս հարցում մեզ օրինակ կարող է ծառայել Իսրայելի[19], Իրանի և մի շարք այլ պետությունների փորձը: Տարածքային պաշտպանության համակարգը հնարավորություն կտա պատրաստելու մեծաքանակ արհեստավարժ ռեզերվ, ագրեսիայի դեպքում վարելու ցանցային պատերազմ՝ պարտիզանական պայքարի հստակորեն դրսևորվող տարրերով, իսկ հակառակորդի հար-

[19] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «ՀԲ», 2009, հմ. 3:

ձակման հավանական ուղղությունների վրա ռազմական ավանների ստեղծումը հնարավորություն կտա կասեցնելու հակառակորդի հարձակումը կամ գոնե կոտրելու դրա թափը՝ մինչև հիմնական ուժերի զորահավաքումն ու ռազմադաշտ ժամանումը:

Կարևոր խնդիրներից է նաև Զինված ուժերի պահեստազորային հնարավորությունների արդյունավետ կիրառման մեխանիզմների ստեղծումը՝ անկայուն միջավայրում գտնվող և ռազմական սպառնալիքի ենթակա Հայաստանի Հանրապետության սահմանափակ զորահավաքային ռեսուրսների և բնակչության թվի համեմատ մեծաքանակ զինված ուժեր ունենալու անհրաժեշտության հաշվառմամբ: Պահեստազորային ոլորտի բարեփոխումը նախատեսում է՝

ա) ռազմական կարողություններով օժտված պահեստազորային ուժերի կազմավորման և կիրառման մեխանիզմների ստեղծում,

բ) պայմանագրային պահեստազորային համակարգի ներդրում[20]:

Եվ այսպես. ՀՀ ԶՈՒ-ում արդեն մի քանի տարի իրականացվող պաշտպանական բարեփոխումները բխում են ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններից, «Ռազմական դոկտրինի» ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական, ռազմատեխնիկական և իրավական պահանջներից: Դրանք իրագործվում են կազմակերպված և, որ հատկանշական է, բանակաշինության ընդհանուր մտահղացմանը համապատասխան: Այդ առումով մեծապես կարևորվում են զինված ուժերի կայուն և հեռանկարային զարգացման ապահովման, բոլոր ոլորտներում ԶՈՒ-ի հնարավորությունների մեծացման խնդիրները:

## РЕФОРМИРОВАНИЕ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ – ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ОБОРОННЫХ РЕФОРМ В РА

*Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, Начальник Главного штаба ВС РА*

РЕЗЮМЕ

Напряженная военно-политическая обстановка в регионе Южного Кавказа, нагнетаемая милитаристической риторикой властей Азербайджана с угрозой силового решения Карабахской проблемы, на деле подкрепляемой постоянным ростом военного бюджета и многократным превышением потолков для вооружения, определенных ДОВСЕ, заставляет Армению уделять исключительное внимание проблемам обеспечения своей оборонной безопасности. Однако военно-политическое руководство РА, исходя из интересов стабильного развития собственной экономики, в ответ на навязываемую гонку вооружений предпринимает последовательные шаги по:

— укреплению обороноспособности государства путем совершен-

[20] «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 51:

ствования организации ВС, повышения уровня боевого мастерства каждого военнослужащего, воспитания в нем сознательного отношения к выполнению своего долга, обеспечения слаженности частей и подразделений, совершенствования систем руководства и управления войсками и их оснащения современными ВВТ и АСУ, нацеленными на стратегическое сдерживание вероятного противника;

— обеспечению международных гарантий стабильности и безопасности в регионе путем участия в различных международных и региональных безопасностных организациях, в том числе — в осуществляемых ими миротворческих операциях.

Совершенствование оборонной системы РА осуществляется с учетом международного опыта в данной сфере и нацелено на обеспечение ее совместимости и интероперабельности с аналогичными системами РФ, США, Германии, Франции и других ведущих государств, а также ОДКБ и НАТО.

В этом плане в статье особое внимание уделяется проблемам оптимизации организационно-штатной структуры ВС, развития средств стратегического сдерживания, четкого и расчетливого планирования боевых действий в случае агрессии против РА.

Отмечается, что в данном аспекте интересен опыт ФРГ *(Innere Führung)* по укоренению в армии демократических ценностей и укреплению ее связи с обществом с преодолением тоталитаристических и прусско-милитаристических традиций, которые господствовали также в советскую эпоху и частично достались в наследство и армии РА. В РА реформирование в данном направлении осуществляется путем разделения систем военно-политического руководства *(Leadership)* и чисто военного управления *(Management)*, гражданизации и развития системы демократического гражданского контроля над ВС, укрепления морально-психологического духа военнослужащих, совершенствования систем боевой и оперативной подготовки с привлечением элементов сетевой войны, развития военно-промышленного комплекса на основе сохранившихся с советских времен индустриальной базы, квалифицированных кадров и богатых научно-технических традиций, совершенствования системы подготовки военно-обученного резерва с внедрением и развитием системы территориальной обороны.

## REFORMATION OF THE TROOP STRUCTURE AS A PRIORITY TASK OF THE RA DEFENSE REFORMS

*Yu. G. KHACHATUROV, Colonel General,*
*Chief of the Main Staff of the RA Armed Forces*

SUMMARY

The tense political and military situation in the South Caucasus region, forced by Azerbaijani authorities' militaristic rhetoric with a threat of power solution to the Karabakh problem, in fact, backed up by a

constant growth of military budget and by multiple excess of ceilings for armaments determined by the CFE Treaty, makes Armenia pay exclusive attention to the problems of ensuring its defense security. However, military-political leadership of Armenia, proceeding from the interests of the stable development of domestic economy, in response to the imposed arms race undertakes consistent steps on:

—strengthening the state's defense potential by improving the organization of the Armed Forces, increasing the level of each serviceman's battlecraft, fostering a conscious attitude in him to perform his duty, ensuring the congruence of units and sub-units, improving the systems of management and control over the forces and equipping them with up-to-date Armament and Military Equipment and ACS, aimed at strategic deterrence of a potential enemy;

—ensuring international guarantees of stability and security in the region through the participation in various international and regional security organizations, including, in the peacemaking operations implemented by them.

The improvement of the RA defense system is carried out including the international experience in this sphere and is aimed at ensuring its compatibility and interoperability with the similar systems of the Russian Federation, USA, Germany, France and other leading states, as well as the CSTO and NATO.

In these terms, the article focuses on the problems of the optimization of organizational and manning structure of the Armed Forces, the development of strategic deterrence tools, the efficient and prudent planning of combat operations in case of aggression against the Republic of Armenia. It is noted that in this aspect the experience of the Federal Republic of Germany *(Innere Führung)* in rooting democratic values in the army and strengthening its relationship with the society, overcoming totalitarian and Prussian militaristic traditions that prevailed also in the Soviet era, and are partly inherited by the RA Army, is of interest. The reformation in this direction in the RA is implemented by differentiating between the systems of military-political leadership *(Leadership)* and of purely military management *(Management)*, by making civil and developing the system of democratic civilian control over the Armed Forces, strengthening servicemen's moral-psychological spirit, improving the systems of combat and operational training involving the elements of the network warfare, developing the military-industrial complex based on the industrial base, experienced personnel and rich scientific and technical traditions remained from the Soviet times, improving the system of training the military-educated reserve targeting at introducing and developing the system of territorial defense.

# ԶՈՐՔԵՐԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Ա. Մ. ԴԱՎԹՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ օպերատիվ վարչության պետ*

ՀՀ ԶՈՒ-ի զորային կառույցի բարեփոխումների գերակա խնդիրներից է զորքերի պատշաճ օպերատիվ պատրաստման աշխատանքների կազմակերպումը, ինչը նպատակաուղղված է ԶՈՒ-ի բարձր մակարդակի մարտունակության ապահովմանը, մարտական խնդիրների արդյունավետ ու պատեհաժամ լուծմանը:

Օպերատիվ պատրաստումը գեներալների, սպաների և ռազմավարական, օպերատիվ-ռազմավարական, օպերատիվ և օպերատիվ-մարտավարական օղակների կառավարման մարմինների հիմնական պատրաստման տեսակն է, որի *գլխավոր նպատակներն են.*

– ուսուցանվողներին օպերատիվ-ռազմավարական, օպերատիվ-մարտավարական գիտելիքների փոխանցումը՝ տարբեր իրադրություններում պրակտիկ գործունեության ընթացքում այդ գիտելիքները կիրառելու կարողության ձևավորմամբ,
– օպերատիվ խնդիրների լուծման ժամանակ զորքերի (ուժերի) ղեկավարմանը կառավարման մարմինների մշտական պատրաստության պահպանումը:

Օպերատիվ պատրաստման *հիմնական խնդիրներն են.*

– զորամիավորումների և կառավարման (ղեկավարման) մարմինների բարձր մակարդակի պատրաստության պահպանումը՝ խաղաղ և պատերազմական ժամանակ առաջադրված խնդիրները կատարելու համար,
– օպերատիվ շտաբների գեներալների, սպաների գիտելիքների խորացումը և ունակությունների կատարելագործումը՝ ռազմավարության և օպերատիվ արվեստի բնագավառներում,
– հմտությունների ձևավորումը՝ հիմնավորված որոշումներ ընդունելու, ենթականերին մարտական խնդիրներ առաջադրելու, օպերացիաներ (մարտեր) պլանավորելու, փոխգործություն և համակողմանի ապահովում կազմակերպելու համար,
– զորքերի կառավարման մարմինների և կետերի ներդաշնակ աշխատանքի ապահովումն իրադրության բարդ պայմաններում՝ կապի ժամանակակից միջոցների կիրառմամբ,
– զորավարժությունների նախապատրաստման, անցկացման մեթոդիկայի և օպերատիվ պատրաստման այլ միջոցառումների ուսուցանումը,
– օպերացիաների անցկացման նոր ձևերի ու եղանակների մշակումը և ուսուցանումը:

Օպերատիվ պատրաստմանը ներկայացվող *հիմնական պահանջներն են.*

– օպերատիվ պատրաստման միջոցառումների նպատակների և բովանդակության համապատասխանությունը զորամիավորմանը, կառավարման (ղեկավարման) մարմիններին առաջադրված խնդիրներին, նրանց պատրաստվածության մակարդակին,
– հրամանատարների, պետերի բարձր մակարդակի անձնական պատասխանատվությունը ենթակա զորամասերի կառավարման (ղեկավարման) մարմինների և սպաների պատրաստմանն ուղղված աշխատանքի նկատմամբ,
– մշտական հսկողությունը օպերատիվ պատրաստման միջոցառումների նախապատրաստման ու անցկացման նկատմամբ,
– զորքերի տեղաբաշխման տարածքում իրադրության, ֆիզիկաաշխարհագրական պայմանների առանձնահատկությունների, տեղանքում շրջանների և ուղղությունների օպերատիվ սարքապատման հաշվառումը և գնահատումը,
– հավանական հակառակորդի զինված ուժերի օպերատիվ պատրաստության մակարդակի, ռազմական գործողություններ վարելու վերաբերյալ նրա տեսակետների, նրա զինված ուժերի և ըստ օպերացիոն ուղղությունների ստեղծված խմբավորումների կազմի ու վիճակի գնահատումը:

Օպերատիվ պատրաստման *հիմնական սկզբունքներն են.*

– ուսուցման կազմակերպումը մարտական իրադրությունը առավելագույնս նմանարկող պայմաններում,
– օպերատիվ պատրաստման բոլոր միջոցառումների մանրակրկիտ պլանավորումը, նախապատրաստումն ու դրանց համակողմանի ապահովումը,
– ուսուցման տարբեր ձևերի ու մեթոդների համատեղումը, հաջորդաբար անցումը պարզից դեպի ավելի բարդը, ուսուցման ավելի ծավալուն ձևերը,
– ղեկավարների բարձր մակարդակի մեթոդական հմտության պահպանումն ու օպերատիվ պատրաստման մեթոդիկայի մշտական կատարելագործումը,
– մշտական հսկողության ապահովումը՝ նպատակաուղղված օպերատիվ պատրաստմանը և զորահրամանատարներին ու շտաբներին օգնության ցուցաբերմանը,
– օպերատիվ պատրաստման փուլերի ամփոփումն ու վերլուծությունը՝ այդ հիմքի վրա հետագա զարգացման ծրագրերի մշակմամբ:

ՀՀ Զինված ուժերում օպերատիվ պատրաստության *խնդիրների կատարմանը հասնում են՝*

– օպերատիվ պատրաստության միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը հրամանատարների (պետերի) անմիջական մասնակցությամբ, նրանց բարձր մակարդակի մասնագիտական ու մեթոդական վարպետությամբ,

– ուսուցանման տարբեր ձևերի, մեթոդների, հնարների ու եղանակների ռացիոնալ համատեղմամբ, դրանց մշտական կատարելագործմամբ,
– բոլոր միջոցառումների մանրակրկիտ պլանավորմամբ ու նախապատրաստմամբ և անհրաժեշտ բազայի ստեղծմամբ ու զարգացմամբ,
– օպերատիվ պատրաստության միջոցառումների նախապատրաստման ու անցկացման նկատմամբ մշտական հսկողությամբ ու համապատասխան օգնության ցուցաբերմամբ:

Օպերատիվ պատրաստման *բաղկացուցիչ մասերն են՝*
– օպերատիվ շտաբների գեներալների, սպաների հրամանատարական պատրաստումը, զորամիավորումների և կառավարման (ղեկավարման) մարմինների պատրաստումը,
– գեներալների և սպաների պատրաստումը ակադեմիաներում և բարձրագույն ակադեմիական դասընթացներում:

Օպերատիվ պատրաստման բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրին համապատասխանում է ուսուցանման իր ուրույն ձևը, ըստ որի էլ որոշվում են ուսուցանվողների կազմը, ուսումնական միջոցառումների կառուցվածքը, դրանց անցկացման վայրն ու տևողությունը, ղեկավարության և ուսուցանվողների դերն ու գործունեությունը:

Օպերատիվ պատրաստման յուրաքանչյուր ձևին համապատասխանում է ուսուցման որոշակի մեթոդ: Նկատի ունենք ղեկավարության և ուսուցանվողների աշխատանքի այն ձևերի և հնարների ամբողջությունը, որոնց կիրառմամբ ապահովվում են տեսական գիտելիքների արդյունավետ փոխանցումն ու յուրացումը, ուսուցանվողների գործնական հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

ՈՒսուցանման ձևերի և մեթոդների ընտրությունը կախված է ուսուցանվողների կազմից, նրանց պատրաստականության մակարդակից, ուսուցման այն նպատակներից, որոնց պետք է հասնել, ինչպես նաև այլ կոնկրետ պայմաններից, որոնք հատուկ են տվյալ միջոցառմանը:

### Հրամանատարական պատրաստում

Հրամանատարական պատրաստումը ուսումնական-դաստիարակչական միջոցառումների մի համակարգ է, որն անցկացվում է օպերատիվ օղակի սպաների գիտելիքների խորացման, մասնագիտական հմտությունների ձևավորման ու զարգացման, հրամանատարական ունակությունների կատարելագործման նպատակով:

ՁՈՒ-ի օպերատիվ օղակի սպաների հրամանատարական պատրաստմամբ լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները՝ գեներալների և սպաների կողմից հավանական պատերազմին, բանակին վերաբերող տեսական գիտելիքների յուրացում, ռազմական գիտության և արվեստի, ռազմական գործի վերաբերյալ պետության հայեցակարգային մոտեցումների խորը և համակողմանի ըմբռնման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում, գործնական ունակությունների կատարելագործում:

Հրամանատարական պատրաստման ժամանակ նպատակահարմար է.

– պարապմունքներում ընդգրկել առավելագույն թվով սպաների,
– ապահովել հրամանատարական պատրաստման պարապմունքների սերտ կապը զորքերի օպերատիվ, մարտական ու զորահավաքային պատրաստման հետ՝ ըստ ժամկետների և ուղղվածության,
– ապահովել ավագ պետերի անմիջական մասնակցությունը պարապմունքների նախապատրաստմանն ու անցկացմանը:

Զինված ուժերում օպերատիվ օղակի սպաների հրամանատարական պատրաստման հիմնական ձևերն են.

– ինքնուրույն (անհատական) պատրաստումը,
– համատեղ պատրաստումը:

**Ինքնուրույն պատրաստումը** կատարվում է օրվա կարգացուցակով հաստատված ժամերին: Ինքնուրույն պատրաստման ժամանակ ուսումնասիրվում է ռազմական արվեստի տեսությունը, կատարելագործվում են գործնական ունակությունները: Պատրաստման տվյալ ձևը կարգավորում և վերահսկում է անմիջական պետը: Նա է որոշում անհատական առաջադրանքների ծավալն ու բնույթը՝ ստեղծելով համապատասխան պայմաններ ռազմական արվեստի պրոբլեմային հարցերը սերտելու և յուրացնելու համար:

Գործնական հմտությունների կատարելագործմանն ուղղված վարժանքների էությունն այն է, որ սպաները ինքնուրույն կերպով սովորեն ու գործնականում տիրապետեն ժամանակակից կառավարման և կապի միջոցներին, կարողանան մշակել իրենց գործառութային պարտականություններին համապատասխանող մարտական փաստաթղթեր:

**Համատեղ պատրաստման** ձևերից են հրամանատարական պատրաստման պարապմունքները, օպերատիվ (օպերատիվ-մասնագիտական) հավաքները:

*Հրամանատարական պատրաստման պարապմունքների* բովանդակությունն ու անցկացման կարգը որոշող փաստաթղթերն են.

– սպաների պատրաստման տարեկան ուսումնական ծրագիրը,
– դասացուցակն ըստ ամիսների:

*Օպերատիվ (օպերատիվ-մասնագիտական) հավաքները,* որոնք սովորաբար կազմակերպվում են ուսումնական տարվա սկզբում կամ ընթացքում՝ մինչև 4-5 օր տևողությամբ, նպատակաուղղված են բարձրացնելու օպերատիվ շտաբների գեներալների, սպաների գիտելիքների մակարդակը և կատարելագործելու ռազմավարությանն ու օպերատիվ արվեստին առնչվող նրանց ունակությունները:

Զինված ուժերում գեներալների և սպաների համատեղ պատրաստման հիմնական մեթոդներն են՝

– դասախոսությունները, զեկույցները, սեմինարները, զրույցներն ու ստուգարքները,
– հրամանատարաշտաբային զորախաղերը,
– խմբային վարժանքները,
– օպերատիվ թռուցիկ պարապմունքները,
– սպառազինության և տեխնիկայի ուսումնասիրման գործնական պարապմունքները,

– կառավարման միջոցների ուսումնասիրման պարապմունքները և ուսուցման նպատակով այդ միջոցներով կատարվող աշխատանքները,
– գործառութային պարտականությունների յուրացման վարժանքները,
– մեթոդական ցուցադրական պարապմունքները և ուսումնական կինոդիտումները:

Պարապմունքների անցկացման այս կամ այն մեթոդն ընտրելու ժամանակ հաշվի է առնվում ուսուցանվողների մասնագիտական գիտելիքների մակարդակը: Դրա հետ մեկտեղ նպատակահարմար է հաշվի առնել ուսուցանման տարբեր մեթոդների համալիր համատեղումը, ինչը կարող է նպաստել առաջադրված խնդիրների արդյունավետ կատարմանը, գեներալների, սպաների պատրաստության որակի բարձրացմանը:

**Հրամանատարաշտաբային զորախաղերի** էությունն այն է, որ ուսուցանվողները, ընդգրկվելով հաստիքային կամ ժամանակավորապես ստեղծվող ռազմական կառավարման (ղեկավարման) մարմնի կազմում, միևնույն իրադրության, մասնավորապես՝ կողմերի միջև խաղարկվող հակամարտության պայմաններում կատարում են իրենց պաշտոնեական պարտականությունները խաղարկվող օպերացիաներում (մարտական գործողություններում) զորքերի (ուժերի) կառավարման (ղեկավարման) ընթացքում:

Հրամանատարաշտաբային զորախաղերն անցկացվում են ուսումնական կառավարման (ղեկավարման) կետերում, որոնց այդ նպատակով առանձնացված սենյակները կահավորված են անհրաժեշտ կապի միջոցներով, ՋԿԱ համակարգերով:

Խմբային վարժանքների նպատակն է ամրապնդել ուսուցանվողների տեսական գիտելիքները, նրանց հմտությունները՝ հղկելով օպերացիաներում (մարտական գործողություններում) իրադրությունը գնահատելու, որոշում ընդունելու, մարտական գործողություններ կազմակերպելու, դրանք համակողմանիորեն ապահովելու և զորքերը կառավարելու ունակությունները:

**Օպերատիվ թռուցիկ պարապմունքներն** անցկացվում են դասարաններում՝ քարտեզի կամ տեղանքի մանրակերտի կիրառմամբ: Դրանց նպատակն է ստուգել գեներալների ու սպաների գիտելիքները, զորքերը կառավարելու (ղեկավարելու), իրադրությունը արագ և ինքնուրույնաբար գնահատելու, որոշում ընդունելու, ենթականերին խնդիրներ առաջադրելու կարողությունը:

Թռուցիկ պարապմունքները կարող են անցկացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային եղանակի կիրառմամբ:

Թռուցիկ պարապմունքների ժամանակ զորքերի կառավարման (ղեկավարման) հետ կապված հարցերն ավելի հաճախ մշակվում և ուսումնասիրվում են խաղարկվող կոնկրետ օպերացիաների (մարտական գործողությունների) դինամիկայում, երբ ստեղծված իրադրությունը ուսուցանվողներից պահանջում է ինքնուրույն գործողություններ:

**Սպառազինության և մարտական տեխնիկայի ուսումնասիրման գործնական պարապմունքներն** անցկացվում են հատուկ կահավորված դասարաններում, հավաքակայաններում, լաբորատորիաներում, իսկ դրանց գործնական

ցուցադրումը՝ մարտական դիրքերում, կրակադաշտերում, դաշտային պայմաններում և բազաներում:

**Կառավարման միջոցների ուսումնասիրման պարապմունքները և ուսուցման նպատակով այդ միջոցներով կատարվող աշխատանքները** կարող են կազմակերպվել ստացիոնար և դաշտային շարժական կառավարման (ղեկավարման) կետերում, կապի հանգույցներում:

**Գործառութային պարտականությունների յուրացման վարժանքներն** անցկացվում են գեներալների և սպաների անհատական պատրաստման, նրանց ունակությունների ամրապնդման և կատարելագործման նպատակով:

**Մեթոդական պարապմունքներն** ուղղված են գեներալների և սպաների օպերատիվ, այդ թվում՝ հրամանատարական, պատրաստման միջոցառումների կազմակերպման և անցկացման մեթոդիկայի կատարելագործմանը:

*Ցուցադրական պարապմունքները*՝ որպես մեթոդական պարապմունքների տարատեսակ, անցկացվում են ուսումնական գործընթացում առաջավոր փորձը ներդրելու, շտաբների ու զորքերի հետ զորավարժությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ միատեսակ հայացքներ մշակելու, հրամանատարների ու շտաբների աշխատանքի առավել նպատակահարմար մեթոդները, զորքերի (ուժերի) գործելու կարգն ու ձևերը, օպերացիայում (մարտում) սպառազինության ու ռազմական տեխնիկայի կիրառումը ցուցադրելու նպատակով:

## Զորամիավորումների և կառավարման (ղեկավարման) մարմինների պատրաստում

Զորամիավորումների և կառավարման (ղեկավարման) մարմինների պատրաստումը օպերատիվ պատրաստության բաղկացուցիչ մասն է, որն անցկացվում է զորքերը մշտական պատրաստության վիճակում պահելու և օպերատիվ առաջադրանքների կատարման ժամանակ նրանց հուսալիորեն կառավարելու համար:

Զորամիավորումների և կառավարման (ղեկավարման) մարմինների պատրաստության հիմնական ձևերն են.

– հրամանատարաշտաբային և շտաբային զորավարժությունները,
– օպերատիվ (օպերատիվ-մարտավարական) զորավարժությունները,
– զորահավաքային և մասնագիտական զորավարժությունները,
– զորախաղերը և խմբային թռուցիկ պարապմունքները,
– հրամանատարաշտաբային (շտաբային) մարզումները,
– օպերատիվ դաշտային ուղևորությունները (տեղազննման արշավները):

**Հրամանատարաշտաբային զորավարժությունները** հրամանատարների, շտաբների, զորատեսակների և ծառայությունների պետերի համատեղ ուսուցանման կարևորագույն ձևն են: Դրանք համարվում են օպերատիվ պատրաստման համալիր միջոցառումներ և անցկացվում են մարտական և զորահավաքային պատրաստության, օպերացիաների (մարտական գործողությունների) նախապատրաստման և վարման, զորքերի կառավարման, նրանց համակող-

մանի ապահովման և դաստիարակչական աշխատանքի կազմակերպման հարցերի ներառմամբ:

**Շտաբային զորավարժությունը** զորամիավորումների (զորամասերի) շտաբների ուսուցանման ձև է: Այն անցկացվում է դրանց ներդաշնակման ու զորքերի կառավարման (ղեկավարման) ապահովման նպատակով:

Շտաբային զորավարժությունների տևողությունը կախված է լուծվող խնդիրների ծավալից: Ընդ որում, զորավարժության յուրաքանչյուր փուլի ընթացքում նպատակահարմար է կազմել այն կարևոր հարցերի համախումբը, որոնք լավ չեն յուրացվել ուսուցանվող շտաբների առօրյա աշխատանքում կամ պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ:

**Օպերատիվ (օպերատիվ-մարտավարական) զորավարժություններն անցկացվում են** օպերատիվ, օպերատիվ-մարտավարական զորամիավորումների հետ՝ կոնկրետ զորատեսակների, հատուկ և այլ զորքերի, զորամասերի, ստորաբաժանումների ընդգրկմամբ: Դրանցում ստեղծվող և մշտապես փոփոխվող իրադրության պայմաններում մշակվում են հակառակորդի ագրեսիային դիմագրավման, զորքերի՝ խաղաղ պայմաններից պատերազմական դրության փոխադրման, դրանց ռազմավարական (օպերատիվ) ծավալման, օպերացիաների (մարտական գործողությունների) նախապատրաստման ու վարման ժամանակ զորքերի (ուժերի) կառավարման (ղեկավարման) համալիր հարցեր:

**Զորահավաքային զորավարժությունը** հրամանատարների (պետերի), շտաբների, զորքերի և զինվորական կոմիսարիատների համատեղ պատրաստման հիմնական ձևն է, որի նպատակն է զորահավաքային պլանների գործնական կատարման փորձի ձեռքբերումը:

Զորահավաքային զորավարժություններն անցկացվում են նաև զորքերը խաղաղ ժամանակից պատերազմական դրության փոխադրելու հետ կապված պրոբլեմային հարցերի հետազոտման նպատակով: Դրանց ընթացքում կատարելագործվում են հրամանատարների (պետերի), զինկոմիսարների, նրանց ենթակա կառավարման մարմինների հմտությունը և ունակությունները՝ զորահավաքային ծավալումը ղեկավարելու գործում:

**Հրամանատարաշտաբային (շտաբային) մարզումների** ընթացքում մշակվում են դիրեկտիվներ (ուղեցույց-հրահանգագրեր), կարգադրություններ, որոնք հետագայում օգտագործվում են հրամանատարաշտաբային զորախաղերի ժամանակ:

Շտաբային մարզումների հիմնական նպատակն է ռազմական կառավարման (ղեկավարման) մարմինների ներդաշնակման կատարելագործումը՝ օպերացիաների (մարտական գործողությունների) ընթացքում զորքերի կառավարման հետ կապված առանձին հարցերի մշակման միջոցով:

*Կառավարման (ղեկավարման) կետերի հերթափոխների մարզումները* շտաբային մարզումների տարատեսակներից են և նախանշանակված են նրանց պատրաստելու խաղաղ և պատերազմական ժամանակ խնդիրների արդյունավետ կատարմանը:

Օպերատիվ դաշտային երթերը (տեղազննման արշավներ) *զորամիավորումների պատրաստականության գոտիներում* կատարվում են զորամիավորումների, զորամասերի, ինչպես նաև ուժային այլ կառույցների միջև փոխգործության, տեխնիկական, թիկունքային և բժշկական ապահովման հետ կապված հիմնական հարցերի ճշգրտման նպատակով: Օպերատիվ դաշտային երթերի ժամանակ կատարվում են նաև մարտական հերթապահության կազմակերպման և անցկացման, պաշտպանության գոտիների, տեղամասերի ինժեներական կահավորման ստուգումներ:

Հարկ է նշել, որ զորքերի օպերատիվ պատրաստման արդյունավետությունը մեծացնելու համար, ինչպես ցույց է տալիս առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրությունը, անհրաժեշտ է աստիճանաբար նվազեցնել ուսուցման նպատակով կազմակերպվող դասախոսությունների ժամերը, փոխարենը ավելի շատ ժամանակ տրամադրել ինքնապատրաստմանը, անհատական առաջադրանքներին, համատեղ և առանձին շտաբային մարզումներին, թռուցիկ պարապմունքներին, ցուցադրական պարապմունքներին, ինչպես նաև գործառութային պարտականությունների յուրացմանը նպատակաուղղված վարժանքներին, որպեսզի պաշտոնատար անձինք հետագայում ունակ լինեն ժամանակի սղության և բարդ իրադրության պայմաններում իրենց գործառութային պարտականություններին համապատասխան մշակելու տեքստային ու գրաֆիկական մարտական փաստաթղթեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

2. *Յու. Գ. Խաչատուրով*, Ռազմական գործողությունների օպերատիվ, բարոյահոգեբանական, տեխնիկական և թիկունքային ապահովման հիմունքները. ՀՀ ԶՈՒ-ի ապահովման համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2010, հմ. 3:

3. «Военно-энциклопедический словарь». М., 2002, с. 914.

# НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОПЕРАТИВНОЙ ПОДГОТОВКИ ВОЙСК С ТОЧКИ ЗРЕНИЯ РЕФОРМИРОВАНИЯ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ

*А. М. ДАВТЯН, генерал-майор, начальник Оперативного управления ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

Реформирование войсковой структуры ВС РА требует пересмотра и усовершенствования системы оперативной подготовки (ОП) командного состава, штабов и войск с учетом передового мирового опыта. В этом аспекте рассмотрены составляющие ОП и методика организации и проведения соответствующих мероприятий. Особое внимание уделяется вопросам подготовки офицеров оперативного звена с акцентом на индивидуальную (самостоятельную) подготовку в целях приобретения

глубоких теоретических знаний о войне, военной науке и оперативном искусстве, оперативно-тактических знаний в сочетании с умением реализовывать их в практической деятельности.

Представлены методы и средства подготовки соединений и органов управления. Важное место отведено анализу командно-штабных, штабных, оперативно-тактических и мобилизационных учений с целью формирования соответствующих боевых навыков совместной деятельности и поддержания органов управления в постоянной готовности к руководству войсками в экстремальных ситуациях боевой обстановки.

## SOME ISSUES OF THE TROOPS' OPERATIONAL TRAINING IN TERMS OF TROOP STRUCTURE REFORMATION

*A. M. DAVTYAN, Major General, Head of the Operation Board of the Main Staff of the RA Armed Forces*

SUMMARY

The reformation of the troop structure in the RA Armed Forces requires to review and improve the system of the operational training (OT) of commanders, staffs and troops with the consideration of the leading world experience. In this aspect, the OT components and methods of organizing and conducting relevant activities are examined. A particular attention is paid to the training of officers of the operational level with an emphasis on the individual (independent) training for acquiring profound optimal theoretical knowledge on the war, military science and operational art, as well as for getting operational-tactical knowledge in combination with the ability to implement them in practice.

The methods and means of the formations' and control elements' training are presented. An important place is given to the analysis of command and staff, staff and operational-tactical, and mobilization exercises with a view to forming relevant combat skills for the joint operation and maintaining the control elements in a constant state of readiness to lead the troops for emergencies of combat situations.

# ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Լ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՈՎ, գեներալ-լեյտենանտ,*
*ՀՀ Նախագահի Գլխավոր զինվորական տեսուչի առաջին տեղակալ*

Արտասահմանյան ռազմագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետություն, որն ստեղծում է իր զինված ուժերը, նախապես ընտրում է դրանց այն կառուցվածքը, որով երաշխավորվեր տվյալ պետության անվտանգությունը: Ընդսմին չի կարելի այդ կառուցվածքը դիտարկել բանակաշինությունից անջատ:

ԶՈՒ-ի շինարարությունը այն փոխկապված ու փոխպայմանավորված տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարախոսական, ռազմատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համակարգն է, որոնք նպատակաուղղված են ազգային շահերի երաշխավորված զինված պաշտպանության նպատակով ԶՈՒ-ի ստեղծմանը, պատրաստմանն ու զարգացմանը: ԶՈՒ-ի շինարարությունը պետք է իրագործվի պետության ռազմական շինարարության ընդհանուր համակարգի շրջանակներում՝ պետության ամբողջ ռազմական կազմակերպվածքի փուլային համալիր կերպափոխմանը համահունչ:

ԶՈՒ-ի շինարարության նպատակն է դրանց այնպիսի կերպարանքի ձևավորումը, որը պետության ռազմական կազմակերպվածքի ընդհանուր համակարգում բավարարեր ազգային շահերի հուսալի զինված պաշտպանության պահանջմունքները և համապատասխաներ առկա տնտեսական ու զորահավաքային հնարավորություններին:

ԶՈՒ-ի կերպարանք ասելով հասկանում ենք այն քանակական-որակական ցուցանիշների համախումբը, որոնք բնութագրում են՝ ԶՈՒ-ի, զորատեսակների, ԶՈՒ-ի տեսակների կազմում չընդգրկվող զորքերի, ԶՈՒ-ի թիկունքի կառուցվածքը, կազմը, ընդհանուր թվաքանակը և թվաքանակն ըստ զինծառայողների կատեգորիաների, այդ թվում՝ այն զինծառայողների, որոնք ծառայում են ըստ զորակոչի կամ պայմանագրի, տեխնիկական զինվածությունը սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, այդ թվում՝ հին և նոր սերունդների, կառավարման, համալրման, կադրերի պատրաստման, զորահավաքային ռեզերվների (մարդկային, տեխնիկական և նյութատեխնիկական միջոցների) պատրաստման ու կուտակման համակարգերը, ԶՈՒ-ի ենթակառուցվածքը և համակողմանի ապահովման համակարգը, Զինված ուժերի մարտական ու զորահավաքային պատրաստության համակարգը:

ԶՈՒ-ի քանակական-որակական կազմ ասելով հասկանում ենք ըստ օպերատիվ (մարտական) նախանշանակման տարբեր զորամիավորումների ու զորամասերի համախումբը, այդ թվում՝ կրճատ կազմով մշտական պատրաս-

տության զորամասերը, և խնդիրները խաղաղ ու պատերազմական ժամանակ կատարելու դրանց ներուժային մարտական հնարավորությունները:

ԶՈՒ-ի կառուցվածքը ռազմական կառավարման՝ աստիճանակարգորեն բաշխված կենտրոնական մարմինների, ԶՈՒ-ի տեսակների և զորատեսակների, ԶՈՒ-ի տեսակների մեջ չներառված զորքերի, ԶՈՒ-ի թիկունքի և դրա բաղադրատարրերի ֆիքսված համախումբն է՝ դրանց շինարարության ու զարգացման, օպերատիվ (մարտական) և զորահավաքային պատրաստման, ինչպես նաև խաղաղ և պատերազմական ժամանակ դրանց վրա դրվող խնդիրների կատարման ավելի մեծ արդյունավետության ապահովման նպատակով:

Հենվելով ԶՈՒ-ի կերպարանքի սահմանման վրա՝ կարող ենք ասել, որ ԶՈՒ-ի շինարարության (կատարելագործման) ուղղությամբ միջոցառումների պլանավորումն ու գործնական իրացումը պետք է ներկայացնեն դրանց կերպարանքի այն բոլոր տարրերի զարգացումը, որոնցից գլխավորներն են՝

– ԶՈՒ-ի կառուցվածքը, կազմը և թվաքանակը,

– ԶՈՒ-ի կառավարման համակարգը,

– ԶՈՒ-ի տեխնիկական զինման համակարգը,

– ԶՈՒ-ի համալրման, զինվորական ծառայության անցման և կադրերի պատրաստման համակարգերը,

– զորահավաքային ռեզերվների պատրաստման ու կուտակման համակարգը,

– ԶՈՒ-ի ենթակառուցվածքը,

– ԶՈՒ-ի գործունեության համակողմանի ապահովման համակարգը,

– ԶՈՒ-ի մարտական և զորահավաքային պատրաստության համակարգը:

Ռազմական շինարարության համաշխարհային և հայրենական պրակտիկան ցույց է տալիս, որ ԶՈՒ-ն քաղաքական նպատակներին հասնելու ոչ միայն կարևոր, այլև հույժ թանկարժեք գործիքն է, ինչի հետևանքով էլ բանակաշինությունը պահանջում է զգալի ժամանակ, որը չափվում է տարիներով, իսկ երբեմն՝ տասնյակ տարիներով: ՈՒստի, որպեսզի այն լինի արդյունավետ, պահանջվում է, որ, մի կողմից, ունենա տեսական հիմնավորում (ըստ ժամանակի հնարավորինս մեծ առաջանցմամբ), իսկ մյուս կողմից՝ բանակաշինության տեսությունը մշտապես առաջդրվի ռեալ իրականության հետ:

ԶՈՒ-ի շինարարության տեսությունը այն գիտելիքների համակարգն է, որոնք վերաբերում են ԶՈՒ-ի շինարարության ու զարգացման, պատրաստման ու մարտական պատրաստության վիճակում պահելու օրինաչափություններին և սկզբունքներին, եղանակներին ու մեթոդներին: Այն նախատեսված է ԶՈՒ-ի ու դրանց տեսակների և զորատեսակների կառուցվածքի ու քանակական-որակական կազմի, զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների կազմակերպահաստիքային կառուցվածքի և սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով զինվածության, ենթակառուցվածքի, կառավարման, համալրման ու զինվորական ծառայության անցման, կադրերի պատրաստման, համակողմանի ապահովման, զորահավաքային ռեսուրսների պատրաստման ու կու-

տակման համակարգերի հիմնավորման հետ կապված խնդիրները լուծելու համար:

ԶՈՒ-ի շինարարության սկզբունքները այն առավել ընդհանուր դրույթները, կանոններն ու հանձնարարականներն են, որոնք պրակտիկայի հաշվառմամբ մշակվել են օրինաչափությունների հիման վրա ու գիտականորեն հիմնավորված են, և որոնցով պետք է առաջնորդվել ԶՈՒ-ի շինարարության ժամանակ:

Լրիվ ծավալով ներկայացնենք առավել ընդհանուր սկզբունքները.

– ռազմաքաղաքական իրադրության, վիճակի ու զարգացման հեռանկարների վերլուծության հիման վրա կատարված եզրակացությունների համապատասխան հաշվառում,

– ղեկավարման կենտրոնացում,

– իրավական հիմքի վրա խարսխվող միանձնյա ղեկավարում,

– ազգային շահերի ու պաշտպանական անվտանգության երաշխավորված պաշտպանության ապահովման խնդիրներին մարտական ու զորահավաքային պատրաստության, ինչպես նաև ռազմական կառավարման մարմինների ու զորքերի (ուժերի) պատրաստման մակարդակների, դրանց կառուցվածքի, ռեզերվի մարտական կազմի ու թվաքանակի, նյութական միջոցների ու ռեսուրսների պաշարների համապատասխանության հաստատում՝ պետության տնտեսական հնարավորությունների սահմաններում,

– ԶՈՒ-ի շինարարության և սպառազինության զարգացման գործում որակական ցուցանիշների գերակայում,

– պետության աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական վիճակի համապատասխան հաշվառում,

– ուսուցման ու դաստիարակության միասնականություն,

– զինծառայողների իրավունքների և ազատությունների, դրանց սոցիալական պաշտպանվածության ապահովման, պատշաճ սոցիալական կարգավիճակի ու կենսամակարդակի իրացում:

Այսպիսով՝ ԶՈՒ-ի կազմը, կառուցվածքը, թվաքանակը, տեխնիկական զինվածությունը, մարտական պատրաստումը և այլն, պայմանավորված են համաշխարհային ընկերակցության մեջ պետության գոյության օբյեկտիվ պայմաններով, միջազգային հարաբերությունների համակարգում նրա ունեցած դերով ու տեղով: Առանձին պատմական շրջաններում, երբ տեղի են ունենում արմատական վերափոխումներ, որոնք անդրադառնում են պետության աշխարհաքաղաքական ու ռազմավարական վիճակի և աշխարհում նրա ունեցած դերի ու տեղի վրա, անխուսափելիորեն ծագում են հակասություններ, մի կողմից, ռազմական կազմակերպվածքի պարամետրերի և, մյուս կողմից, քաղաքական ու սոցիալ-տնտեսական համակարգերի միջև: Այս դեպքում ռազմական կերպափոխումները, այդ թվում և ԶՈՒ-ի, դառնում են օբյեկտիվ անհրաժեշտություն:

ԶՈՒ-ի կերպափոխում ասելով հասկանում ենք դրանց կերպարանքի քանակական ու որակական այն արմատական փոփոխությունների համախումբը, որոնք կատարվում են որոշակի ժամանակային միջակայքում և նպատակաուղղված են դրանց օպտիմալացմանը, համապատասխանեցմանը նոր աշխար-

հաքաղաքական ու ռազմավարական պայմաններին, ազգային շահերի պաշտպանության օբյեկտիվ պահանջմունքներին:

Բանակաշինության տեսությունը շաղկապված է այլ գիտությունների ու տեսությունների հետ, սակայն կապն առավել սերտ է ռազմական արվեստի տեսության հետ: Զինված պայքարը միշտ էլ մեծ պահանջներ է ներկայացրել ռազմական արվեստին, ինչպես նաև զորքերի (ուժերի) կազմակերպմանն ու որակին և սպառազինության որակին: Զինված պայքարում հաջողության հասնելու այս երկու կարևոր բաղադրիչները բնութագրում են ինչպես ռազմական արվեստի, այնպես էլ բանակաշինության տեսության ու պրակտիկայի ձեռք բերված մակարդակները, ինչն էլ արտացոլում է դրանց դիալեկտիկական միասնությունը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, ռազմական արվեստի տեսությունը (ռազմավարություն, օպերատիվ արվեստ և մարտավարություն) զարգանում է ավելի դինամիկորեն, քան բանակաշինության տեսությունը, և իր զարգացման ընթացքում մշտապես առաջ է անցնում դրանից:

ՁՈՒ-ի կազմակերպական շինարարության տեսության գլխավոր խնդիրն է ՁՈՒ-ի օպտիմալ կազմի հիմնավորումը խաղաղ ու պատերազմական ժամանակների համար: Այդ խնդրի լուծումը հիմնվում է բանակաշինության տեսության այն հիմնարար սկզբունքի իրացման վրա, որն է՝ պետության տնտեսական հնարավորությունների համակողմանի հաշվառմամբ զինված ուժերի կազմի և դրանց վրա խաղաղ ու պատերազմական ժամանակ դրվող խնդիրների համապատասխանության սկզբունքը:

Արդի գիտատեխնիկական առաջընթացի մասշտաբներն ու տեմպերը և պատերազմի նյութական բազայի արագ թարմացումը պահանջում են գիտական ճանապարհով գտնել զինված ուժերի տեսակների և զորատեսակների, ՁՈՒ-ի տեսակների մեջ չմտնող զորքերի ու թիկունքի մարտական և ապահովման զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների, զորամիավորումներում ու զորամասերում անձնակազմի և ՍՌՏ, ինչպես նաև տարբեր կատեգորիաների զինծառայողների (այդ թվում՝ զորակոչով ու պայմանագրով ծառայողների) միջև խելամիտ հարաբերակցությունը:

Խնդիրն այն է, որ գիտականորեն հիմնավորված ձևով որոշվեն ՁՈՒ-ի յուրաքանչյուր տեսակի ու զորատեսակի, ՁՈՒ-ի տեսակների մեջ չմտնող զորքերի և թիկունքի օպտիմալ կազմը՝ զինված պայքարում դրանց դերի ու տեղի, ՁՈՒ-ի առջև դրված խնդիրների լուծման գործում դրանց հնարավոր ներբերումների հաշվառմամբ:

Այդ խնդիրը պրոբլեմային է, և դրա էությունն այն է, որ խաղաղ ժամանակվա համար որոշվի ՁՈՒ-ի այնպիսի կազմ, որը, մի կողմից, ապահովի հավանական հակառակորդների զսպումը, պետության հուսալի ռազմական անվտանգությունը, հակառակորդի հանկարծակի հարձակման հետմղման հնարավորությունը, նրան պարտության մատնումը և ՁՈՒ-ի պատեհաժամ ռազմավարական ծավալումը մինչև այն մակարդակը, որն անհրաժեշտ է պատերազմական շրջանում: Բացի այդ, պետք է ապահովված լինեն անհրաժեշտ քանակությամբ

զորահավաքային ռեսուրսների, ՍՌՏ և այլ նյութական միջոցների պաշարների նախապատրաստումը, կուտակումը և պարունակությունը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է, որպեսզի կազմը չգերազանցի պետության թույլատրելի ռազմատնտեսական ու զորահավաքային լարվածությունը, այսինքն՝ կլանի պետության հնարավորինս նվազ քանակով մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսներ:

Եվ այսպես. ռազմատնտեսական լարվածությունը, զուգակցված լինելով ըստ միջազգային իրավական ակտերի պետության ստանձնած պարտավորություններով, դառնում է ԶՈՒ-ի կազմի և թվաքանակի հիմնական սահմանափակող գործոնը:

Պատերազմական ժամանակ ԶՈՒ-ի քանակական-որակական կազմը պետք է ապահովի ագրեսիայի հետմղման և կանխատեսվող զինված հակամարտություններում հակառակորդի ջախջախման խնդիրների կատարումը սահմանային կարճ ժամկետներում: Պրոբլեմային հարց է նաև ԶՈՒ-ի լրահամալրմանը, մարտական կորուստների վերականգնմանը ուղղորդվող և տնտեսության անխափան աշխատանքը ապահովող մարդկային ռեսուրսների օպտիմալ հարաբերակցության որոշումը:

Տվյալ պրոբլեմը լուծելու համար անհրաժեշտ են ճշգրիտ հաշվեկշռված արտաքին քաղաքականություն, նյութական ծախսերի, գիտական նվաճումների և մարդկային գործոնի համակողմանի հաշվառում: Տվյալ դեպքում ղեկավար սկզբունք պետք է լինի ձգտումը ապահովելու ԶՈՒ-ի առավելագույն մարտունակությունը՝ նյութական, մարդկային ու ֆինանսական ռեսուրսների նվազագույն ծախսման պայմանով:

ԶՈՒ-ի կազմակերպական շինարարության տեսության մյուս կարևոր խնդիրն է դրանց՝ որպես ռազմական կառավարման կենտրոնական մարմինների, ԶՈՒ-ի տեսակների ու զորատեսակների, ԶՈՒ-ի տեսակների կազմի մեջ չմտնող զորքերի ու թիկունքի միասնական փոխկապված համալիրի ռացիոնալ կառուցվածքի զարգացման ուղղությունների հիմնավորումը: ԶՈՒ-ի կազմակերպվածքը պետք է լինի ճկուն և հնարավորություն տա դրանք արագ տեղափոխելու ռազմական դրության, կարճ ժամկետներում կատարելու ռազմական կառավարման կենտրոնական մարմինների, ԶՈՒ-ի տեսակների ու զորատեսակների, ԶՈՒ-ի տեսակների կազմի մեջ չմտնող զորքերի ու թիկունքի անհրաժեշտ կառուցվածքային արդիականացում՝ առանց զգալի նյութական ու ժամանակային ծախսերի:

ԶՈՒ-ի զարգացման արդիական փուլում դրանց կառուցվածքը բավականաչափ բարդ, տարաբնույթ և աստիճանակարգված համակարգ է: Դրա առավել մեծ բաղադրամասերն են ԶՈՒ-ի տեսակներն ու զորատեսակները, որոնք նախանշանակված են որոշակի ֆիզիկական միջավայրում ռազմական գործողություններ վարելու համար: Բոլոր պետությունները բանակաշինության ժամանակ օգտագործում են տեսակային կառուցվածքի այդ սկզբունքը, ընդ որում, ԶՈՒ-ի յուրաքանչյուր տեսակ բաղկացած է զորքերի (ուժերի) տեսակներից, հա-

տուկ զորքերից և թիկունքից, ունի իրեն հատուկ սպառազինությունը, ռազմական տեխնիկան և ռազմական գործողությունների վարման եղանակները:

Ռազմական շինարարության արտասահմանյան և հայրենական փորձը վկայում է, որ ԶՈՒ-ի նոր տեսակ ստեղծվում է միայն այն ժամանակ, երբ նոր տեսակի զենքը գերակայում է մարդկային ուղեղներում, նյութականանում է՝ ապահովելով նախկինում չօգտագործված ֆիզիկական միջավայրում մղվելիք զինված պայքարի միջոցի քանակություն ու որակ, և դրանով իսկ վերածվում է այնպիսի կարևոր ռազմական գործոնի, որը արմատապես փոխում է ընդհանուր առմամբ պատերազմի բնույթի, ինչպես նաև պետության անվտանգության ապահովման գծով միջոցառումների բովանդակության վերաբերյալ տեսակետները:

Ներկայումս առանձնակի կարևորություն է ստանում զորամիավորումների, զորամասերի և կառավարման մարմինների կազմակերպահաստիքային կառուցվածքի հետազոտումը՝ ՍՌՏ անընդհատ աճող մարտական հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործումը ապահովելու, զորքերի (ուժերի) հարվածային հզորությունը և տարաշարժային հնարավորությունները, ինչպես նաև կառավարման հուսալիությունը մեծացնելու նպատակով: Ընդսմին ծագում է զորքերի (ուժերի) կազմակերպման նկատմամբ օպերատիվ-մարտավարական պահանջների հետագա զարգացման անհրաժեշտություն:

Նշենք այդ պահանջներից, մեր կարծիքով, առավել գլխավորները.

– կազմակերպվածքի և տարասեռ ուժերի կողմից վարվող մարտական գործողությունների համապատասխանությունը,

– տարբեր տեսակի զենքերի կիրառմամբ մարտական խնդիրների կատարման ժամանակ զինվորական կազմավորումների օպերատիվ-մարտավարական ինքնուրույնությունը,

– մեծ շարժունակությունն ու տարաշարժունությունը,

– զորքերի (ուժերի) կառուցվածքի այնպիսի կայունությունն ու միօրինակությունը, որոնք բացառեն ՍՌՏ-ով սպառազինման ու համալրման աստիճանի փոփոխման դեպքում այդ կառուցվածքի հաճախակի արմատական փոփոխության անհրաժեշտությունը,

– կառավարման հարմարավետությունը, հուսալիությունն ու անընդհատությունը,

– տարբեր ֆիզիկաաշխարհագրական պայմաններում մարտական գործողություններ վարելու ունակությունը:

Բացի այդ, ԶՈՒ-ի տեսակների զորամիավորումների (զորամասերի) կազմակերպվածքը պետք է լինի պարզ և տնտեսապես նպատակահարմար, այսինքն՝ ունենա յուրաքանչյուր կազմակերպական միավորին բաժին հասնող օպտիմալ քանակությամբ անձնակազմ և ռազմական տեխնիկա՝ դրանց առավելագույն մարտական կարողությունների ապահովման պայմանով:

Զորային կազմավորումների հիմնական կազմակերպական կառուցվածքներն են.

– մարտական օղակում՝ ջոկը (անձնակազմ, մարտահաշվարկ), դասակը, վաշտը, մարտկոցը, էսկադրիլիան, գումարտակը, դիվիզիոնը, գունդը, բրիգադը, դիվիզիան,

– օպերատիվ օղակում՝ կորպուսը, բանակը,

– օպերատիվ-ռազմավարական օղակում՝ ռազմաճակատը, խաղաղ և պատերազմական ժամանակի զինվորական օկրուգը:

Այսպիսով՝ ԶՈՒ-ի կերպարանքը էապես պայմանավորված է պաշտպանության կարիքների համար կատարվող հատկացումներով, ընդսմին զորքերը (ուժերը) բնութագրող կարևոր բաղադրիչն է դրանց զինվածությունը նորագույն նմուշների ու համակարգերի ՍՌՏ-ով, որոնք էլ պայմանավորում են ընդհանուր առմամբ պատերազմական ռազմավարությունը, զինված պայքարի ձևերն ու եղանակները, զորամիավորումների ու զորամասերի մարտավարությունը և կազմակերպահաստիքային կառուցվածքը:

Ամփոփելով՝ շեշտենք, որ բանակաշինության տեսությունը հնարավորություն է տալիս պարզորոշելու ԶՈՒ-ի շինարարության օբյեկտն ու առարկան, ԶՈՒ-ի զարգացման ու գործունեության օրինաչափություններն ու սկզբունքները: Միևնույն ժամանակ, բանակաշինության տեսության զարգացումը և ԶՈՒ-ի հետագա շինարարության ու զարգացման գիտական հիմնավորումը անհնար են առանց կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարով դրանց կերպարանքի ռազմատնտեսական հիմնավորման, պլանավորման ու մեթոդաբանության համակարգի կատարելագործման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Махмут Гареев.* Военная наука на службе обороноспособности. «Независимое военное обозрение», 01.04.2011 (http://nvo.ng.ru/concepts/2011-04-01/1_science.html).

2. *Ганс Дельбрюк.* История военного искусства в рамках политической истории. Т. 4. СПб., 1996.

3. *А. А. Кокошин.* О революции в военном деле в прошлом и настоящем. М., 2006.

4. *С. Л. Печуров.* Англо-саксонская модель управления в военной сфере: история и современность. М., 2005.

## К ВОПРОСУ О ПРОГРЕССИВНЫХ МОДЕЛЯХ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ

*Л. А. МАРТИРОСОВ, генерал-лейтенант, Первый заместитель Главного военного инспектора Президента Республики Армения*

РЕЗЮМЕ

Войсковая структура представляет собой фиксированную совокупность иерархически расположенных центральных органов военного управления, видов и родов войск ВС, войск, не входящих в виды ВС, тыла ВС и его компонентов. Вместе с количеством и составом она образует одну из главных составляющих облика ВС, формирование которого необходимо рассматривать в контексте строительства Вооруженных сил.

Модель структуры ВС определяется выбором облика ВС, являющегося целью строительства ВС и осуществляемого на основе теории этого строительства. Для обеспечения эффективности строительства ВС необходимо, с одной стороны, теоретически обосновать его — по возможности с упреждением по времени, с другой — постоянно сверять теорию с реальной действительностью.

При выборе облика ВС следует исходить из той посылки, что он должен в общей системе военной организации государства удовлетворять потребности обеспечения вооруженной защиты национальных интересов и соответствовать его экономическим и мобилизационным возможностям. При этом модель структуры ВС выбирается с учетом ее органической связи с наперед определенными количественно-качественными параметрами ВС.

Организационная структура ВС должна быть гибкой и позволять осуществлять их быстрый перевод на военное положение, в короткие сроки реализовывать необходимую структурную модернизацию центральных органов военного управления и других составляющих без значительных затрат материальных ресурсов и времени. Главными требованиями являются: высокая боевая готовность; соответствие организационной структуры и военных действий, ведущихся разнородными силами; оперативно-тактическая самостоятельность воинских формирований; достаточная оснащенность современной техникой и вооружением; высокая мобильность и маневренность; стабильность и унифицированность структуры войск (сил); удобство, надежность и непрерывность управления; простота и экономическая целесообразность.

Каждое государство при обосновании и принятии решений в данной области должно исходить из общих задач обеспечения своей военной безопасности с нацелом на наиболее оптимальный вариант на основе учета современных параметров вероятной войны, своих возможностей, в первую очередь — экономических и мобилизационных, объективных факторов глобальных, региональных, географических и других особенностей физического и функционального пространства существования государства и деятельности его ВС, в том числе места и роли государства в системе международных отношений.

## ON THE ISSUE OF ADVANCED MODELS FOR THE IMPROVEMENT OF THE TROOP STRUCTURE

*L. A. MARTIROSOV, Lieutenant General, First Deputy Chief Military Inspector of the President of the Republic of Armenia*

SUMMARY

The troop structure is a fixed set of hierarchically arranged central bodies of the military management, of the types of troops and corps of the Armed Forces, of the troops that are not included in the types of the Armed Forces, of the rear of the Armed Forces and its components. Together with the

number and composition, it makes up one of the main components of the Armed Forces image, the formation of which should be considered in the context of the Armed Forces construction.

The model of the Armed Forces structure is determined by the choice of their image being the aim of the Armed Forces construction and carried out on the basis of the theory of that construction. For ensuring the efficiency of the Armed Forces construction, on the one hand, a theoretical substantiation is needed — possibly predictive one, on the other hand — a constant comparison of the theory with the reality.

When selecting the image of the Armed Forces one should base on the premise that it must meet the needs for ensuring the armed protection of the national interests and conform to its economic and mobilization capabilities within the general system of the state's military organization. In this case the model of the Armed Forces structure is selected taking into account its organic link with the pre-defined quantitative and qualitative parameters of the Armed Forces.

The organizational structure of the Armed Forces must be flexible and allow the fulfilment of their rapid transfer to a martial law. In a short period of time it must implement the necessary structural upgrading of the central bodies of the military management and other components without wasting significant material resources and time. The main requirements are: the high level of operational readiness; the compliance of the organizational structure with the military actions pursued by different forces; the operational and tactical independence of the troop formations; the sufficient provision with modern weapons and equipment; the high mobility and maneuverability; the stability and commonality of the troop structure; the convenience, reliability and continuity of the management; the simplicity and the economic expedience.

Every state, when justifying and making decisions in this sphere, should proceed from the overall objectives of ensuring its military security targetting at the most optimal variant which is based on the regard for modern parameters of a possible war, its capabilities — in the first place — economic and mobilization, the objective factors of global, regional, geographical and other features of the physical and functional space of the state's existence and activities of its Armed Forces, including the place and role of the state in the system of international relations.

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

*Լ. Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, ՀՀ ՊՆ Պաշտպանական քաղաքականության վարչության պետ, 2-րդ դասի պետական խորհրդական*

Դասական իմաստով զինված ուժերը պետության կողմից ստեղծվող զինված (սպառազինված) կազմակերպություն են, որը կոչված է ցանկացած պատերազմի կամ ագրեսիայի դեպքում պաշտպանելու պետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և բնակչության անվտանգությունը: Այս ձևակերպումը իմաստային առումով գրեթե նույնությամբ արտացոլված է յուրաքանչյուր պետության զինված ուժերի սահմանմանն առնչվող օրենսդրական ակտերում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ նշվում է, որ «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը», իսկ «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում Զինված ուժերը սահմանվում են որպես «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույց, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության զինված պաշտպանությունը»:

Զինված ուժերի, դրանց կառուցվածքի, կազմի, համալրման եղանակների, ռազմավարության ու մարտավարության և մյուս բոլոր կառուցվածքային ու գործառութային բաղադրիչների զարգացման պատմական ընթացքը մշտապես պայմանավորվել է պետության և հասարակության հաստատութենական համակարգերի առանձնահատկություններով: Կայսրությունների ձևավորումը, մեծ պատերազմները և գիտատեխնիկական առաջընթացը այն հիմնական գործոններն են, որոնք խթանել են զորային կառույցների և ռազմական արվեստի զարգացումը:

**Հին հռոմեական շրջան:** Ներկայիս զինված ուժերի պատկերի վրա մեծ ազդեցություն են ունեցել հատկապես Հռոմեական կայսրության ռազմական ավանդույթները: Դրանց հիմնական մասը, համապատասխանեցվելով ժամանակի պահանջներին, ներդրվել է պետությունների զինված ուժերում:

Մինչև 2-3-րդ դարերը հռոմեական բանակը կազմված էր ընդամենը 2 զորատեսակից՝ հետևակից և նավատորմից: Սակայն 4-րդ դարում հետևակից առանձնացվեցին նիզակակիրները, հետախույզները, ռազմանվագախմբային ծառայությունը, փոխադրումներ կատարող ծառայությունը (զորամասերի՝ միմ-

յանցից շատ հեռու գտնվելու պատճառով), կայազորային ծառայությունը (անծայրածիր սահմանների երկայնքով տեղակայված բազմաթիվ ամրաշինական կառույցների առկայության պատճառով) և այլն: 5-րդ դարի սկզբին այդ զորատեսակներում ծառայողների ընդհանուր թվաքանակը կազմում էր զինված ուժերի մոտավորապես 20 տոկոսը: Հատկապես արագ զարգացում ապրեց հեծելազորը՝ որպես առանձին մարտավարական միավոր: Արդեն 4-րդ դարի վերջին հռոմեական հեծելազորի թվաքանակը կազմում էր 30 հազար:

Հետաքրքրական են նաև Հռոմեական կայսրության Զինված ուժերի համալրման համակարգը և դրա զարգացման ընթացքը: Այն հիմնված էր կամավոր հավաքագրման սկզբունքի վրա, թեև գործում էր նաև պարտադիր զորահավաքը, որը քվոտավորված էր խոշոր հողատերերի միջև և ավելի սակավ չափաբաժին էր կազմում: Կամավոր հավաքագրման սկզբունքի արդյունավետությունը պայմանավորված էր զինծառայողներին տրվող զգալի արտոնություններով՝ բարձր վարձատրությամբ և առաջխաղացման ճկուն համակարգով: Արդեն 2-րդ դարից սկսած, երբ Հռոմեական կայսրության սահմաններն ընդլայնվեցին ամբողջ Եվրոպայով, կամավոր հավաքագրման համակարգը մեծ զարգացում ապրեց: Մարդկային ռեսուրսների քանակական աճումը հանգեցրեց զորակոչի տարիքային սահմանափակումների ներդրման. նվազագույն տարիքը 20, իսկ առավելագույնը՝ 25 տարեկանն էր: Ավելի ուշ զորակոչի նվազագույն տարիք սահմանվեց 19, իսկ զորացրման՝ 35 տարեկանը: Հիմնականում բարբարոսների հավաքագրման և տարբեր ցեղերի հետ պայմանավորվածությունների շնորհիվ 4-րդ դարում Հռոմեական կայսրության մշտական (պրոֆեսիոնալ) Զինված ուժերի թվաքանակը հասավ 500–600 հազարի:

Այդ բոլոր փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև զինված ուժերի ղեկավարման համակարգի վրա: Իր մայրամուտին՝ 5-րդ դարի սկզբին, իրագործված ռազմական բարեփոխումների հետևանքով Հռոմեական կայսրության տարածքով մեկ սփռված տարբեր թվաքանակ և կառուցվածք ունեցող ստորաբաժանումները (լեգեոններ, վարձկանների ստորաբաժանումներ, տարբեր ուղղությունների սահմանապահ ուժեր և այլն) միօրինակացվեցին: Միօրինակացվեցին նաև հրամանատարական շղթան, զինվորական կոչումների և առաջխաղացման համակարգը: Սահմանապահ մարզերում, որտեղ ըստ էության տեղակայված էր բանակի գերակշիռ մասը, տարանջատվեցին քաղաքացիական և զինվորական գործառույթները:

**Վաղ միջնադար**: Հռոմեական կայսրության փլուզումը և ավատատիրությանը բնորոշ մասնատվածությունը խիստ բացասաբար ազդեցին զորային կառույցների կազմակերպման քանակական ու որակական պարամետրերի, ինչպես նաև ռազմական արվեստի վրա: Ըստ էության, մինչև 16–17-րդ դարերը զինվորական ավանդույթները անկում էին ապրում*: Բազմաթիվ փոքր և միջին պետական ու ոչ պետական կազմավորումների առկայությունը, ասպետական

* Խոսքը վերաբերում է Արևմտյան Եվրոպային, քանի որ և՛ Բյուզանդիան, և՛ մոնղոլ-թաթարները, և՛ Եգիպտոսը մշակել էին որոշակի ռազմավարություն և կառավարման համակարգ:– *Խմբ.*:

ավանդույթները, զանազան ասպետական միաբանությունները և կրոնական շարժումները, բազմաթիվ փոքր զինված բախումները (ըստ էության, միջնադարյան պատերազմներ կոչվածները փոքրաթիվ ռազմական ուժի ներգրավմամբ երկարաժամկետ զինված բախումներ էին) խոչընդոտում էին ռազմական ավանդույթների զարգացմանը:

Նման պայմաններում Եվրոպայում գրեթե չկար նաև մարտավարական և ռազմավարական արվեստ, այդ թվում՝ կառավարման համակարգ: Մարտին մասնակցող թագավորները ոչ թե զորքի հրամանատար էին, այլ առաջին ասպետը: Մարտի ժամանակ կիրառվող մարտավարությունը ավելի շատ նմանվում էր խմբային մենամարտի, քան պլանավորված ճակատամարտի: Հակառակորդին մոտենալու համար սովորաբար կազմավորվում էր 400 հոգուց բաղկացած հեծելախումբ, որը շարվում էր 12-14 հոգանոց մարտաշարքով: Նման զորախմբերը սովորաբար չէին ունենում որևէ հրամանատարություն: Պաշտպանությունը խոցելու համար հեծելազորի առաջին շարքերը դասավորվում էին եռանկյունաձև (1,3,5, մինչև 14 շարքերով), իսկ մերձամարտի ժամանակ շարքերն արդեն չէին պահպանվում, և զորախումբը ցրվում էր քաոսային ձևով, քանի որ ասպետական ավանդույթները խրախուսում էին մենամարտը, և ընդունված չէր մարտում փոխադարձ օգնությունը: Քանի որ ասպետները կազմում էին ծանր զրահապատ հեծելազորը, միջնադարյան մարտարվեստում (Եվրոպայում) հետևակը կամ աղեղնավորները մարտի ժամանակ լուրջ դերակատարություն չունեին (թեև Հարյուրամյա պատերազմում, օրինակ, Պուատիեի ճակատամարտում անգլիացիների հաղթանակը գերազանցապես պայմանավորեցին անգլիացի նետաձիգները): Ճակատամարտերի ժամանակ հիմնականում չկային նաև պահեստային ուժեր, քանի որ չկառավարվող ասպետական զորախմբում յուրաքանչյուրը փորձում էր առաջինը մտնել մարտի մեջ:

Մարտի ժամանակ զոհերի թվաքանակը համեմատաբար քիչ էր լինում, քանի որ ասպետները, մենամարտելով ասպետների դեմ, որպես միևնույն խավի և աշխարհայացքի ներկայացուցիչներ հարգում և խնայում էին միմյանց: Այնուամենայնիվ, ընդունված է, որ միջնադարյան պատմագիրները, ասպետական ճակատամարտերը նկարագրելիս, զերծ են մնացել քննադատությունից և խիստ չափազանցված մոտեցում են ցուցաբերել՝ դրանք ներկայացնելով Հռոմեական ժամանակաշրջանը հիշեցնող ռազմարվեստի և մարտավարական մտահղացումների լույսի ներքո:

Գրեթե նույն վիճակում էր նաև ռազմավարական արվեստը: Դրանով են պայմանավորված խաչակրաց արշավանքների անհաջողությունները: Նույնիսկ Երրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ, որը համարվում է ամենակազմակերպվածը (կազմակերպված էր պետականորեն, այն գլխավորում էին Ֆրիդրիխ 1-ին կայսրը, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի թագավորները, սահմանված էր արշավանքի համար նախատեսված հատուկ հարկ, ռազմիկների ընտրությունը կատարվում էր այնպիսի ընթացակարգով, որպեսզի նրանք ինքնապահովված լինեն երկամյա ժամանակաշրջանի համար, սննդամթերքի մատակարարումը կազմակերպվում էր հարակից երկրների տարածքներից և այլն), թեև եղան մար-

տավարական հաղթանակներ (օրինակ՝ ջախջախվեց սելջուկների բանակը), սակայն չհաջողվեց Արևելքում ձեռք բերել դաշնակիցներ, ամրագրել այդ հաղթանակները և հասնել լուրջ ռազմավարական նվաճումների:

Միջնադարյան Եվրոպայում չէին գործում նաև համալրման և թիկունքային ապահովման հստակ համակարգեր: 6–7-րդ դարերում զորակոչային համակարգն ընդհանրապես վերացավ, և այն փոխարինվեց ավատատիրական կարգերին բնորոշ ավատառվական (վասալական) համակարգով (զինվորական ծառայությունը ներառվեց ավատառուների պարտականությունների ցանկում), ինչը ավատատիրական մասնատվածության պայմաններում հնարավորություն չէր տալիս հավաքագրելու մեծաթիվ զորք: Չկար նաև թիկունքային ապահովման համակարգ: Ըստ էության, յուրաքանչյուր ռազմիկ պարտավոր էր իր հետ ունենալ սննդի և անձնական պարագաների մեծ պաշար (1–3 ամիսների համար): Դա հանգեցնում էր այն բանին, որ անխտիր բոլորը՝ և՛ ասպետները, և՛ հպատակները, իրենց հետ վերցնում էին սպասարկող անձնակազմ և հավելյալ գույք (ծառաներ, զինակիրներ, սայլերով սննդամթերք և այլն): Երկու ռազմիկի համար նվազագույնը անհրաժեշտ էր մեկ սայլ՝ գույքը տեղափոխելու համար: 5-6 հազարանոց զորախմբի հետևից գնում էին 2-3 հազար սայլ և մեծ քանակությամբ ծառաներ: Այդ ժամանակ ամենամեծ բանակը թվապես չէր գերազանցում 10 հազարի սահմանը:

Զինվորական ծառայությունը նաև բավական թանկ արժեր: Օրինակ՝ 9-րդ դարում մեկ ասպետի զրահապատ հանդերձանքը և ձին ունեին մոտավորապես 45 խոշոր եղջերավոր անասունի գին: Եթե դրան ավելացնենք նաև սայլերի ձեռքբերման ու սննդամթերքի պաշարով համալրման, ծառայի և զինակրի հանդերձավորման (նույնպես զրահապատ) և այլ ծախսեր, ապա մեկ ասպետի ծախսը համարժեք էր մեկ ամբողջ գյուղի խոշոր եղջերավոր անասունների գնին:

Այս ամենի պատճառով միջնադարյան Եվրոպայում պատերազմները, որպես այդպիսիք, կրում էին մեծ ընդհատումներով բախումների բնույթ, և քիչ թե շատ կազմակերպված կողմը կարողանում էր հաղթանակի հասնել: Օրինակ՝ Կառլոս Մեծը 33 տարում՝ 772–804 թթ., կարողացավ գրավել սաքսերի մարզերը (ինչը չէին կարողացել անել հռոմեական լեգեոնները 8 անգամ ավելի մեծ ուժերով) ոչ թե իր ուժերի թվային ու որակական գերազանցության, այլ հակառակորդի գերպառակտվածության և անկազմակերպվածության հետևանքով:

Միջնադարյան եվրոպական ռազմական ավանդույթների զարգացման հաջողված օրինակներից էր Կիլիկյան Հայաստանը: Այդ հաջողության հիմնական գրավականն այն էր, որ և՛ իշխանության, և՛ թագավորության շրջանում հայ կառավարող տները կարողացան համադրել եվրոպական, հայկական և արևելյան ռազմական արվեստը, ինչի շնորհիվ շուրջ երեք դար Կիլիկյան Հայաստանը գոյատևեց բարդ ռազմաքաղաքական միջավայրում և չդադարող արշավանքների ու պատերազմների պայմաններում:

Թեև Կիլիկյան Հայաստանում նույնպես չէր կատարվում զորակոչ, և զինվորական ծառայությունը մտնում էր ավատառուների պարտականությունների մեջ, սակայն բանակի հիմքը հանդիսացող այրուձին (որը, ի դեպ, դարձյալ

կազմված էր ազատ ասպետներից) անհամեմատ ավելի կազմակերպված էր: Բացի այդ, ավելի հստակ էին կազմակերպված բանակի ղեկավարման և համալրման համակարգերը:

Դրա հիմնական պատճառն այն էր, որ Կիլիկյան Հայաստանում զինվորական ծառայությանը առանձնահատուկ տեղ էր տրվում: Օրինակ՝ բանակի (ցամաքային և ծովային ուժեր) հրամանատարը՝ Սպարապետը (Գունդստաբլ) իր կարգավիճակով առանձնանում էր մյուս պաշտոնյա ազնվականներից: Այն ոչ թե ժառանգական պաշտոն էր, այլ թագավորը սպարապետ էր նշանակում իր առավել հավատարիմ ավատատերերի թվից: Սպարապետն ուներ բացառիկ իրավունքներ, ներառյալ՝ թագաժառանգի խնամակալությունը, այդ իսկ պատճառով նա մեծ հեղինակություն էր վայելում:

Հաջորդ կարևոր պաշտոններն էին սպասալարի և այսպես կոչված «մարաջախտի» պաշտոնները: Սպասալարը հեծելազորի հրամանատարն էր (երբեմն նաև ամբողջ ցամաքային ուժերի, ներառյալ՝ աշխարհազորը) և բանակում զբաղեցնում էր սպարապետից հետո ամենակարևոր պաշտոնը, իսկ մարաջախտը՝ մատակարարման պետը, պատասխանատու էր և՛ սպառազինության, և՛ սննդամթերքի մատակարարումների համար:

Կիլիկյան Հայաստանի Զինված ուժերում կար նաև կապիտանի պաշտոն: Խաղաղ ժամանակ կապիտանները տարբեր բնակավայրերում կատարում էին նաև վարչական և ոստիկանական գործառույթներ: Այս հանգամանքը թագավորին հնարավորություն էր տալիս Սպարապետի միջոցով արդյունավետ կերպով վերահսկելու պետության ամբողջ տարածքը:

Հատկանշական է, որ խաչակրաց արշավանքների ժամանակ եվրոպացիները ոչ միայն Կիլիկյան Հայաստան բերեցին եվրոպական ռազմական ավատատիրական ավանդույթներ, տերմինաբանություն և այլն, այլև իրենք՝ խաչակիրները, Կիլիկյան Հայաստանից ընդօրինակեցին շատ ռազմական ավանդույթներ, հատկապես՝ պաշտպանության կազմակերպման գործում (օրինակ՝ խաչակիրների կողմից հիմնված պետություններում լայնորեն կիրառված կլոր ամրաշինական-պաշտպանական աշտարակները փոխառվել են Կիլիկյան Հայաստանից):

**Վերածնդի շրջան:** Ինչպես նշվեց, վաղ միջնադարյան ռազմական ավանդույթները և ռազմարվեստ չլինելու հանգամանքը պահպանվեցին մինչև 16–17-րդ դարերը, երբ նոր աշխարհագրական նվաճումների շնորհիվ Եվրոպայում սկսվեց կապիտալի կուտակում: Արդեն 17-րդ դարում Եվրոպան տեխնիկական առումով հասավ Հռոմեական կայսրության մակարդակին, իսկ 18-րդ դարում այդ մակարդակին մոտեցավ նաև զինված ուժերի քանակական ու կազմակերպական պարամետրներով: Պարտադիր զինվորական ծառայության առումով Եվրոպան Հռոմեական կայսրության մակարդակին կարողացավ հասնել Ֆրանսիական մեծ հեղափոխության շրջանում (երբ պարտադիր զինվորական ծառայության ներդրման հետևանքով զորակոչվում էր արական բնակչության 4–5 տոկոսը):

Եվրոպայում ռազմական արվեստի վերածննդի գործում շրջադարձային եղան այն բարեփոխումները, որոնք իրագործեցին Մորից Օրանացին (Հոլանդիայի՝ որպես անկախ պետության հիմնադիր Վիլհելմ 1-ին Օրանացու որդին)՝ Հոլանդիայում և Գուստավ 2-րդ Ադոլֆը (Կառլոս 9-րդի որդին)՝ Շվեդիայում:

***Մորից Օրանացու և Գուստավ 2-րդ Ադոլֆի բարեփոխումները:*** ՈՒսումնասիրելով հռոմեական բանակը՝ Մորից Օրանացին կատարեց հիմնարար նորամուծություններ, որոնք օգտագործվեցին ժամանակի բանակների կազմակերպման ու գործունեության մեջ: Օրինակ՝ նա առաջին անգամ կիրառեց «Զգաստ» հրամանը, շարքում լիակատար լռություն պահպանելու սկզբունքը, շարային քայլքը, անմիջական հրամանի հասկացությունը (մինչև 16-րդ դարի կեսերը Եվրոպայում հրամանատարը միայն կարգադրություններ էր տալիս, այլ ոչ թե անմիջական հրամաններ): Այդ նպատակով հին լատիներենից և հունարենից թարգմանվեցին ավելի քան 50 հրամաններ (աջ դա՛ռձ, ձախ դա՛ռձ, քայլով մա՛ռշ և այլն), ներդրվեց շարային պատրաստումը՝ իր բոլոր բաղադրիչներով, շեփորի ազդանշանով շարվելը (օրինակ՝ այն ժամանակ առաջատար համարվող իսպանական բանակին 1000 զինվոր շարելու համար անհրաժեշտ էր մոտ մեկ ժամ, իսկ Մորից Օրանացին կարողացավ 22 րոպեում շարել 2000 զինվորի):

Մորից Օրանացին առաջին անգամ կիրառեց նաև խրամատների և ականապատման մարտավարությունը (մինչ այդ հնարավոր չէր պատկերացնել, որ զինվորը կատարի հողային աշխատանքներ):

Ոչ պակաս կարևոր էին շարքային և սպայական կազմերի պատրաստման ոլորտում իրագործված բարեփոխումները: Մինչև Մորից Օրանացու բարեփոխումները շարքային կազմը և սպայակազմը (հիմնական մարտական միավորը վաշտն էր, վաշտի հրամանատարը՝ կապիտան) մարտից դուրս զբաղվում էին միայն հարբեցողությամբ և մոլախաղերով: Մորից Օրանացին առաջին անգամ սպայակազմի համար նախատեսեց հատուկ պատրաստման դասընթացներ և ինքնապատրաստման ժամեր, ինչպես նաև շարքային կազմի շարային պատրաստման ժամեր: Սպաների համար որպես պարտադիր պահանջ սահմանվեց լատիներենի, շարային պատրաստության, մարտավարության, մաթեմատիկայի իմացությունը: Բացի այդ, սպաների վրա դրվեց զինվորներին կրթելու և դաստիարակելու պարտականություն: Այս ամենի հետևանքով սպայակազմը որակապես փոխվեց, կրթված խավերի ներկայացուցիչներն սկսեցին ոչ թե զորակոչվել որպես զինվորներ, այլ համալրել սպայակազմի շարքերը:

Որակ ապահովելու նպատակով սպայակազմի պարտականությունների ընդլայնմանը զուգահեռաբար վաշտի կազմը 500 հոգուց կրճատվեց մինչև 100-ի, որոնցից 28-ը սպայական և ենթասպայական հաստիքներ էին:

Նմանատիպ բարեփոխումներ իրագործվեցին նաև Շվեդիայում: Դեռ Կառլոս 9-րդը կարողացավ պարտադրել ազնվականությանը՝ բանակում զբաղեցնել հրամանատարական պաշտոններ և ստանձնել պետության կառավարման գործառույթներ, ինչը գրեթե 100 տարի հետո հաջողվեց անել նաև Պրուսիայում և Ռուսաստանում: Դրա հետևանքով Շվեդիայի Զինված ուժերի ամբողջ սպայակազմը համալրվեց ազնվական ծագում ունեցողներով: Գուստավ 2-րդ Ադոլֆի

իրագործած բարեփոխումներից առավել հատկանշական էին մարտավարության բնագավառում կատարված փոփոխությունները: Մասնավորապես՝ նա էապես կրճատեց տեգակիրների թիվը՝ փոխարենը ավելացնելով հրացանակիրներինը (շվեդական գնդերի 2/3-ը բաղկացած էր հրացանակիրներից, 1/3-ը՝ տեգակիրներից, իսկ որոշ գնդեր ամբողջովին համալրված էին հրացանակիրներով): Դա նրան հնարավորություն տվեց փոփոխելու նաև մարտի ժամանակ զորային շարակազմը (հրացանակիրները շարվում էին 3 շարքով՝ տեգակիրների 6 շարքի փոխարեն): Շարքերի միջև տարածությունը և տողանների միջև հեռավորությունը կազմում էր մեկ մետր: Նման դասավորության պայմաններում կրակը վարվում էր ըստ ջոկերի և տողանների: Շարակազմում 3 շարք թողնելը (օրինակ՝ իսպանական բանակում շարակազմը 10–50 շարք էր) հնարավորություն տվեց առավելագույնս օգտագործելու ձեռքի հրազենի հնարավորությունը և մեծացնելու կրակային խոցման ինտենսիվությունը:

Նոր մարտավարությունը պահանջում էր նաև բանակի նոր կազմակերպական կառուցվածք: Գուստավ 2-րդ Ադոլֆը գնդերի թվակազմը նվազեցրեց մինչև 1300-1400 հոգու: Գունդը կազմված էր 3 գումարտակից և ուներ 576 տեգակիր, 648 հրացանակիր և գնդային նշանակության հրազեն (հիմնականում՝ գնդացիր): Հիմնական մարտավարական միավորը գումարտակն էր, որը կազմված էր 4 վաշտից: Յուրաքանչյուր վաշտ կազմված էր 48–54 տեգակրից, 54–82 հրացանակրից և 18 պահեստային զինվորից: Մարտական կազմով 3–4 գումարտակները միավորվում էին մեկ բրիգադում:

Նույն տրամաբանությամբ վերակազմավորվեց նաև հեծելազորը: Հեծելազորի վարչական միավորը գունդն էր (512–528 հեծյալ), որը կազմված էր հեծելավաշտերից (էսկադրոններից)՝ 125 հեծյալ: Հեծելավաշտը հիմնական մարտավարական միավորն էր, իսկ կոռնետը (դասակ)՝ հիմնական մարտական միավորը: Մեկ հեծելավաշտը կազմված էր 4 դասակից:

Մորից Օրանացու և Գուստավ 2-րդ Ադոլֆի իրագործած բարեփոխումներն ըստ էության նախանշեցին Եվրոպայում ռազմական ավանդույթների և ռազմարվեստի վերածնունդը և հիմք ծառայեցին եվրոպական մյուս բանակներում բարեփոխումներ ձեռնարկելու համար: Նմանատիպ բարեփոխումներ իրագործեցին՝ Ավստրիայում ֆելդմարշալ Ռայմունդ Մոնտեկուկոլին (1664 թ. ջախջախելով թուրքական բանակը՝ ստացավ «քրիստոնեության փրկիչ» մականունը), Ֆրանսիայում մարշալ Թյուրենը (Ֆրանսիայի գլխավոր մարշալ, մորական կողմից՝ Վիլհելմ 1-ին Օրանացու թոռը), Ռուսաստանում Պետրոս Մեծը և Անգլիայում Օլիվեր Կրոմվելը: Հռոմեական ռազմական ավանդույթների հիման վրա Մորից Օրանացու և Գուստավ 2-րդ Ադոլֆի մշակած ռազմարվեստի կիրառման ու զարգացման գագաթնակետը դարձավ պրուսական բանակը՝ Ֆրիդրիխ Մեծի օրոք (1740–1786 թթ.): Ռազմական արվեստի հետագա զարգացումը հնարավոր եղավ միայն Ֆրանսիական մեծ հեղափոխության շնորհիվ և Նապոլեոնյան ժամանակաշրջանի հաստատմամբ, ինչն էլ հանգեցրեց աշխարհայացքային փոփոխությունների:

**Նապոլեոնյան ժամանակաշրջան:** Ֆրանսիական մեծ հեղափոխության,

այնուհետև՝ Նապոլեոն Բոնապարտի ժամանակաշրջանում Ֆրանսիան դարձավ Եվրոպայում ամենամեծ ռազմական ներուժն ունեցող պետությունը (իր նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներով): Դա, մի կողմից, պայմանավորված էր հեղափոխական գաղափարներով ոգեշնչված բնակչության աննախադեպ ակտիվությամբ, ազգային ինքնագիտակցության վերելքով, մյուս կողմից՝ ռազմարվեստում կատարված նորամուծություններով:

Դեռ հեղափոխության շրջանում համընդհանուր զինապարտության համակարգի ներդրման շնորհիվ ֆրանսիական բանակի թվաքանակը հսկայական աճ ունեցավ: Զինապարտությունը տարածվում էր արական սեռի 20–25 տարեկան բոլոր քաղաքացիների վրա: Միայն 1805–1807 թթ. Նապոլեոնը հավաքագրեց 420 000 զինվորականի, իսկ 1813–1814 թթ. հավաքագրվածների թիվը հասավ 1 250 000-ի: Ընդ որում, Նապոլեոնը կարողացավ դասալքությունը հասցնել նվազագույնի: Եթե, օրինակ, Ֆրիդրիխ Մեծը մշակել էր դասալքության դեմ պայքարի վերահսկողության և պատժամիջոցների համակարգ, ապա Նապոլեոնը կիրառում էր գաղափարադաստիարակչական մարտավարություն: Նույն մարտավարության վրա էր հիմնված նաև կարգապահությունը: Դրա արդյունավետության գրավականը բանակում հեղափոխական գաղափարախոսությամբ ներմուծված ընկերային սկզբունքն էր: Ազնվականությանը զրկելով սպայական մենաշնորհից՝ Նապոլեոնը յուրաքանչյուր զինվորի համար ստեղծեց պաշտոնեական առաջխաղացման հնարավորություն: Այլևս սպան չէր ընկալվում որպես միապետի նշանակած վերադաս (սոցիալական ծագումը, հարստությունը կամ կրթությունը հեղինակություն ձեռք բերելու գրավական չէին), այլ՝ որպես ավագ ընկեր և առաջնորդ: Գեներալներն ու սպաները առավել մեծ փորձ ունեցող զինվորներն էին: Նապոլեոնը բազմիցս շեշտում էր, որ անգրագիտությունը խոչընդոտ չէ պաշտոնեական առաջխաղացման համար:

Նապոլեոնը էապես փոխեց նաև մինչ այդ կիրառվող ռազմավարությունն ու մարտավարությունը: ՈՒՆենալով իր հակառակորդներից զգալիորեն ավելի մեծ ռեսուրսներ՝ նա լիովին հրաժարվեց 18-րդ դարում լայնորեն կիրառվող սահմանային պատերազմների և հակառակորդին հյուծելու ռազմավարությունից՝ սահմանափակ ռազմական նպատակներից անցնելով վճռական նպատակների (18-րդ դարի ռազմավարությունը սահմանափակվում էր որոշակի շրջանների կամ ամրաշինությունների գրավմամբ, հակառակորդին նահանջի պարտադրմամբ և այլ միջոցներով): Նապոլեոնը որպես ռազմական գործողության միակ նպատակ սահմանեց հակառակորդի բանակի լիակատար ջախջախումը, դիմադրություն ցուցաբերելու բոլոր կարողություններից զրկումը և նրա տարածքի գրավումը: Երկարատև ու հյուծիչ ռազմավարության փոխարեն նա որդեգրեց արագ ու կործանարար ռազմավարությունը: Այս ռազմավարության արդյունավետությունը պայմանավորված էր զգալի (հակառակորդին գերազանցող) կարողություններով և կայուն բարոյահոգեբանական մթնոլորտով (զինվորներն ու սպաները չէին խուսափում վճռական մարտից): Ցանկացած պատերազմի ելքը որոշում էին ոչ թե բազմաթիվ փոքր բախումներն ու զորաշարժերը, այլ եզակի վճռական ճակատամարտերը:

Համապատասխանաբար, փոփոխվեց նաև մարտավարությունը: Մարտավարական հաջողության հիմնական գրավականը զորքերի շարժունակությունն ու հեռարշավային կարողություններն էին: Օրինակ՝ մեկ կորպուսի (30 հազար մարդ) խորքային տեղաշարժը 8 կմ էր, իսկ դրանց միջև հեռավորությունը՝ առավելագույնը 2 ժամվա երթ: 19-րդ դարի համար դա աննախադեպ շարժունակություն էր:

Բոլոր ճակատամարտերի ընթացքում Նապոլեոնի կողմից առավել հաճախ կիրառված մարտավարությունը կրակի մեծ խտությամբ կենտրոնացված հարվածն էր: Ընդ որում, ճակատամարտին վճռականություն հաղորդելու և հակառակորդին նահանջի հնարավորությունից զրկելու համար Նապոլեոնը կիրառում էր նաև թևանցման և թիկունքից հարվածի մարտավարություն: Ընդ որում, այդ մարտավարությունը հավասարաչափ վտանգավոր էր երկու կողմերի համար էլ, որովհետև ոչ մի կողմը նահանջի հնարավորություն չէր ունենում: Մասամբ Նապոլեոնի որդեգրած ռազմավարական և մարտավարական ոչ ճշգրիտ հաշվարկներն էին ռուսական արշավանքում և Վաթերլոոյի ճակատամարտում կրած պարտությունների պատճառը:

**Կապիտալիզմի դարաշրջան:** Նապոլեոնի գահընկեցությունից հետո՝ մինչև 19-րդ դարի կեսերը, ռազմական արվեստը դեռ գտնվում էր նապոլեոնյան ազդեցության ներքո և բնութագրվում էր ազգային-ազատագրական պայքարի առանձնահատկություններով: Միայն 19-րդ դարի կեսերին կապիտալիզմի կայացումն ու գիտատեխնիկական առաջընթացը խթանեցին ռազմական արվեստի հետագա զարգացումը: Այս առումով կարելի է առանձնացնել 2 կարևոր փուլ: Առաջին փուլը Գերմանիայի միավորման շրջանում գերմանական բանակում գեներալ-ֆելդմարշալ Հելմուտ ֆոն Մոլտկեի (Ավագ) ձեռնարկած ռազմական բարեփոխումներն ու նորամուծություններն էին, որոնք իրենց կնիքը դրեցին համաշխարհային ռազմարվեստի զարգացման հետագա ընթացքի վրա: Մոլտկեի հաջողության գրավականը գիտատեխնիկական առաջընթացի, նոր նվաճումների (հեռագիր, երկաթուղի, հեռահար զենք) արդյունավետ կիրառումն էր: Դա հանգեցրեց զինված ուժերի կառուցվածքի, ռազմավարության և մարտավարության փոփոխությունների, էապես մեծացրեց զինված ուժերի կառավարելիությունը, շարժունակությունը, հեռահար խոցման հնարավորությունները, կրակի ինտենսիվությունը և այլն:

1888 թ. Բիսմարկի ձեռնարկած ռազմական բարեփոխման ժամանակ Գերմանիայում ներդրվեց ժամկետային պարտադիր ծառայություն՝ 17–45 տարեկանների համար: Ընդ որում, ժամկետային պարտադիր ծառայության ժամկետը սահմանվեց 3 տարի, պահեստազորի համար՝ 4 տարի, 1-ին կարգի զինապարտությանը՝ 5 տարի (27–32 տարեկաններ), 2-րդ կարգի զինապարտությանը՝ 6 տարի (32–39 տարեկաններ), ինչպես նաև ներդրվեց նոր զինապարտության խումբ՝ 12 տարի (20–32 տարեկաններ), որում ընդգրկվեց պարտադիր զինվորական ծառայություն չանցած ամբողջ պահեստազորը: 1893 թ. պարտադիր զինվորական ծառայության ժամկետը կրճատվեց՝ դառնալով 2 տարի, ընդսմին ընդգրկվեց բնակչության 1 %-ը:

Մյուս փուլը պատերազմների վարման բլոկային (դաշնադրային) սկզբունքի ներդրումն էր, որի հեղինակը նույնպես Բիսմարկն է (1883 թ. Ավստրո-Հունգարիայի հետ Եռյակ միության դաշինքի կնքմամբ): Դա համաշխարհային ռազմական պատմության մեջ բլոկային հակամարտության դարաշրջանի սկիզբն էր, որը տևեց մինչև 20-րդ դարի վերջը (Սառը պատերազմի ավարտը):

**Առաջին համաշխարհային պատերազմ:** 20-րդ դարի սկզբի աննախադեպ գիտատեխնիկական առաջընթացը լիովին փոխեց պատերազմների վարման սկզբունքները և ռազմական արվեստն ընդհանրապես: Այս առումով առաջին համաշխարհային պատերազմը նոր մոտեցումների ձևավորման, նոր զինատեսակների ու զորատեսակների կիրառման և նոր մարտավարության մշակման շրջան էր:

Որպես բնութագրական հատկանիշներ կարելի է առանձնացնել հետևյալ փոփոխությունները.

– երկաթուղու զարգացումը ամբողջովին փոխեց զորքերի օպերատիվ ծավալման և տեղակայման տրամաբանությունը, լիովին լուծեց նաև թիկունքային ապահովման խնդիրները (բավական է նշել երկաթուղու դերը պատերազմի ավարտական փուլում: Միայն 1918 թ. մարտ–նոյեմբեր ամիսներին գերմանական վերջին հարձակման ընթացքում Անտանտի ռազմաճակատն ընդունել է պահեստազորային ուժեր փոխադրող 17 հազար գնացք (օրական 198 գնացք) և ապրանքներ փոխադրող 50 հազար գնացք (օրական 424 գնացք)),

– մեխանիզացված տեխնիկայի կիրառումը հանգեցրեց նոր զորատեսակների ստեղծմանը (բեռնատար և զրահապատ ավտոմեքենաներ, տանկեր և այլն),

– հեռախոսի գյուտը և կիրառումը հնարավորություն տվեցին ապահովելու զորքերի լիարժեք կառավարելիությունը ռազմաճակատի ամբողջ երկայնքով,

– շոգենավերի կիրառումը փոխեց ռազմական նավատորմի նշանակությունը և դերը, ստեղծվեց ստորջրյա նավատորմ,

– հրետանու և հրազենի զարգացումն ու լայն կիրառումը փոխեցին մարտի վարման ամբողջ տրամաբանությունը (բոլոր բանակներում կիրառվեցին փամփուշտը, հրացանը և գնդացիրը, ականանետը, հրազենային զենքի հեռահարությունը հասցվեց մինչև 2 կմ-ի),

– ներդրվեց ավիացիան (սկզբում՝ որպես հետախուզման միջոց), տարանջատվեցին ավիացիայի տեսակները (հետախուզական, ռմբակոծիչ, կործանիչ),

– լայն կիրառում ստացան և զարգացան ինժեներական կառույցներն ու ականապատումը (երկարաժամկետ ամրացված շրջաններ, խրամատներ և այլն),

– ռազմական կիրառում ստացավ քիմիան, ստեղծվեցին քիմիական զենքեր,

– նվազագույնի հասցվեց հեծելազորի դերը:

Օպերատիվ-մարտավարական արվեստի զարգացման բնագավառում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները.

– հստակորեն տարանջատվեցին ռազմավարական, օպերատիվ և մարտավարական խնդիրները,

– ներդրվեցին «պաշտպանություն», «հարձակում» և «հակահարձակում» հասկացությունները,

– ներդրվեցին «ռազմավարական և օպերատիվ պահուստներ» հասկացությունները,

– օպերատիվ արվեստից դուրս մղվեց նահանջող զորքի հետապնդումը,

– ճակատամարտի պլանի փոխարեն սկսեցին մշակվել օպերացիաների պլաններ,

– հետևակի մարտակարգը շղթայականից փոխվեց մարտական խմբերի,

– դիվիզիայի հարձակման ճակատը հասցվեց 3 կմ-ի, գումարտակինը՝ 500–600 մ-ի,

– գումարտակի, գնդի, դիվիզիայի և կորպուսի մարտակարգը շարակարգվեց (էշելոնացվեց) (8–10 կմ խորությամբ 2, իսկ պատերազմի վերջում՝ 3 շարակարգ),

– պաշտպանության խորության մեծացման հետևանքով հիմնական պայքարն սկսեց ծավալվել ոչ թե առաջին, այլ երկրորդ գծում՝ տեղափոխելով պաշտպանական մարտի ծանրության կենտրոնը:

Պատերազմի ընթացքում Եռյակ միության պետություններում զորակոչվեց 25 մլն, իսկ Անտանտի պետություններում՝ 48 մլն մարդ (Գերմանիա՝ 13,0 մլն, Ավստրո-Հունգարիա՝ 9,0 մլն, Ռուսաստան՝ 19,0 մլն, Ֆրանսիա՝ 8,2 մլն, Անգլիա՝ 9,5 մլն, ԱՄՆ՝ 3,8 մլն մարդ): Պատերազմի ընդհանուր զոհերի թիվը կազմեց 10 մլն, վիրավորներինը՝ 20 մլն մարդ: Ռազմաճակատների ընդհանուր երկարությունը կազմեց 4000 կմ՝ 350–480 կմ խորությամբ:

**Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև Սառը պատերազմի ավարտը:** Առաջին համաշխարհային պատերազմի փորձը մեծ ազդեցություն ունեցավ երկրորդ համաշխարհային պատերազմի բնույթի, ռազմավարական և օպերատիվ-մարտավարական արվեստի, զինված ուժերի կառուցվածքի վրա: Երկու պատերազմների միջև եղած ժամանակահատվածում կատարվեցին առաջին համաշխարհային պատերազմի արդյունքների բազմաթիվ ուսումնասիրություններ: Դրա հետևանքով բոլոր եվրոպական պետություններում որպես զորային կառույցի կատարելագործման առաջնահերթություն սահմանվեց նավատորմի, ավիացիայի և զրահատանկային ստորաբաժանումների զարգացումը, իսկ հետևակային ստորաբաժանումներն սկսեցին փոխարինվել մոտոհրաձգային ստորաբաժանումներով:

Ինչ վերաբերում է ռազմավարական և օպերատիվ-մարտավարական արվեստին, ապա այստեղ կարծիքները բաժանվեցին: Ֆաշիստական Գերմանիայի, ինչպես նաև Իտալիայի ու Ճապոնիայի ռազմական տեսաբանները առավելապես հակվեցին կայծակնային և համընդհանուր պատերազմի գաղափարին: Դրա հիմնական իմաստն այն էր, որ նախատեսվում էր հանկարծակիության և տեխնիկական գերազանցության գործոնների օգտագործմամբ պատերազմի հենց սկզբում հակառակորդի առաջին ռազմավարական շարակարգին հասցնել կործանարար հարված, այնուհետև արագ հարձակման շնորհիվ ներթափանցել հակառակորդի տարածքի խորքը և վերջնականապես ջախջախել նրան՝ չտալով զորահավաքային ռեսուրսները ծավալելու հնարավորություն:

Պատերազմի համընդհանուր բնույթը պայմանավորված էր հակառակորդի բոլոր ենթակառուցվածքների և ռեսուրսների ոչնչացմամբ:

Մյուս եվրոպական և այլ պետությունների (Ֆրանսիա, Անգլիա, Լեհաստան, ԱՄՆ) ռազմական տեսություններն ու ռազմական դոկտրինները հակված էին հյուծիչ պատերազմի սկզբունքին: Ռազմական տեսաբանները համարում էին, որ ապագա պատերազմը լինելու է դաշնադրային և երկարատև, ուստի կպահանջի մեծ ռեսուրսներ և ուժերի գերլարում: Այն բլոկը, որը կդիմանա այդ լարվածությանը, ի վերջո կհասնի հաղթանակի: Կատարելով տնտեսական և նյութատեխնիկական հաշվարկներ՝ նրանք պնդում էին, որ իր ռեսուրսներով գերմանական բլոկը չի կարող երբեք գերազանցել Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներուժը, ուստի երկարատև պատերազմը կհանգեցնի Գերմանիայի պարտությանը: Հիմնված լինելով այդ սկզբունքի վրա՝ տվյալ պետությունների ռազմական դոկտրինները նախատեսում էին պասիվ դիրքային պատերազմի ռազմավարությունը:

Երբ սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, միմյանց բախվեցին ոչ միայն երկու բլոկների ռազմական կարողությունները, այլև ռազմական տեսություններն ու դոկտրինները: Պատերազմի ընթացքը ցույց տվեց, որ երկու տեսություններն էլ գործնականում սխալական էին: Հյուծիչ պատերազմի անգլո-ֆրանկո-ամերիկյան տեսությունը տապալվեց գերմանական ջախջախիչ կայծակնային հարվածների ներքո (1939–1941 թթ.), քանի որ հաշվի չէր առնում նոր զորատեսակների (ավիացիա և զրահատանկային ստորաբաժանումներ) կործանիչ ուժը, իսկ կայծակնային և համընդհանուր պատերազմի գերմանական տեսությունը ձախողվեց 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, քանի որ, մի կողմից, թերագնահատվել էր Խորհրդային Միության ռազմական, տնտեսական, մարդկային ու տարածքային ռեսուրսը, մյուս կողմից՝ գերագնահատվել ջախջախիչ կայծակնային հարվածների հզորությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմը հանգեցրեց ռազմական գիտության և արդյունաբերության գերարագ զարգացման: Ի հայտ եկան այնպիսի զինատեսակներ, ինչպիսիք են հրթիռները և միջուկային զենքը: Դրանք դարձան երկրորդ համաշխարհային պատերազմին անմիջապես հաջորդած Սառը պատերազմի (1946–1991 թթ.) ընթացքում սպառազինությունների մրցավազքի հիմնական առարկան: Սառը պատերազմի առանձնահատկությունը հակառակորդի ռազմավարական (գերազանցապես՝ միջուկային) զսպման սկզբունքն էր: Ռազմավարությունը կառուցվում էր հրթիռամիջուկային ներուժի հնարավոր կիրառման վրա: Ինչ վերաբերում է օպերատիվ-մարտավարական արվեստին, ապա այն մինչև 1990-ական թվականները չենթարկվեց հիմնարար փոփոխությունների, քանի որ հավանական պատերազմում սովորական սպառազինությունների դերը համարվում էր երկրորդական, և դրանք էական որակական փոփոխություններ չէին կրել: Թերևս բացառություն է ԱՄՆ-ը, որը 1965–1973 թթ. Վիետնամական պատերազմում կրած անհաջողություններից հետո, հաշվի առնելով վիետնամական ուժերի կիրառած անհամաչափ գործողություններին հակազդեցության եղանակներ մշակելու անհրաժեշտությունը, սկսեց լուրջ

աշխատանքներ տանել օպերատիվ-մարտավարական արվեստը վերանայելու ուղղությամբ:

Սառը պատերազմի ընթացքում պահպանվեց նաև դեռ 19-րդ դարում ի հայտ եկած բլոկային պաշտպանության սկզբունքը (հանձինս ՆԱՏՕ-ի և Վարշավյան պայմանագրի կազմակերպության):

**Ժամանակակից շրջան:** 1991 թ. Խորհրդային Միության փլուզումը վերջ դրեց Սառը պատերազմին: Չնայած Սառը պատերազմը խթանեց սպառազինությունների նոր տեսակների զարգացումը (հատկապես՝ հրթիռային), սակայն այն չփոխեց պատերազմի ռազմավարական և օպերատիվ-մարտավարական սկզբունքները:

20-րդ դարի վերջին, մի կողմից, միջուկային պատերազմի հավանականության կտրուկ նվազումը և, մյուս կողմից, նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված սպառազինության ու ռազմական տեխնիկայի ի հայտ գալը սկիզբ դրեցին ռազմական արվեստի նկատմամբ նոր մոտեցումների և պատերազմի վարման նոր ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական ստանդարտների մշակմանը: ԱՄՆ-ում և առաջատար եվրոպական պետություններում տեղի ունեցած ռազմատեխնոլոգիական հեղաշրջման շնորհիվ ձևավորվեց բավարար նյութատեխնիկական բազա *5-րդ սերնդի (ժամանակակից) պատերազմ* վարելու համար, որի հիմքը գիտատար տեխնոլոգիաներն ու տեղեկատվական համակարգերն են: Միջուկային միջմայրցամաքային հրթիռներին փոխարինելու եկավ սովորական, բայց որակապես նոր սպառազինությունը, այն է՝ գերճշգրիտ զինատեսակները: Ժամանակակից պատերազմի գործնական փորձարկումն առաջին անգամ տեղի ունեցավ Հարավսլավիայում և Պարսից ծոցում՝ 20-րդ դարի վերջին, այնուհետև կիրառվեց Աֆղանստանում, հետագայում՝ Իրաքում, Լիբիայում և այլ տեղերում:

5-րդ սերնդի պատերազմը հիմնվում է նորագույն գերճշգրիտ զինատեսակներ կիրառող ավիացիայի (գերճշգրիտ թևավոր հրթիռներ), կապի (ՌԷՊ), հետախուզության և տեղեկատվական տեխնոլոգիաների համատեղ կիրառմամբ (ռազմավարական) օպերացիաների վրա: Դուրս են մղվում 4-րդ սերնդի պատերազմների այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ռազմաճակատը, թիկունքը, զորքերի օպերատիվ դասավորությունը, շարակարգումը, ինժեներական կառույցները, պաշտպանական շրջանները, զրահատանկային և մոտոհրաձգային ուժերը, սպառազինության և ռազմական տեխնիկայի քանակական չափանիշները: Վերջիններս իրենց տեղը զիջում են որակականին, նվազում է կենդանի ուժի գործոնը, ցամաքային պաշտպանողական, հարձակողական և հակահարձակողական օպերացիաներին փոխարինում են հատուկ գործողությունները:

Այսօր դժվար է պատկերացնել որևէ սցենար, երբ 4-րդ սերնդի ռազմարվեստը կարողանա գործնականում դիմակայել ժամանակակից ռազմական արվեստին, և դրա պատճառը ոչ միայն տեխնոլոգիական տարբերություններն են, այլև օպերատիվ-մարտավարական անհամատեղելիությունը: Ժամանակակից պատերազմում ռազմարվեստի նկատմամբ սկզբունքային նոր մոտեցում է ռազմավարական ոչ միջուկային զսպումը՝ սովորական գերճշգրիտ զինատեսակ-

ների միջոցով հակառակորդին անընդունելի վնաս հասցնելու սպառնալիքով: Որպես պատերազմի ռազմավարական նպատակ դիտվում է ոչ թե հակառակորդի զինված ուժերի ջախջախումը, այլ նրա կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների ու կառավարման համակարգի ոչնչացումը: Այս առումով հակառակորդին անընդունելի վնաս են պատճառում տարածքի ամբողջ խորությամբ տարբեր հեռահարություններ ու տեղակայում ունեցող զինատեսակներով հասցվող զանգվածային հարվածները: Վերջին շրջանի ռազմական գործողությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հակառակորդի հանդեպ 5-րդ սերնդի համարժեք ուժի գործադրման դեպքում պատերազմի ակտիվ (հակառակորդին անընդունելի վնաս հասցնելու) փուլը տևում է առավելագույնը մեկ ամիս:

4-րդ և 5-րդ սերնդի պատերազմների միջև հաջորդ էական տարբերությունն այն է, որ դասական իմաստով չկա հակառակորդի տարածքի գրավում: Այն փոխարինվել է ռազմավարական նշանակություն ունեցող հանգուցակետերի զբաղեցումով և բազավորումով (օդանավակայաններ, ճանապարհային հանգույցներ և այլն): Դա է պատճառը, որ ցամաքային օպերացիաները կրում են հատուկ գործողությունների բնույթ: Այս հանգամանքից ելնելով՝ առաջատար պետությունների զինված ուժերի մոտոհրաձգային, զրահատանկային և ցամաքային այլ ստորաբաժանումներ փոխարինվում են արագ արձագանքման հատուկ և ինքնաբավ ստորաբաժանումներով, իսկ որպես օպերատիվ-մարտավարական միավոր սահմանվում է բրիգադը (ինքնուրույն ապահովման կարողություններով):

Նոր սերնդի պատերազմի ևս մեկ կարևոր առանձնահատկությունը տեղեկատվական պայքարն է (այսպես կոչված՝ *CNN* գործոնը): 21-րդ դարի տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս պատերազմի ամբողջ ընթացքին հետևելու միակցված *(on-line)* բանելակարգով: Տեղեկատվական ոլորտը ժամանակակից հասարակական հարաբերությունների ձևավորման և տնտեսության զարգացման առաջատար (լոկոմոտիվ) ճյուղն է, ուստի այն առավել քան համընդհանրացված է և ունի ներգործության գերիզոր լծակներ: Այդ պատճառով տեղեկատվական օպերացիաները և տեղեկատվական հակապայքարը ժամանակակից պատերազմում ստացել են ապահովման գործառույթ (թերևս ավելի կարևոր, քան թիկունքային ապահովումը): Տեղեկատվական տեխնոլոգիաների, հետախուզության և կապի արդիական միջոցների դարաշրջանում, երբ կարելի է հետևել յուրաքանչյուր զինվորի գործողություններին և ղեկավարել դրանք, 4-րդ սերնդի օպերատիվ-մարտավարական արվեստը (զորաշարժեր, զորքերի օպերատիվ դասավորություն, պաշտպանողական կամ հարձակողական օպերացիաների նախապատրաստում և այլն) դառնում է միանգամայն անիմաստ:

Տարեցտարի ավելի ակնառու են դառնում 5-րդ սերնդի ռազմարվեստը որդեգրած և այդ ուղիով չընթացող պետությունների ռազմական կարողությունների միջև գոյություն ունեցող տարբերությունները: Ռազմական տեսաբանները

կանխատեսում են, որ առաջիկա 10-ամյակում նրանց միջև կձևավորվի մի անջրպետ, որն այլևս հնարավոր չի լինի հաղթահարել:

Այսպիսով՝ զինված ուժերի, զորային կառույցների և ռազմական արվեստի զարգացման դինամիկան մշտապես պայմանավորվել է պետության և հասարակության հաստատութենական համակարգերի առանձնահատկություններով ու գիտատեխնիկական ներուժի զարգացածության մակարդակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», հոդ. 8.2 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», հատուկ թողարկում, 2005):

2. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թ. դեկտեմբերի 18-ի հմ. ՀՕ-198-Ն օրենք, հոդ. 3, կետ 5 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73 (663)):

3. *Ղևոնդ Ալիշան,* Սիսուան: Վենետիկ, 1885:

4. *Ս. Բոռնազյան*, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի հայկական պետությունում 11-12 դդ.: Ե., 1973:

5. *И. М. Капитанец.* Война на море. Актуальные проблемы развития военно-морской науки. Гл. II. М., 2001.

6. «Начальный период войны». Сборник, гл. 2. М., 1974.

7. *Е. А. Разин.* История военного искусства. XVI—XVII вв. Гл. 7. СПб., 1999.

8. *А. А. Свечин.* Эволюция военного искусства. Т. I. М.—Л., 1928.

9. «Стратегия в трудах военных классиков». Сборник, т. 2. М., 1926.

10. *А. А. Строков.* Вооруженные силы и военное искусство в Первой мировой войне. М., 1974.

11. *Charles William Chadwik Oman.* A History of the Art of War in the Middle Ages. Ithaca, New York, 1953.

# ДИНАМИКА РАЗВИТИЯ ЕВРОПЕЙСКИХ ВОЙСКОВЫХ СТРУКТУР И ВОЕННОГО ИСКУССТВА В ИСТОРИЧЕСКОМ ИЗМЕРЕНИИ

*Л. Г. АЙВАЗЯН, начальник Управления оборонной политики МО РА, государственный советник 2-ого класса*

РЕЗЮМЕ

Развитие военного искусства, в том числе—средств вооруженной борьбы и организации войсковой структуры, рассматривается в соответствии с принятой периодизацией: античный период (до 4 в. н. э.; Древний Рим), раннее Средневековье (5—15 вв.; феодальная Европа), Возрождение военного искусства (16—17 вв.; Мориц Оранский и Густав II Адольф Ваза), Наполеоновская эпоха, эпоха капитализма, 1-ая Мировая война, со 2-ой Мировой войны до конца «Холодной войны», современный период (войны 5-го поколения).

В статье подчеркивается, что на развитие военного искусства и организации войск (комплектование, управление, снабжение), помимо развития вооружения, обусловленного научно-техническим прогрессом, существенное влияние оказывали социально-политическое устройство

государственных формирований, экономические условия, господствующая идеология.

После падения Римской империи налаженная военная организация (четко определенная структура войск со своим специальным вооружением, выработанные в соответствии со структурой и вооружением стратегия и тактика, система комплектования и обеспечения армии) пришла в упадок. На фоне феодальной раздробленности с невозможностью набора больших контингентов и их снабжения, распространения рыцарской идеологии, основанной на доминировании индивидуальных качеств бойцов при отсутствии общего командования, военное искусство примитизировалось, а по мнению многих авторитетных специалистов — практически исчезло.

Одним из наиболее успешных примеров организации войсковой структуры в Средние века может служить военная организация Киликийской Армении как в период княжества, так и царства. Правителям Киликии, установившим тесные контакты с крестоносцами, удалось органически синтезировать армянское и восточное военное искусство с традициями западноевропейского рыцарства. В то же время и крестоносцы переняли у Киликии целый ряд военных традиций, в частности — в области строительства оборонительных фортификационных сооружений.

В эпоху Великих географических открытий в Европе началось накопление капитала, вследствие чего она в XVII в. достигла уровня технической оснащенности Древнего Рима, а в XVIII в. — и по количественным и организационным параметрам вооруженных сил. Этому способствовали военные реформы Морица Оранского в Голландии и Густава II Адольфа в Швеции, распространившиеся и в других европейских государствах.

Концентрация крупных маневренных армий была характерна для эпохи Наполеоновских войн, стратегической целью которых являлись захват территорий противника и полный разгром его армий.

В эпоху капитализма существенное влияние на развитие военного искусства и организации ВС оказали нововведения Хельмута фон Мольтке Старшего, нацеленные на повышение управляемости войск, их маневренности, дальнобойности и интенсивности огня на основе научно-технического прогресса. Значительную роль в усовершенствовании военной организации государства сыграли военная реформа Отто фон Бисмарка с введением обязательной воинской повинности и понятия запаса, а также его идея блоковой войны, получившая развитие в годы Первой, а затем Второй мировых войн, приведших к беспрецедентному развитию средств вооружения, организации войсковой структуры, стратегии и тактики.

В период после Второй мировой до конца Холодной войны господствовала идея межблокового ядерного сдерживания с параллельным развитием ОМП и средств его доставки.

Войны 5-го поколения коренным образом отличаются от всех предыдущих тем, что практически исчезли такие понятия как фронт, тыл, оперативная диспозиция войск, количественные параметры ВВТ, по-

скольку развитие дальнодействующих управляемых средств поражения позволяет с высокой вероятностью поражения наносить точечные удары по всей территории противника. На смену сухопутным оборонительным, наступательным и контрнаступательным операциям пришли специальные операции, снизилась роль человеческого фактора, резко возросло значение борьбы в информационной сфере.

## THE DYNAMICS OF THE EUROPEAN TROOP STRUCTURES AND MILITARY ART DEVELOPMENT IN THE HISTORICAL DIMENSION

*L. G. AYVAZYAN, Head of the Directorate of Defense Policy, MOD, RA, 2nd Class State Advisor*

SUMMARY

The development of military art, including, the means of the armed struggle and the troop structure organization is considered in conformity with the accepted periodization: the Ancient Period (up to the 4th century AD; Ancient Rome), early Middle Ages (5—15 centuries; Feudal Europe), the Renaissance of military art (16—17 centuries, Maurice of Orange and Gustav II Adolf Vasa), the Napoleonic era, the era of capitalism, the First World War, from the Second World War to the end of the «Cold War», the modern period (wars of the 5th generation).

It is emphasized that the development of military art and the organization of troops (recruitment, management, logistics) in addition to the development of armament conditioned by the scientific and technical advance were significantly affected by the socio-political structure of state formations, economic conditions, and the dominant ideology.

After the decline of the Roman Empire, the well-established military organization (the well-defined structure of the troops with its special armament, the strategy and tactics elaborated in compliance with the structure and the armament, the system of army's recruitment and supplies) ebbed. Against the background of scattered feudalism with the inability to recruit large contingents and supply them, and of the spread of chivalric ideology based on the dominance of individual qualities of fighters in the absence of the general command, the military art got primitive, and according to many authoritative experts—simply disappeared.

As one of the most efficient examples of the troop structure organization in the Middle Ages can serve the military organization of the Cilician Armenia both in the period of princedom and kingdom. Governors of Cilicia that established close contacts with the Crusaders managed to organically synthesize the Armenian and the Eastern military art with the traditions of the Western European knighthood. At the same time the Crusaders also inherited from Cilicia a number of military traditions, particularly—in the field of the construction of defensive fortification facilities.

In the Age of Discovery the accumulation of capital started in Europe. As a result of that process Europe attained the level of technical equipment of the Ancient Rome in the XVII century, and in the XVIII century – in quantitative and organizational parameters of the latter's armed forces. The military reforms of Maurice of Orange in Holland and of Gustav II Adolf of Sweden contributed to this being spread to other European states.

The concentration of large mobile armies was typical of the era of the Napoleonic Wars, the strategic aim of which was the capture of the enemy's territory and the complete defeat of its armies.

In the era of capitalism the development of military art and the organization of the Armed Forces were significantly influenced by the innovations of Helmuth von Moltke the Elder, aimed at increasing the troops manageability, their maneuverability, range and rate of fire on the basis of scientific and technical advance. The military reform of Otto von Bismarck, with the introduction of compulsory military service and the concept of reserve, as well as his idea of a bloc war further developed during the First and Second World Wars, leading to the unprecedented development of weaponry, the organization of troop structure, strategy and tactics played a significant role in improving the state's military organization.

The idea of interblock nuclear deterrence dominated with the parallel development of the WMD and the means of its delivery in the period after the World War II until the end of the «Cold War».

The 5th generation wars are fundamentally different from all those previous ones because such concepts as front, rear, operational disposition of troops, quantitative characteristics of Armament and Military Equipment virtually disappeared, since the development of long-range guided weapons allows to make pointed strikes with the high probability of destruction across the enemy's whole territory. Special operations have replaced land defensive, offensive and counteroffensive ones, the role of human factor has reduced, the importance of the struggle in the information sphere has sharply increased.

# ԶԻՆՎՈՐԱ–ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ՄՈԴԵԼՆԵՐ ՀՀ ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Ա. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, մայոր, ՀՀ ՊՆ Պաշտպանական քաղաքականության վարչության միջազգային պայմանագրաիրավական ապահովման բաժնի պետի տեղակալ*

Պետությունների անվտանգ գոյությունը մեծապես կախված է զինված ուժերի գործունեության արդյունավետությունից: Զինված ուժերը պետական համակարգի ամենակարևոր տարրերից են, որոնք պատասխանատու են արտաքին հարձակումից պետության ինքնիշխանության, տարածքի և բնակչության պաշտպանության համար:

Իրենց այդ հիմնական նպատակի կենսագործման համար զինված ուժերը տիրապետում են հսկայական ռեսուրսների: Սակայն դրանց ոչ ճիշտ ուղղորդման և օգտագործման դեպքում զինված ուժերը կարող են արհեստականորեն ընդլայնել օրենքով իրենց վերապահվող լիազորությունների շրջանակը:

Զինված ուժերի կողմից քաղաքական իշխանության զավթման պատճառների վերաբերյալ հետաքրքիր տեսակետ է արտահայտում ծագումով պակիստանցի քաղաքագետ–ռազմական վերլուծաբան Այեշա Սիդիքան: Նա այդ երևույթը բացատրում է քաղաքական տնտեսության համատեքստում՝ «Միլբիզ» (*Military business*՝ ռազմական բիզնես) հասկացության միջոցով: Սիդիքայի կարծիքով՝ «Միլբիզը» յուրահատուկ ստվերային տեսակի ռազմական կապիտալ է, որը, բնականաբար, դուրս է ռազմական բյուջեից, բայց ուղղակի կամ անուղղակի կերպով կառավարվում է զինվորականների կողմից, ձևավորվում է հանրային ոլորտից մասնավոր ոլորտ միջոցների հոսքի շնորհիվ և միտված է ծառայելու զինվորականության և նրա կողմնակիցների անձնական ու կոլեկտիվ շահերին, այդ թվում՝ տնտեսական և քաղաքական ոլորտներում[1]: Դրանց, ինչպես նաև կապիտալի հոսքը տեղի է ունենում տարատեսակ հիմնադրամների, արտոնությունների համակարգի և սոցիալական փոխհատուցումների միջոցով՝ զինծառայողների «եղբայրությունների» *(fraternity, братство)* ու զորացրված բարձրաստիճան սպայության տնտեսական շահերի բավարարման նպատակով:

Ուխտի զինվորականությունը քայլեր է ձեռնարկում քաղաքական գործիչների և պետական ապարատի վրա ազդելու ճանապարհով ֆինանսատնտեսական ու վարչական շահ ապահովող ռեսուրսները դեպի «Միլբիզ» ուղղելու

[1] Տես *A. Siddiqa.* Military inc.: Inside Pakistan's Military Economy. London, 2007, PP. 1–8:

համար: Այդպիսով ձևավորվում է քաղաքականության մեջ զինծառայողների ներգրավվածության ընդլայնումը խթանող գործոն, քանի որ դրա շնորհիվ հնարավորություն է ստեղծվում քաղաքական լծակների օգտագործմամբ մեծացնելու տնտեսական կարողությունները: Պետության ներքին հարաբերություններում զինվորական իշխանության աստիճանական ուժեղացումը, որը պայմանավորված է կապիտալի անվերահսկելի կուտակմամբ, զինծառայողների դերը դարձնում է ավելի ու ավելի կարևոր և ի վերջո հանգեցնում է քաղաքական թատերաբեմից մյուս պետական շահառուների ու պետական-քաղաքական որոշումներ կայացնող խմբերի հեռացման:

Այլ կերպ ասած՝ տվյալ գործընթացով ստեղծվում է մի փակ փուլաշրջան, երբ զինծառայողների տնտեսական շահերը ենթադրում են նրանց ավելի մեծ քաղաքական ներգրավվածություն, իսկ ընդլայնված քաղաքական մասնակցությունը մեծացնում է նրանց եկամուտները: Գերքաղաքականացված զինվորականության բացասական ազդեցությունը տարբեր կերպ է անդրադառնում պետության զարգացման վրա: Պետական բազմաոլորտ համակարգի ցածր մակարդակի կառավարումը, կողմնակալ տնտեսական բաշխումը, մենաշնորհայնացումը և տնտեսական մրցակցության անարդարությունը (տենդերային մրցույթների ժամանակ զինծառայողների «ընկերական-բարեկամական» կազմակերպություններին տրվող նախապատվություն)[2], բնական ռեսուրսների անբավարար կառավարումը, զինվորական արհեստավարժության նվազումը («երկրորդային» դերի կարևորման պատճառով) և, ի վերջո, հասարակության ռազմականացման մեծ շարժառիթավորումը (երաշխավորված բարեկեցության միջավայր, մեծ սոցիալական արտոնություններ և գործարարությամբ զբաղվելու համար էական նախադրյալներ ու հովանի) զինծառայողների քաղաքական ներգրավվածությունը վերածում են պետության համակողմանի կայուն զարգացման համար լուրջ խոչընդոտի:

Մյուս կողմից՝ անկայուն և թույլ հասարակությունների պայմաններում զինված ուժերի կարողությունը պահպանելու պետության գոնե ձևական կայունությունը, ներքին փոխհարաբերությունների լավ կազմակերպվածությունը և կարգապահությունը որոշակի առավելություններ են տալիս նրանց, և մի շարք դեպքերում արտաքին ուժերն սկսում են նրանց դիտել որպես վստահելի տնտեսական գործընկերոջ և հեղինակավոր հաստատության, որն ի վիճակի է ստանձնելու հասարակության կառավարելի զարգացման շարժիչ ուժի դերը: Այդ իսկ պատճառով մի շարք արևմտամետ ուսումնասիրողներ այն կարծիքին են, որ զինված ուժերը երրորդ աշխարհի պետությունների սոցիալ-տնտեսական արդիականացման նախաձեռնողներն են, ուստի և ունեն դրական վերաբերմունք «առաջադիմական ռազմականացման» (պրոգրեսիվ միլիտարիզմ) նկատմամբ[3]:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ քաղաքական կյանքում զինված

[2] Տես *Ա. Միդիքա,* Նշ. աշխ., էջ 13:

[3] Տես նույն տեղում, էջ 11:

ուժերի ներգրավումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական, այլև գաղափարական և աշխարհաքաղաքական շահերով ու պատճառներով: Լարի Դայմոնդը նշում է, որ քաղաքական իշխանությունը զավթելու հարցում ԱՄՆ-ը մի շարք դեպքերում (Գվատեմալա, Չիլի) աջակցում էր աջակողմյան զինվորական վարչակարգերին՝ օժանդակելով ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով իշխանության եկած կառավարությունների տապալմանը միայն այն նպատակով, որ բացառի կոմունիզմի ներթափանցումը այդ պետություններ[4]:

Մեկ այլ տեսանկյունից՝ զինված ուժերն ստանձնում են ազգայնականության հաստատման շարժիչ ուժի ռեալ դերը՝ փորձելով ներթափանցել քաղաքական ոլորտ այն ժամանակ, երբ իրենց ընկալմամբ կա ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիք, իսկ քաղաքացիական ղեկավարներն ի վիճակի չեն դիմագրավելու դրան կամ հենց իրենք են այդ սպառնալիքի աղբյուրը, քանի որ վարում են «դավաճանական» քաղաքականություն: Օրինակ՝ Լատինական Ամերիկայում տեղի ունեցած վերը նշված ռազմական հեղաշրջումները, որոնք ուղղված էին ԽՍՀՄ գաղափարական ներթափանցման դեմ, ներքին փոխհարաբերություններում պատճառաբանվում էին ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների վերացման անհրաժեշտությամբ: Մեկ այլ օրինակ է 1953 թ. Իրանում տեղի ունեցած հեղաշրջումը, որը նպատակ էր հետապնդում կասեցնելու սխալ քաղաքական ուղեգիծը, որը հանգեցրել էր նավթային ռեսուրսների անհավասար բաշխման և օտարերկրյա ընկերությունների կողմից շահագործման:

Զինված ուժերի քաղաքական ակտիվացումը սովորաբար տեղի է ունենում պատերազմներին հաջորդող ներքաղաքական խմորումների շրջանում: Պատերազմից հյուծված պետություններում (անկախ հաղթած կամ պարտված լինելու հանգամանքից), որտեղ մյուս քաղաքական-հասարակական ուժերը վերականգնման ժամանակի կարիք ունեն, զինված ուժերը կարողանում են բոլորից արագ վերակազմավորվել և զավթել քաղաքական իշխանությունը:

Կա քաղաքական իշխանության զավթման մի քանի պատճառ: Առաջինը, իհարկե, ինչպես նշվեց, տնտեսական շահերն են, քանի որ զինված ուժերը՝ որպես առավել կազմակերպված և հզոր կազմակերպություն, ձգտում են իրենց հսկողության տակ վերցնելու առկա սուղ միջոցների կառավարումը: Երկրորդ պատճառը հոգեբանական է, մասնավորապես՝ պայմանավորված անձնավորության ուղղվածությամբ, բարձր մակարդակի հավակնոտությամբ, երբ պատերազմից հետո զինված ուժերի կազմից մի ակտիվ խումբ փորձում է իր ներկայիս համեմատաբար պասիվ պետական դերը (քանի որ պատերազմում զինված ուժերը հիմնական դերակատարներն էին) փոխհատուցել քաղաքական-հասարակական ակտիվությամբ՝ դրա հետ մեկտեղ պաշտպանելով զինծառայողների շահերը: Այս պայմաններում նախկին զինծառայողները դառնում են քաղաքական իշխանությունը կրողների և զինծառայողների միջև միջնորդներ՝ փորձելով

[4] Տես *L. Diamond.* The spirit of democracy: The struggle to build free societies throughout the world. New York, 2008, P. 1:

այս կամ այն քաղաքական ուժին ցուցաբերվող օժանդակության դիմաց առավելագույնս օգուտ քաղել զինվորական «եղբայրությունների» համար:

Կա զինծառայողներին քաղաքական դաշտ բերելու մեկ այլ սցենար ևս, երբ քաղաքական գործիչներն իրենք են հրավիրում նախկին զինվորական առաջատար գործիչներին անդամակցելու կուսակցություններին՝ փորձելով բացառել զինվորականության կողմից նշված առաջին սցենարով քաղաքական իշխանությունը բռնությամբ զավթելու հնարավորությունը: Սակայն տվյալ ռազմավարությունը կարող է հաջողությամբ պսակվել միայն այն դեպքում, երբ պետությունում առկա են զինծառայողների նկատմամբ վերահսկողության արդյունավետ ու կենսունակ քաղաքական մեխանիզմներ և համապատասխան փորձ, հակառակ դեպքում քաղաքական գործիչներին սպառնում է զինվորականության հզորացող քաղաքական իշխանության պատանդ դառնալու վտանգը:

Բացի այդ, հնարավոր է, որ նախկին զինվորականները քաղաքական իշխանության գան ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով կամ համաժողովրդական աջակցություն վայելող հեղափոխությունների ու իշխանափոխությունների միջոցով: Բնականաբար, նման դեպքերում հասարակության մեջ նրանց հեղինակությունը բավական մեծ է, նրանք ընկալվում են որպես հերոսներ (եթե, իհարկե, հաջողություններ են ունեցել պատերազմում), որոնք ի վիճակի են վերափոխելու և զարգացնելու պետությունը: Բայց նման դեպքերում չեն բացառվում նաև քաղաքականացած բարձրաստիճան զինվորականների և մյուս զինծառայողների միջև թյուրըմբռնումն ու անջրպետների խորացումը: Օրինակ՝ Եգիպտոսի Նախագահ Նասերը, որը իշխանության էր եկել կրտսեր սպայակազմի կատարած հեղաշրջման շնորհիվ, որոշ ժամանակ անց իր վարած քաղաքականության համար արժանացավ նախկին զինծառայող դաշնակիցների լուրջ դժգոհությանը: ՈՒստի նա ստիպված եղավ հենվել այլ քաղաքական դերակատարների վրա: Այդ նպատակով Նասերն ստեղծեց քաղաքացիական ուղղվածություն ունեցող «Արաբական սոցիալիստական միություն» կուսակցությունը՝ որպես զինվորականությանը քաղաքացիական հակակշիռ[5]:

Վերը շարադրվածից հետևում է, որ քաղաքականության մեջ զինվորական և քաղաքացիական շրջանների միջև հավասարակշռված հարաբերությունների հաստատումը պետութենաշինության կարևորագույն նպատակներից է, որն ուղղված է ապահովելու հասարակության բոլոր շերտերի կայուն զարգացումը: Այսպիսով՝ զինվորա-քաղաքացիական հարաբերությունների հիմքում պետք է դրված լինի հետևյալ թեզը, որ զինվորականները բավարար չափով ունակ են կատարելու այն ամենը, ինչ իրենց հանձնարարում են քաղաքացիական ղեկավարները, և բավարար չափով ենթակա են քաղաքացիական իշխանություններին, որպեսզի կատարեն միայն այն, ինչ իրենց հանձնարարվում է[6]: Այլ կերպ

[5] Տես *J. S. Migdal.* Strong Societies and Weak States: State–Society Relations and State Capabilities in the Third World. Princeton, 1988:

[6] Տես *P. D. Feaver*. The civil-military problematique: Huntington, Janowitz, and the Question of Civilian Control. «Armed Forces and Society», 1996, Vol. 23, N 2:

ասած՝ զինվորա-քաղաքացիական հարաբերությունների մոդելների տարբերակող հատկանիշն այն է, թե ով ում և որքանով է վերահսկում:

Պետութենաշինության վերաբերյալ Թիլիի հայեցակետի համաձայն՝ պատերազմի վարումը (ռազմական գործը) ժամանակակից իմաստով պետությունների կազմավորման շարժիչ ուժն է: Բայց պետությունները դրա շնորհիվ երբեք չէին կազմավորվի, եթե չլիներ ժողովրդական լայն զանգվածների դիմադրությունը (քաղաքացիական վերահսկողությունը) պատերազմի մղմանը, ինչն իշխանություններին ստիպում էր զիջումների գնալ պետությունների կազմավորման և զարգացման անհրաժեշտ տարրերի՝ իրավունքների, ներկայացուցչական հաստատությունների ստեղծման և այլ նմանատիպ հարցերում[7]: Եվ այսպես. զինվորականության՝ քաղաքական իշխանությանը քաղաքացիական դիմադրության որակը ուղղակիորեն համապատասխանում է պետության հզորացման տեմպերին և անուղղակի կերպով սահմանափակող ազդեցություն է գործում տնտեսական, քաղաքական և այլ հասարակական հարաբերություններում զինվորականների ներգրավման վրա: Հետևաբար զինվորա-քաղաքացիական հարաբերություններում հավասարակշռության հաստատման միակ տարբերակը այնպիսի քաղաքական և իրավական մեխանիզմների ստեղծումն է, որոնք կնվազեցնեն քաղաքականության մեջ զինվորականների ներխուժման ռիսկերը:

Ենթադրվում է, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը կարող է լինել նման մեխանիզմներից ամենաարդյունավետը, քանի որ այն քաղաքական գործընթացն է, որի միջոցով հանրային կամքը պետական քաղաքականության միջոցով իրեն է ենթարկում զինվորականներին[8]:

Ա. Սիդիքան ներկայացնում է զինվորա-քաղաքացիական հարաբերությունների մի շարք մոդելներ: Եթե ավելի լայն իմաստով մեկնաբանենք այդ մոդելները, ապա դրանք կարելի է բաժանել երեք մեծ խմբի. 1. զինվորականությունը քաղաքացիական վերահսկողության ներքո, 2. քաղաքացիականությունը զինվորականության վերահսկողության ներքո, 3. անիշխանություն՝ նրանց միջև դժվար կառավարելի և ոչ հստակ հարաբերություններ:

Առաջին խմբի առաջին մոդելը *զինվորա-քաղաքացիական գործընկերությունն* է, որը հստակ կերպով արտացոլվում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության դասական պատկերացմամբ (հիմնականում՝ արևմտյան տիպի ժողովրդավարություններում), ըստ որի՝ ՁՈՒ-ի գլխավոր խնդիրը արտաքին զինված հարձակումից պաշտպանությունն է[9]: Տվյալ մոդելը հիմնվում է ազատ շուկայական տնտեսության, քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերի արհեստավարժության ու ապաքաղաքականացվածության վրա: Արդյո՞ք արդյունավետ քաղաքացիական վերահսկողությամբ երաշխավորվում են ժողովրդավարական կառավարումը և պետութենաշինութ-

[7] Տես *Charles Tilly.* War making and state making as organized crime. Cambridge, 1985, P. 183:

[8] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Ռ. Ավետիսյան,* Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

[9] Տես *Ա. Սիդիքա,* Նշ. աշխ., էջ 36–40:

յան առաջադիմական ուղղվածությունը: Առաջին խմբի մեկ այլ մոդելի՝ *բռնակալական քաղաքական կուսակցության և զինվորականության գործակցության* քննարկումը ի հայտ է բերում քաղաքացիական վերահսկողությունը ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողությունից տարբերելու անհրաժեշտությունը: Ի տարբերություն առաջին մոդելից, որի դեպքում քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիական կառավարությունը պատասխանատու են զինվորականների նկատմամբ վերահսկողության համար, այստեղ տվյալ գործառույթն իրականացնում է գերիշխող քաղաքական կուսակցությունը: Այսպես. թեև ֆաշիստական Գերմանիայում Զինված ուժերը գտնվում էին կուսակցական (նույնն է՝ քաղաքացիական) վերահսկողության ներքո, դրանք չէին կարող համարվել ժողովրդավարական, քանի որ կուսակցության բացարձակ վերահսկողությունը զինված ուժերը վերածում էր ներքին ճնշումների արդյունավետ գործիքի:

Երկրորդ խումբը ներառում է զինվորականների գերիշխանության երեք մոդելներ, որոնք տարբերվում են զինվորականների համար սահմանված պայմանական քաղաքական օրինականության մակարդակով, բայց սա ոչ թե հասարակության կողմից ընդունվող օրինականությունն է, այլ այն մեխանիզմը, որով զինվորականությունը արդարացնում և հիմնավորում է իր քաղաքական ազդեցությունը[10]: Այս խմբի ընդհանրացված բնութագրական հատկանիշը զինվորականների կողմից պետության կառավարումն է, իսկ տարբերակիչները՝ ուղղակի կամ անուղղակի կառավարումը և կառավարման տևողությունը: Ըստ «կառավարող զինվորականների» մոդելի՝ նրանք տևականորեն փոխարինում են քաղաքացիական իշխանությանը և կառավարում են անմիջականորեն խմբիշխանական (օլիգարխիկ), անհատական կամ մեկուսախմբային (կորպորատիվ) ձևերով՝ հիմնվելով հաստատված ամբողջատիրական վարչակարգի վրա[11]: Բայց քաղաքացիական ղեկավարների հետ համագործակցության անբավարարությունը, մարդու իրավունքների զանգվածային խախտումները և քաղաքացիական հասարակության նկատմամբ շարունակական սոցիալ-քաղաքական ճնշումները նման վարչակարգը դարձնում են զանգվածային ներքին ընդվզումների և համատեղ ներքին ու արտաքին ճնշումների թիրախ:

Այս խմբի մյուս երկու տարբերակներն իրենց բնույթով ավելի չափավոր են և սովորաբար միմյանց հաջորդում են: Թե՛ իրավարարական (միջնորդական), թե՛ այսպես կոչված խնամակալական մոդելները ներկայացնում են զինվորականների անուղղակի իշխանությունը: *Իրավարարական մոդելի* դեպքում զինվորականները ներգրավվում են քաղաքականության մեջ այն ժամանակ, երբ իրենց ընկալմամբ հասարակական հարաբերություններում տիրող քաոսը և բացահայտ քաղաքական հակադրությունները խարխլում են պետության հիմքերն ու վնասում հասարակության ընդհանուր շահերին, ուստի կարիք է զգացվում զինվորական իշխանության, որը կկարողանա հաստատել նորմալ հասարա-

[10] Տես նույն տեղում, էջ 36:

[11] Տես նույն տեղում, էջ 45:

կական կարգ: Իսկ *խնամակալական մոդելի* դեպքում քաղաքականության մեջ զինվորականների իրավարարական բնույթի ներգրավումը արդեն իրավական սահմանում է ստանում: Իրավարարական մոդելը ենթադրում է նաև, որ զինվորականները կառավարման հարցերում հենվում են վստահելի քաղաքացիական ուժերի վրա՝ ձգտելով խուսափելու ակտիվ քաղաքականությամբ անմիջականորեն զբաղվելու պարտավորությունից, բայց, միևնույն ժամանակ, գործելով այնպիսի հաստատությունների միջոցով, ինչպիսիք են մամուլը, առևտրային ոլորտը, դատական իշխանությունը և այլն, ուշի-ուշով վերահսկում են պայմանականորեն կառավարող քաղաքացիական իշխանություններին, հմտորեն տիրապետում են իրավիճակին և ուղղորդում քաղաքական զարգացումները: Խնամակալական մոդելի դեպքում զինվորականները ավելի հիմնավոր են տիրապետում իրավիճակին և ստեղծում են հատուկ հաստատություններ, ինչպիսիք են, օրինակ, Ազգային անվտանգության խորհուրդները (մասնավորապես՝ Պակիստանում և Թուրքիայում), որոնք կոչված են ամրագրելու և ապահովելու զինվորականների վերահսկողությունն առանց անմիջական ներգրավման[12]: Այս հատկանիշները բնորոշ են «խորքային պետություն» քաղաքական հասկացությանը, որը սովորաբար օգտագործվում է Թուրքիայի կառավարման համակարգը նկարագրելիս: Այս խմբի մոդելների հաջորդական բնույթը բխում է Թուրքիայի, Պակիստանի և Ինդոնեզիայի օրինակներից, որոնք խնամակալական մոդելին են հասել իրավարարական մոդելի միջոցով[13]:

Երրորդ խմբի միակ մոդելը Սիդիքան անվանում է *անիշխանական*: Կարծում ենք, որ այն զինվորա-քաղաքացիական հարաբերությունների մոդել կարելի է անվանել զուտ պայմանականորեն, քանի որ կայուն քաղաքական կառուցվածք և հաստատություններ չլինելու հանգամանքը դժվարացնում է զինվորական և քաղաքացիական իշխանությունների տարանջատումը: Ավելին. անիշխանական պետական կառավարման ձևերն ու աստիճանները և թույլ ու երերուն հասարակական կապերով անկայուն հասարակարգերը ավելի են խճճում իրավիճակը, որովհետև երկու ավանդական հակադարձ բևեռների (զինվորական և քաղաքացիական) փոխարեն հարկ է լինում կողմնորոշվել մի շարք հիբրիդային խմբերի հորձանուտում, ինչպիսիք են, օրինակ, մոլեռանդ կրոնական զինված խմբավորումները, տոհմական-էթնիկական առաջնորդների մերձավոր շրջապատը, նախկին զինվորականների կողմից ձևավորվող բազմազգ հանցավոր խմբավորումները և այլն: Զինվորա-քաղաքացիական հարաբերությունների այս մոդելին հարող պետությունը միանշանակ կարող է պիտակվել որպես ձախողված և դժվար վերականգնելի պետություն: Այդպիսիք են, օրինակ, Սոմալին, Սուդանը, Սիերա Լեոնեն, Աֆղանստանը, բայց կան նաև բացառություններ. օրինակ՝ Նիգերիան, որը նույնպես ինչ-որ չափով հարում է այս մոդելին, փաստացի անհամեմատելի է նույն մոդելին հարող այլ պետությունների հետ՝ իր արտաքին հզորությամբ և նվազագույնը տարածաշրջանային մակար-

[12] Տես նույն տեղում, էջ 51:

[13] Տես նույն տեղում, էջ 45:

դակով հարաբերությունները կարգավորելու կարողությամբ, ինչպես նաև քաղաքական կամքով, որն ուղղված է զինվորական վարչակարգի ու տարատեսակ խմբերի միջև երկարատև դիմակայությունից հետո այս կամ այն չափով ընդունելի ժողովրդավարական կարգի վերահաստատմանը:

Բացի ներքին զարգացմանը խոչընդոտելուց, ռազմականացված պետությունը միջպետական հարաբերությունների համատեքստում ընկալվում է որպես միջազգային խաղաղության և անվտանգության դեմ ուղղված սպառնալիք: Հետևաբար զինվորա-քաղաքացիական հարաբերությունների կարգաբերման հարցում լուրջ դեր ունի համաշխարհային առաջադիմական հասարակայնությունը: Այդ նպատակով ստեղծվում են անգամ միջազգային հարկադրանքի միջոցներ, որոնց փորձում են օգտագործել ըստ միջազգային իրավունքի նոր նորմերի կամ քաղաքական հիմնավորումների, ինչը հնարավորություն կտա կիրառելու տնտեսական, քաղաքական կամ իրավական պատժամիջոցներ և դրանցով իսկ միջամտելու ներպետական հարաբերություններին: Այդպիսի օրինակներ են միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած «Պաշտպանելու պատասխանատվության» (*Responsibility to protect RtoP,* կամ *R2P*) կամ «Մարդասիրական ներխուժման» *(Humanitarian intervention)* միջազգային իրավական մեխանիզմները:

Սակայն հարկադրանքի մեխանիզմները կամ ուժային մեթոդները միակ ճանապարհը չեն, որով կարելի է ազդել պետության քաղաքականության վրա և ձևափոխել զինվորա-քաղաքացիական հարաբերությունները: Կան բազմաթիվ այլ՝ ավելի մեղմ՝ համոզման, մեթոդներ, որոնք ճիշտ ուղղորդման դեպքում պակաս արդյունավետ չեն: Այսինքն՝ կարելի է ասել, որ եթե ներքին փոխզսպման մեխանիզմները չեն գործում, քաղաքացիականությունը չի կարող կամ չի ցանկանում զինվորականության նկատմամբ իրականացնել պատշաճ վերահսկողություն, ապա մեծ է հավանականությունը, որ կարող են խախտվել տարածաշրջանային անվտանգությունը, կայունությունը, խաղաղությունը: ՈՒստի զինվորականներին քաղաքական իշխանությունից հեռացնելու նպատակով արտաքին ճնշումների հավանականությունը մեծանում է, մանավանդ, եթե արտաքին ճնշման կիրառումը բխում է այն գործադրող ուժերի շահերից: Բայց մի շարք դեպքերում, ինչպես նշվեց, այդ ճնշումները առավելապես կրում են «քաղցրաբլիթի» կամ այլ խթանիչ-ոգևորիչ բնույթ. զինվորականները սովորաբար ձեռնպահ են մնում քաղաքական իշխանության զավթումից, որպեսզի չզրկվեն այն տնտեսական օգուտներից, որոնք ստանում են արտաքին ուժերից քաղաքացիական իշխանություններին հանդուրժելու և նրանց հետ համագործակցելու դեպքում: Այսպես. Բանգլադեշի զինվորականները, որոնք ֆինանսական տեսանկյունից մեծապես կախված են ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի կազմում առաքելություններին մասնակցությունից, ստիպված են հանդուրժել քաղաքացիական իշխանություններին, որպեսզի չզրկվեն այս տեսակի «ռազմական գործարարությունից» և կողմնակի եկամտից: Կամ Եվրամիությանն անդամակցելու Թուրքիայի մտադրությունը այդ պետությանը պարտադրում է զինվորա-քաղաքացիական հարաբերությունների բարելավման ուղղությամբ

բարեփոխումներ, ինչը կարելի է դիտել որպես անուղղակի արտաքին ճնշման օրինակ: Արտաքին ճնշման մեկ այլ տարբերակ է պետության անմիջական կախումը արտաքին ռազմական օժանդակությունից: Օրինակ՝ կարծիք կա, թե ներքին կայունությունն ապահովելու համար Աֆղանստանին անհրաժեշտ են ազգային անվտանգության 400 000-անոց ուժեր, սակայն դրանց ստեղծումն ու պահպանումը պահանջում են ՀՆԱ-ի ներկայիս չափը մի քանի անգամ գերազանցող միջոցներ, որոնք գործնականում անհնար է հայթայթել: Հետևաբար Աֆղանստանը օտարերկրյա զինված ուժերի աջակցությունից և այլ ռազմական օգնությունից չզրկվելու համար պետք է դիմի լուրջ զիջումների և ավելին՝ պետք է առաջնորդվի իրեն թելադրվող կանոններով:

Այսպիսով՝ եթե պետության քաղաքական իշխանության տկարության մակարդակը համեմատելի է պետական իշխանությունը զինվորականների կողմից զավթելու հնարավորության հետ, ապա զինվորականների կողմից պետական իշխանությունը զավթելու հնարավորությունն իր հերթին համեմատելի է պետության ներքին գործերին արտաքին միջամտության մակարդակի հետ:

Որպես ամփոփում նշենք, որ զինվորականների կողմից քաղաքական իշխանության զավթումն այլևս չի դիտվում որպես պետությունների ներքին խնդիր կամ մարտահրավեր, քանի որ արտաքին ուժերը կամ պայմանականորեն կոչված միջազգային հանրությունը, իր իսկ շահերից ելնելով, հսկայական քաղաքական, ֆինանսական, գաղափարական, անվտանգային կամ տնտեսական ազդեցություն է գործում գրեթե բոլոր պետությունների ձևավորման ու զարգացման վրա, հետևաբար՝ շահագրգռված է տեսնելու կայուն և կանխատեսելի պետություններ:

Արաբական աշխարհում ծավալված լայնամասշտաբ հեղափոխական շարժումները հերթական անգամ վերահաստատեցին ճիշտ զինվորա-քաղաքացիական հարաբերությունների կառուցման կարևորությունը: Մասնավորապես՝ Եգիպտոսում և Լիբիայում զինված ուժերի կամ ռազմական հեղաշրջումների հիմքի վրա ստեղծված քաղաքական վարչակարգերի հակաժողովրդավարական բնույթը, զուգորդվելով այլ հասարակական-քաղաքական պայմաններին, ի վերջո հանգեցրեց ներքին բռնությունների և հասարակական փոխհարաբերությունների ապակայունացմանը: Ընդ որում, զարգացումները վկայում են, որ երկու պետություններում էլ զինվորականների քաղաքական դիրքերը դեռ բավական ամուր են, իսկ դրանց փոխարեն իշխանության գալու հնարավորություն են պահպանում արմատական իսլամական ուղղվածություն ունեցող քաղաքական ուժերը: Այսինքն՝ մի տեսակի հակաժողովրդավարական ուժերի փոխարեն իշխանության գալու հնարավորություն ունեն մեկ այլ տեսակի հակաժողովրդավարական ուժեր: Այս հանգամանքը ևս պայմանավորված է նշված պետություններում երկար պատմական ժամանակահատվածում զինվորականների կողմից իշխանության շարունակական պահպանմամբ, ինչը խոչընդոտել է ժողովրդավարական հաստատությունների զարգացմանը:

Կարծում ենք, որ այս դիտարկումները պետք է աչքաթող չարվեն ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների ընթացքում, քանի որ զին-

վորա-քաղաքացիական հարաբերությունները մեր պարագայում հիմնականում դիտարկվում են Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից: Ավելին. հաճախ այդ հարաբերությունները դիտարկվում են շատ նեղ իմաստով: Դրանով իսկ ուսումնասիրությունների շրջանից դուրս են մնում այս պրոբլեմի հիմքում եղած և սույն հոդվածում արծարծված այլ խորքային խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության՝ որպես հասարակական-քաղաքական հարաբերությունների զսպման և հավասարակշռման մեխանիզմի գործարկում:

## НЕКОТОРЫЕ МОДЕЛИ ВОЕННО-ГРАЖДАНСКИХ ОТНОШЕНИЙ В АСПЕКТЕ МОДЕРНИЗАЦИИ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ РА

*А. Р. АВЕТИСЯН, майор, заместитель начальника отдела международного договорно-правового обеспечения Управления оборонной политики МО РА*

РЕЗЮМЕ

В статье рассматриваются модели военно-гражданских отношений в контексте роли и функций военных и Вооруженных сил в процессах жизнедеятельности общества и государства.

Отмечается важность установления и поддержания баланса в отношениях между военными и гражданскими в сфере политики, являющегося одной из основных целей государственного строительства, обеспечивающего устойчивое развитие всех слоев общества. Ключом к достижению данного баланса является обеспечение доминантности гражданского руководства и профессионализма военных, способных действовать в соответствии с поставленными задачами и в рамках своих полномочий.

На основе исследований известных экспертов, в частности пакистанского политолога-аналитика Айеши Сиддики, рассматриваются условия, причины, факторы и сценарии нарушения указанного баланса и прихода военных к власти. Данное явление изучается в контексте политической экономии — посредством понятия «Милбиз» (*Military business* — военный бизнес), своеобразного «теневого военного капитала», т. е. тех ресурсов, которые находятся вне военного бюджета, однако прямо или косвенно управляются военными. «Милбиз» формируется за счет перевода средств из общественного в частный сектор с нацелом на обслуживание частных и коллективных интересов военных и их соратников, в том числе — в политической и экономической областях.

В статье выявляется соотносимость между уровнем слабости политической власти в государстве с вероятностью захвата власти военными, а также между вероятностью подобного захвата власти в государстве военными с уровнем внешнего вмешательства во внутренние дела государства. Отмечается, что в современных условиях, когда

мировое сообщество оказывает существенное влияние на развитие государств и, соответственно, заинтересовано видеть только устойчивые и прогнозируемые государства, захват власти в государстве не может рассматриваться как сугубо внутреннее дело или внутренний вызов.

В качестве заключения подчеркивается целесообразность учета результатов данного анализа при осуществлении в Республике Армения оборонных реформ, поскольку в армянской действительности военно-гражданские отношения в большинстве случаев рассматриваются в очень узком аспекте лишь гражданского контроля над Вооруженными силами, вследствие чего вне рамок аналитических изысканий остаются лежащие в основе данной проблемы и обсуждаемые в статье другие глубинные вопросы.

## SOME MODELS OF CIVIL-MILITARY RELATIONS IN THE ASPECT OF THE RA TROOP STRUCTURE MODERNIZATION

*A. R. AVETISYAN, Major, Deputy Head of the Treaty Legal Support Desk at the Defense Policy Department of the MOD, RA*

SUMMARY

This article discusses the models of civil-military relations in the context of the role and functions of the military and Armed Forces in the functioning processes of the society and state. It notes the importance of balance establishment and maintenance between the military and civilians in the political sphere that is one of the main objectives of nation-building ensuring sustainable development in all the sectors of society. The key to achieving such balance is to create condition for civilian leadership dominance and the professionalism of the military, capable of acting in accordance with assigned tasks and within the framework of their competences.

Based on the studies of eminent experts, particularly of the Pakistani defense and political analyst Dr. Ayesha Siddiqa, the conditions, reasons, factors and scenarios of breaking such balance and the coming-to-power are considered. This phenomenon is studied in the context of political economy through the concept of «MILBUS» (Military Business), a peculiar «shadow military capital», i. e. of those resources that are out of the military budget, however, directly or indirectly managed by the military. «MILBUS» is formed by the transfer of funds from the public sector to the private one aimed at serving private and collective interests of the military and their allies, also in the political and economic fields.

The article reveals the correlation between the level of political power's weakness within the state and the probability of power seizure by the military, as well as between the probability of such a seizure by them and the level of external intervention to the state's internal affairs. It is

noted that nowadays, when the world community has a substantial influence on the states' development, and, respectively, it is interested in seeing only stable and predictable states, the seizure of power in the state can't be regarded as a purely internal affair or internal challenge.

In conclusion the expediency of the given analysis's results consideration is highlighted while implementing defense reforms in the Republic of Armenia because the civil-military relations in the Armenian reality in most cases are considered in a very particular aspect of only the civilian control over the military. Therefore, other profound issues underlying this problem and discussed in the article stay out from analytical studies.

# ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ*

*Վ. Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ–իրավաբան,*
*Մ. Ա. ՓԱՐՎԱՆՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի հայցորդ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ֆինանսական մասի պետ, ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս*

Պաշտպանական բարեփոխումների կարևոր ուղղություններից է զորային կառույցի՝ որպես Զինված ուժերի զորատեսակների, զորամիավորումների և առանձին զորամասերի՝ զորային գործառույթ իրականացնող բաղադրիչների** (այսուհետև՝ զորային կառույցի ստորաբաժանումներ կամ զորամասեր) համակարգի կառուցվածքային և գործառութային ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման, տնտեսական և իրավական համակարգերի համապատասխան պարամետրներին:

ՀՀ զորային կառույցն ստեղծվել է ԽՍՀՄ զորային կառույցի նմանությամբ՝ առանց այդ երկու պետությունների միջև քաղաքակրթական բնույթի հայեցակարգային տարբերությունների հաշվառման: Հետագայում կատարված վերանայումները չեն հանգեցրել ցանկալի փոփոխության: Ասվածը հիմնավորվում է ըստ ՀՀ զորային կառույցի հետևյալ հատկանիշների.

• զորային կառույցը Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման համակարգի պետական կառավարման հատվածում գործում է որպես պաշտպանության նախարարության ենթահամակարգ***, իսկ տեղական ինքնա-

---

* Հրապարակվում է քննարկման կարգով: – *Խմբ.:*

** Զորային գործառույթ չկատարող զորամասերը՝ կրթական (ռազմաուսումնական), գիտական և այլն, զորային կառույցի բաղադրիչ չեն: Դրանց կազմակերպման և գործունեության կարգը պետք է սահմանվի առանձին օրենքներով:

*** Զորային կառույցը պաշտպանության նախարարության ենթահամակարգ է նաև որոշ խորհրդարանական պետություններում (օրինակ՝ ԳԴՀ-ում), սակայն ձևավորման և գործունեության սկզբունքների ու մեխանիզմների, պաշտպանության նախարարության համակարգի զորային ու ոչ զորային բաղադրիչների միջև դերային ու գործառութային հստակ տարանջատվածություն չլինելու հետևանքով (պաշտպանության նախարարությունը զորային կառույցի զինվորական կառավարման մարմին է, որը զինված ուժերի ամենամեծ զորամասն է, ներառելով մյուս բոլոր զորամասերը, ընդսմին պաշտպանության նախարարության ստորաբաժանումները ևս զորամասեր են), այդ թվում՝

կառավարման հատվածում կատարում է այնպիսի գործառույթներ, որոնք ժողովրդավարական պետություններում մասամբ կամ ամբողջությամբ վերալիազորվում են համայնքներին (օրինակ՝ զորակոչի կազմակերպում, տարածքի սարքավորում և այլն): Դա բնորոշ է Խորհրդային Միության տիպի ամբողջատիրական պետություններին, որտեղ իշխանությունն իրականացվում է միաձույլ համակարգի միջոցով՝ առանց ուղղաձիգ և հորիզոնական բաժանման[1],

• զորային կառույցը Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգում գործում է զգալիորեն առանձնահատուկ կերպով: Այդ կառույցի և դրա ստորաբաժանումների մեծ տնտեսական ինքնաբավությունը բնորոշ է պլանային տնտեսությանը և հայեցակարգային մակարդակով չի համապատասխանում շուկայական տնտեսության այնպիսի համակարգաստեղծ պարամետրներին, ինչպիսիք են ազատ մրցակցությունը, տարատեսակությունը, ազատ շրջանառությունը և այլն,

• զորային կառույցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի մի զգալի մասը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը[2]: Մասնավորապես՝ զորային կառույցի ստորաբաժանումները, չունենալով իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձև և իրավական վիճակ, հանդես են գալիս որպես քաղաքացիական շրջանառության հարաբերությունների սուբյեկտներ[*]:

---

մի շարք այլ համակարգաստեղծ պարամետրներով, ՀՀ զորային կառույցը «սերում և ծագում է» ԽՍՀՄ զորային կառույցից: Թեև ՀՀ պաշտպանական բարեփոխումների շնորհիվ (պաշտպանության նախարարի և տեղակալների պաշտոնների քաղաքացիականացում, պաշտպանության նախարարության՝ որպես զորամասի կառուցվածքի վերանայում և ՀՀ պետական կառավարման համակարգին բնորոշ սկզբունքների կիրառմամբ դրա կերպափոխում, հրաժարում Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի՝ Պաշտպանության նախարարի անմիջական ենթակայի և առաջին տեղակալի կարգավիճակից, Պաշտպանության նախարարի ու Գլխավոր շտաբի պետի, ինչպես նաև պաշտպանության նախարարության ու Գլխավոր շտաբի լիազորությունների ու գործառույթների մասնակի տարանջատում և այլն) ՀՀ զորային կառույցը ձերբազատվեց խորհրդային ժառանգության միայն որոշ տարրերից:

[1] Տես «Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик» (http://www.consultant.ru/popular/conscccr/), և «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)» («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», հատուկ թողարկում, 2005):

[2] Տես *Վ. Պ. Ավետիսյան*, Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի կատարելագործումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 3:

[*] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի նորմը, որի համաձայն «Պետական մարմինները Հայաստանի Հանրապետության անունից իրենց գործողություններով կարող են գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել, ինչպես նաև դատարանում հանդես գալ իրենց իրավասության շրջանակներում», բավարար չէ, որ զորային կառույցի ստորաբաժանումները հանդես գան որպես քաղաքացիաիրավական և հարկային հարաբերությունների սուբյեկտ: ՀՀ Սահմանադրության իմաստով Հայաստանի Հանրապետության անունից գործողություններ կատարելու լիազորություններ կարող են ունենալ միայն այն պետական մարմինները, որոնք ունեն իշխանություն իրականացնելու լիազորություն: Սահմանադրության 2-րդ հոդվածով որպես այդպիսի լիազորություն ունեցող մարմիններ են սահմանվում Սահմանադրությամբ նախատեսված մարմինները: Իսկ Սահմանադրությամբ նախատեսված են ամբողջ Զինված ուժերը՝ որպես միասնական պետական մարմին, այլ ոչ դրա ստորաբաժանումները (տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)» և ՀՀ 1998 թ. մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգիրք, հմ. ՀՕ-239 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1998, հմ. 17(50)):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արծարծվող պրոբլեմներն ընդգրկման ծավալի ու բազմազանության պատճառով հնարավոր չէ լուսաբանել մեկ հոդվածում, ստորև կդիտարկվեն միայն զորային կառույցի բարեփոխման այն առումները, որոնք առնչվում են զորամասերի՝ որպես քաղաքացիական շրջանառության հարաբերությունների սուբյեկտներ հանդես գալու բացասմանը և ըստ այդմ զատված գործառույթների իրավաչափ ու արդյունավետ իրականացմանը:

Մինչ պրոբլեմի դիտարկումը անհրաժեշտ է սահմանել սույն հոդվածում կիրառվող «զորային գործառույթ» հասկացությունը: Զորային գործառույթ ասելով մենք հասկանում ենք Զինված ուժերի այն գործառույթների ամբողջությունը, որոնք իրականացնում են զինծառայողները իրենց կյանքը անմիջականորեն հավանական վտանգի ենթարկելու պայմաններում՝ զենք ու սպառազինություն գործադրելու, ռազմական տեխնիկա շահագործելու, և/կամ Զինված ուժերի գործունեությունը ապահովելու ժամանակ: Ըստ այդմ՝ «զորային կառույցը» կարելի է սահմանել որպես Զինված ուժերի՝ նշված գործառույթներն իրականացնող բաղադրամասերի համակարգ:

ՀՀ-ում առկա զորային կառույցը, ինչպես վերը նշվեց, ըստ էության չի տարբերվում խորհրդային զորային կառույցից, որը խորհրդային ամբողջատիրական համակարգի և պլանային տնտեսության տարր էր: Ինչպես հայտնի է, Խորհրդային Միությունը գերռազմականացած պետություն էր, և համապատասխանաբար՝ նրա զորային կառույցում ոչ միայն զորային, այլև ոչ զորային գործառույթ կատարող բոլոր օղակներն անխտիր զորամասեր էին:

Միևնույն ժամանակ, Խորհրդային Միության Զինված ուժերի բոլոր զորամասերը պլանային տնտեսության առանձնահատկությունների շնորհիվ իրենց իրավասություններին համապատասխան ներդաշնակ կերպով ընդգրկված էին պետության տնտեսական համակարգում՝ հանդես գալով ոչ միայն սպառողի, այլև արտադրողի ու ծառայություններ մատուցողի կարգավիճակով, ինչը Հայաստանի Հանրապետության պարագայում բացառվում է: Հայաստանի Հանրապետության զորային կառույցի ստորաբաժանումները Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման, տնտեսական և իրավական համակարգերի առանձնահատկությունների բերումով չեն կարող հանդես գալ արտադրողի ու ծառայություններ մատուցողի կարգավիճակով, այլ կարող են միայն լինել ապրանքների և ծառայությունների սպառող՝ առանց տնտեսավարող սուբյեկտին բնորոշ որևէ հատկանիշի:

Հայաստանի Հանրապետության զորային կառույցի ստորաբաժանումներից զորային գործառույթ չիրականացնող բաղադրիչները առանձնացնելու համար, նախ, հարկավոր է որոշել այն գործառույթները, որոնք պայմանավորում են քաղաքացիական իրավունքի սուբյեկտի որևէ հատկանիշ ունենալու անհրաժեշտությունը: Բնականաբար, դրանք այն գործառույթներն են, որոնք առնչվում են քաղաքացիական իրավունքի օբյեկտների* շրջանառության հարա-

* ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են. 1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրա-

բերություններին զորային կառույցի ստորաբաժանումների մասնակցությանը: ՈՒսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ նման մասնակցությունը պայմանավորված է աշխատանքային պայմանագրերի հիման վրա ոչ զինծառայողների ներգրավմամբ աշխատանքների կատարման հետ կապված գործառույթներով: Ավելի պարզ ասած՝ զորային կառույցի ստորաբաժանումները քաղաքացիական շրջանառության հարաբերություններին մասնակցում են այնքանով, որքանով պետության անունից՝ ոչ իրավաչափ կերպով, գործատուի կարգավիճակով հանդես են գալիս որպես աշխատանքային պայմանագրի կողմ: Այս վերջին հանգամանքն էլ իր հերթին հանգեցնում է այն բանին, որ զորամասերը վերածվեն հարկային հարաբերությունների սուբյեկտի (որպես հարկային գործակալ), ինչի հետևանքով նրան առանց օրենքով սահմանված հիմքի տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)[3]:

Փաստորեն, զորային կառույցի ստորաբաժանումները տնտեսավարող սուբյեկտին բնորոշ հատկանիշներ չունեցող սպառողի վերածելու համար բավարար է դրանցից վերցնել աշխատանքային պայմանագրերի հիման վրա ոչ զինծառայողների ներգրավմամբ աշխատանքների կատարման գործառույթները[*]:

Միևնույն ժամանակ, այդ գործառույթներն էական նշանակություն ունեն զորային կառույցի բնականոն կենսագործունեության ապահովման համար, ուստի անհրաժեշտ է ստեղծել համապատասխան համակարգ և այն օժտել համապատասխան լիազորություններով:

Մեր կարծիքով՝ այդպիսի համակարգ ձևավորելու համար նպատակահարմար է ստեղծել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ), որը մասնաճյուղեր ունենա Զինված ուժերի բոլոր կայազորներում (բացառությամբ Երևանի կայազորից, որի տարածքում կգործի ՊՈԱԿ-ը)[4]:

ՊՈԱԿ-ի գործունեության առարկան պետք է լինի ոչ միայն զորային կառույցի, այլև Զինված ուժերի ու պաշտպանության նախարարության բոլոր ստորաբաժանումների գործունեության սպասարկման կազմակերպումն ու իրականացումը: ՊՈԱԿ-ը, օգտվելով գործող օրենսդրությամբ սահմանված հնարավորություններից և ճկունությունից, այդ աշխատանքը կարող է կատարել ինչպես

վունքները, 2) աշխատանքները և ծառայությունները, 3) տեղեկատվությունը, 4) մտավոր գործունեության արդյունքները, ներառյալ՝ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն), 5) ոչ նյութական բարիքները (տես «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» («ՀՀ պաշտոնական տեղեկագիր»,1998, հմ. 17(50) ):

[3] Տես *Մ. Ա. Փարվանյան*, ՀՀ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը: «ՀԲ», 2010, հմ. 4:

[*] Խոսքը վերաբերում է միայն բյուջետային վարձու աշխատողներին: Աշխատանքային պայմանագրով ներգրավվող քաղաքացիական հատուկ ծառայողների մասով համապատասխան հարաբերությունները պատշաճ կերպով կարգավորվում են գործող օրենսդրությամբ:

[4] Տես «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ 2001 թվականի հոկտեմբերի 23-ի հմ. ՀՕ-248 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001, հմ. 37(169)), ինչպես նաև «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք», հոդ. 61 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր»,1998, հմ. 17(50)):

իր աշխատողների միջոցով, այնպես էլ այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց ներգրավմամբ (*outsourcing*)*: ՊՈԱԿ-ի գործունեության նպատակներ կարող են լինել, մասնավորապես, Զինված ուժերի և պաշտպանության նախարարության ստորաբաժանումների զբաղեցրած տարածքների ու շինությունների մաքրումը, շինությունների ու դրանց համակարգերի ընթացիկ նորոգումը, զորքերի բնակավորման ընթացիկ խնդիրների լուծումը, կոմունալ-կենցաղային սպասարկման բոլոր խնդիրների լուծումը, զորամասերի բոլոր ծառայությունների աշխատանքի այն մասի ապահովումը, որը չեն կատարում (կարող են չկատարել) զինծառայողները, և այլն:

Զինված ուժերի և պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ղեկավարները ծագող պրոբլեմների լուծման նպատակով կշփվեն ՊՈԱԿ-ի և/կամ դրա մասնաճյուղերի ղեկավարների հետ: ՊՈԱԿ-ը կարող է գործել ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման վերաբերյալ պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրի և/կամ պաշտպանության նախարարության բյուջեից ուղղակի ֆինանսավորման հիման վրա: Ընդ որում, ՊՈԱԿ-ի աշխատակիցներ կդառնան ներկայումս զորային կառույցի ստորաբաժանումների հետ «իրավաչափության առումով ոչ լիարժեք» աշխատանքային հարաբերություններում (այդ ստորաբաժանումների՝ քաղաքացիական շրջանառության սուբյեկտ չլինելու պատճառով) գտնվող անձինք: Զորային գործառույթ չկատարող ստորաբաժանումների զինվորական պետերը ՊՈԱԿ-ին «կզիջեն» համապատասխան կազմակերպական գործառույթը, սակայն կպահպանեն վերահսկողականը: Զորային կառույցի ստորաբաժանման հրամանատարի և ՊՈԱԿ-ի կամ դրա մասնաճյուղի ղեկավարի փոխհարաբերությունները կլինեն «ընդունող–հանձնող» ձևաչափում, իսկ նրանց միջև հաղորդակցության օպերատիվությունը կապահովվի զորային կառույցի ստորաբաժանման հրամանատարի՝ որպես պատվիրատուի ներկայացուցչի պայմանագրային առաջադրանք-պահանջներ ներկայացնելու լիազորության հաշվին:

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ զորային գործառույթի և զորային կառույցի՝ դրա հետ կապված ինքնաբավության պարամետրները ռազմաքաղաքական երկու հնարավոր իրավիճակների՝ պատերազմական (ռազմական դրության) և խաղաղ, պայմաններում կարող են տարբեր լինել, ուստի պատերազմական (ռազմական դրության) իրավիճակի համար հարկ կլինի նախատեսել զորային կառույցի ստորաբաժանումների գործառույթների ու կառուցվածքի համապատասխան համակարգ: Հարկ է նշել, որ զինվորական օրենսդրությունն այդպիսի տարբերակման բավարար հնարավորություններ չի

* *Outsourcing*-ը (*аутсорсинг,* աուտսորսինգ) – կազմակերպության ավանդաբար ոչ հիմնական գործառույթների (ինչպիսիք են, օրինակ, մեքենաշինական ընկերության համար հաշվապահական հաշվառումը կամ գովազդային գործունեությունը) հանձնում է արտաքին կատարողներին (ենթակապալառուներ, կողմնակի ընկերության բարձրակարգ մասնագետներ), ինչի պարագայում կազմակերպությունը հրաժարվում է իր որևէ բիզնես-գործընթացից, օրինակ՝ հաշվեկշռի կազմումից, և այդ բիզնես-գործընթացի իրականացման ծառայությունները ձեռք է բերում այլ՝ մասնագիտացված, կազմակերպություն (տես «Современный экономический словарь», под ред. Б. А. Райзберга, изд. 6. М., 2008, с. 32):

ապահովում, ուստի անհրաժեշտ կլինի այն վերանայել: Մասնավորապես՝ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի նախաբանում թեև ընդհանրական բնույթի դրույթով սահմանվում է, որ «Պատերազմական ժամանակ դաշտային պայմաններում և խաղաղ ժամանակ զորավարժությունների ու զինծառայողներին մարտական գործողությունների ուսուցման պարապմունքների ընթացքում ներքին ծառայությունը կարգավորվում է մարտական կանոնադրություններով, ռազմական գործողությունների ապահովման հրահանգներով, ինչպես նաև սույն Կանոնագրքով»[5], սակայն դա բավարար չէ իրավական պետությունում այդ պրոբլեմը լուծելու համար:

Զորային կառույցից վերոհիշյալ բնույթի գործառույթների զատմամբ և ՊՈԱԿ-ին փոխանցմամբ ոչ միայն կապահովվի զորային կառույցի կառուցվածքային ու գործառութային ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման, տնտեսական և իրավական համակարգերին, այլև կառաջանան ստորև նշվող դրական հետևանքները.

• զորային կառույցը կձերբազատվի տնտեսական գործունեությամբ զբաղվելու պարտականություններից, դրա ղեկավարության ամբողջ ուշադրությունն ու ջանքերը կուղղվեն միայն մարտական խնդիրների լուծմանը, ինչը կնպաստի Զինված ուժերի մարտունակության մեծացմանն ու պետության պաշտպանունակության ամրապնդմանը,

• զորային կառույցից զատված գործառույթների իրականացման նպատակով հատկացվող ֆինանսական ու նյութատեխնիկական միջոցների համախմբման և արհեստավարժ կառավարման շնորհիվ հնարավոր կլինի այդ միջոցները ծախսել շատ ավելի օպտիմալ կերպով, ինչպես նաև էապես նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը,

• անհամեմատ ավելի արդյունավետ կդառնա Զինված ուժերին հասցված նյութական վնասի վերականգնումը, քանի որ որպես փոխհատուցող կողմ հանդես կգա ՊՈԱԿ-ը,

• կներդրվեն ռեսուրսների կառավարման միասնական համակարգ և ստանդարտներ,

• զինվորական ծառայությանը առնչվող գաղտնի տեղեկույթը ՊՈԱԿ-ում նվազագույնի հասցնելու շնորհիվ անհամեմատ կմեծանան աշխատանքային իրավահարաբերությունների թափանցիկության ապահովման հնարավորությունները,

• հնարավոր կլինի միասնական կերպով ապահովել նաև, բացի զորային կառույցի ստորաբաժանումներից, Զինված ուժերի ու պաշտպանության նախարարության մյուս ստորաբաժանումների համապատասխան գործունեությունը,

• զորային կառույցը կօպտիմալացվի կառուցվածքի և դրանում զինծառայողների ընդգրկվածության առումներով, ինչի շնորհիվ հնարավոր կլինի հասնել ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների զգալի խնայողության,

[5] «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1996 թվականի դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր»,1997, հմ. 1):

• զատվող գործառույթների մասով կթեթևացվի պաշտպանության նախարարության և ԶՈՒ-ի ԳՇ ստորաբաժանումների, հատկապես՝ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ու նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի, ինչպես նաև ԶՈՒ-ի թիկունքի վարչության աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

Այսպիսով՝ ՀՀ հանրային կառավարման, տնտեսական և իրավական համակարգերին զորային կառույցի կառուցվածքային ու գործառութային ներդաշնակեցման, ԶՈՒ-ի մարտունակության բարձրացման, պաշտպանության նախարարության ու ԶՈՒ-ի ստորաբաժանումների գործունեության սպասարկման օպտիմալ և արդյունավետ կազմակերպման, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների օպտիմալ ծախսման, այդ գործընթացում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, զորային կառույցի կառուցվածքի և դրանում զինծառայողների ընդգրկվածության օպտիմալացման համար նպատակահարմար է առանձնացնել զորային կառույցի ոչ զորային գործառույթները՝ դրանց կատարումը վերապահելով տվյալ նպատակով ստեղծվող իրավաբանական անձին՝ ՊՈԱԿ-ին: Ընդ որում, հարկ կլինի նաև վերանայել գործող զինվորական օրենսդրությունը՝ ըստ խաղաղ և պատերազմական իրավիճակների տարբերակելով զորային կառույցի գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СТРУКТУРНОЙ И ФУНКЦИОНАЛЬНОЙ ГАРМОНИЗАЦИИ ВОЙСКОВОГО ЗВЕНА С СИСТЕМОЙ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ И ЭКОНОМИЧЕСКОЙ И ПРАВОВОЙ СИСТЕМАМИ РА

*В. П. АВЕТИСЯН, подполковник, заместитель Главного редактора военно-научного журнала «Айкакан банак»—юрист ИНСИ МО РА, М. А. ПАРВАНЯН, капитан, соискатель аспирантуры ИНСИ МО РА, Начальник финансовой части ИНСИ МО РА, преподаватель кафедры управления ГЭУА*

РЕЗЮМЕ

Одним из важных направлений оборонных реформ является структурная и функциональная гармонизация войскового звена с системой государственного управления и экономической и правовой системами Республики Армения.

Войсковое звено ВС РА было без учета различий цивилизационного характера создано по образцу войскового звена ВС СССР, являющегося продуктом тоталитарной системы и плановой экономики, причем его войсковые и невойсковые подразделения являлись войсковыми частями. В силу специфики плановой экономики они в рамках своих полномочий соответствовали экономической системе государства, выступая в статусе не только потребителя, но и производителя товаров и услуг.

В Республике Армения, находящейся на этапе становления как демократическое, правовое государство с рыночной экономикой, подразделения войскового звена могут выступать исключительно в роли потреби-

теля. Поэтому главной задачей вышеуказанной гармонизации является изъятие из функций войскового звена невойсковых компонентов. Отмечается, что такими компонентами являются те функции, которые выполняются с привлечением на основе трудовых договоров гражданами, не являющихся военнослужащими. В целях обеспечения оптимального осуществления данных функций на основе действующего законодательства целесообразно создать в системе МО РА соответствующую структуру — Государственную некоммерческую организацию (ГНКО), которая посредством своих филиалов будет функционировать во всех гарнизонах.

При этом следует учитывать необходимые изменения параметров самодостаточности войскового звена в условиях военного времени с соответствующим пересмотром военного законодательства.

Предметом деятельности ГНКО должно стать обеспечение функционирования не только подразделений войскового звена, но и ВС и МО в целом. Используя предоставляемые законодательством возможности и гибкости, ГНКО может действовать как самостоятельно, так и — в случае необходимости — с привлечением физических и юридических лиц *(outsourcing)*. Взаимоотношения командира в/ч и руководителя ГНКО или ее филиалов должны строиться в формате «приема — сдачи», а оперативность в их взаимодействии будет обеспечиваться за счет наделения командира полномочиями по предъявлению договорных заданий-требований в качестве представителя заказчика.

Создание подобной структуры может существенно способствовать повышению боеспособности ВС, эффективной организации обслуживания деятельности подразделений МО и ВС, целевой затрате финансовых и материально-технических средств, снижению коррупционных рисков, оптимизации войскового звена и уровня вовлеченности в нее военнослужащих.

## SOME ISSUES OF THE STRUCTURAL AND FUNCTIONAL HARMONIZATION OF THE TROOP LEVEL WITH THE RA SYSTEM OF PUBLIC ADMINISTRATION AND THE ECONOMIC AND LEGAL SYSTEMS

*V. P. AVETISYAN, Lieutenant-Colonel, Deputy Editor-in-Chief of the Defense-Academic Journal «Haikakan banak»—Lawyer of the INSS, MOD, RA,*
*M. A. PARVANYAN, Captain, Head of the Financial Department of the INSS, Graduate Student of the INSS, Lecturer at the Chair of Management, SEUA*

SUMMARY

One of the important directions of defense reforms is the structural and functional harmonization of the troop level with the system of public administration and economic and legal systems of the Republic of Armenia.

Without taking into account the differences in the nature of civilizations, the troop level of the RA Armed Forces has been created by the example of

that of the Soviet Union, which was an outcome of the totalitarian system and planned economy, with its army and non-army sub-units being military units. Due to the nature of planned economy they, within the framework of their power, were in keeping with the economic system of the state, acting not only in the status of consumers, but also of a producer of goods and services.

The army-level sub-units can act solely in a consumer role in the Republic of Armenia, enjoying the stage of development as a democratic, legal state with market economy. Therefore the main task of the aforesaid harmonization is the removal of non-army components from the army-level functions. It is noted that such components are those functions that are performed on the basis of labor contracts with an involvement of citizens who are not servicemen. For ensuring the optimal implementation of these functions on the basis of current legislation, it is expedient to create an appropriate structure in the system of the MOD, RA — State Non-Profit Organization (SNPO), which will operate in all garrisons through its subsidiaries.

In addition, the compulsory changes of the army-level self-sufficiency parameters in wartime should be taken into account with an appropriate review of military legislation.

The subject of the SNPO's activity should be the organization and implementation of activity support not only of the army-level sub-units but also of the Armed Forces and the Ministry of Defense as a whole. The SNCO can perform this work both independently and — if necessary — with an involvement of other individuals and entities (outsourcing), using opportunities and flexibilities provided by the legislation. The relations between the commander of military unit and the head of the SNCO or its subsidiaries should be constructed in a «Acceptance — Delivery» format, and the efficiency of their interaction will be ensured through the empowerment of the commander to make contractual assignments-demands as a representative of the customer.

Creating such a structure would also significantly contribute to the increase of the level of fighting efficiency of the Armed Forces, to the efficient organization of the service in sub-units of the Ministry of Defense and the Armed Forces, to the target expense of financial and logistical resources, to the reduction of corruption risks, and optimization of the troop level and the level of military involvement in the troops.

# ԶՈՒ-Ի ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

*Ա. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ Զորքերի ծառայության և ՀՇԱԱ վարչության պետի տեղակալ*

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ընթացող պաշտպանական բարեփոխումների կարևոր ոլորտն է զորային կառույցի կերպափոխումը[1]: Այն նպատակաուղղված է ինչպես ԶՈՒ-ի ղեկավարման ու կառավարման համակարգերի կատարելագործմանը ռազմաքաղաքական ու բուն զորային ղեկավարման օղակների տարանջատման միջոցով[2], այնպես էլ ԶՈՒ-ում ժողովրդավարական արժեքների, մասնավորապես՝ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության սկզբունքների արմատավորմանը[3]:

Հայաստանի Հանրապետությունը, ելնելով իր եվրոպական ինտեգրման քաղաքականությունից, ակտիվ կերպով մասնակցում է միջազգային խաղաղարարական օպերացիաներին՝ համագործակցելով Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության և նրա անդամ պետությունների հետ ինչպես ԱԳԳ ծրագրի շրջանակներում, այնպես էլ երկկողմ ձևաչափով: Ոչստի կարևոր է նաև այդ պետությունների բանակների հետ ՀՀ ԶՈՒ-ի փոխգործելիության ապահովումը:

ՀՀ ԶՈՒ-ի զորային կառույցի ոլորտում իրականացվող պաշտպանական բարեփոխումների կոնկրետ նպատակները և դրանց հասնելու եղանակներն ու միջոցները ավելի լավ պատկերացնելու համար արժե ուսումնասիրել առաջատար պետությունների փորձը, նրանց սխալներից քաղել դասեր և ձգտել տեղայնացնելու դրականը: Մեր կարծիքով՝ ուսանելի է Գերմանիայի Դաշնային Հանրապետության փորձը, քանի որ այդ պետությունը, թոթափելով իր ամբողջատիրական անցյալի գաղափարական կապանքները, կարողացավ ծանր տնտեսական պայմաններում հաջողությամբ լուծել իր առջև դրված խնդիրները և ստեղծել աշխարհի ամենաարդիական բանակներից մեկը: Միևնույն ժամանակ, Գերմանիայի փորձը ուշագրավ է այն առումով, որ այնտեղ, ինչպես և ռուսական, ապա՝ խորհրդային, ուստի՝ զգալի չափով նաև հայկական բանակի կազմակերպվածքի ու ռազմավարության համակարգաստեղծ սկզբունքներ էին

[1] Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 52 – 53:

[2] Այդ մասին հանգամանորեն տես *Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան,* ԱՄՆ-ի Պաշտպանական համակարգի ղեկավարման ու կառավարման փորձի մասին: «ՀԲ», 2008, հմ. 4:

[3] Տես *Ա. Ա. Նազարյան,* ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ապահովման օրենսդրական մեխանիզմները: «ՀԲ», 2010, հմ. 2:

պրուսական ռազմական տեսությունն ու մոտեցումները, որոնք արմատապես վերանայվեցին, և կառուցվեց ժողովրդավարական սկզբունքների վրա խարսխվող, այլ արևմտյան բանակների հետ լիովին փոխգործելի բանակ:

Գերմանիայի Զինված ուժերի՝ Բունդեսվերի* ռազմական արվեստը *(Truppenführung*[4]*)* և ցամաքային զորքերի դաշտային կանոնադրությունը *(Zentrale Dienstvorschriff)* հիմնվում են ղեկավարման հիմնարար սկզբունքների՝ «Հանձնարարությունների մարտավարության» *(Auftragstaktik)* և «Ներքին ղեկավարման» (*Innere Führung*, թարգմանվում է նաև «Ներքին ղեկավարում և քաղաքացիական կրթություն») հայեցակարգների վրա:

ԳԴՀ ԶՈՒ-ի ներկայիս ռազմավարական մոտեցումների գաղափարական նախադրյալներն ստեղծվել են Գերհարդ ֆոն Շառնհորստի բարեփոխումների (1810–1812 թթ.), Կառլ ֆոն Կլաուզևիցի և Հելմուտ ֆոն Մոլտկե Ավագի տեսությունների հիման վրա: 19-րդ դարում օպերատիվ արվեստում տեղի ունեցած փոփոխությունների հիմնական հետևանքը եղավ այն, որ հրամանատարը անխուսափելիորեն կորցրեց զորքերին լիովին վերահսկելու հնարավորությունը, ինչը պայմանավորված էր, մասնավորապես, տեսողական շփումների և սուրհանդակային ծառայության վրա հիմնված հաղորդակցման սահմանափակությամբ: Նախկինում գործող «լիակատար հնազանդության» ավանդական հայեցակարգը համահունչ չէր նոր ժամանակներին: ՈՒստի հարկ եղավ որոշում կայացնելու հարցում ստորադաս հրամանատարներից պահանջել նախաձեռնողականություն՝ միևնույն ժամանակ նրանց թույլ չտալով դուրս գալ վերադաս հրամանատարի մտահղացումների ընդհանուր շրջանակներից: Մոլտկեն, խրախուսելով այն սպաներին, որոնք ունակ էին դրսևորելու նման նախաձեռնողականություն, սահմանեց «**Հանձնարարությունների մարտավարության**» հանգուցային սկզբունքը. ենթակաները (ստորադաս հրամանատարները) պետք է գործեն ինքնուրույնաբար՝ առաջնորդվելով իրենց ղեկավարների մտահղացումներով և հիմնական նպատակներով:

Որոշ արդիականացուցիչ փոփոխություններով այդ սկզբունքը ներկայումս կիրառվում է Բունդեսվերում, որի Դաշտային կանոնադրությունում (*Zentrale Dienstvorschzift*) այն ստացել է հետևյալ ձևակերպումը. ««Հանձնարարությունների մարտավարությունը» բանակում կառավարման հիմնական սկզբունքն է: Այն հիմնված է փոխադարձ վստահության վրա և պահանջում է յուրաքանչյուր

* Բունդեսվեր (*Bundeswehr,* գերմաներեն՝ «Դաշնային ուժեր») ԳԴՀ ԶՈՒ-ի անվանումը, որը գործածության մեջ է դրվել 1956 թ.: Ստեղծվել է 1955 թ. հունիսի 7-ին, երբ հիմնվեց ԳԴՀ Ռազմական նախարարությունը (տես «ՀՍՀ», հ. 2: Ե., 1976, էջ 609, նաև՝ «Bundesministerium der Verteidiging» կայքէջը (http://www.bmvg.de/portal/a/bmvg/!ut/p/c4/RYzBCsIwEET_aDcFUfSmiKCgnkTrpSTN0i5tk7LdtBc_3vYgzsA7zIPBN84NduTKKsdgW3xhXvLOTeC6sYKBy5qkJtahjy0rN-BS8DRMVAskciSFZyrIz6XS09QxkC6UCkoz6zEahToo2i7mCQyG2CPucmOB5OZX7LPevW4bK9mY8630x37rtt_ARie3wc!/); «Бундесвер». «Википедия» (ru.wikipedia.org/wiki/Бундесвер)):

[4] Այդ մասին ավելի հանգամանորեն տես «On the German Art of War: Truppenführung», ed. by Bruce Condell and David T. Zabecki. Colorado, 2001:

զինվորի հաստատուն պարտավորությունը՝ կատարելու իր պարտականությունները»[5]: Ընդսմին ղեկավարին ներկայացվում են ավելի մեծ պահանջներ. նա իր ենթականերին է հասցնում իր մտահղացումները, սահմանում է հստակ ու հասանելի նպատակներ և տրամադրում է անհրաժեշտ ուժեր ու ռեսուրսներ: Նա մատնանշում է կատարման համար մանրամասները միայն այն դեպքում, երբ պետք է համաձայնեցված լինեն միևնույն նպատակին ծառայող տարբեր միջոցներ, կամ երբ այդ են պահանջում քաղաքական կամ ռազմական սահմանափակումները: Ղեկավարն իր ենթականերին ազատություն է տալիս նրանց առաքելության կատարման գործում[6]:

Այսպիսով՝ «Հանձնարարությունների մարտավարությունը», որը կարելի է մեկնաբանել որպես «առաքելության կատարման վրա կենտրոնացող մարտավարություն», ի հակադրություն «Հրահանգային մարտավարության» *(Befehlstaktik),* որը կարող է ներկայացված լինել որպես «Վերադասի հրամանների ճշգրիտ կատարման վրա կենտրոնացող մարտավարություն», ավելին է, քան ենթակաների օժտումն առաքելությամբ և այն կատարելու համար ազատությամբ: Դա առաջին հերթին ղեկավարի պարտականությունն է՝ որոշելու նպատակները և հնարավորությունների ու սահմանափակումների հավաքածուն, որոնց շրջանակում էլ ենթակաները պետք է իրականացնեն իրենց առաքելությունը: Ղեկավարը ենթականերին տրամադրում է բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, իսկ դա նշանակում է, որ կատարման համար պատասխանատու է անմիջական կատարողը: Ուստի հաջողության հասնելու հանգուցային տարրերն են զինծառայողի հմտությունը, ստեղծագործական ներուժը և պարտավորությունները: Այս ամենից հետևում է, որ «Հանձնարարությունների մարտավարությունը» ոչ թե հրամաններ տալու տեխնիկա է, այլ ղեկավարման ոճ: Այն ենթադրում է միանձնյա ղեկավարման (յուրաքանչյուրն ունի պատասխանատվության իր ոլորտը, որում էլ ընդունում է որոշումները) և աստիճանակարգության (հրամանները տրվում են վերևից ներքև) համատեղում:

Ռազմական ոլորտի ամերիկացի փորձագետ Ուիլյամ Լինդը նշում է, որ այդ սկզբունքը լրացվում է ևս մեկ սկզբունքով՝ Կլաուզևիցի մշակած «Ծանրության կենտրոնի» *(Schwerpunkt)* հայեցակարգով, որի շնորհիվ ստորադաս հրամանատարների նախաձեռնած գործողությունները մնում են ընդհանուր մտահղացման հունում[7]: Այսպիսով՝ առաջադրանքի կատարումը կախված է ենթակաների նախաձեռնությունից, ինչը պահանջում է վերադաս հրամանատարության և ենթակաների միջև երկուստեք և լիակատար վստահություն:

[5] Բերվում է ըստ՝ Major General *Werner Widder* (German Army). Auftragstaktik and Innere Führung: Trademarks of German Leadership. «Military Review», September—October 2002 (http://www.scribd.com/doc/58814248/Auftragstaktik-Innrere-fuhrung-Trademarks-of-German-Leadership):

[6] Տես նույն տեղում:

[7] Տես *William S. Lind.* Understanding Fourth generation War. «LewRockwell.com», 6 January 2004 (http://www.lewrockwell.com/lind/lind3b.html):

Վերադաս հրամանատարը պետք է համոզված լինի, որ ստորադասներն ի վիճակի են հասկանալու իր մտադրությունները և կմնան դրանց շրջանակներում, ենթակաները պետք է համոզված լինեն, որ վերադաս հրամանատարությունը կհասկանա ու կների հնարավոր, երբեմն էլ՝ անխուսափելի, սխալները՝ կապված պատերազմի անկանխատեսելիության հետ: «Հանձնարարությունների մարտավարությունը», անշուշտ, պահանջում է ինչպես սպաների, այնպես էլ շարքային կազմի բարձր մարտական պրոֆեսիոնալիզմ:

Բունդեսվերի բարձրագույն ուսումնական հաստատության՝ Ֆյուրունգս ակադեմիայի *(Führungs Akademie)* մասնագետները առանձնացնում են «Հանձնարարությունների մարտավարության» հետևյալ 5 բաղադրատարրերը[8]:

*Առաջին.* հրամանատարը մարտի վճռական արդյունքի հասնում է գլխավոր ջանքերի («Ծանրության կենտրոնի») շնորհիվ: Ընդսմին այդ արդյունքն ապահովվում է հակառակորդի կամքի ընկճման միջոցով: Հիմնական ջանքերն առկա են այն դեպքում, երբ դրանք ուժերի պատշաճ վերախմբավորմամբ կենտրոնացված են հակառակորդի մարտունակությանը մշտական ջախջախիչ հարված (ֆիզիկական՝ կրակային հզորություն, հոգեբանական՝ արագություն, աղմուկ և այլն) հասցնելու համար:

*Երկրորդ.* այն ստորադաս հրամանատարները, որոնք ներգրավված չեն հիմնական ջանքերում, պետք է ունակ լինեն երկար ժամանակ գործելու նվազագույն վերահսկողությամբ, իսկ հրամանատարի բացակայության դեպքում ենթակա սպաները պետք է ունենան անհրաժեշտ իրավասություն և կարողություն՝ գործելու ըստ հրամանատարի ընդհանուր մտահղացման:

*Երրորդ.* ենթակա հրամանատարները պետք է հստակորեն հասկանան և՛ իրենց հրամանատարի ընդհանուր մտահղացումը, և՛ մարտի ընթացքը, ինչը նրանց հնարավորություն կտա անելու համապատասխան դատողություններ, բայց քանի դեռ մարտի իրական պատկերը չի կարող պարզ լինել որևէ մեկին, նրանք պետք է կրթված և պատրաստված լինեն տեղեկույթի անբավարարության պայմաններում խելամիտ կերպով և վճռականորեն գործելու համար:

*Չորրորդ.* եթե տեղի է ունենում հակառակորդի մարտական հզորության կործանում, ապա դա տեղի է ունենում հանկարծակի: Ուստի պետք է ձեռքից բաց չթողնել ստեղծված հնարավորությունը և այն օգտագործել արագ ու վճռականապես, որովհետև հակառակորդի խելամիտ ղեկավարման և լավ մշակված պլանների առկայության դեպքում նրա զորքերը կարող են արագ վերախմբավորվել, և հնարավորությունը կլինի կորսված: Ուստի կարևոր է նաև, որ հրամանները լինեն հակիրճ, պարզ ու հստակ՝ տրված սովորական, բոլորին հասկանալի լեզվով:

*Հինգերորդ.* հրամանատարը կարող է գործադրել իր հիմնական ջանքերն ըստ իրադրության՝ հաջողությունն անշեղորեն ամրապնդելու համար: Նման դեպքում ենթակա հրամանատարները նոր հիմնական ջանքերի շրջանակներում ինքնաբերաբար դառնում են պատասխանատու՝ ռեսուրսներն իրենցից երկու

[8] Տես «Auftragstaktik» (http://www.arrse.co.uk/wiki/Auftragstaktik):

աստիճանով բարձր հրամանատարի հրամանին համապատասխան համադասելու և օգտագործելու համար:

Թեև բռնազավթված Արևմտյան գոտում Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կազմավորվեց 1949 թ., սակայն զինված ուժեր ստեղծելու իրավունք ստացավ միայն 1954 թ. Փարիզում ստորագրված համաձայնագրով, երբ արդեն գոյություն ուներ կայացած ժողովրդավարական պետական համակարգ: ՈՒստի հարկ եղավ բանակաշինության ժամանակ հրաժարվել պրուսական միլիտարիստականության ու հիտլերյան ամբողջատիրության գաղափարակազմակերպական ժառանգությունից՝ դրանց հատուկ մոտեցումներով հանդերձ, և մշակել նոր՝ ժողովրդավարական, արժեքների վրա խարսխված գաղափարաբանություն: Հարկ է նշել, որ ԶՈՒ-ի ստեղծման նախապատրաստական աշխատանքներն սկսվել էին վաղ՝ դեռ ԳԴՀ ձևավորման շրջանում: Այսպես. 1950 թ. մշակվել էին նոր Գերմանիայի Զինված ուժերի ղեկավարման հիմնական սկզբունքները, որոնց միաբերմամբ հետագայում ձևավորվեց Բունդեսվերի ղեկավարման ու ենթակարգության համակարգը: Այնուհետև գործարկվեց մի ծրագիր, որը հնարավորություն տվեց Բունդեսվերում ներդրելու ժողովրդավարական հասարակությանը բնորոշ սկզբունքների վրա հիմնված ղեկավարման, ուսուցման, ինչպես նաև հրամանատարների ու ենթակաների միջև փոխհարաբերությունների կարգավորման հայեցակարգը՝ «**Ներքին ղեկավարումը**»[9]: Այն դարձավ ինտեգրման կարևոր գործիք[10]:

Տվյալ հայեցակարգը հիմնվում էր հետևյալ երեք կանխադրույթների վրա: Առաջինն այն է, որ զինծառայողները, ռազմական քաղաքականությունը և ռազմավարությունը պետք է դիտվեն այն բանի ժամանակակից հեռամետ տեսանկյունից, թե պետությունը ապագայում ինչ պատերազմների կարող է բախվել: Ըստ այդմ՝ զինվորականները դիտվում են ոչ թե որպես պատերազմի վարման, այլ հիմնականում որպես խաղաղության պահպանման գործիք. զինվորի հիմնական առաքելությունը խաղաղության պահպանումն է:

Երկրորդ կանխադրույթն այն է, որ միջուկային սպառնալիքի հետևանքով զինվորականները ռազմադաշտում պետք է գործեն վերին աստիճանի անկախ, ուստի պետք է լինեն ներքուստ շարժառիթավորված: Որպես արդյունք՝ ենթակայի և պետի միջև ավանդական հարաբերությունները, որոնք հանգում էին հրամաններին ենթարկվելուն, ժամանակավրեպ են և պետք է փոխարինվեն համագործակցության վրա հիմնվող ղեկավարմամբ:

Երրորդ կանխադրույթն այն է, որ Գերմանիային անհրաժեշտ է դաշնակիցներ ընտրելիս կողմնորոշվել դեպի Արևմտյան Եվրոպա և ԱՄՆ: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է քաղաքական մակարդակով համագործակցել Գերմանիայի հակառակորդների հետ[11]:

---

[9] Տես *Rudolf J. Shlaffer*, *Wolfgang Schmidt* (Hrsg.). Wolf Graf von Baudissin 1907–1933. Modernisierer zwischen totalitärer Herrschaft und freiheitlicher Ordnung. München, 2007:

[10] Տես «Deutsche Bundeswehr», Taschenbuch, CPM GmbH, Sankt Augustin, SS. 131–132:

[11] Տես *М. Кутц*. Innere Führung – руководство и гражданское образование в Вооруженных силах Германии (http://www.pfpconsortium.org/file/2198/view):

Հայեցակարգի հեղինակ կոմս Վոլֆ ֆոն Բաուդիսինի* կարծիքով՝ զինված ուժերը արդյունավետ են միայն այն դեպքում, երբ դրանք համադրում են ռազմական արհեստավարժությունը քաղաքական հուսալիության հետ: Այդպիսով, Բաուդիսինը զինվորականի մասնագիտությունը համարում էր նաև քաղաքական մասնագիտություն[12]: Բարոյագիտական հիմքը, համաձայն որի գերմանացի զինվորը կատարում է իր ծառայությունը, բողոքականությունն է, իր էությամբ՝ փիլիսոփայական: Այդ դրույթով էր, որ Բաուդիսինը իր հայեցակարգը շաղկապեց մարդու և քաղաքացու իրավունքներին՝ զուգահեռներ տանելով այդ հասկացության և Գերմանիայի հիմնական օրենքի միջև: Ըստ այդմ՝ նա առաջ քաշեց այն հիմնարար գաղափարը, որ *զինծառայողը զինվորական համազգեստով քաղաքացի է*** :

Եվ այսպես. «Ներքին ղեկավարումը» դարձավ Բունդեսվերի հիմնական նորմատիվային փաստաթղթերից մեկը, որի պահանջները պարտադիր են յուրաքանչյուր զինծառայողի համար: Ըստ այդմ՝ նրանք պարտավորվում են հավատարմությամբ ծառայել Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը և արիաբար պաշտպանել գերմանական ժողովրդի իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև պատրաստ լինել վտանգի ենթարկելու իրենց առողջությունը և կյանքը.

«401. «Ներքին ղեկավարման» նպատակներն են.

«–պատասխան տալ ծառայության իմաստավորվածության հարցին, այսինքն՝ գիտակցությանը հասցնել զինվորական գործողության բարոյական, իրավական, քաղաքական ու հասարակական հիմնավորումները և, դրա հետ մեկտեղ, ռազմական առաջադրանքի իմաստը, մասնավորապես՝ արտասահմանյան առաքելությունների ժամանակ, դարձնել պարզ ու հասկանալի **(օրինականացում)**,

– ապահովել և խրախուսել Բունդեսվերի ինտեգրումը պետությանն ու հասարակությանը, բնակչության շրջանում զարգացնել անվտանգության ու պաշտպանության գերմանական քաղաքականության մեջ Բունդեսվերի ունե-

* Վոլֆ Շտեֆան Տրագոտ ֆոն Բաուդիսինը (1907–1993) երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է գերմանական բանակի շտաբային սպա, 1941 թ. Հյուսիսային Աֆրիկայում գերի է ընկել, որտեղ էլ մշակել է իր հայեցակարգի նախնական դրույթները: Նրա կարծիքով՝ իշխանության հասնելու նացիստական վարչակազմի հնարավորությունը պայմանավորված էր զինված ուժերում, ինչպես նաև, մի կողմից, զինծառայողների ու քաղաքական հատվածի և, մյուս կողմից, զինծառայողների ու հասարակության միջև հարաբերությունների պատմականորեն ոչ ճիշտ զարգացմամբ: Բաուդիսինը, ունենալով պահպանողական հայացքներ, համարում էր, որ ցանկացած քաղաքականապես օրինական գործողություն պահանջում է պատմականորեն օրինական հիմք:

[12] Տես *Մ. Կուպց,* Նշ. աշխ:

** Սկզբում Բաուդիսինն իր հայեցակարգն անվանեց *«Innere Gefüge»* (ներքին կազմակերպում և համախմբվածություն), սակայն հանդիպելով իր գործընկերների՝ Վերմախտի նախկին սպաների ծանակին (քանի որ նրանք դեմ էին բանակի ժողովրդավարացմանը և այդ հայեցակարգը կոչում էին *«Innere Gewürge»* (ներքին սրտխառնություն)), նա տվեց նոր անուն՝ *«Innere Führung»*, որը լայն տարածում ստացավ Բունդեսվերում՝ դառնալով վերջինիս ղեկավար սկզբունքներից մեկը (տես նույն տեղում):

ցած նախանշանակման ըմբռնումը, ինչպես նաև զինծառայողների ակտիվ ինտեգրումը մշտական փոփոխություններով բնութագրվող Զինված ուժերում **(ինտեգրում)**,

– ամրապնդել զինծառայողների պատրաստակամությունը՝ իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու, ըստ խղճի պատկերացումների հրամաններին ու կարգադրություններին ենթարկվելու, համատեղ աշխատանքում պատասխանատվությունն ստանձնելու, ինչպես նաև պահպանելու կարգապահություն ու զորքերի համախմբվածություն **(շարժառիթավորում)**,

– Զինված ուժերում տիրող ներքին կարգուկանոնը կողմնորոշել դեպի իրավական նորմեր և այն արդյունավետ կերպով կազմակերպել տրված առաջադրանքի կատարման շրջանակներում **(ներքին կարգուկանոնի կազմակերպում)**...

402. «Ներքին ղեկավարման» կենտրոնական տարրն է «զինվորական համազգեստով քաղաքացու» առաջատար կերպարը: Այդ կերպարում իդեալական-տիպային կտրվածքով ակներևաբար պատկերված են Բունդեսվերի զինծառայողներին ներկայացվող պահանջները.

– լինել ազատ անձնավորություն,

– գործել որպես գիտակից, պատասխանատու քաղաքացի և

– լինել ստացված առաջադրանքը կատարելու համար մարտական պատրաստության վիճակում»[13]:

«Ներքին ղեկավարման» նպատակներից ու Բունդեսվերի ռազմական նախանշանակումից բխում են զինծառայողներին ներկայացվող մի շարք պահանջներ, որոնցից առանձնացնենք հետևյալ դրույթները.

– զինծառայողները գիտակցաբար օգտվում են իրենց իրավունքներից և նույն կերպ կատարում... իրենց պարտականությունները,

– գիտակցում և հաստատում են, որ ժողովրդավարորեն օրինականացված քաղաքական կամքը միշտ գերիշխում է զինվորական ղեկավարության նկատմամբ,

– իրենց հաշիվ են տալիս պետության նկատմամբ փոխադարձ վստահության վրա հիմնված վերաբերմունքում[14]:

Հատուկ պահանջներ են ներկայացվում հրամանատարներին ու պետերին, մասնավորապես՝ նրանք պետք է՝

[13] «Общевойсковой устав ZDv 10/1. Внутреннее руководство Innere Führung». Федеральное министерство обороны. Бонн, 28.01.2008 (http://www.google.ru/url?sa=t&source=web&cd=1&sqi=2&ved=0CBcQFjAA&url=http%3A%2F%2Fwww.nnerefuehrung.bundeswehr.de%2Fresource%2Fresource%2FMzEzNTM4MmUzMzMyMmUzMTM1MzMyZTM2MzIzMDMwMzAzMDMwMzAzMDY3NmQzNDc5NjMzODYzNzQyMDIwMjAyMDIw%2FZDv_101_Russisch.pdf&rct=j&q=%D0%92%D0%BD%D1%83%D1%82%D1%80%D0%B5%D0%BD%D0%BD%D0%B5%D0%B5%20%D1%80%D1%83%D0%BA%D0%BE%D0%B2%D0%BE%D0%B4%D1%81%D1%82%D0%B2%D0%BE%20%D0%9E%D0%B1%D1%89%D0%B5%D0%B2%D0%BE%D0%B9%D1%81%D0%BA%D0%BE%D0%B2%D0%BE%D0%B9%20%D1%83%D1%81%D1%82%D0%B0%D0%B2&ei=Gh8dTsJNzMmzBtSFjLIN&usg=AFQjCNHrz7lNfofOewbxpTphxWy-lC_adw&cad=rjt).

[14] Տես նույն տեղում:

– առաջացնեն, պահպանեն ու խորացնեն պատասխանատվության գիտակցումը և համատեղ աշխատելու ներքին պատրաստակամությունը,

– կիրառեն «կառավարում՝ առաջադրանքի միջոցով» սկզբունքը*,

– խելացի կերպով հարաբերակցեն ուսումնադաստիարակչական գործընթացը զինծառայողների խնդիրների հետ և աջակցեն նրանց կրթությանն ու զարգացմանը,

– ցանկացած որոշում ընդունելիս հաշվի առնեն ենթակաների հիմնավորված շահերն ու պահանջմունքները,

– ըմբռնեն քաղաքականության, հասարակության, տնտեսության մեջ, մշակույթի, գիտության ու տեխնիկայի ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունները և դրանք հաշվի առնեն իրենց ղեկավարման ոճում,

– պարզ ու հասկանալի կերպով ձևակերպեն Բունդեսվերի նախանշանակման, ինչպես նաև յուրաքանչյուր առաջադրվող խնդրի իմաստները[15]:

«Ներքին ղեկավարման» կանոնադրությունում շեշտվում է. *«Մարդկանց կառավարումը,* այդ թվում՝ օպերացիայում և մարտում, *քաղաքական կրթությունը,* ինչպես նաև *իրավունքն ու զինվորական կարգուկանոնը* զինվորական ծառայության ամենակարևոր ոլորտներն են, որոնք անմիջականորեն առնչվում են մարդուն: Դրանք են, մասնավորապես, պետերի համար *ներքին ղեկավարման կիրառման գլխավոր ոլորտները...*

... Զինվորական ծառայությունը, մասնավորապես՝ հրամանատարական պաշտոններում, մեծ պահանջներ է ներկայացնում անձնավորությանը: Ներքին ղեկավարման սկզբունքները զինծառայողների համար *իրենց գործողությունների երաշխիքի* աղբյուրն են: Չէ՞ որ ռազմական առաջադրանքի կատարումը ծայրահեղ դեպքում կպահանջի անհրաժեշտության դեպքում մարտում սպանել հակառակորդին՝ ընդսմին չխնայելով իր և ընկերների կյանքը»[16]:

Այսպիսով՝ ներքին ղեկավարման սկզբունքները նպատակաուղղված են բարոյապես կայուն և արժանապատիվ վարքի ձևավորմանը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ «Ներքին ղեկավարման» կանոնադրությունը ոչ թե մոտեցումների մի քարացած համակարգ է, այլ մշտապես կատարելագործվող, ժամանակին համահունչ զարգացող հայեցակարգ**:

«Ներքին ղեկավարման» սկզբունքները դուրս եկան Բունդեսվերի սահմաններից և լայն արձագանք ստացան արևմտյան ժողովրդավարական բանակներում: Մասնավորապես՝ «զինվորական համազգեստով քաղաքացի» հասկա-

* Այստեղ «Ներքին ղեկավարման» հայեցակարգը շաղկապվում է վերը քննարկված «Հանձնարարությունների մարտավարության» հայեցակարգին:

[15] Տես «Общевойсковой устав ZDv 10/1. ...»:

[16] Նույն տեղում:

** Այսպես. 2008 թ. հունվարի 28-ին գործողության մեջ դրվեց «Ներքին ղեկավարման» նոր կանոնադրությունը, որը փոխարինեց 1993 թ. փետրվարին հաստատված տարբերակը:

ցությունը դարձավ գերմանական զինված ուժերին հատուկ տարբերակիչն ինչպես բուն Գերմանիայում, այնպես էլ ՆԱՏՕ-ում[17]:

«Հանձնարարությունների մարտավարության» և «Ներքին ղեկավարման» հայեցակարգերի շնորհիվ Բունդեսվերին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնք նրան էապես տարբերում են նախկինում եղած բոլոր գերմանական բանակներից:

Բունդեսվերը բազմազգ պաշտպանական կառույցի բաղադրիչ է: Ի սկզբանե Բունդեսվերն ստեղծվել էր որպես Հյուսիսատլանտյան դաշինքի պետությունների համատեղ պաշտպանության կազմակերպման գործիք: Ուստի ազգային ներպարփակվածությունը գերմանական ԶՈՒ-ի համար անհնար էր, և այդ պատճառով բոլոր մարտական ստորաբաժանումներն ընդգրկվեցին ՆԱՏՕ-ի օպերատիվ պլանավորման և կառավարման համակարգում[18]:

Բունդեսվերը, ի թիվս աշխարհի մի շարք պետությունների զինված ուժերի, իրականացնում է ահաբեկչության դեմ պայքարի, տարբեր բնույթի խաղաղարարական առաքելություններ, հետևաբար նոր իրավիճակներն ստիպում են իրատեսորեն վերլուծել, թե ապագայում ռազմական հակամարտությունները ինչպիսին կարող են լինել, ինչի հիման վրա պետք է կառուցվեն ռազմական ուսուցման և օպերատիվ կառավարման ծրագրերը: Ուստի զինվորականները պետք է իմանան, թե ձեռնարկվող ռազմական օպերացիաներում իրենց պետությունը ինչ քաղաքականություն է վարում և ինչ քաղաքական նպատակներ է հետապնդում:

Գերմանիայի Սահմանադրությամբ ոչ մի տարբերություն չի դրվում զինծառայողների և քաղաքացիական անձանց հիմնարար իրավունքների միջև: Զինծառայողը համարվում է իրավունքների և ազատությունների վրա հիմնվող սահմանադրական կարգի ու ժողովրդավարական կացութաձևի պաշտպան: Զինծառայողների հիմնարար ազատությունները սահմանափակվում են միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է զինված ուժերի արդյունավետության համար՝ օրենքներին համապատասխան:

Բունդեսվերը խորհրդարանական ժողովրդավարության բանակ է՝ պետության ու հասարակության անքակտելի մաս:

ԳԴՀ-ում մշակվել և հաջողությամբ գործում է զինվորական ոլորտում իշխանության հստակ տարանջատման լավ մշակված օրենսդրական դաշտ: Կառավարությունը (ի դեմս վարչապետի ու պաշտպանության նախարարի) որոշում է պաշտպանական խնդիրները և համապատասխան միջոցներով ապահովում դրանց կատարումը, իսկ բարձրաստիճան զինվորականները (հանձին ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի) ապահովում են ԶՈՒ-ի ռազմական կառավարումը, բարձր մակարդակի մարտական պատրաստությունը, անհրաժեշտության դեպքում

[17] Ավելի հանգամանորեն տես «Deutsche Geschichte von 1945 bis zur Gegenwart: die Entwicklung der beiden deutschen Staaten». München: Olzog, 1998, SS. 131–133:

[18] Տես «Դոյչե Բունդեսվեր», էջ 89–90:

քաղաքական ղեկավարության հրամանով կատարում են պաշտպանական խնդիրներից բխող գործողություններ:

Հիմնական գաղափարն այն է, որ զինվորականները կարող են որոշ չափով ազդել պետության քաղաքականության վրա, սակայն նրանք երբեք չպետք է անմիջականորեն մասնակցեն պետության կառավարման և հատկապես՝ քաղաքական որոշումների ընդունման գործընթացին:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական արդյունավետ վերահսկողության միջոց է Գերմանիայի խորհրդարանը՝ Բունդեստագը: Այն հաստատում է պետության պաշտպանական բյուջեն, ինչպես նաև որոշում է բանակաշինության հիմնական սկզբունքները և բանակի թվակազմը:

Հիմնարար իրավունքների պաշտպանության նպատակով որպես խորհրդարանի օժանդակ մարմին գործում է պաշտպանության գծով խորհրդարանական հանձնակատարի (զինվորական օմբուդսմեն) հաստատությունը: Այդ պաշտոնյան ընտրվում է խորհրդարանի կողմից և կոչված է պաշտպանելու Բունդեսվերի զինծառայողների իրավունքները և ազատությունները: Նրան դիմելու իրավունք ունի ցանկացած զինծառայող՝ շարքայինից մինչև գեներալ: Զինվորական օմբուդսմենը կարող է զորամասերում առանց նախազգուշացման ցանկացած պահի կատարել ստուգայցեր: Նա խորհրդարանին ներկայացնում է տարեկան հաշվետվություն: Աշխատանքի այդ ձևը հնարավորություն է տալիս հասարակությանը ներկայացնելու զորքերում տիրող իրական վիճակը և ցույց տալու խորհրդարանին, թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել[19]:

ԳԴՀ-ում պաշտպանական ոլորտի քաղաքացիական ղեկավարման կարևոր բաղադրիչ է կառավարության կազմում գործող Անվտանգության դաշնային խորհուրդը *(Bundessicherheitsrat)*: Խորհուրդը ղեկավարում է դաշնային վարչապետը (կանցլեր): Խորհրդի կազմում են փոխվարչապետը (նախարարներից մեկին այդ պաշտոնին է նշանակում վարչապետը), արտաքին գործերի, պաշտպանության, ներքին գործերի, էկոնոմիկայի, ֆինանսների նախարարները, ինչպես նաև Բունդեսվերի գերագույն տեսուչը և դաշնային հետախուզության պետը: Խորհուրդը գումարվում է վարչապետի հրավերով:

Խորհուրդը կարող է քննարկել ցանկացած հարց, որը վերաբերում է պետության անվտանգությանը, մասնավորապես՝ որոշումներ է ընդունում Զինված ուժերի երկարաժամկետ պլանավորման, սպառազինության արտահանման, ռազմավարական հարցերի վերաբերյալ: Խորհրդարանը մշտապես տեղեկություն է ստանում անվտանգության խորհրդի գործունեության մասին[20]:

---

[19] Այդ մասին տես նաև *Ա. Ռ. Ավետիսյան*, Զինվորական օմբուդսմենի հաստատություն. դերն ու գործունեության առանձնահատկությունները: «ՀԲ», 2007, հմ. 4:

[20] Տես *Томас Виль.* Разработка политики национальной безопасности. «Сравнительный анализ процессов разработки политики национальной безопасности в США, Франции и Германии» (Программа углубленного изучения вопросов безопасности (ПАСС)). Европейский центр по изучению вопросов безопасности им. Джорджа Маршалла, Гармиш-Партенкирхен, 2006; *Cord Meier-Klodt.* Einsatzbereit in der Krise?

ԳԴՀ-ում ազգային անվտանգության ոլորտին առնչվող որոշումների ընդունման և իրականացման մեջ գլխավոր դերը պատկանում է ոչ թե օրենսդիր, այլ գործադիր իշխանությանը և առաջին հերթին դաշնային վարչապետին, որը ձևավորում է կառավարությունը, Անվտանգության դաշնային խորհրդի ղեկավարն է, պատերազմի ժամանակ կատարում է գլխավոր հրամանատարի գործառույթները, ներկայացնում է պետության ազգային անվտանգության հայեցակարգը՝ «Գերմանիայի Դաշնային Հանրապետության անվտանգության սպիտակ գիրքը»[21], որում շեշտը հիմնականում դրվում է արտաքին քաղաքականության ու ռազմական հարցերի վրա:

Գերմանիայում գործադիր իշխանությունը կառավարությունն է, որը ղեկավարում է Զինված ուժերը և քաղաքացիական պաշտպանության նախարարի միջոցով իրականացնում է ռազմական քաղաքականությունը: Նրա աշխատակազմը համալրված է քաղաքացիական պաշտոնյաներով, որոնք ունեն ռազմական ոլորտում աշխատանքի փորձ և ռազմական բնագավառի որոշակի գիտելիքներ: Ընդսմին մեծ ուշադրություն է դարձվում պաշտպանական ոլորտում աշխատող քաղաքացիական մասնագետների մասնագիտական պատրաստությանը: Քաղծառայող պաշտոնյաները բանակի սպաների հետ ուսանում են բարձրագույն զինվորական ուսումնական հաստատություններում, որտեղ դասավանդում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական դասախոսներ: Սպաները և ապագա քաղծառայողները պետական անվտանգության խնդիրները ուսումնասիրում են քաղաքացիական բուհերում:

Առաջնային կարևորություն է տրվում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ ապահովմանը, այդ թվում՝ մամուլի և հասարակայնության հետ կապի ոլորտում: Մասնավորապես՝ այդ նպատակով Բունդեսվերի յուրաքանչյուր բանակային կորպուսի հրամանատար ունի մամուլի (հասարակայնության) հետ կապի գծով սպա, որը համարվում է նրա օգնականը: Միևնույն ժամանակ, բանակը պահպանողական փակ կառույց է, իսկ մամուլը դավանում է ժողովրդավարական արժեքներ, ուստի դժվար է գտնել իրենց բնույթով հակադիր ուղղվածություն ունեցող այդ երկու սոցիալական կառույցների համագործակցության նպատակահարմար բանաձև: Այդ պատճառով Բունդեսվերի ռազմական ուսումնական հաստատություններում ապագա սպաներին ուսուցանում են լրագրողների հետ շփվելու վարքականոններ:

Գերմանիայում հասարակության, զինվորական ղեկավարության և խորհրդարանի միջև կապող օղակ են զինվորական արհմիությունները՝ «Բունդեսվերի միությունը»: Զորամասերում արհմիության ներկայացուցիչները զինծառա-

Entscheidungsstrukturen der deutschen Sicherheitspolitik auf dem Prüfstand. SWP Studie 2002 (http://www.swp-berlin.org/common/get_document.php?id=280); «Военное право Германии». «ЗАКОН СЕГОДНЯ» (lawtoday.ru/razdel/biblo/voen-prav/063.php):

[21] Տես «White Paper on German Security Policy and the Future of the Bundeswehr 2006» (http://www.bmvg.de/portal/a/bmvg/!ut/p/c4/Fcw5DsAgDADBH-E-XV6Ro8PEAguwUbi-H6Jtplq4YSV2sLeNVWyCEy7HG06DeXhT2QV6A3GrRRM3jsaKJ9RG5tHYM8nSJK4Vuwtw_L_k4SKBkvP-AfvAtHQ!/):

յողների քվեարկության արդյունքներով ընտրված անձինք են՝ անկախ կոչումից և պաշտոնից: Այդ միությունն իր հիմնական ջանքերը կենտրոնացնում է հիմնականում զինվորների և սպաների ապահովագրման միջոցառումների, աշխատավարձի, թոշակի, բնակարանային և սոցիալական ապահովման այլ հարցերի վրա:

Ամփոփելով՝ բերենք ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հետևյալ միտքը. «Բարեփոխումների նպատակն է այնպիսի արդյունավետ պաշտպանական համակարգի ստեղծումը, որը ոչ թե ձևականորեն կրկնօրինակի որևէ գործող մոդել, այլ, օգտագործելով հայրենական ու միջազգային փորձը... լինի ճկուն, մարտունակ և զորու՝ չեզոքացնելու առկա բոլոր սպառնալիքները, ապահովելու Հայաստանի Հանրապետության և նրա ազգային անվտանգության հիմնարար արժեքների հուսալի պաշտպանությունը, կատարելու այդ բնագավառում ՀՀ միջազգային պարտավորությունները»[22]:

Ուխտի կարծում ենք, որ ՀՀ ԶՈՒ-ի զորային կառույցի կատարելագործման ուղենիշների մշակման ժամանակ նպատակահարմար է հաշվի առնել նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության ԶՈՒ-ի՝ Բունդեսվերի փորձը:

## МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РУКОВОДСТВА ВС НА ПРИМЕРЕ ВООРУЖЕННЫХ СИЛ ФЕДЕРАТИВНОЙ РЕСПУБЛИКИ ГЕРМАНИЯ

*А. М. ПЕТРОСЯН, полковник, заместитель начальника Управления службы войск и обеспечения безопасности военной службы ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

Оборонные реформы в РА предусматривают также модернизацию войсковой структуры с нацелом на укоренение в армии демократических ценностей, в том числе — демократического гражданского контроля, обеспечение интероперабельности с войсками ведущих западных государств при выполнении в составе многонациональных сил международных миротворческих операций, совершенствование систем руководства и управления. В этом аспекте представляется целесообразным изучение опыта Федеративной Республики Германия, которая сумела в тяжелых экономических условиях преодолеть инерцию концептуальных традиций узкого прусского милитаризма (что было характерно для Советской армии и — в определенной степени — ВС РА) и тоталитаризма и создать современную армию — Бундесвер, способную к полноценному взаимодействию с другими западными армиями, и развиваться в гармонии с демократическим развитием германского общества. В основу военного искусства Бундесвера *(Truppenführung)* и полевого устава сухопутных войск *(Zentrale Dienstvorschriff)* заложены принципы «Тактики поручений» *(Auftragstaktik)* и «Внутреннего руководства» *(Innere Führung).*

[22] *Ս. Օհանյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

Концепция «Тактики поручений» предусматривает особый стиль руководства, основанный на полном взаимном доверии командира и подчиненного. Руководитель отдает четкий и ясный приказ с использованием понятной терминологии, что исключает возможность недопонимания или иного толкования смысла, и предоставляет подчиненным все необходимые для выполнения ресурсы, т. е. определяет *что* необходимо сделать, а подчиненный выполняет задачу, проявляя творческую инициативу, т. е. решает *как* выполнить ее, оставаясь в рамках общего замысла. Данная концепция предъявляет высокие требования к военному профессионализму и боевой слаженности как офицеров, так и рядового состава, поскольку командир каждого звена (а на самом нижнем уровне — рядовой) должен понимать смысл действий и иметь знания, необходимые для стоящего на две ступени выше командира.

Концепция «Внутреннего руководства» как основополагающий нормативный документ для службы в рядах Бундесвера основана на положении о том, что «военнослужащий — это гражданин в военной форме». «Внутреннее руководство» нацелено на соблюдение прав человека военнослужащих Бундесвера и в вопросе воинской дисциплины во главу угла ставит сознательное отношение к необходимости поддержания установленного правопорядка. Концепция, фактически, задает нормы культуры взаимоотношений начальник — подчиненный, зиждущейся на демократических ценностях. Подчеркивается, что эта концепция постоянно совершенствуется, развивается созвучно времени и нацелена на формирование морально устойчивого и достойного поведения военнослужащих с обеспечением доведения до их сознания моральных, правовых и политических обоснований военных действий и смысла военного задания, в особенности при выполнении военных миссий за рубежом.

Отмечается, что учет опыта ВС ФРГ в данной сфере может оказаться полезным при разработке ориентиров дальнейшего совершенствования войсковой структуры ВС РА.

## THE INTERNATIONAL EXPERIENCE OF THE ARMED FORCES GUIDANCE AFTER THE EXAMPLE OF THE ARMED FORCES OF THE FEDERAL REPUBLIC OF GERMANY

*A. M. PETROSYAN, Colonel, Deputy Head of the Directorate of Troops Service and Ensuring Security in the Military Service of the Main Staff of the Armed Forces of the Republic of Armenia*

SUMMARY

The defense reforms in the RA also envisage the modernization of the troop structure aimed at rooting democratic values in the troops, including — democratic civilian control, ensuring interoperability with the leading Western states' forces when performing international peacemaking operations in the multinational forces, improving guidance and leadership systems. In

this aspect, it seems expedient to study the experience of the Federal Republic of Germany, which in difficult economic conditions succeeded in overcoming the inertia of conceptual traditions of the narrow Prussian militarism (which was typical of the Soviet army and — to some extent — of the RA Armed Forces) and totalitarianism, and in creating a modern army — the Bundeswehr, capable of fully interoperating with other Western armies, and of improving in harmony with the democratic development of the German society. The principles of «Mission-type tactics» *(Auftragstaktik)* and «Internal leadership» *(Innere Führung)* underlie the art of war of Bundeswehr *(Truppenführung)* and Field Manual of the Ground Forces *(Zentrale Dienstvorschriff)*.

The concept of «Mission-type tactics» provides a special style of leadership based on the complete mutual trust of the commander and the subordinate. The leader gives a clear and explicit order with comprehensible terminology that excludes the possibility of misunderstanding or different interpretation of the meaning, and provides all the necessary resources for subordinates, i.e. determines *what* should be done, and the subordinate carries out the task, showing creativity, i.e. decides *how* to solve it, while remaining within the overall design. This concept places high demands on the military professionalism and combat congruence of both the officers and the ranks, as the commander of each level (and at the lowest level — the private) must understand the meaning of actions and have the knowledge necessary for the commander standing on two levels higher.

The concept of «Internal leadership» as a basic normative document for the service in the Bundeswehr is based on the provision that «the serviceman is a citizen in uniform». The «Internal leadership» focuses on human rights of Bundeswehr servicemen and in the matter of military discipline gives the priority to the conscious attitude to the need for maintaining the established legal order. The concept, in fact, sets the cultural norms of mutual relations between the commander and subordinate, building upon democratic values. It is emphasized that the concept is constantly improving, evolving in tune with the time and focuses on the formation of stable and morally good conduct of servicemen ensuring the bringing of the moral, legal and political justifications of military operations and the meaning of a military task to their awareness, especially when performing military missions abroad.

It is noted that the taking-into-account of the practices of the Armed Forces of the FRG in this area may prove useful in developing guidelines for the further improvement of the troop structure of the RA Armed Forces.

# ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀՀ ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Տ. Մ. ԱՆՏՈՆՅԱՆ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտական-վերլուծաբան*

Ներկայումս կան մի շարք պետություններ, որոնց պաշտպանական համակարգում կանոնավոր բանակի հետ մեկտեղ ներառված են աշխարհազորային ուժերը, այսինքն՝ ձևավորված է տարածքային պաշտպանության համակարգ: Տվյալ համակարգը հատկապես կարևոր դեր ունի մարդկային կամ տնտեսական ռեսուրսների առումով ոչ հզոր ու մշտապես հակառակորդի զինված հարձակման սպառնալիքի տակ գտնվող պետությունների համար:

Տարածքային պաշտպանությունը այն փոխկապված ու փոխհամաձայնեցված պետական միջոցառումների համախումբն է, որոնք իրականացվում են պետական սահմանի հատվածների, կարևոր օբյեկտների ու հաղորդակցման ուղիների, բնակչության պաշտպանության, հակառակորդի պլանավորված կամ իրականացվող հետախուզական ու դեսանտային օպերացիաների կանխման, նրա զորային ու դիվերսիոն խմբավորումների ջախջախման, ինչպես նաև տեղերում ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցության նպատակով[1]: Տարածքային պաշտպանության ուժեր կան Գերմանիայում, Դանիայում, Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, Իսրայելում, Սիրիայում, Իրանում և այլուր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանը մեր տարածաշրջանում ունի էական ռազմաքաղաքական դեր, և նրա պաշտպանական համակարգի հիմքում դրված է մահմեդական գաղափարախոսությունը, կարծում ենք, որ նպատակահարմար է ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների լույսով ուսումնասիրել այդ պետությունում տարածքային պաշտպանության կազմակերպման պրոբլեմը:

Մահմեդական հեղափոխական արժեհամակարգի հենքի վրա ստեղծված Իրանի Իսլամական Հանրապետությունում բոլոր պետական հաստատություններն ունեն գաղափարաբանական ուղղվածություն: Այս առումով բացառություն չեն Իրանի Զինված ուժերը: Հեղափոխությունից հետո կանոնավոր բանակին՝ «Արտեշին», զուգահեռաբար ստեղծված Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին (ԻՀՊԿ, պարսկ.՝ *Փասդարան*՝ Պահապան) կից ձևավոր-

[1] Տես *Յու. Գ. Խաչատրովի*, Պաշտպանությանը պետության և նրա Զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2009, հմ. 3:

վեցին տարածքային պաշտպանության աշխարհազորային ուժերը՝ «Բասիջ» կամավորական զինվորական կազմավորումը:

*Աղյուսակ 1*

«ԲԱՍԻՋԻ» ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱՆԱԿԻ ՈՐՈՇ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

| Բնութագրեր | Ոչ կանոնավոր զինվորական կազմավորում՝ «Բասիջ» | Կանոնավոր բանակ՝ «Արտեշ» |
|---|---|---|
| Կազմը | կամավորության սկզբունքով ստեղծված զորամիավորում՝ առավելապես բաղկացած հասարակության միջին խավի ներկայացուցիչներից, քաղաքաբնակ երիտասարդներից | զինծառայողներ բոլոր սոցիալական խավերից՝ թե՛ քաղաքաբնակ, թե՛ գյուղաբնակ երիտասարդներ |
| Գաղափարական ազդեցությունը | բարձր աստիճանի գաղափարականություն | սակավ գաղափարականություն, քաղաքական տեղեկացվածություն |
| Պարտականությունները | ներքին անվտանգության ապահովում | զինվորական պարտականություններ |
| Պատրաստականության և զինվածության մակարդակը | ցածր մակարդակի զինպատրաստականություն, թեթև զինվածություն՝ հիմնականում ԱԿ-47 տեսակի ավտոմատներով | պրոֆեսիոնալ զինպատրաստականություն, զինվածություն ծանր սպառազինությամբ |

Իրանի Զինված ուժերի հրամանատարները քաղաքական ակտիվություն դրսևորելու իրավունք չունեն և վերահսկվում են քաղաքական-գաղափարախոսական ղեկավարության, մասնավորապես՝ Գերագույն հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների կողմից, որոնք կանոնավոր և ոչ կանոնավոր զորքերում զբաղվում են կրոնաքաղաքական քարոզչությամբ: Կրոնագաղափարախոսական բաղադրիչը հատկապես մեծ ազդեցություն գործեց ոչ կանոնավոր զինված ուժերի՝ բասիջների ձևավորման վրա:

Ժողովրդական բանակը՝ «Բասիջ» ոչ կանոնավոր զինուժը, ստեղծվեց 1980 թվականի ապրիլին՝ հեղափոխական արժեքները պաշտպանելու նպատակով: Նույն թվականի սեպտեմբերին, երբ բռնկվեց իրանա-իրաքյան պատերազմը, սկսվեց կամավորականների հավաքագրումը: Պատերազմի ընթացքում շուրջ 5 միլիոն կամավորներ, համալրելով «Բասիջի» շարքերը, մեկնեցին ռազմաճակատ: Ունենալով համապատասխան մարտական պատրաստականություն՝ կամավորները անձնազոհաբար մարտնչեցին ռազմադաշտում[2]: Բասիջական-

[2] Տես *Jon Lee Anderson*. Understanding the Basij. «The New Yorker», 19 June 2009 (http://www.newyorker.com/online/blogs/newsdesk/2009/06/jon-lee-anderson-understanding-the-basij.html):

ները, ինչպես և իսրայելական Նահալի կամավոր մարտիկները[3], հզոր կրոնական ազդակների շնորհիվ անվերապահորեն հավատում էին պետության անպարտելիությանը: Կամավոր բասիջականներից շատերը թե՛ կրոնագաղափարական ազդեցության, թե՛ իրենց ընտանիքների բարեկեցությամբ մտահոգված լինելու պատճառով ռազմաճակատ էին մեկնում մարտիրոսանալու, այսինքն՝ շահիդ դառնալու ակնկալիքով: Սերելով սոցիալապես անապահով խավից՝ բասիջականները գիտեին, որ շահիդների ընտանիքներն ստանում են ֆինանսական աջակցություն և վայելում են մեծ հեղինակություն:

ՈՒԲ տարի տևած իրանա-իրաքյան պատերազմի (1980–1988 թթ.) ավարտից հետո «Բասիջը» վերակազմավորվեց և ստանձնեց նոր պարտականություններ: Կանոնավոր բանակին զուգահեռ զինվորական ուժ լինելուց բացի, բասիջականները դիտվում էին որպես գաղափարական և բարոյահոգեբանական քարոզիչ ուժ[4]: Նրանք լիազորված էին իրականացնելու՝

- պետության ամբողջ բնակչության, այդ թվում և պահուստային ուժերի, նպատակային զինվորական պատրաստման կազմակերպումը[*],
- իրանցիների քաղաքական և գաղափարախոսական դաստիարակությունը՝ որպես ելակետ ընդունելով աներկբա հավատն առ իսլամի դրույթներ և նվիրվածությունն իշխանությանը,
- քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումները,
- աջակցությունն իշխանություններին ընդդիմության և հանցավորության դեմ պայքարում:

Պետության քաղաքական կյանքին բասիջականների մասնակցությունն աճեց 2005 թվականից հետո, երբ Նախագահ ընտրվեց Մ. Ահմադինեժադը: Հատկանշական է, որ Իրանում իշխանության եկած նոր պահպանողականները՝ Մ. Ահմադինեժադի թիմակիցներից շատերը, այդ թվում և Նախագահն ինքը, ժամանակին եղել են բասիջականներ: 2009 թ. հունիսի 12-ին կայացած նախագահական ընտրություններին հաջորդած հասարակական հուզումները ճնշվեցին բասիջականների ուժերով[5], մինչդեռ իրանական կանոնավոր բանակը և ոստիկանությունը զերծ մնացին մասնակցությունից: Դա կարելի է բացատրել Իրանի Իսլամական Հանրապետությանն սպառնացող ներքին թշնամիներին ժողովրդական զինված ուժերի միջոցով պատժելու ձգտմամբ:

---

[3] Տես *Հ. Քոթանջյան*, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «ՀԲ», 2009, հմ. 3:

[4] Տես *Daniel Byman, Shahram Chubin, Anoushiravan Ehteshami and Jerrold Green.* Iran's Security Policy in the Post-Revolutionary Era. Santa Monica, 2001, P. 39:

[*] «Բասիջի» Կանոնադրության 36-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր բասիջականի ամենակարևոր պարտականությունն է կամավորներին վարժեցնել իսլամական արժեքների ոգով՝ Իսլամական Հանրապետությունը ներքին և արտաքին թշնամիներից պաշտպանելու համար (տես «Manshur-e Basij» (http://www.kmu.ac.ir/sitewizard/admin/wizard/Default.aspx?PageId=6934)):

[5] Տես *Jon Leyne.* Will Iran's Basij stay Loyal? «BBC News», 13 August 2009 (http://bbc.co.uk/2/hi/middle_east/8200719.stm):

**Կառուցվածքը**

ԻԻՀ յուրաքանչյուր նահանգ ունի բասիջականների ջոկատներ, որոնք կազմել են այսպես կոչված «դիմադրության տարածքներ»[6]: Յուրաքանչյուր «դիմադրության տարածք» բաժանվում է դիմադրության գոտու, յուրաքանչյուր գոտի՝ դիմադրության զորակայանի (բազա): Ընդհանուր առմամբ, կան 2500-ից ավելի «բասիջ շրջաններ»՝ յուրաքանչյուրը 300–350 զինված կամավորներով:

Ի տարբերություն երկրի կենտրոնական նահանգներում առկա «Բասիջ» «դիմադրության ուժերից», ծայրամասային նահանգներում բասիջականներն իրականացնում են շատ ավելի ծանր ու բարդ գործառույթներ: Աֆղանապակիստանյան սահմանին մերձակա Սիստան-Բելուջիստան նահանգի «Բասիջ» տարածքային ուժերը մասնակցում են թմրանյութերի, թրաֆիկինգի դեմ ձեռնարկվող օպերացիաներին, իսկ Իրաքին սահմանակից Խուզիստանի նահանգում իրականացնում են սահմանային վերահսկողության պարտականություններ, ծովափնյա Հորմուզեգանում և Բուշիրում՝ ԻՀՊԿ-ի հետ մասնակցում են Արաբական թերակղզու երկրներից ԻԻՀ ներմուծվող ապրանքների մաքսանենգության դեմ պայքարին: Խուզիստանի բասիջականները առանցքային դերակատարում ունեցան նավթով հարուստ այս նահանգի արաբ բնակչության անջատողական հուզումները, իսկ Թեհրանի «Բասիջ» տարածքային ուժերը՝ 1999 թ. ուսանողական զանգվածային անկարգությունները ճնշելու գործում:

Բասիջականների հրամանատարը ենթարկվում է ԻՀՊԿ գլխավոր հրամանատարին, վերջինս էլ՝ Գերագույն հրամանատարին՝ Հոգևոր առաջնորդին: «Բասիջի» ղեկավարումը Գերագույն հրամանատարն իրականացնում է իր աշխատակազմի՝ հրամանատարի տեղակալի, քարտուղարության և կենտրոնական շտաբի՝ ԻՀՊԿ բարձրագույն սպայակազմի միջոցով: Կենտրոնական շտաբն ունի տասներկու՝ օպերատիվ, հետախուզական, հակահետախուզական, կապի, ինժեներական, ծրագրավորման, քարոզչության, անձնակազմի տվյալների հետազոտման և վերահսկման, մարտական պատրաստման, քաղաքացիական պաշտպանության, թիկունքի, կադրերի գլխավոր վարչություններ: Դրանք բոլորը գլխավորում են կենտրոնական շտաբի ղեկավարի տեղակալները:

**Ենթաճյուղեր**

«Բասիջի» կազմում կան 3 հիմնական զորախմբեր.

- «Աշուրա» և «Ալ-Զահրա» (կանանց) զորախումբը, որի հիմնական գործառույթը երկրի պաշտպանությունն է արտակարգ իրավիճակների դեպքում,
- «Իմամ Հուսեյն» զորախումբը, որի անդամները վետերան բասիջականներն են, որոնք ակտիվ կերպով մասնակցել են իրանա-իրաքյան պատերազմին,
- «Իմամ Ալի» զորախումբը, որը պայքարում է անվտանգությանն սպառնացող ներքին գործոնների դեմ:

[6] Տես *Afshin Molavi.* The Soul of Iran: A Nation's Struggle for Freedom. New York, London, 2005, P. 88:

Ըստ իրենց գործառույթների բասիջականները բաժանվում են հետևյալ մասնագիտական խմբերի[7].

- «Համքարությունների Բասիջ» *(Բասիջ-է Ասնաֆ),*
- «Աշխատավորների Բասիջ» *(Բասիջ-է Քարեգարան),*
- «Հանրային ծառայողների Բասիջ» *(Բասիջ-է Էդարիի),*
- «Աշակերտների Բասիջ» *(Բասիջ-է Շագերդան),*
- «ՈՒսանողների Բասիջ» *(Բասիջ-է Դանեշամուզի)*:

«Բասիջի» յուրաքանչյուր մասնագիտացված միավոր հակակշիռ է ոչ կառավարական կազմակերպություններին և պետք է դիմակայի Իսլամական Հանրապետության զարգացմանը խոչընդոտող սպառնալիքներին: «Աշխատավորների Բասիջը» համագործակցում է բոլոր աշխատավորական կազմակերպությունների հետ՝ որպես գերակայություն ընդունելով իսլամական հեղափոխության արժեքները, իսկ, օրինակ, «ՈՒսանողների Բասիջը» համակարգում է անկախ ուսանողական կազմակերպությունների գործունեությունը:

Ըստ կարգավիճակի՝ կան կանոնավոր, ակտիվ և հատուկ բասիջականներ: Կանոնավոր բասիջականները մոբիլիզացվում են պատերազմի ժամանակ, իսկ խաղաղ պայմաններում իրականացնում են իսլամական արժեքների պահպանմանն ուղղված գործառույթներ: Կանոնավոր անդամները չեն վարձատրվում: Մինչդեռ 1991 թ. հոկտեմբերի 13-ին ընդունված «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի զբաղվածության մասին օրենքի» համաձայն՝ ակտիվ և հատուկ բասիջականների վարձատրությունը կազմում է օրական 4 միլիոն ռիալ, կամ 400 ամերիկյան դոլար, ինչն ավելի է, քան ուսուցչի ամսական աշխատավարձը: Այսպիսով՝ բասիջականները վայելում են բարձր մակարդակի պետական հոգածությունը:

Ինչ վերաբերում է բասիջականների թվաքանակին, ապա կարելի է փաստել, որ նրանց թվաքանակի վերաբերյալ հրապարակվում են միանգամայն տարբեր տեղեկություններ: 2002 թ. իրանական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ բասիջականների թվաքանակը տատանվում էր 5—7 միլիոնի միջև[8], թեև ԻՀՊԿ հրամանատար գեներալ Յահյա Ռահիմ Սաֆավին պնդում էր, որ միավորումն ունի 10 միլիոն անդամ[9]: 2009 թ. ԻՀՊԿ մարդկային ռեսուրսների ղեկավար Մասուդ Մուսավիի համոզմամբ՝ «Բասիջն» ընդգրկում է շուրջ 11,2 միլիոն անդամների: Բայց 2005 թ. ամերիկյան վերլուծական կենտրոններից մեկի՝ Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի կատարած հետազոտությունների արդյունքները փաստում են, որ ակտիվ բասիջականների թիվը կազմում է մոտավորապես 90 հազար, իսկ պահեստազորային

[7] Այդ մասին ավելի հանգամանորեն տես «Basij-e Daneshjuyan» կայքէջը (http://www.bso.ir/General/index.aspx):

[8] Տես «Arshive akhbar-e defaye moghadas sal-e 1388» (http://www.goftomanedini.com/showthread.php?t=5201):

[9] Տես «Sardar-e sarlyashqar Rahim Safavi dar goftegu ba jamejam» (http://www.jamejamonline.ir/papertext.aspx?newsnum=100912963991):

բասիջականներինը՝ 300 հազար, թեև անհրաժեշտության դեպքում հնարավոր է մոբիլիզացնել մինչև 1 մլն մարդու[10]:

Բասիջականները տարիների ընթացքում կուտակեցին մեծ ֆինանսական ռեսուրսներ: Ներկայումս ԻՀՊԿ-ն «Իրանական ազգային նավթային» ընկերությունից և «Իմամ Ռեզա հիմնադրամից» հետո Իրանի ամենահարուստ կազմակերպությունն է: Մասնավորապես՝ 2010 թ. «Բասիջը» Թեհրանի բորսայում հիմնական ներդրում կատարող կազմակերպությունն էր, ընդսմին բասիջականներին պատկանող բաժնետոմսերի թվում են «Մեհր» ֆինանսական և վարկային ինստիտուտը, ինչպես նաև դրա «Մեհր-է Եղթեսադ-է Իրանի» մասնաճյուղը: Հաճախ բասիջականներին ներկայացնում են իրանական շուկան աղճատելու, մասնավոր հատվածը եզրահանելու (մարգինալացնելու), կոռումպացված լինելու մեղադրանքներ:

**Ամփոփում**

Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո ստեղծվեց տարածքային սկզբունքով ձևավորվող աշխարհազորը՝ «Բասիջը», որի թվաքանակը այաթոլա Խոմեյնիի մտահղացմամբ պետք է հասներ 20 միլիոնի: Ի տարբերություն կանոնավոր զինված ուժերից, բասիջականներն ունեն ուժեղ կրոնագաղափարական հենք, հետևում են Իսլամական հեղափոխության արժեհամակարգի պահպանմանը: Իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ ռազմաճակատ մեկնած բասիջականները շահիդական գաղափարաբանության կրողներ էին, պատրաստ էին մեռնելու հանուն կրոնի, ինչպես նաև հանուն իրենց ընտանիքի բարօրության:

Բասիջականները, որոնց թիվը ներկայումս տարբեր տվյալներով 90 հազարից մինչև տասը միլիոն է, իրենց պատասխանատվության գոտում ապահովում են ոչ միայն ռազմական անվտանգությունը՝ կանոնավոր բանակի հետ համատեղ, այլև պահեստազորի պատրաստումը, բնակչության դաստիարակությունը շիական արժեհամակարգի ոգով, մահմեդական կրոնապետության դեմ ուղղված ընդվզումների ճնշումը: Նրանք հատկապես մեծ ազդեցություն են ձեռք բերել նախկին բասիջական Մ. Ահմադինեժադի գլխավորած նոր պահպանողականների իշխանության տարիներին:

[10] Տես «Niruyeh Moghavemat Basij, Mobilisation Resistance Force» (http://www.globalsecurity.org/intell/world/iran/basij.htm):

# НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОБОРОНЫ В ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКЕ ИРАН В АСПЕКТЕ РЕФОРМИРОВАНИЯ ВОЙСКОВОЙ СТРУКТУРЫ РА

*Т. М. АНТОНЯН, ученый-аналитик ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

После победы в Иране Исламской революции по замыслу ее вождя, Верховного правителя Исламской Республики Иран аятоллы Хомейнии в составе Корпуса Стражей Исламской Революции была создана полувоенная организация — народное ополчение «Басидж», численность которого предполагалось довести до 20 млн человек (в настоящее время она, по разным источникам, составляет от 90 тыс. до 10 млн). На отряды «Басиджа» возлагается ответственность не только за обеспечение совместно с регулярной армией военной безопасности Ирана в отведенных им районах страны, но и за соблюдение внутреннего порядка на основе ценностей ислама шиитского толка и религиозно-политическое воспитание населения, подготовку военно-обученного запаса. Басиджи являются первым резервом для армии.

Комплектование «Басиджа» осуществляется по территориальному принципу. Басиджи делятся на три категории: регулярные, активные и специальные. Регулярные басиджи, по существу являющиеся добровольной народной милицией, в мирное время обеспечивают соблюдение правопорядка. Активные басиджи привлекаются к выполнению подобных функций на определенный срок по необходимости, получая за это денежное вознаграждение. Специальные басиджи, действующие в конкретной профессиональной среде (ученичество, студенчество, ремесленники и т. д.), обеспечивают контроль за умонастроениями и соблюдением исламского правопорядка.

Басиджи в особенности отличились в годы ирано-иракской войны, будучи обязанными проводить на фронте ежегодно не менее 6 месяцев. Многие басиджи были объявлены «шахидами» (мучениками за святую веру), и в настоящее время их семьи получают денежное пособие от государства, пользуются значительными льготами и занимают в иранском обществе высокое социальное положение.

Влияние басиджей особенно возросло в годы правления консерваторов во главе с бывшим членом «Басиджа», действующим Президентом ИРИ М. Ахмадинежадом.

# SOME ISSUES ON ORGANIZING THE TERRITORIAL DEFENSE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN IN THE ASPECT OF REFORMATION OF THE RA TROOP STRUCTURE

*T. M. ANTONYAN, Research Fellow of the INSS, MOD, RA*

SUMMARY

After the victory of the Islamic Revolution in Iran on a plan of the Supreme Leader of the Islamic Republic of Iran Ayatollah Khomeini, a paramilitary organization — the militia «Basij», was established in the Islamic Revolutionary Guard Corps, which was comprised up to 20 million people (nowadays, according to various sources, its number estimates from 90 thousand to 10 million). «Basij» detachments are responsible not only for ensuring Iran's military security in the areas of the country designated for them together with the regular army, but also for complying with the internal order based on the values of Shiite Islam and on the religious and political education of the population, the training of military-trained reserve. «Basij» is the first reserve for the army.

The recruitment of «Basij» is performed on the basis of territorial principle. Basijs are divided into three categories: regular, active and special. The Regular «Basij» is essentially a voluntary people's militia; in peacetime it enforces the rule of law. The Active «Basij» is involved in the implementation of such functions as required for a specified period in exchange for the monetary compensation. The Special «Basij» is active in the professional environment (apprenticeship, college students, artisans, etc.) providing control over the observance of the Islamic mentality and the rule of law.

Basijs distinguished themselves during the Iran — Iraq war, being obliged to spend yearly for at least 6 months at the front. Many of the Basijs became shahids (martyrs for the Holy Faith), and now their families receive allowance from the state, enjoy great privileges and have a high social status in the Iranian society.

The influence of Basijs has especially increased during the reign of the Conservatives, led by the former member of the «Basij», the acting IRI President M. Ahmadinejad.

# ԶՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ Նախագահ, ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը
ելույթ է ունենում ՀՀ ԶՈՒ-ի երիտասարդ սպաների
համաբանակային համաժողովում.

Երևան, 2011 թ. հուլիսի 9

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Հյուսիսատլանտյան խորհրդում «28+Հայաստան» ձևաչափով քննարկվեց
ՀՀ – ՆԱՏՕ ԱԳԳԾ 2011 թ. զեկույցը.
ձախից աջ՝ ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան,
ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ Կլաուդիո Բիզոնիերո,
ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյան.

Բրյուսել, 2011 թ. հուլիսի 27

ՀԱՊԿ-ի միջազգային գիտաժողովի նախագահությունը.
ձախից աջ՝ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ Հ. Քոթանջյան, ՀՀ Նախագահի
Աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Սարգսյան, ՀՀ Նախագահին առընթեր
ԱԱԽ-ի քարտուղար Ա. Վ. Բաղդասարյան, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան,
ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժա և ՀՀ Պաշտպանության նախարարի
առաջին տեղակալ Դ. Տոնոյան, ՀԱՊԿ-ի ինստիտուտի գործադիր տնօրեն Մ. Պլիսյուկ.

Երևան, 2011 թ. մայիսի 19

ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը
ՆԱՏՕ-ի գործընկեր պետությունների Գլխավոր շտաբների պետերի նիստում.

Բրյուսել, 2011 թ. հունիսի 5

Կուրսանտների ցուցադրական ելույթը
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում

## ԴՐՎԱԳՆԵՐ ՀՀ ԶՈՒ-Ի ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

# «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ, 2011 Թ. ՄԱՅԻՍԻ 19–20

Սույն թվականի մայիսի 19–20-ը Երևանում կայացավ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունը և Հարավային Կովկասը. տարածաշրջանում խաղաղության և անվտանգության հեռանկարները» ներկայացուցչական միջազգային գիտաժողովը, որը համատեղ կազմակերպել էին ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, ՀԱՊԿ-ի Քարտուղարությունն ու ՀԱՊԿ-ի ինստիտուտը: Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարներ, ՀԱՊԿ-ի ղեկավարներ և գիտափորձաքննական խորհրդի անդամներ, ՀԱՊԿ-ի անդամ պետությունները ներկայացնող առաջատար փորձագետներ:

Մասնակիցներին ուղերձով դիմել էր Հայաստանի Հանրապետության Նախագահ, ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը:

Գիտաժողովի նյութերը ռուսերեն հրապարակվել են «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գիտակիրառական հավելված «Աշխատանքային տետրերի» ս. թ. 1–2-րդ համարում: Նկատի ունենալով ՀՀ պաշտպանական անվտանգության տեսակետից գիտաժողովի կարևորությունը և «Աշխատանքային տետրեր» հավելվածի փոքր տպաքանակը (ընդսմին դրա մի զգալի մասը առաքվել է ՀԱՊԿ-ի Քարտուղարություն)՝ խմբագրությունը նպատակահարմար է համարել «Հայկական բանակ» հանդեսի սույն համարում հրապարակել համարի առանցքային թեմատիկային առավել համահունչ զեկուցումը՝ հայերեն բնագրաբնույթ թարգմանությամբ (ռուսերեն բնագիրը տես նաև «Гайк Котанджян: Стратегическая концепция развития коллективной безопасности ОДКБ». ИА «REGNUM», 21.05.2011 (www.regnum.ru/news/1407123.html)):

# ՀԱՊԿ-Ի ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ), ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ, Պաշտպանության նախարարի խորհրդական*

Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը կնքվել է 1992 թ. մայիսի 15-ին՝ եվրասիական տարածքում անվտանգային ճարտարապետության արմատական կերպափոխման բեկումնային փուլում[1]: Դա մի ժամանակ էր, երբ տեղի էին ունենում «Արևելք–Արևմուտք» Սառը պատերազմի առճակատումային հարացույցի վերաիմաստավորում, նորաստեղծ անկախ պետությունների համագործակցության ապագա հայեցակարգի նոր ելակետային պարամետրերի որոնում: Տվյալ գործընթացն իրականացվում էր «համընդհանուր և միասնական անվտանգության» ժամանակակից մոդելի դեռ չբյուրեղացած, ուրվանկարային տեսլականի ձևավորման նախաշեմին: Վարշավյան պայմանագրի վերացման և երկբևեռ աշխարհի կերպափոխման պայմաններում Եվրաատլանտյան դաշինքը զուգահեռաբար նախաձեռնեց իր նոր արժեքային և անվտանգային-ճարտարապետական նույնականության որոնում[2]:

Այս աղետալի համակարգային մարտահրավերների ու ծավալվող անցումային քաղաքական զարգացումների բարձր մակարդակի անորոշության համատեքստում, ինչպես նաև դրանց տուրբուլենտության և հնարավոր հակադարձելիության հաշվառմամբ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը պետք է ապահովեր հետվարշավյան տարածքի սահուն հրաժարումը երկբևեռ դիմակայության անվտանգային դիրքային ճարտարապետությունից: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ էր այդ տարածքը պաշտպանել տարածաշրջանային մասշտաբի նոր համաչափ սպառնալիքներից, որոնց դրսևորումները արդեն նկատվում էին նախկին Վարշավյան պայմանագրի պատասխանատվության գոտու մի զգալի մասում՝ կապված դրա լուծարման հետ:

Այսօր վստահաբար կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը ոչ միայն հաջողությամբ լուծեց իր խնդիրը, այլև կուտակեց այնպիսի ինքնազարգացման համար անհրաժեշտ ռազմավարական ներուժ, որը համապատասխաներ ներքին և արտաքին անվտանգային միջավայրներում տեղի ունեցող փոփոխությունների դինամիկային: Սակայն հարկ է նշել, որ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը դասական պաշտպանական դաշնագիր է, որը կնքել են զինված հարձակման ավանդական համաչափ սպառնալիքից կոլեկտիվ եղանակով պաշտպանվելու համար իրենց ուժերի միավորմանը ձգտող մի խումբ պետություններ: Տվյալ փաստաթղթի տրամաբանությունը պարունակում էր Սառը պատերազմի ժամանակներին բնորոշ իներցիոն բլոկային մտածողության առանձին մնացուկներ: Հետվերակառուցումային շրջանի առանձնահատկությունները հնարավորություն չտվեցին լիարժեք կերպով հաշվի առնելու նորանկախ պետությունների ռազմավարական շահերի ամբողջ բազմապիսությունը նաև նոր տարածքի համախմբման դոկտրինային հիմքերի՝ 1995 թվականի Հավաքական անվտանգության հայեցակարգի ստեղծման ժամանակ[3]: Այդ պայմաններում համընդհանուր և տեղային ռազմական աղետների բացառման երաշխիքների որոնման պատճառով հետին պլան մղվեց Հավաքական անվտանգության հայեցակարգում անվտանգային գործոնների համակարգային հաշվառումը դրանց ամբողջ՝ քաղաքակրթական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, պաշտպանական, տեղեկատվական, մշակութային և այլ բնույթի բազմազանությամբ: Այդ օբյեկտիվ դժվարությունները որոշակի չափով սահմանափակեցին ապագա ՀԱՊԿ-ի զարգացման հեռավոր հորիզոնների, ինչպես նաև նրա կառուցման երկարաժամկետ հեռանկարների մասին պատկերացումները[4]:

2002 թ.՝ Պայմանագրի ստորագրումից տասը տարի անց, կոլեկտիվ ինքնապաշտպանության դաշնագիրը միջազգային տարածաշրջանային կազմակերպության[5] կերպափոխելու միջոցով ՀԱՊԿ-ի ստեղծման ժամանակ դարձյալ հիմնական նպատակը ռազմական անվտանգության կոլեկտիվ ապահովումն էր: 2005-2006 թվականներից ի հայտ է գալիս ՀԱՊԿ-ը բազմագործառույթ կազմակերպության կերպափոխելու միտում, մի կազմակերպության, որը նպատակադրված է կոլեկտիվ անվտանգությունն ապահովելու ոչ միայն ռազմական, այլև մյուս ոլորտներում ծավալվող համագործակցության միջոցով, այդ թվում՝ դիմագրավելու համակցված համաչափ և ոչ համաչափ սպառնալիքներին[6]: Վերջիններիս ժամանակակից գործիքը 2009 թ. ստեղծված ՕԱՀՈՒ-ն է[7]:

Վերջին տարիներին ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ անդամ պետությունների կենսագործունեության ապահովման բոլոր կարևոր ոլորտներն ընդգրկող և ամենաժամանակակից համաշխարհային ստանդարտներին համապատասխանող համալիր անվտանգային մոդելին անցնելու համար

անհրաժեշտ են տվյալ համակարգի առաջադիմական զարգացման նկատմամբ առկա մոտեցումների վերագնահատում և հայեցակարգային վերանայում: Հավաքական անվտանգության խորհուրդը և ՀԱՊԿ-ի Քարտուղարությունը սկսել են ավելի ու ավելի մեծ ուշադրություն հատկացնել Կազմակերպության նորացման ռազմավարական հեռանկարներին: Այժմ որոնման հիմքում ավելի մեծ չափով է դրվում ռազմավարական պրագմատիզմը, որի ելակետային ուղենիշ կարող է դառնալ ՀԱՊԿ-ի անվտանգային ճարտարապետության՝ արդիականացման բոլոր մասնակիցների համար շահավետ ու համակարգայնորեն թարմացված տեսլականը, որը բացառում է ինչպես բլոկային մտածելակերպի իներցիոնությունը, այնպես էլ համընդհանուր անվտանգության համակարգին Կազմակերպության ինտեգրմանը վերաբերող կիսամիջոցային որոշումների ընդունումը:

Դրա հետ մեկտեղ, ակնհայտ է, որ ՀԱՊԿ-ը, կառուցողական համագործակցություն ծավալելով ՄԱԿ-ի, եվրոպական անվտանգային կառույցների, ԱՊՀ-ի, ՀՇԿ-ի, ԵվրԱսՏԸ-ի հետ, ինչպես նաև ստեղծելով իր խաղաղարար ուժերը և ՕԱՀՈՒ-ն, արդեն մուտք է գործել անվտանգության համընդհանուր համակարգ[8]: Ըստ էության, նա ընտրել է այդ նոր անվտանգային ճարտարապետության ձևավորմանը արդյունավետ մասնակցության ուղին: Դրա վկայությունն են ինչպես Կազմակերպության զարգացող համագործակցությունը ՄԱԿ-ի հետ, այնպես էլ ՀԱՊԿ-ի Հավաքական անվտանգության խորհրդի՝ 2010 թ. դեկտեմբերի 10-ի նիստում պետությունների ղեկավարների կողմից ընդունված փաստաթղթերը, որոնք կանխորոշում են կոլեկտիվ անվտանգության համակարգի զարգացման հիմնական ուղենիշները: Այսպես. «ՀԱՊԿ-ի հավաքական անվտանգության համակարգի կատարելագործման և զարգացման վերաբերյալ ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերի պատրաստման միջոցառումների մասին» որոշմամբ կոնկրետ խնդիր է դրվել մշակելու համապատասխան փաստաթղթերը՝ Հավաքական անվտանգության ռազմավարություն, Հավաքական անվտանգության համակարգի զարգացման նոր հայեցակարգ, ինչպես նաև Ռազմավարական և օպերատիվ պլանավորման համակարգը[9]:

Արդի իրողությունների բերումով մեր անվտանգային Կազմակերպության նորացման համար առանցքային պրոբլեմ են դառնում կոլեկտիվ անվտանգության ապահովման արդիական պրակտիկայի իմաստավորումը և համաձայնության սկզբունքի ավելի ճկուն մեկնաբանումը: Ոչ այլընտրանքային ընդհանուր համաձայնության[10] հիման վրա որոշումների (բացի ընթացակարգայիններից) ընդունման սկզբունքը, որը գործում է ՀԱՊԿ-ում, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպություններում, կապված է քաղաքականության և իրավունքի այն հիմունքների հետ, որոնք իրենց հերթին խարսխվում են տվյալ

կազմակերպության անդամ պետությունների ինքնիշխանության և իրավահավասարության սկզբունքների վրա: Կոլեկտիվ անվտանգության կազմակերպություն ստեղծող պետություններին իրենց անվտանգային շահերի իրացման նպատակով կենսականորեն անհրաժեշտ է, որ երաշխավորված կերպով ապահովվի նրանց իրավահավասար մասնակցությունը կարևոր որոշումների ընդունմանը: Ինքնիշխան պետությունները, որոնք ներգրավվում են կոլեկտիվ անվտանգության համակարգում, կամովին հրաժարվում են իրենց ինքնիշխան իրավունքների մի որոշ մասից՝ ակնկալելով, որ այդ կորուստները կփոխհատուցվեն ի հաշիվ ավելի բարձր մակարդակով իրենց անվտանգության ապահովման՝ կազմակերպության բոլոր անդամ պետությունների ջանքերի սիներգիկ միավորմամբ: Ընդ որում, չի կարելի բացառել այնպիսի իրավիճակների հավանականությունը, երբ փոքրամասնության կարծիքը, որը չի համընկնում անդամների մեծամասնության դիրքորոշման հետ, կարող է հակասել ոչ միայն այդ մեծամասնության, այլև ընդհանրապես կազմակերպության կենսականորեն կարևոր կամ ռազմավարական շահերին:

Նման օրինակներ մեզ հայտնի են ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ մեր Կազմակերպության փորձից: Կոլեկտիվ անվտանգության համակարգի կերտման ու դրա գործունեության ապահովման մեծ փորձ ունեցող ՆԱՏՕ-ում, քաղված դասերի հաշվառմամբ, արդեն նախատեսվում է որոշումների ընդունման այնպիսի մեխանիզմների մշակման ու ներդրման հնարավորություն, որոնք ապահովեն անդամ պետությունների մի մասի «դաշնադրային կամքի» դրսևորումը միջազգային իրավունքի շրջանակներում և Դաշինքի առաքելությանը, նպատակներին ու խնդիրներին համապատասխան: Հարկ է նշել, որ նման կրճատ ձևաչափով որոշումների ընդունման տարրեր արդեն փորձարկվել են ՆԱՏՕ-ի պետությունների դաշնադրային համագործակցության պրակտիկայում:

ՀԱՊԿ-ի դեպքում կարելի է փաստել, որ «հատյալ ձևաչափով» որոշումների ընդունումը արդյունավետ գործիք է փակուղային իրավիճակների հաղթահարման համար այն դեպքերում, երբ փոքրամասնությունը չի ցանկանում մասնակցել որոշակի դաշնադրային գործողությունների, սակայն դեմ չէ դրանց կատարմանը: «Դաշնադրային կամքի» սկզբունքի մշակման և իրականացման համար լրացուցիչ համապիտանի ելակետային ռեսուրս կարող է դառնալ ՀԱՊԿ-ի համակարգաստեղծ սկզբունքներից մեկը՝ կոլեկտիվ անվտանգության համակարգի տարածաշրջանային կառուցման սկզբունքը: Այդ սկզբունքը, լրացված լինելով համաձայնության սկզբունքով, հնարավորություն է տալիս ճկունացնելու կոլեկտիվ անվտանգության առանձին տարածաշրջանների վերաբերյալ որոշումների ընդունումը:

Հույժ կարևոր է թվում կոլեկտիվ անվտանգության ապահովման համակարգում ռազմական բաղադրատարրի դերի, տեղի ու նախանշանակման ճշգրիտ

որոշումը: Չնայած անվտանգային միջավայրի պարամետրերի փոփոխությունների հետևանքով տեղի ունեցող կերպափոխմանը, իսկ երբեմն նաև այլ բաղադրիչներով մասնակի փոխարինմանը՝ ռազմական բաղադրատարրը շարունակում է պահպանել իր կարևոր նշանակությունը՝ քաղաքական գործոնի գերակայության պայմաններում էլ մնալով համակարգաստեղծ: Ուստի մեր Կազմակերպության առաքելության, նպատակների, գերակայությունների և խնդիրների նորացման հարցը լուծելիս պետք է անվտանգության համակարգի ռազմական բաղադրիչի արդիականացման պարամետրերը որոշել խիստ կշռադատված եղանակով՝ ռեսուրսային բազա ապահովելով մարտահրավերների և սպառնալիքների հաշվեկշռի կրիտիկական փոփոխման դեպքում այդ բաղադրիչը երաշխավորված կերպով անհրաժեշտ մակարդակի հասցնելու համար:

Այսպիսով՝ ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության ավելի արդյունավետ համակցված համակարգին անցնելու համար անհրաժեշտ է մշակել և ընդունել նոր ռազմավարական հայեցակարգ, որում գերակշռող լինի բազմագործառութային անվտանգության անբաժանելիության և միջազգային համագործակցության միջոցով դրա ապահովման ոչ այլընտրանքայնության ըմբռնումը: Նման մոտեցումը, ըստ մեզ, նպատակաուղղված է ՀԱՊԿ-ի բոլոր անդամ պետությունների, ինչպես նաև համընդհանուր անվտանգության սուբյեկտների թվից այլ գործընկերների համար փոխշահավետ լուծումների որոնմանը:

Բավարար կոլեկտիվ անվտանգությունը պատշաճ մակարդակով ապահովելու խնդիրը ենթադրում է պատասխան այն հարցերին, որոնք վերաբերում են անվտանգության համընդհանուր համակարգին, կոլեկտիվ անվտանգության ինտեգրման գլխավոր պարամետրներին և պայմաններին: Խոսքը վերաբերում է կոլեկտիվ անվտանգության արժեքային նախապատվությունների, կենսականորեն կարևոր և ռազմավարական սկզբունքների, առաքելության, նպատակների, շահերի և գերակայությունների տեսակետից ՀԱՊԿ-ի և միջազգային անվտանգության սուբյեկտների համախմբի համատեղելիությանը, Կազմակերպության քաղաքական, ռազմական և այլ բաղադրատարրերի տեղի նշանակության ու դերի, կառուցվածքի ու գործառույթների որոշմանը: Այս առումով առանձնակի կարևորություն է ստանում ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության նորացվող ճարտարապետությունում այդ բաղադրիչների օպտիմալ բովանդակության, հարաբերակցության և փոխհարաբերությունների որոշումը: Ընդսմին այդ ինտեգրումը զարգացնելու համար անհրաժեշտ է լուծել ՆԱՏՕ-ի հետ նոր հարաբերությունների ձևավորման խնդիրը, մի կազմակերպության, որը ավելի փորձառու է, համընդհանուր անվտանգության համակարգում ունի իր առանցքային դերը և բազավորվում է կոլեկտիվ անվտանգության երկու կազմակերպությունների համար էլ ընդհանուր եվրասիական տարածքում[11]:

Հարկ է նշել, որ ՀԱՊԿ-ը հանդես է եկել մի շարք նախաձեռնություններով՝ ուղղված ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հաստատմանը: Սակայն այս հարցում Հյուսիսատլանտյան դաշինքը ցուցաբերում է որոշակի զգուշավորություն և ՀԱՊԿ-ի պատասխանատվության գոտում, որը ընդհանուր եվրասիական անվտանգային տարածության մասն է, անվտանգության ապահովմանն առնչվող իր համար գերակա խնդիրները լուծելիս առայժմ գերադասում է համագործակցությունը «28+1» բանաձևով՝ ՆԱՏՕ–գործընկեր պետություն երկկողմ ձևաչափով[12]: Ընդ որում, Դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգում առանձնակի նշանակություն է տրվում համագործակցության զարգացմանը Ռուսաստան–ՆԱՏՕ խորհրդի շրջանակներում: Հյուսիսատլանտյան դաշինքի Լիսաբոնյան գագաթնաժողովի որոշումների լույսի ներքո այդ Խորհրդի ակտիվացումը կարող է դառնալ միանգամայն ռեալ ելակետային հենադաշտ ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցության տարբերակների քննարկման ու փորձարկման համար: Գաղտնիք չէ, որ ՀԱՊԿ-ի համար Ռուսաստանի դերն ու ներուժը առանցքային են: Եվ այս հանգամանքի խելացի օգտագործումը կարող է նպաստել նաև կազմակերպությունների մակարդակով արդյունավետ համագործակցության գեներմանը: Թեև կան մտածողության իներցիոնությամբ, գաղտնապահական կարծրատիպերով և կասկածամտությամբ բնութագրվող կարծիքներ, որոնք ունեն հակառակ ուղղվածություն և արգելակում են միմյանց նկատմամբ վստահության աճը, պետք է աջակցել այն առաջխաղացումներին, որոնք առկա են ինչպես «Ռուսաստան–ՆԱՏՕ», այնպես էլ «ԱՄՆ–ՀԱՊԿ» և «ՆԱՏՕ–ՀԱՊԿ» անհատական ու կոլեկտիվ ձևաչափերում երկխոսության և համագործակցության վերալիցքավորման գործում:

2010 թ. Հարվարդի համալսարանի պետութենագիտության դպրոցի «Անվտանգություն. ԱՄՆ–Ռուսաստան» ծրագրում իմ ստաժավորման ընթացքում պարզվեց, որ ռազմավարական հետազոտությունների բնագավառի ամերիկացի փորձագետները մասնագիտական հետաքրքրություն են ցուցաբերում ամերիկա-ռուսաստանյան համագործակցության վերալիցքավորումը ԱՄՆ-ի և ՀԱՊԿ-ի փոխգործությամբ հարստացնելու ուղիների որոնման նկատմամբ: Այս տեսակետից ամերիկյան վերլուծաբաններին որպես հնարավոր մեկնարկային ոլորտ հետաքրքրել է «Կանալ» ծրագիրը, որը հայտնի է որպես Աֆղանստանի և Եվրասիայի միջև թմրանյութերի ապօրինի շրջանառության միջինասիական խաչմերուկներում ՀԱՊԿ-ի հակաթմրանյութային պայքարի հաջողված փորձ: Հարվարդի ակադեմիական երկխոսության տվյալ համատեքստում նորամուծորեն հնչեցին «ՆԱՏՕ–Ռուսաստան», կամ «28+1», ձևաչափով գործընկերությանը զուգաչափ՝ ՀԱՊԿ-ի և ԱՄՆ-ի միջև «ՀԱՊԿ–ԱՄՆ», կամ «7+1», ձևաչափով համագործակցության ենթադրական հնարավորության մասին գիտնականների պրագմատիկ մտորումները:

Ամփոփելով Հարվարդում անցած տարի տեղի ունեցած ԱՄՆ–Ռուսաստան ռազմավարական ակադեմիական երկխոսությունը, որում արտացոլված էր դրա կողմերի «խելամիտ ուժը», ես՝ որպես երրորդ բարեկամական երկիրը ներկայացնող միակ մասնակից, կարող եմ վկայել, որ իմ գործընկերների կարծիքով՝ տուրբուլենտորեն զարգացող արդի աշխարհում համընդհանուր անվտանգության շահերն իրենց ռազմավարական հեռանկարում չեն բացառում նաև Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի և ՀԱՊԿ-ի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի միջև հարաբերությունների վերալիցքավորումը՝ հօգուտ համագործակցության և ինտեգրման: Նման մոտեցումը արտացոլում է ամերիկա-ռուսաստանյան փոխհարաբերությունների վերալիցքավորման ռազմավարության ազդեցությամբ համընդհանուր ու տարածաշրջանային անվտանգության նշված սուբյեկտների մերձեցման հնարավորությունը, ինչպես նաև դրանց զարգացման ռազմավարական հայեցակարգերի փոխադարձ ներգործության ու հարստացման ուղիների գիտական որոնման ընդլայնումը:

Տվյալ կանխադրույթի հաշվառմամբ ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության նոր ռազմավարական հայեցակարգի մշակման հաջողությունն զգալի չափով պայմանավորված կլինի անվտանգության մասին գիտության արդյունավետ առաջադիմական մեթոդաբանությունների օգտագործման համակարգայնությամբ, մեթոդաբանություններ, որոնք փորձարկվել են ինտենսիվ կերպով արդիականացող ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի, այդ թվում՝ նրանց անդամներ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ինչպես նաև վերջիններիս դաշնակիցների ու գործընկերների կողմից[13]:

Կարևորն այն է, որ ՀԱՊԿ-ի Խորհուրդն ու Քարտուղարությունը նպատակադրվել են մեր Կազմակերպության նոր ռազմավարական հայեցակարգի նախագծի մշակում կազմակերպելու անվտանգության ժամանակակից քաղաքագիտության նորագույն տեսական-մեթոդաբանական ու գիտակիրառական նվաճումների համադրման հիմքի վրա: Այս կապակցությամբ օգտակար է թվում այն փորձը, որը ձեռք է բերվել Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի առաջատար անվտանգային-քաղաքագիտական կենտրոնների հետ սերտ համագործակցության պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի գիտական համակարգմամբ Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման ժամանակ: Եվ մեր Ինստիտուտը պատրաստ է իր լուման ներդրելու Հավաքական անվտանգության մասին պայմանագրի Կազմակերպության նոր ռազմավարական հայեցակարգի մշակման գործում:

[1] Տես «Договор о коллективной безопасности от 15 мая 1992 года» (http://www.odkb.gov.ru/start/index.htm):

[2] Տես «Manfred Wörner: NATO Visionary» by Ryan C. Hendrickson assessing the legacy of Manfred Wörner, NATO's Seventh Secretary General, ten years after his death. «NATO Review», 2004 (http://www.nato.int/docu/review/2004/issue3/english/history.html);

*Андрей Кокошин*. Реальный суверенитет в современной мирополитической системе**.** Изд. 3, расширенное и дополненное. М., 2006 (http://pravo33.wordpress.com/2010/08/17/%D0%B0%D0%BA%D0%BE%D0%BA%D0%BE%D1%88%D0%B8%D0%BD-%D1%80%D0%B5%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D1%8B%D0%B9-%D1%81%D1%83%D0%B2%D0%B5%D1%80%D0%B5%D0%BD%D0%B8%D1%82%D0%B5%D1%82-%D0%B2-%D1%81%D0%BE%D0%B2%D1%80/):

[3] Տես «Концепция коллективной безопасности государств-участников Договора о коллективной безопасности», 10 февраля 1995 г. (http://busel.org/texts/cat9ut/id5cwofur.htm):

[4] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքները (ազգային անվտանգության ռազմաքաղաքական տեսանկյունը)»: Ե., 1992 (*Հ. Ս. Քոթանջյան,* Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: Ե., 2010, էջ 486–556):

[5] Տես «Устав Организации Договора о коллективной безопасности». Совершено в городе Кишиневе 7 октября 2002 года, «МОЦИП ОДКБ», Армения (http://www.odkb-armenia.am/doc01.php); «Соглашение о правовом статусе Организации Договора о коллективной безопасности», 7 октября 2002 г. (http://www.odkb-armenia.am/doc02.php):

[6] Տես «Декларация государств–членов Организации Договора о коллективной безопасности о дальнейшем совершенствовании и повышении эффективности деятельности Организации», 23 июня 2006 (г. Минск, СКБ) (http://www.odkb-armenia.am/doc10.php):

[7] Տես «Процесс создания КСОР ОДКБ осуществляется – Назарбаев». «РИА Новости», 14 июня 2009 г. (http://www.rian.ru/politics/20090614/174328972.html):

[8] Տես «Выступление Генерального секретаря Организации Договора о коллективной безопасности Н. Н. Бордюжи на заседании СБ ООН по тематике взаимодействия ООН и региональных организаций в поддержании международного мира и безопасности (13 января 2010 года, Нью-Йорк)», ООН, Заявления (http://www.un.int/russia/new/MainRootrus/Statements/security%20council/2010/Statement130110ru.htm), տես նաև «Официальное интернет-представительство ОДКБ» կայքէջը (http:// www.odkb.gov.ru/start/index.htm):

[9] Տես «В Москве проходит встреча глав государств-членов ОДКБ». М., 10 декабря 2010 г. (www.zakon.kz:-http://www.zakon.kz/192814-v-moskve-prokhodit-vstrecha-glav.html); «Документы по вопросам формирования и функционирования системы коллективной безопасности ОДКБ». М., 2011 г., выпуск № 11:

[10] Տես «Принятие решений на основе консенсуса в НАТО. Основополагающий принцип». Официальный сайт НАТО (http://www.nato.int/cps/ru/SID-38F8456C-10657459/natolive/topics_49178.htm):

[11] Տես «О перспективах развития отношениий России и НАТО». Под общей редакцией И. Юргенса и С. Кулика. Институт современного развития, октябрь 2010 г. (http://www.riocenter.ru/files/MiniBook_NATO.pdf):

[12] Տես *Г. Котанджян*. К вопросу о перспективе диалога НАТО–ОДКБ. «КРЕМЛЬ.ORG» Политическая экспертная сеть, 27 сентября 2005 г. (http://www.kreml.org/opinions/98314439?mode=print):

[13] Տես *Doug Gavel.* U.S. and Russian Military Officers Form Bonds at HKS Executive Education Program. «HARVARD Kennedy School», 29 March 2010 (http://www.hks.harvard.edu/news-events/news/articles/u.s.-russia-security-program-march-2010); «Joseph Nye on Smart Power», 3 July 2008 (http://www.hks.harvard.edu/news-events/publications/insight/international/joseph-nye); «What is Hillary Clinton's 'smart power'?» from Times Online, 13 January 2009 (http://www.timesonline.co.uk/tol/news/world/us_and_americas/article5511343.ece); «Стратегия национальной безопасности Армении и методология ее разработки: интервью Советника Министра Обороны Армении». «Интеллектуальная Россия» (http://www.intelros.org/armenia/snb_armen.htm); *Dr. H. Kotanjian.* Developing Armenian National Security Strategy in the Context of Regional Security Architecture of the South Caucasus. Washington, INSS-SNSEE: NDU, 2004-2005; «Назрела необходимость разработки новой Стратегии коллективной безопасности ОДКБ – Гайк Котанджян» (Научно-практическая конференция ОДКБ, декабрь 2010, Москва, Совет Федерации). «Voskanapat.info» (http://voskanapat.info/blog/nazrela_neobkhodimost_razrabotki_novoj_strategii_kollektivnoj_bezopasnosti_odkb_gajk_kotandzhjan/2010-12-24-3417); «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «Հայկական բանակ», 2006, հմ. 2:

# ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ»

*Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ*

Ժողովրդավարացման դինամիկայում նկատելի է անվտանգության քաղաքականության արդիականացման հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրության աճում, քանի որ տարաբնույթ միգրացիոն հոսքերը, աշխատանքի միջազգային նոր բաժանման գործընթացները, երևակայական (վիրտուալ) ցանցերը մարտահրավեր են նետել զարգացած և զարգացող երկրների էթնիկական նույնականությանը: Այս համատեքստում կարևորում ենք համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները՝ նպատակ ունենալով ի հայտ բերել.

- աշխարհում ավանդական և արդիական արժեկշռային համակարգի առանձնահատկությունների, վերազգային և կիբեռտարածություններում էթնիկական նույնականության ձգտումների, ինչպես նաև սոցիալական և քաղաքական ցանցերին ինտեգրված տարաբնույթ «Ես»-երի ինքնորոշման մակարդակների միջև առկա աններդաշնակության դրսևորումները,
- քաղաքակրթությունների բախում–երկխոսություն տիրույթներում համընդհանուր անվտանգության ապահովման համակարգի արդիականացման անհրաժեշտությունը՝ հանրային կառավարման նոր սկզբունքների կարևորմամբ:

Նոր աշխարհակարգի ճարտարապետները, օգտագործելով տարաբնույթ տարածություններում էթնիկական նույնականացման *մշակութային-նորմատիվային և կառուցվածքային-հասարակական* նմանությունները, փորձում են միջազգային հարաբերությունները ձերբազատել այն չազատականացված արժեքներից, որոնք ծնում են անորոշություն, հատվածայնություն և քաոսայնություն: Վերջիններս կառավարելի դարձնելու և քաղաքական զարգացման ճգնաժամները հաղթահարելու նկատառումներով «Մեծ ութնյակի» (G8) ցանցային տարածությունը ընդարձակվել է՝ հասցվելով «Մեծ քսանյակի» (G20):

Փաստորեն, նոր աշխարհակարգի հաստատման տրամաբանությունը զարգացող ծայրամասերի էթնիկական խմբերին[1] հնարավորություն է տալիս

[1] Էթնիկական խմբերը այն մարդկանց խմբերն են, որոնք սուբյեկտիվորեն հավատում են իրենց ծագման ընդհանրությանը՝ հենվելով ֆիզիկական նմանության, սովորույթների, ... գաղթականության

մասնակցելու աշխատանքի միջազգային նոր բաժանմանը և հաղթահարելու քաղաքական զարգացման ճգնաժամները՝ դառնալով համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման ցանցային (տնտեսական, սոցիալ-մշակութային, քաղաքական, տեղեկատվական) համագործակցության լիիրավ անդամներ: Ընդ որում, նշված ցանցերում անվտանգության ապահովման համար պահանջվում է մեծացնել համախմբվածության և հանրային ընտրության աստիճանը, ինչն էլ իր հերթին բարձրացնում է կատարվող գործողությունների օրինականության մակարդակը: Այսինքն՝ «կենտրոն-ծայրամաս» աստիճանակարգային կառավարմանը զուգահեռաբար ձեռնարկվում է նաև ոչ գծային կառավարում, որը, ունենալով ինքնահաստատման, ինքնաիրացման և ինքնազարգացման ընդհանուր նպատակ, ենթադրում է ցանցային համագործակցություն:

Տարաբնույթ ցանցերի գործառության շնորհիվ «Հայկական աշխարհի» ամբողջականացման և կենսագործունեության ապահովման կարևոր նախապայման է անհատի էթնիկական նույնականացման երևույթը՝ պատմական հայրենիք–սփյուռք, սփյուռք–սփյուռք, նոր հայրենիք–սփյուռք–պատմական հայրենիք ձևաչափերով: Ակնհայտ է, որ անհատը, իրեն նույնականացնելով այս կամ այն էթնիկական խմբի հետ, կատարում է *ռացիոնալ ընտրություն*՝ հիմնվելով իր արժեկշռային համակարգի վրա. «Այնպիսի արտաքին հատկանիշներ, ինչպիսիք են մաշկի գույնը, լեզուն, առոգանությունը, ազգանունը, կրոնը, տոհմաբանությունը կամ աշխարհագրական ծագումը, պետք է համեմատվեն խմբին պատկանելության նկատմամբ անհատի ներքին հավակնությունների հետ: Դա էթնիկական նույնականության հասկացությունը տեղափոխում է հոգեբանական և բարոյական հրամայականների հարթություն»[2]: Այս երևույթը առավել ընդգծված կերպով դրսևորվում է համընդհանրացման գործընթացներում, որոնց մրցունակ մասնակցության նպատակով տարբեր էթնիկական պատկանելություն ունեցող անհատները գերադասում են ինտեգրվել էթնիկականության այն տարածքներին, որտեղ հնարավորություն ունեն ապագայում ինքնաիրացմամբ ապահովելու իրենց անվտանգությունը: Այս դեպքում բազմամշակութային տարածություններում անհատը հնարավորություն է ստանում ինքնաիրացվելու՝ արդիականացնելով էթնիկական նույնականացման վերաբերյալ իր պատկերացումները. «Էթնիկական սահմանները, որպես այդպիսիք, արտահայտում են կարգավիճակային նույնականությունների և հավակնությունների որոշակի կազմակերպվածք ... որքանով կարգավիճակային հավակնությունները առավելություն են տալիս ռեսուրսների համար մրցակցությունում, նույն չափով տեղի է ունենում էթնիկական նույնականության պահպանմանը նպաստող սոցիալական սահմանների պահածոյացում»[3]: Փաստորեն «Հայկական աշխարհ» նախագիծը հնարավորություն կտա օգտագործելու ինչպես հայկական, այնպես

ընդհանրության վրա (տես *Ф. Ригтс.* Аспекты содержания этничности. «Этнос и политика». Хрестоматия. Авт.-сост. А. А. Празаускас. М., 2000, сс. 9–12):

[2] *Ֆ. Ռիգս,* Նշ. աշխ., էջ 11:

[3] *Л. Деспрес.* К разработке теории этнического феномена. «Этнос и политика».

էլ ոչ հայկական ռեսուրսները՝ մեծացնելով հայության էթնիկական նույնականության արդիականացման հնարավորությունները: Նմանօրինակ գործընթացների ծավալման նպատակով անհրաժեշտ է ՀՀ-ում նորարարական գործունեության համար ստեղծել արտոնյալ պայմաններ՝ հարկային ու մաքսային ոլորտները, զբոսաշրջությունը և ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենսդրությունների բարեփոխման միջոցով:

Այս ամենն էլ նկատի ունենալով՝ կարևորում ենք արժեկշռային բազմաչափ զուգամիտումներ ենթադրող *«Հայկական աշխարհ» նախագծի գործառությունը, որի փիրույթներում ՀՀ-ն, Հայոց սփյուռքը և ԼՂՀ-ն,* լուծելով իրենց մրցակցային մասնակցության դժվարին հիմնախնդիրը, կմասնակցեն համընդհանուր անվտանգության ապահովման համակարգի արդիականացմանը: Իրոք, այսօր՝ քաղաքակրթությունների երկխոսության պայմաններում, հրատապ է «Հայկական աշխարհի» ձևավորման և ըստ ազգային շահերի կենսագործման անհրաժեշտությունը: Այդ առումով ուշագրավ է Տիգրան Սարգսյանի հետևյալ մոտեցումը. «արդյոք մենք *կարող ենք* չինտեգրվել խոշոր քաղաքակրթություններին, այլ վարել քաղաքակրթությունների երկխոսություն: Մեր կարծիքով՝ ոչ թե կարող ենք, այլ ուրիշ ընտրություն չունենք, եթե ուզում ենք պահպանել մեր ինքնօրինակությունը»[4]:

«Հայկական աշխարհը», մասնակցելով նոր աշխարհակարգի ձևավորմանը, իր համար հնարավորություն է ստեղծում դառնալու համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման սկզբունքների և համագործակցության մշակույթի զարգացման տարածաշրջանային դերակատար: Տվյալ պարագայում ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է մշակել շարունակական բարեփոխումների ռազմավարություն, որը ՀՀ կառավարող վերնախավին հնարավորություն կտա հանդես գալու որպես էթնիկական ինքնության բնականոն կերպափոխման և՛ կարգավորող (մոդերատոր), և՛ մատակարարող (պրովայդեր): Նոր աշխարհակարգի ձևավորման տրամաբանությունը ենթադրում է նաև քաղաքացիավարություն *(civiliarchy)* և համիշխանություն (համակառավարում)[*], որոնք քաղաքացուն հնարավորություն են տալիս ոչ միայն մասնակցելու հանրային և քաղաքական կառավարմանը, այլև ինտեգրվելու անդրազգային և կիբեռտարածական ցանցերին՝ ունենալով «ինքնորոշված մարդու» կարգավիճակ:

---

[4] *Տ. Սարգսյան,* Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ: «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2006, հմ. 2:

[*] *Համիշխանություն* (հուն.՝ սինարխիա)՝ անիշխանությանը (անարխիա) հակադիր հասկացություն, ըստ որի՝ անվտանգ գոյության հիմնախնդիրները դիտվում են աստիճանակարգման մեջ: Համակարգելով «Համիշխանության օրենքները»՝ Վլադիմիր Շմակովը նշում է, որ դրա էությունը բազմաչափ աշխարհի՝ հարաբերական անկախության մեջ գտնվող միասնականությունն է, որի դեպքում աստիճանակարգության հիմքի վրա առանձին գոյեր, միմյանց հետ հարաբերվելով հորիզոնական հարթության վրա, համադրում են միմյանց արժեքները՝ դառնալով մրցունակ և պատասխանատու լինելով համընդհանուր անվտանգության համար (տես *Վ. Шмаков.* Закон синархии. Учение о двойственной иерархии монад и множеств. Киев, 1994):

Ակնհայտ է, որ համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացումը գլոբալիստներին դրդեց ազգային ինքնության գիտակցության աճման հաշվառմամբ խոսելու նոր աշխարհակարգի գործառման մասին և կիրառության մեջ դնելու այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «համընդհանուր հասարակությունը», «մարդկության համընդհանուր հանրույթը», «համընդհանուր քաղաքացիական հասարակությունը», «էթնիկական ցանցերը», «էթնիկական կիբեռտարածությունները», «համընդհանուր էթնիկական ձեռներեցությունը»: Դրանք, էթնիկական կիբեռտարածություններում ձևավորելով համընդհանուր տնտեսություն և մշակույթ, բազմապիսի կրոնական, քաղաքական, սոցիալական, հաղորդակցական և այլ հանրային հաստատությունների միջև համագործակցությունը ապահովում են էլեկտրոնային կառավարման միջոցով[5]:

Հետևաբար նոր աշխարհակարգի մոդելը մշակելիս գերակա է դառնում քաղաքագետ Ֆարիդ Զաքարիայի՝ «Հետամերիկյան աշխարհը» գրքում մշակված հայեցակարգը[6]: Եթե ըստ Ս. Հանտինգտոնի՝ նոր աշխարհակարգը զարգանում էր «Արևմուտքը և մնացյալը» *(«The West and the rest»)* սկզբունքով, ապա Ֆ. Զաքարիան շեշտում է մեր ժամանակների պատմությունը վերաձևող «մնացյալի վերելքի» *(the rise of the rest)* հանգամանքը Չինաստանի, Հնդկաստանի, Ռուսաստանի, Բրազիլիայի պարագայում, որտեղ արդեն կառուցվում են ամենաբարձր շենքերը, նկարահանվում են ամենաշատ վաճառվող ֆիլմերը և արտադրվում են ամենաարդիական բջջային հեռախոսները... և այդ ամենը կատարվում է ԱՄՆ-ի սահմաններից դուրս:

Տվյալ պարագայում Ֆ. Զաքարիան, օգտագործելով *«հզոր» (powerful)* հասկացությունը, անվտանգության ապահովումը պայմանավորեց ***սահմանադրական ազատականության*** *(constitutional liberalism)* սկզբունքներով՝ քննադատելով այդ գործընթացում տեղ գտած արևմտականացման (եվրոպականացման) միակողմանիությունը, ինչը զարգացող երկրներին հնարավորություն չի տալիս դուրս գալու քաղաքական զարգացման ճգնաժամներից՝ էթնիկական խմբերին հարկադրելով գնալու մեխանիկական նույնականացման: ՈՒստի և՛ ատելով, և՛ սիրելով արևմտյան արժեքները՝ իրենց երկրները լքած երիտասարդները, այնուհանդերձ, դատապարտված են օտարվածության, ահաբեկչության և եզրահանման (մարգինալացման): Ելնելով այդ ամենը կանխելու և ազգային, տարածաշրջանային ու համընդհանուր անվտանգություն ապահովելու նկատառումներից՝ Ֆ. Զաքարիան եզրակացնում է. «Այս հիբրիդային միջազգային համակարգը՝ ավելի ժողովրդավարական, ավելի դինամիկ, ավելի բաց,

[5] Տես *Տ. Սարգսյան,* Պետության վախճանը (կամ հասարակության կազմակերպման նոր ձևը): «21-րդ դար», 2008, հմ. 1, *Л. В. Сморгунов.* От электронного государства к электронному правлению: смена парадигмы. «Политическая наука», 2007, № 4; *Дж. Е. Фонтэйн.* Институциональное развитие в виртуальном государстве: недостающее звено в технологическом видении e-government. «Политическая наука», 2007, № 4:

[6] Տես *Fareed Zakaria.* The Post-American World. New York and London, 2008:

ավելի փոխկապված, հենց այն համակարգն է, որում մենք ամենայն հավանականությամբ կապրենք հաջորդ մի քանի տասնամյակներում»[7]:

Փաստորեն, համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման շրջանակներում պետք է հաղթահարվեն քաղաքական զարգացման ճգնաժամները, կամ, այլ կերպ ասած, ինտեգրման գործընթացում պետք է համակցվեն համընդհանուր քաղաքականության նվաճումները:

Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացումը պահանջում է զուգահեռաբար արդիականացնել ազգային քաղաքական գիտակցությունը, ազգային մտածողությունը և ավանդական մշակութային արժեքները՝ ապահովելով մասնակցություն նոր ձևավորված քաղաքական հաստատություններին[8]: Աֆրիկյան, լատինաամերիկյան, ԱՊՀ երկրների քաղաքական զարգացման փորձն ընդհանրացնելիս պետք է կարևորել սոցիալական օրգանիզմի հիշողությունը, քանի որ ավանդական հաստատութենական արժեքների կիրառումը չի կարող խոչընդոտել ո՛չ քաղաքական զարգացմանը, ո՛չ էլ ազգային անվտանգության ապահովմանը:

## 1. Պետությունը և միջազգային կազմակերպությունների փոխհարաբերությունները անվտանգության ապահովման համատեքստում

Անվտանգության ապահովման նկատմամբ մոտեցումները միմյանցից տարբերվում են հատկապես համաշխարհային քաղաքակրթության երկու տարրերի՝ *պետության և վերազգային կազմակերպությունների* վերաբերյալ մեկնաբանությունների առումով:

Ժամանակակից անցումային հասարակություններում պետական ղեկավարները, մտահոգված լինելով համընդհանուր անվտանգության պրոբլեմներով, իրենց քաղաքականությունն իրականացնելիս պետք է տեղի ունեցող իրադարձությունները դիտարկեն քաղաքական ռեալիզմի լույսի ներքո: Ինչպես նշում է ֆրանսիացի քաղաքագետ Ֆ. Կոնստանտենը, քաղաքական ռեալիզմն ամենից ավելի նպաստում է «ազգային» հասարակական կարծիքի համախմբմանն ու ձևավորմանն ի նպաստ «յուրային» կառավարության, որն էլ հենց պարտավոր է պաշտպանել ազգային շահերը: Դա ոչ միայն ամրապնդում է գոյություն ունեցող իշխանությունը, այլև նպաստում ազգային միավորմանը և ուժեղացնում հակազդեցությունը ներքին հակասություններին: Խոսքը վերաբերում է համընդհանուր կարգի հաստատմանը, որը ցանցավորում է իշխանական հարաբերությունները: Այդ իմաստով «համընդհանուր անվտանգության համակարգը» ներկայանում է որպես պետությունների և դրանց կողմից ստեղծված միջկառավարական կազմակերպությունների կառուցվածքային ամբողջություն՝ կոչված կառավարելու միջազգային հակամարտությունները:

[7] *Фарид Закариа.* Постамериканский мир будущего. М., 2009, с. 65.

[8] Տես *Параг Ханна.* Демократия или эффективность: вызов XXI века. Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века. М., 2010, сс. 206—208:

Վերոնշյալը հիմնավորենք քաղաքական գիտությունների դոկտոր Հ. Քոթանջյանի հետևյալ բնորոշմամբ. «Ըստ Ազգային անվտանգության ռազմավարությամբ սահմանվող գերակայությունների՝ Հայաստանը, լինելով միջազգային անվտանգության նոր համակարգի, առաջին հերթին՝ դրա եվրոպական ու տարածաշրջանային հատվածների ձևավորման շահագրգիռ մասնակից, ձգտում է իր արտաքին անվտանգության ռազմավարությունն իրականացնելու բազմավեկտորության և ինտեգրման սկզբունքներով: ՈՒստի Հայաստանը հարաբերությունները կառուցում է գործընկերության հիմքի վրա՝ արդյունավետ փոխհարաբերություններ զարգացնելով տարածաշրջանում գործող այն բոլոր ուժերի հետ, որոնք շահագրգռված են Հարավային Կովկասում խաղաղության և կայունության ամրապնդման գործում»[9]:

Այս ելակետային մոտեցումը հնարավորություն է տալիս շեշտադրելու, որ «Հայկական աշխարհի» կայացման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանի քաղաքական բեմահարթակում զանգվածաբար հայտնված ազդեցիկ արտազգային դերակատարների շահերը, հարատև զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ կատարելագործվող անհամաչափ տեղեկութային պատերազմները, նոր սերնդի մարտահրավերները (թրաֆիկինգ, նարկոբիզնես, պոռնոբիզնես, բնապահպանական ճգնաժամներ և այլն): Դրանց հետևանքով վերափոխվում է միջպետական հարաբերությունների կառուցվածքը, իսկ պետությունների անվտանգային քաղաքականության ապահովումը բախվում է անհաղթահարելի դժվարությունների: Հաշվի առնելով նման դժվարությունները՝ «վերազգայնականության (տրանսնացիոնալիզմ)» տեսության ներկայացուցիչները (Ժ. Նայ, Ռ. Քոհեյն և այլն), քննադատելով քաղաքական ռեալիզմի հիմնադրույթների միակողմանիությունը, առաջարկում են վերացնել համաշխարհային քաղաքականության միանձնյա կերտողների մենաշնորհը, քանի որ այդ պատճառով կասկածի տակ են դրվում *պետության ինքնիշխանությունը, ազգային անվտանգությունը և քաղաքական կայունությունը*:

Ամփոփելով՝ նշենք, որ համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացումը ներառում է ոչ միայն հզոր կենտրոնների, այլև ծայրամասերի *պետական անվտանգության, էթնիկական ինքնության, ազգային շահերի ռեալ հաշվառման* հիմնախնդիրները:

## 2. Համընդհանուր քաղաքակրթության բնականոն արդիականացումը համընդհանուր անվտանգության համատեքստում

Համընդհանուր քաղաքակրթությունը որոշակի տարածության և ժամանակի մեջ հին ու նոր քաղաքակրթությունների, ժողովուրդների, հանրույթների, պետությունների միջև տեղի ունեցած տարաբնույթ բախումների և կերպափոխումների հետևանքով ստեղծված ու կորսված հնարավորությունների իրակա-

[9] *Հ. Ս. Քոթանջյան*, Հայաստանի Հանրապետության ազգային շահերի ապահովման հեռանկարները համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 4:

նացման արդիականացման արդյունք է: 20-րդ դարի 50-ական թվականներից համընդհանուր քաղաքակրթության արդիականացումը՝ պայմանավորված «Էյնշտեյն–Ռասսել–Կյուրի» (1954) մանիֆեստով և Սառը պատերազմով բնութագրվեց գիտատեխնիկական, տեխնոլոգիական, տեղեկատվական և հաղորդակցական արժեքների աննախադեպ կարևորմամբ: Այն այժմ հասել է դրսևորման այնպիսի մակարդակի, որում և՛ «ոսկե միլիարդի», և՛ «ծայրամասի», և՛ «համաշխարհային գյուղի», և՛ «համաշխարհային քաղաքի» լինելիության համար հստակորեն նախանշվում է երկու իրարամերժ ուղի՝ գլոբալ քաղաքակրթության բնականոն արդիականացում՝ համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացմանը զուգահեռ, և ազգային (կամ նույնիսկ տարածաշրջանային) քաղաքակրթությունների մեկուսացում կամ նպատակային (գուցե նաև պատահական) ոչնչացում:

Առաջինի հավանականությունը պայմանավորված է ազգերի, ժողովուրդների և պետությունների խաղաղ կենսագործունեություն և բնականոն արդիականացում ապահովող շարժընթացի հավասարակշռության, փոխշահավետ համագործակցության և փոխօգնության իրական հնարավորություններով: Երկրորդը պայմանավորված է աշխարհում զանգվածային ոչնչացման զենքի՝ ինքնանպատակի հասնող գերկուտակմամբ, համաշխարհային ծավալների վերաճող բնապահպանական աղետներով, տարբեր հանրույթների՝ համընդհանուր քաղաքակրթության բնականոն արդիականացմանը խոչընդոտող աղքատությամբ, «վազող-հասնող արդիականացման» հետևանքով առաջացող համակարգային քաոսին դիմակայելու անկարողությամբ:

Քաղաքակրթության զարգացման փորձը վկայում է, որ եթե ավանդականից արդյունաբերական հասարակությանն անցման ժամանակ հասարակական միկրո-, մակրո-, մեգահամակարգերի կառավարման հիմքում «փորձի և սխալի» հարացույցն էր, ապա ներկայումս՝ հետարդիական հասարակության դարաշրջանում, գերակայում է նպատակամետ գործողության վրա հիմնվող «գիտավերլուծական» կառավարման հարացույցը: Ակնհայտ է, որ մարդկության զարգացումը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ կառավարման «փորձի և սխալի» հարացույցին բնորոշ փոքր սխալն անգամ կարող է ոչ միայն լուրջ աղետներ պատճառել երկրագնդի որևէ տարածաշրջանի, այլև հարցականի տակ դնել ամբողջ համընդհանուր քաղաքակրթության անվտանգ գոյությունը:

Այսպիսով՝ թե՛ տեսական, թե՛ կիրառական առումով հրատապ անհրաժեշտություն է համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացումը ինքնակարգավորվող, ինքնակառավարվող և ընդհանրապես «ինքնա-» նախածանցի սկզբունքով:

Համակարգի արդիականացման ցանցային անընդհատությունը ապահովվում է գործընթացների պատճառահետևանքային հետադարձ կապի բնականոնության պահպանման և ազդեցություն – հակազդեցություն դինամիկ հավասարակշռության պահպանման սկզբունքներով: Գիտավերլուծական կառավարման հիմքում անհրաժեշտ է դնել բնականոն արդիականացման վիճակում գտնվող

պետության և հասարակության կառավարման այնպիսի կառույցներ, որոնք կարող են լինել ինքնակարգավորվող և ինքնազարգացող:

Սույն խնդրի լուծման համար առաջարկում ենք.

*ուսումնասիրել՝*

- հասարակության ընդհանրական «Ես»-ի (նաև «Մենք»-ի) ձևավորման և դրսևորման մեխանիզմները, ինչպես նաև «Նրանք»-ի հետ հարաբերությունների փորձարարական հիմքերը,
- պետության և հասարակության միկրո-, մակրո- և մեգակառույցների գործառութային փոխհարաբերությունները՝ ըստ այն ինքնության առանձնահատկությունների, որը պահպանվել է տվյալ քաղաքական ժամանակում,

*ապահովել՝*

- պետության և հասարակության, պետական և ոչ պետական կառույցների շահերի ներդաշնակությունը,

*կառուցել՝*

- ինքնորոշված անհատի ձևավորմանը, հաստատմանը և զարգացմանը նպաստող այնպիսի ժողովրդավարական քաղաքական համակարգ, որում չեն անտեսվում մտածողական, բնատարածքային, բնապատմական առանձնահատկությունները:

Ժողովրդավարական աշխարհի հայեցակարգի բովանդակությունը էթնոմշակութանորմատիվային և հաստատութենական փոխհարաբերություններն են: Այսինքն՝ ժողովրդավարական համերաշխության հասնելու համար անհրաժեշտ է ներդաշնակել կենտրոն – ծայրամաս քաղաքական զարգացումները՝ հաստատելով «խաղաղություն՝ խաղաղ միջոցներով»: Համընդհանուր անվտանգության ապահովման համար անհրաժեշտ մեթոդաբանական բաղադրիչ է նաև նորմատիվային արժեքային մոդելը, որի դեպքում որոշվում են ոչ միայն զարգացման համընդհանուր միտումները, այլև հաշվի է առնվում պետությունների ռազմավարությունը: Որպես նորմատիվային մոդել ընդունվում է համընդհանուր քաղաքակրթության կայուն զարգացման սկզբունքը: Ժամանակակից քաղաքակրթությունը պետք է համադրի երկու ներքնապես աններդաշնակ հասկացություններ՝ *կայունություն* և *զարգացում:* Առաջին չափանիշը կիրառելով Հայաստանի նկատմամբ՝ կարող ենք նշել, որ նրա աշխարհաքաղաքական դիրքը պետք է դառնա անվտանգ: Երկրորդը նշանակում է, որ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը պետք է նպաստի նրա տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացմանը, եթե իշխանություն իրականացնող վերնախավի մշակույթը ժողովրդավարական է[10]:

Այլապես ժողովրդավարական աշխարհի հայեցակարգի ոչ անկողմնակալ մեկնաբանությունը կարող է հանգեցնել վտանգի՝ պայմանավորված մարդկությանը ծանոթ ամենախորքային բախումնածին գործոնի՝ էթնիկական ինքնության

[10] Տես *Daron Acemoglu, James A. Robinson.* Economic Origins of Dictatorship and Democracy. New York, 2005, PP. 180 – 182:

անարդարացի քաղաքականացման հետ: Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ ոչ մի մարդկային տեսակ իրավունք չունի ոչնչացնելու ուրիշ տեսակի՝ բռնանալով նրա կամքի վրա, կամ, որ նույնն է, զրկելու նրան իր տեսակի դերի, տեղի, ինքնության, էության և կարգի ընկալումներից: *Տեսակն իրավունք չունի ոչնչացնելու որևէ այլ տեսակի. աշխարհը դրանով աղքատանում է:*

## 3. Համընդհանրացման մարտահրավերը և Հայկական աշխարհի կայացման ռազմավարությունը

Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման տվյալ պայմաններում մեզ համար կարևոր են և՛ մասնակցությունը գիտավերլուծական նոր հարացույցի ձևավորմանը, և՛ դրանում դերակատարություն ունենալը: Միայն այսպես կարող ենք պարզել ու ճշգրտել մեր՝ Հայերիս, ուրույն հստակ տեղը, դերը և նշանակությունը. լինելով ամբողջի մաս՝ մեր ազգային ինքնությամբ ևս լինենք համընդհանուր ինքնության մաս:

Դա ենթադրում է քաղաքական իրականության իրատեսական գնահատում: Դեռ Գ. Նժդեհը, վերլուծելով բոլշևիկյան հեղափոխությունից հետո տեղի ունեցող փոփոխությունները, եզրակացրել էր. «Հսկայական փոփոխութիւններ առաջ եկան, ուշագրաւ երեւոյթներ: Եւ հանրածանօթ իրողութիւն է, որ այս դէպքերը զարգացան բոլորովին հակառակ՝ մեր տրամադրութեանց՝ արտաքին իրողութիւնների թելադրութեամբ: Մենք անզօր եղանք ուղղութիւն տալ նրանց: Այս նշանակում է, թե ներքուստ մենք պատրաստ չէինք դէպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելու»[11]:

Ժամանակի մարտահրավերներին պատասխանելու համար այսօր պահանջվում է առաջին հերթին ունենալ համամարդկային և ազգային արժեքների հիմքի վրա անվտանգ զարգացող պետություն, որն իր կառավարման համակարգով, բնապատմական զարգացման նոր հարացույցի ձևավորման գործընթացում ծավալած իր գործունեությամբ դինամիկ կերպով մասնակցի համընդհանուր քաղաքակրթության արդիականացմանը:

Մի ժամանակաշրջանում, երբ պետության անվտանգությունը որոշվում է ոչ միայն ռազմական, այլև ընդհանրապես գիտական ու կրթական ներուժով, աշխարհաքաղաքական դիրքն արդեն չի կարող ընկալվել որպես «պաշտպանական անվտանգության» հայեցակարգի գլխավոր գործոն:

Համամոլորակային առումով հինգ ուժային կենտրոնների նկատմամբ Հայաստանի դիրքը բավականին յուրահատուկ է: Այստեղ Ռուսաստանի Դաշնության և Եվրամիության մերձավորությունը, մյուս երեք կենտրոնների (ԱՄՆ, Չինաստան, իսլամական աշխարհ) հարաճուն հետաքրքրությունն առաջին հերթին չափվում են տնտեսական նկատառումներով, ընդ որում, այն կարող է շատ մեծանալ քաղաքական պատճառներով՝ անկախ աշխարհագրական հեռավորությունից: Կովկասի տարածաշրջանը այն աշխարհաքաղաքական հան-

[11] *Գարեգին Նժդեհ,* Հատընտիր: Ե., 2006, էջ 54:

գուցակետն է, որտեղ բախվում են ոչ միայն համաշխարհային ուժային կենտրոնների, այլև տարածաշրջանի ազդեցիկ պետությունների՝ Թուրքիայի, Իրանի շահերը: Ընդ որում, շահերի բախումը Կովկասում և Հայաստանում կրում է թե՛ տնտեսական ու քաղաքական, թե՛ քաղաքակրթական՝ պատմամշակութային, ազգային-էթնիկական, կրոնական, բնույթ: ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի էական առանձնահատկությունը նաև այն է, որ Հայաստանը գտնվում է *եվրոպական, սլավոնական և արևելյան* քաղաքակրթությունների խաչմերուկում: Ընդ որում, այդ քաղաքակրթությունների շփումը միշտ չէ, որ կրել և կրում է խաղաղ բնույթ, ինչը և բացասաբար է անդրադառնում Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացման վրա: Հայաստանի Հանրապետությունը, չունենալով ռազմավարական մեծ կարևորություն ներկայացնող այնպիսի բնական պաշարներ, ինչպիսիք են նավթը, բնական գազը և այլն, այնուամենայնիվ կարող է դառնալ քաղաքակրթությունների երկխոսության, տարանցիկ ճանապարհների խաչմերուկ՝ թեկուզ հենց մշակութային ակտիվ գործունեությամբ և քաղաքական չեզոքությամբ, հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու կարողությամբ:

Ահա այն ուղին, որի օգնությամբ հայը կարող է ժամանակակից պայմաններում տնօրինել իր ապագան՝ ընդունելով համընդհանրացման մարտահրավերները: Դա է «Հայկական աշխարհի» էությունն ու առաքելությունը, և այս հանգամանքը պետք է մտահոգի և՛ հայ կառավարող վերնախավին, և՛ ցանկացած հայի:

Այս տարածաշրջանում հայ էթնոսի վաղնջական գոյությունը վկայում է, որ նա մշտապես ելք է գտել աշխարհի զարգացման ցանկացած սցենարի դեպքում: Պատմության հոլովույթում մե՛րթ կորցնելով իր պետականությունը, մե՛րթ վերագտնելով ու նվաճելով այն՝ նա ապացուցել է հայկական քաղաքակրթության և հայ տեսակի կենսունակությունը: Քանի որ հայկական մշակույթի մեջ առկա են համամարդկային արժեքներին համահունչ և փոխլրացնող բազմաթիվ արժեքներ, ապա դրանց էլ հենց պետք է կողմնորոշիչի դեր տրվի Հայաստանի պետական կառավարման համակարգի զարգացման գործում: Հայն ունի տարածության ու ժամանակի իր յուրահատուկ և՛ աստիճանակարգային, և՛ ցանցային ընկալումը, որն իր էությամբ չի հակասում հետարդիականական ընկալումներին: Մեր կարծիքով՝ «Հայկական աշխարհի» հիմքում պետք է դրվի «Հոգևոր Հայաստանի» գաղափարախոսությունը՝ «Ճանաչի՛ր ինքդ քեզ», «Պահպանի՛ր համակեցության նորմերը», «Երջանիկ է նա, ով հասկանում է երևույթների միջև եղած կապը» սկզբունքներով հանդերձ[12]: Ըստ այդմ պետք է մշակվի «Հայկական աշխարհի» կերտմանն ուղղված պետական քաղաքականությունը, որը ենթադրում է բնականոն արդիականացող պետություն, նոր տեխնոլոգիաներով հագեցած գիտություն և մրցունակ կրթություն:

[12] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Մ. Մարգարյան,* Հոգեւոր Հայաստանի գաղափարախօսութիւնը արդիականացման գործընթացում: «Բազմավէպ» հայագիտական, բանասիրական, գրական հանդես, Վենետիկ-Ս. Ղազար, 2004, հմ. 1–4:

Այսպիսով՝ համընդհանրացումը աշխարհը դարձնում է ավելի փոխպայմանավորված, փոխկախված ու փոխկապված: Չնայած տեղի ունեցող արմատական փոփոխություններին՝ կարելի է պնդել, որ համընդհանրացման գործընթացները դեռևս ավարտված չեն, և ներկայիս անցումային աշխարհը տարաբնույթ քաղաքակրթությունների և իշխանական կառույցների մի ընդգրկուն համակարգ է: Ակնհայտ է, որ համընդհանրացման ընթացքում չի կարելի անտեսել տարբեր հանրույթներին հատուկ սոցիո- և էթնոմշակութային արժեքները, քանի որ դրանց թերագնահատումը կամ գերագնահատումը լի են տարաբնույթ բախումների և ճգնաժամների վտանգներով, ինչը մարդկությանը կարող է անընդհատ պահել ցնցումների մեջ:

Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացումը և դրա օրգանական մաս կազմող՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջնորդվել նոր աշխարհակարգի տրամաբանությամբ և արդիականացնել Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ռազմավարական հայեցակարգը, որի հիմքում պետք է դրված լինեն «Հոգևոր Հայաստանի» գաղափարախոսությունը, «համամարդկային բարոյականության» սկզբունքները և այլն: Այս ամենը հնարավորություն կտա ոչ թե կողմնորոշվելու դեպի այս կամ այն կողմ (Եվրոպա, ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան և այլն), այլ *ինքնորոշվելու*՝ ստանալով *ինքնագիտակցման, ինքնաիրացման և ինքնադրսևորման* լայն հնարավորություններ:

Այսօր կարևոր է դարձել իրատեսորեն ընկալել ժամանակի ոգին և ստեղծագործական նախաձեռնությամբ մասնակից լինել համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման համար անհրաժեշտ նախապայմանների ձևավորմանն ու կայացմանը՝ դրանով իսկ ինքնահաստատվելով և ուրույն տեղ, դեր ու նշանակություն ունենալով համընդհանուր քաղաքակրթության կայացման և բնականոն արդիականացման գործում:

**ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ**

## ПРОБЛЕМЫ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ГЛОБАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ И «АРМЯНСКИЙ МИР»

*М. М. МАРГАРЯН, доктор политических наук, профессор,*
*заведующая кафедрой политического управления и политического анализа*
*Академии государственного управления РА*

РЕЗЮМЕ

В результате глобализации мир становится более взаимообусловленным, взаимозависимым и взаимосвязанным с формированием единой глобальной цивилизации. Претерпевающий данный процесс переходный мир представляет собой всеобъемлющую систему различных по характеру и форме цивилизаций и властных структур. В то же время нельзя игнорировать существование присущих различным этни-

ческим сообществам систем социокультурных ценностей, поскольку их недооценка или переоценка чреваты опасностью возникновения различных конфликтов и кризисов, которые могут постоянно удерживать человечество в состоянии потрясений.

Для модернизации системы глобальной безопасности и обеспечения её органической составляющей – национальной безопасности Республики Армения необходимо руководствоваться логикой нового миропорядка и модернизировать стратегическую концепцию устойчивого развития Республики Армения, в основу которой целесообразно заложить идеологию «Духовной Армении», принципы «общечеловеческой морали» и т. д. Это даст возможность избежать шарахания в сторону какого-либо силового или морально-ценностного центра и самоопределиться, поставив во главу угла расширение возможностей для достижения самосознания, самореализации и самовыражения.

Исходя из этого, представляется необходимым на данном этапе развития реалистично воспринимать дух времени и с творческой инициативой участвовать в процессе формирования и упрочения предпосылок для модернизации глобальной системы безопасности, и тем самым достичь самоутверждения и занять достойное место в деле становления глобальной цивилизации и в процессе ее естественной модернизации.

**POLITICAL SCIENCE OF SECURITY**

## THE PROBLEMS OF GLOBAL SECURITY SYSTEM'S MODERNIZATION AND «THE ARMENIAN WORLD»

*M. M. MARGARYAN, Doctor of Political Sciences, professor,*
*Head of the Chair of Political Administration and Political Analysis*
*of the RA Public Administration Academy*

SUMMARY

As a result of globalization the world becomes more correlated, interdependent and interconnected along with the formation of a unified global civilization. The transitional world that undergoes this process is a comprehensive system of civilizations and power-holding structures different in their nature and form. At the same time the existence of the systems of socio-cultural values proper to different ethnic communities cannot be ignored, as their underestimation or overvaluation are fraught with the danger of rise of various conflicts and crises that can constantly keep the mankind in the state of perturbation and turmoil.

To modernize the system of global security and ensure its organic component, that is the national security of the Republic of Armenia, it is necessary to follow the logic of the new world order and to modernize the strategic concept of the sustainable development of the Republic of Armenia, the basis of which it's expedient to assume the ideology of «Spiritual

Armenia», the principles of «universal moral», etc. It will give an opportunity to avoid dashing aside any power or moral-value center and to self-determine, prioritizing the enhancement for the self-consciousness, self-realization and self-expression achievement.

Hence, at this stage of development the realistic perception of the Zeitgeist and the participation with creative initiative in the process of creating and consolidating prerequisites for the modernization of global security system is required to achieve self-affirmation and to take a noteworthy place in the establishment of global civilization and in the process of its natural modernization.

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

*Կ. Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի Կապի զորքերի պետ – Կապի և ԱԿՀ վարչության պետ, Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, փոխգնդապետ, տեխնիկական գիտությունների թեկնածու, ԱԿՀ բաժնի ծրագրավորման բաժանմունքի պետ*

Դիցուք կա կառավարման ավտոմատ համակարգ (ԿԱՀ), որը պաշտպանական, ֆինանսատնտեսական, էներգետիկ, հաղորդակցական և այլ ոլորտներում ազգային անվտանգության ապահովման գործընթացների կառավարման կառույցի հիմնական բաղադրատարրն է:

Դիտարկվող ԿԱՀ-ը ծրագրային-ապարատային համալիր է՝ իրացված որոշ տեղային ցանցում, որը կազմված է միասնական օպերացիոն միջավայրում գործող փոխկապված համակարգիչներից:

Ենթադրենք, որ տվյալ ԿԱՀ-ն սպասարկվում է ստանդարտ ծրագրային-մաթեմատիկական համալիրով (ԾՄՀ), որում, բացի օպերացիոն համակարգից (ՕՀ), ներառված են մի շարք կիրառական ծրագրեր, տվյալների հաղորդման համակարգ, հակավիրուս և այլն: Ընդսմին դրանց մի մասը, եթե ոչ բոլորը, մշակված են այլ պետություններում: Քննարկենք տեղեկույթի հոսակորստի կամ ազգային անվտանգության կառավարման համակարգի գործունեությանը ԾՄՀ բաղադրատարրերից որևէ մեկի կանխամտածված միջամտության պատճառով ազգային անվտանգության կառավարման համակարգի աշխատանքի խաթարման հնարավորության գնահատման խնդիրը: Փաստորեն վերլուծվում է մի իրավիճակ, երբ վիրուսներով չվարակված համակարգիչը, որն ունի սովորական ստանդարտ օպերացիոն թաղանթ, այլևս չի ենթարկվում օգտագործողին ու, իրեն վերապահելով գործընթացների և օբյեկտների կառավարումը, սկսում է իր հայեցողությամբ տնօրինել տվյալների բազայում պահպանվող տեղեկույթը:

Ծրագրային այն համալիրը, որը, բացի պաշտոնապես կիրառվող տեսանելի թաղանթից, ունի նաև օգտագործողից թաքցված ծրագրային բաղադրիչ, անվանենք յանուսային (Հին Հռոմի դիցարանի երկդեմ աստվածություն Յանուսի անունով, այն է՝ երկդիմի) ծրագիր ($JP$) և նշագրենք $JP=(IM_1,\ IM_2)$-ով, որտեղ՝ $IM_1$-ն առերևութային, իսկ $IM_2$-ն՝ գաղտնի կերպով ներակայված բաղադ-

ռատարրերն են: Ընդսմին $IM_2$-ն հնարավորություն է տալիս կատարելու չկանոնակարգված, հակահիրավական միջամտություն համակարգի աշխատանքին: Այն ստեղծված է $IM_1$-ի հետ միասնական նախագծով, ընդ որում, վերջինս փաստորեն քողարկում է $IM_2$-ին:

Ըստ կանխապատրաստման* տեսակի, ՕՀ-ի հետ փոխգործության բնույթի, համակարգային պահանջների, նախանշանակման և այլ հանգամանքների՝ $IM_2$-ն կարող է զգալիորեն գերազանցել իր առերևութային թաղանթը:

*JP*-ն երկակի նախանշանակման ծրագիր է, որի հիմնական խնդիրն է հավաքել, պահպանել, փոխանցել տեղեկույթը և անհրաժեշտության դեպքում կասեցնել ՕՀ-ի աշխատանքը՝ մնալով «աներևույթ»: Ընդ որում, չի բացառվում կառավարումն իր վրա վերցնելու հնարավորությունը: Սակայն հակասություն է առաջանում «չճանաչված» մնալու անհրաժեշտության և իր նախանշանակումը ամբողջ ծավալով իրացնելու հնարավորության միջև: Ինչպես ցույց կտրվի ստորև, այդ հակասությունը կարող է վերացվել միջնորդների կիրառմամբ, ինչպիսիք են $IM_2$-ով ստեղծվող վիրուսները: Այսինքն՝ *JP*-ն վիրուսների տարածման գաղտնի աղբյուր է և այդ վիրուսների միջոցով իրացնում է իր մի շարք խնդիրներ: Եթե վիրուսով վարակված սովորական ծրագիրը միայն վիրուսների բազմացման աղբյուր է, ապա, ի տարբերություն դրանից, *JP*-ն ինքն է ստեղծում ընթացիկ պահանջներին և լուծվող խնդիրներին համապատասխան տարբեր տեսակի և դասի վիրուսներ:

*JP-Կենտրոն* անվանենք այն սերվերների խումբը, որոնց միջոցով կատարվում է ցանցային փոխգործությունը *JP* բազմության հետ, այսինքն՝ ունենք ներկառուցված քողարկված *JP-Ցանց*:

Ենթադրենք, որ *OUNB*-ն այն օբյեկտների բազմության տվյալների բազան է, որոնք այս կամ այն չափով ներկայացնում են *JP-Կենտրոն* ունեցող պետության ազգային անվտանգության շահերը կամ դրա դեմ ուղղված սպառնալիքը (*OUNB*-ն տեղակայված է *JP-Կենտրոնի* սերվերներում):

$Y = \{y_1, y_2, ..., y_n\} \in OUNB$ ռիսկերի խմբով նշագրենք այն համակարգիչների կամ տեղային ցանցերի որոշակի համախումբը, որոնցից *JP-Կենտրոնի* համար արժեքավոր տեղեկույթ ստանալու կամ վտանգի ենթարկվելու հավանականությունը գերազանցում է որոշ $p_0$ շեմային արժեքը, այսինքն՝

$$\forall i \;\; p(y_i) \geq p_0 : \qquad (1)$$

*AVJP*-ով նշագրենք հակավիրուսային *JP*-ն, այսինքն՝ երկակի նախանշանակման հակավիրուսը, և համատեղելի անվանենք այն *JP*-ները, որոնց *JP-Կենտրոնները* համընկնում են: Միևնույն միջավայրում կարող են լինել մի քանի

* Կանխապատրաստում (*initialization*՝ հարուցում)՝ ծրագրի կամ սարքի բերում օգտագործմանը պատրաստության վիճակի, ակտիվացում, պատրաստում աշխատանքի, պարամետրերի կանխավ որոշում:

համատեղելի *JP*-ներ: Եթե դրանց թվում կա *AVJP*, ապա այդպիսի փոխդասավորությունը անվանենք Յանուսային ծրագրի տերմինալ՝ *JPT*: Փաստորեն, *JPT* ձևավորման դեպքում դրանում առկա *AVJP*-ն ոչ միայն լիովին կվերահսկի այն ՕՀ-ի աշխատանքը, որում այն ներակայված է, այլև ունակ է արդյունավետ կերպով պահպանելու $IM_2$-ով կանխապատրաստվող բոլոր գործընթացները: Այդ պատճառով էլ այդքան կարևոր է *JPT* ձևավորումը:

Դիցուք *JP*-ն կարող է զուգահեռաբար գործել որոշակի $R = \{R_i\},\ i = \overline{1,k}$ բազմություն կազմող բանելակարգերով: Յուրաքանչյուր $R_1$ բանելակարգին վերագրենք այն գործընթացների $X(R_i) = \{x_1(i), x_2(i), ..., x_b(i)\}$ բազմությունը, որոնք հնարավորություն են տալիս գործառելու այդ բանելակարգը:

$S = \{S_1, S_2, ..., S_m\}$ -ով նշագրենք *JP* վիճակների բազմությունը:

$X_i^j = f_R(X(R_i), S_j)$ -ն անվանենք $R_i$ բանելակարգի գործընթացների պրոյեկցիա և ենթադրենք, թե այն արտահայտում է այն գործընթացների բազմությունը, որոնք $S_J$ վիճակում կանխապատրաստվում են *JP*-ով, ընդսմին $X_i^j \subseteq X(R_i)$ է, իսկ $f_R$ -ը ընտրության համապատասխան ֆունկցիան է: Այդ դեպքում *JP*-ի յուրաքանչյուր $S_J$ վիճակին կհամապատասխանի բոլոր հնարավոր բանելակարգերով գործընթացների պրոյեկցիաների $\{X_1^j, X_2^j, ..., X_k^j\}$ բազմությունը: Կառուցենք $X = \| X_i^j \|,\ \mathrm{i} = \overline{1,k},\ \mathrm{j} = \overline{1,\mathrm{m}}$ մատրից, որը փաստորեն բնութագրում է *JP* նախանշանակումը և դրա գործառութային հնարավորությունները:

$\overline{G} = (g_1, g_2, ..., g_l),\ \forall i,\ 0 \le i \le l,\ g_i = (0,1)$ -ով նշագրենք *JP*-ի ազդանշանային համակարգի բազմաչափ վեկտորը, որի տարրերի արժեքների փոփոխությունը կարող է հարուցել անցում $S_i$ որոշ վիճակից նոր $S_j,\ (S_i, S_j) \in S$ վիճակի:

$V = \{v_1, v_2, ..., v_u\}$ -ով նշագրենք $IM_2$-ով կամ *AVJP*-ով ստեղծվող մասնագիտացված վիրուսների բազմությունը, իսկ $B = \{b_1, b_2, ..., b_l\}$ -ով՝ *JP*-ին պատկանող այն ծրագրային ֆայլերի խումբը, որոնք ունեն վերահսկվող օպերացիոն միջավայրում տեղի ունեցող գործընթացների բազմությունը գրանցելու, վերահսկելու, ձեռք բերված տեղեկույթը կարդալու և պահպանելու և այլ ունակություններ: Իրենց կառուցվածքով ու գործառության բնույթով դրանք փաստորեն «թաքնված» վիրուսներ են, սակայն ունեն «պաշտոնական» քողարկում՝ «համակարգային» ֆայլերի տեսքով: $\overline{G}$ ազդանշանային համակարգի ընթացիկ վիճակը անվանենք *FLAG*, այսինքն՝ $S_t = f_G(FLAG)$, որտեղ՝ $S_t$-ն *JP*-ի ընթացիկ վիճակն է, իսկ $f_G$ -ն՝ ազդանշանային համակարգի տարրերի արժեքները վիճակի ձևով արտացոլելու համապատասխան ֆունկցիան:

$y_j$ համակարգի վերահսկվող օպերացիոն տարածություն դրսից $v_i \in V$ *JP* մասնագիտացված վիրուսի ներթափանցումը կարող է հանգեցնել որոշ $b_k \in B$

«համակարգային» ֆայլի հետ դրա փոխգործության, որն իր հերթին կարող է արտահայտվել *FLAG*-ի փոփոխությամբ և նոր վիճակի անցմանը *JP*-ի կանխապատրաստմամբ, այսինքն՝ գոյություն ունի $B = f_B(V)$ կախում:

*JP*-ն պետք է կարողանա առաջացնել մի գործընթաց, որն անվանենք նպատակային ճանաչման գործընթաց, և որն ունակ է որոշելու համակարգչային միջավայրում ներակայված ծրագրերի տեսակը, կիրառման բնույթն ու փուլը: Այդ կերպ ստացված տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս *JP*-*Կենտրոնի* համար որոշելու ձեռք բերված տեղեկույթի մեջ առկա սպառնալիքի կամ շահերի աստիճանը, նպաստելու $Y \in OUNB$ ռիսկերի խմբում տվյալ օպերացիոն միջավայրի գրանցմանը, և, որպես հետևանք, *JP*-ի վիճակի փոփոխմանը պասիվից՝ ակտիվի:

$A_i$-ով նշագրենք որոշ *i*-րդ «վտանգավոր» ծրագիր՝ ներակայված դիտարկվող համակարգչային միջավայրում, այսինքն՝ ունենք տվյալ համակարգչում գործարկված այն $A = \{A_i\},\ i = \overline{1,a}$ ծրագրային համալիրների բազմություն, որոնց գործառումը *Y* ռիսկերի խմբի տեսակետից ներկայացնում է սպառնալիք կամ շահ:

Դիցուք *T*-ն *JP*-ով $A_i$ «վտանգավոր» ծրագրին հետևելու ժամանակի միջակայքն է: $\overline{L_i} = (l_1^i, l_2^i, ..., l_q^i)$-ով ($l_j^i = l(t_s),\ j = \overline{1,q},\ t_k \in T$) նշագրենք այն վեկտորը, որի բաղադրատարրերի բազմությունը $A_i$-ի ակտիվությունը վկայող որոշ տեղեկութային բաղադրիչներն են, և այն անվանենք աղմուկ: Այդ դեպքում որպես ազդանշան կդիտարկենք $A_i$ ծրագրի կիրառման «վտանգավոր» փուլը բնութագրող տեղեկույթը, այսինքն՝ ունենք ազդանշանի $\overline{C_i} = (c_1^i, c_2^i, ..., c_q^i)$ վեկտոր, ընդսմին $\overline{L_i}$ աղմուկի տարածության մեջ $c_j^i = c(t_s)$: Այդպիսով կստանանք $\overline{N_i} = \overline{L_i} + \overline{C_i}$ արդյունարար վեկտորը:

*JP*-ն ներկայացնենք որպես լուծող համակարգ, որը որպես $N_i$-ի դիտարկումների արդյունք որոշում է ընդունում $\overline{W_i}$ բազմաչափ վեկտորում $\overline{C_i}$ ազդանշանի բնույթի մասին: Այսինքն՝ *JP*-ում պետք է պարունակվի լուծման $g_i(\overline{W_i} \mid \overline{N_i})$ կանոնը, որպեսզի հնարավոր լինի տրված լուծման դեպքում նվազարկել կորուստների համապատասխան ֆունկցիան՝

$$F_p^{(i)}(\overline{W_i} \mid \overline{C_i}) = -\log p_c(\overline{C_i} \mid \overline{W_i}), \qquad (2)$$

որտեղ $p_c(\overline{C_i} \mid \overline{W_i})$-ը ազդանշանի հավանականության պայմանական խտությունն է: Այն բանի հավանականության պայմանական խտությունը, որ $\overline{C_i}$ ազդանշանի առկայությամբ *JP*-ն կընդունի $\overline{W_i}$ լուծումը, որոշվում է ըստ հետևյալ արտահայտության.

$$p_u(\overline{W_i} \mid \overline{C_i}) = \int p(\overline{N_i} \mid \overline{C_i})\, g_i(\overline{W_i} \mid \overline{N_i})\, d\overline{N_i}: \qquad (3)$$

$Z(\overline{C_i} \mid \overline{W_i}, \lambda(y_i))$-ով նշագրենք ազդանշանը հայտնաբերելու դեպքում գնի ֆունկցիան, որտեղ $\lambda(y_i)$-ն *JP-Կենտրոնի* համար $\overline{C_i}$ ազդանշանի սպառնալիքի կամ շահի աստիճանն է: Այդ դեպքում *JP*-ի համար ազդանշանը չնկատելու պայմանական ռիսկը որոշվում է հետևյալ արտահայտությունից՝

$$r_i(\overline{C_i} \mid g_i) = \int p_u(\overline{W_i} \mid \overline{C_i}) Z(\overline{C_i} \mid \overline{W_i}, \lambda(y_i)))\, d\overline{W_i} : \quad (4)$$

$g_i(\overline{W_i} \mid \overline{N_i})$ որոշող կանոնը պետք է բավարարի $r_i(\overline{C_i} \mid g_i) < p_0$ պայմանին, որտեղ $p_0$-ն *OUNB*-ի ռիսկերի խմբերի շեմային արժեքն է (1):

Համարենք, որ եթե *JP*-ի ստեղծումը հնարավոր է և «շահավետ», ապա այն արդեն գոյություն ունի, և որպես առավել հնարավոր որոշենք հիմնական բանելակարգերը և գործընթացները, որոնց շնորհիվ պահպանվում է դրա գործունեությունը:

1. Իրավիճակի գնահատման բանելակարգ.

- հաստատում է *JP*-ի նոր բանելակարգն ըստ այն ազդանշանի, որը ներբերվել է դրսից որևէ $v_i \in V$ վիրուսի կողմից կամ որևէ $A_r$ ծրագրի կիրառման «վտանգավոր» կամ «հետաքրքիր» փուլի առկայությունը վկայող $\overline{C_j}$ ազդանշանի նպատակային ճանաչման գործընթացով վերլուծության հետևանքով,
- օպերացիոն միջավայրի թշնամականությունը վերլուծում է ըստ հակավիրուսի առկայության և համատեղելիության, վիրուսի գոյության միջին ժամանակի՝ կախված դրա տեսակից ու դասից, համակարգի՝ վիրուսային գրոհները ճնշելու ունակությունից,
- հայտնաբերում է ցանցային փոխդասավորությունը և լուծում է վիրուսների երթուղայնացման խնդիրը,
- գնահատում է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ստացվող *UPGRADE*-ները և կատարում է համակարգում դրանց գաղտնի ներակայումը (օրինակ՝ տեղեկույթի գաղտնի փոխանցում համակարգիչ – բջջային հեռախոս – արբանյակային կապ – *JP-Ցանց* շղթայով):

2. Վիրուսային գործառման բանելակարգ.

- *JP*-ի «համակարգային» ֆայլերից ստացվող $B = f_B(V)$ տեղեկույթը կերպափոխում է վիրուսի և հակառակը,
- նույնականացնում է «իր» վիրուսները՝ տարբերակելով օտարներից, անհրաժեշտության դեպքում վերացնում է դրանք,
- կատարում է «փոստատար»-վիրուսների ձևավորում և երթուղայնացում,
- կազմակերպում է վիրուսային գրոհներ, ընտրում է վիրուսների տեսակները և ագրեսիայի օբյեկտները,
- *JP*-ն լրահամալրում է նոր վիրուսներով, թարմացնում դրանք:

3. Համատեղելի *JP*-ների հետ գործընթացների համաձայնեցման բանելակարգ.

• բաշխում է ֆունկցիաները և դրանց միջև եղած բեռնումները (օրինակ՝ եթե գոյացել է *JPT*, ապա իրավիճակի գնահատման, պաշտպանության և վիրուսային գործառման ուղղությամբ *JP*-ի աշխատանքի մի զգալի մասը կարող է կատարել *AVJP*-ն),

• համարժեք գործընթացները համաժամանակացնում է ըստ ներգործության ուղղության և ժամանակի:

4. Տեղեկույթի մշակման բանելակարգ.

• հայտնաբերում է գաղտնաբառերը և օգտագործողներին,

• տեղայնացնում է տվյալների բազաները, որոշում է կարդացվող տեղեկույթի առաջնայնությունը և հերթականությունը,

• ծրարում է ծավալային տեղեկույթը և ապահովում դրա կրկնակի հաղորդումը *JP-Կենտրոն*՝ վիրուսային գրոհների (համաճարակների) տեսքով,

• պահպանում և վերականգնում է *FLAG*-ը, եթե տեղի է ունեցել ՕՀ-ի ձևաչափում և վերաներակայում:

5. Պաշտպանության և ծածուկության բանելակարգ.

• ըստ իրավիճակի գնահատման արդյունքների՝ իրացնում է պասիվ վիճակից անցում ակտիվ վիճակի և հակառակը,

• համաժամանակացնում է վիրուսի ստեղծման և տեղեկույթի արտաքին աղբյուրին (ինտերնետ, կրիչ և այլն) համակարգչի միացման պահերը, ընդսմին կրիչը և համակարգիչը վարակվում են միաժամանակ,

• կազմակերպում է ՕՀ-ի արհեստական «կախումը» և համակարգչի աշխատանքի դանդաղեցումը, հակավիրուս չլինելու կամ *JP*-ի հետ դրա անհամատեղելիության դեպքում համադասում է կանոնավոր վիրուսային գրոհները,

• պայքարում է անհամատեղելի *JP*-ների դեմ:

6. Կառավարման կասեցման և զավթման բանելակարգ.

• վնասում է ՕՀ-ն (շտկելի կամ անշտկելի կերպով),

• կառավարման զավթման բանելակարգով աշխատելու դեպքում վիրուսի ստեղծման պահի համաժամանակացումը և ծածուկության ապահովման մի շարք գործընթացներ դուրս են մնում գործառույթների ցանկից: «Փոքրիկ» պատերազմներում կառավարման բացահայտ զավթումը քիչ հավանական է, քանի որ, ըստ երևույթին, *JP*-ն մշակվել է միմյանց հետ գերտերությունների հարաբերությունները պարզելու համար:

$\overline{E_t}$-ով նշագրենք այն վեկտորը, որն արտացոլում է համակարգչային միջավայրում տարբեր պրոցեսների զարգացման բնական միտումը, $\overline{H}(h)$-ով՝

*JP*-ի ուղղորդված ներգործության վեկտորը՝ կողմնորոշված առաջադրված խնդիրների արդյունավետ իրացմանը, որտեղ *h*-ը դրա նպատակներն ու նախանշանակումն են: Տվյալ դեպքում ռեալ վեկտորը՝

$$\overline{P} = \overline{E_t} + \overline{H}(h) \text{ -ն} \qquad (5)$$

կարտացոլի որոշ համակարգչային ցանցային տեխնոլոգիաների զարգացման ժամանակ տեղի ունեցող փոփոխությունների նկատելի ընթացքը:

$\overline{H}(h)$ վեկտորը կողմնորոշված է բոլոր բանելակարգերով և ցանկացած վիճակում *JP* համալիրների արդյունավետ գործառման ապահովմանը, այսինքն՝

$$h = \max F_c(\psi, \zeta, \mu), \qquad (6)$$

որտեղ՝ $\psi$ -ն ռիսկի խմբերին հասնելու *JP-Ցանցի* ունակությունը բնութագրող ցուցանիշն է,

$\zeta$ -ն՝ $Y \in OUNB$ բազմությունում անհրաժեշտ տվյալները ընտրովի հաշվելու ունակությունը բնորոշող ցուցանիշը,

$\mu$ -ն՝ $Y$ ռիսկի խմբերի օպերացիոն միջավայրում գործընթացների վերահսկման և կարգավորման հնարավորության գնահատականը տվող ցուցանիշը,

$F_c$-ն՝ *JP* նպատակային ֆունկցիան:

Դիցուք դիտարկվող ԿԱՀ-ը նախանշանակված է $\theta = \{\theta_1, \theta_2, ..., \theta_s\}$ օբյեկտների բազմությունը կառավարելու համար և իր տրամադրության տակ ունի $D = \{d_1, d_2, ..., d_e\}$ ֆունկցիաների բազմություն:

Կառուցենք $D$ մատրիցը՝

$$D' = \left\| \begin{matrix} d_{11} & d_{12} & \dots & d_{1e} \\ d_{21} & d_{22} & \dots & d_{2e} \\ & & \dots & \\ d_{s1} & d_{s2} & \dots & d_{se} \end{matrix} \right\|, \qquad (7)$$

որտեղ $\theta_j$, $d_{ij} \subseteq d_i$ օբյեկտի կառավարման համար $d_{ij}$ տարրին համապատասխանում է $d_i$ ֆունկցիայի որոշ կիրարկում:

$d_{ij}$ ֆունկցիայի այլափոխում անվանենք

$$d_{ij}(k,m) = \varphi_x(d_{ij}, X_k^m) \qquad (8)$$

ֆունկցիան, որը պայմանավորում է $d_{ij}$ ֆունկցիայի աղավաղված գործառության բնույթը $X_k^m$ պրոցեսի պրոյեկցիայի ներգործությունից հետո, երբ *JP*-ն գտնվում է $S_m$ վիճակում և գործում է $R_k$ բանելակարգով: Այդ դեպքում *JP* կառավարման նպատակային ֆունկցիան ըստ ցանկացած $(i, j)$ զույգի կներկայացվի հետևյալ տեսքով՝

$$\forall(i,j)\ \exists\, opt\ d_{ij}(k,m) \to \max F_c^{'}(\mu) \in F_c \qquad (9),$$

որտեղ $opt$ -ը $X_k^m$ -ի օպտիմալ ներգործությունն է:

$\Phi_i$ -ով նշագրենք այն ֆունկցիան, որը բնութագրում է $y_i$ օբյեկտի վերահսկման լիակատարությունը՝

$$0 \le \Phi_i(K_i(JKT)), \varepsilon_i) \le 1, \qquad (10)$$

որտեղ՝ $K_i$ *(JKT)*-ն $JPT$-ի առկայությունից կախված և դիտարկվող օպերացիոն միջավայրի մատչելիության և վերահսկելիության աստիճանը որոշող բաղադրիչն է, իսկ $\varepsilon_i$ -ն հակավիրուսի գոյությունը, փոխարինման հաճախականությունն ու նորացումն արտացոլող գործակիցն է:




Նկ. 1. *JP*-ի և *VPS* նպատակային նախանշանակման բլոկ-սխեմա

Նկ. 1-ում պատկերված են *JP*-ի ենթաղրվող նպատակային նախանշանակման բլոկ-սխեման և նման տիպի ծրագրային համալիրներին ներկայացվող

խնդիրների, պահանջների ու պայմանների վերլուծության հիման վրա այդ բլոկ-սխեմայի գոյության $M_p$ երկրորդային հայտանիշների համախումբը:

$0 \le p_m(M_p) \le 1$-ով նշագրենք *JP-VPS* ծրագրի գոյության երկրորդային հայտանիշների դրսևորման հավանականությունը.

$$p_m(M_p) = F_v((f_0, f_m, f_s, f_c, f_n, ...), \sigma(H(h))), \qquad (11)$$

որտեղ՝ $f_0, f_m, f_s, f_c, f_n$-ը այն ֆունկցիաներն են, որոնք պայմանավորում են *JP* գործընթացների ունակությունը՝ համապատասխան բանելակարգերով իրացնելու իրենց նախանշանակումը, $\sigma(H(h))$-ն *JP*-ի ուղղորդված ներգործության վեկտորի ուժեղացման գործակիցն է, $F_V$-ն՝ արտապատկերման համապատասխան ֆունկցիան:

$\sigma$ ուժեղացումը կիրառվում է այն դեպքում, երբ ռիսկի խմբին պատկանող համակարգչային միջավայրը բավարար չափով վերահսկելի չէ, սակայն դա կարող է հանգեցնել *JP*-ի գոյության երկրորդային հայտանիշների դրսևորման $p_m(M_p)$ հավանականության արժեքի մեծացմանը:

$p_d^{(i)} > p_0$-ով նշագրենք ռիսկի խմբի որևէ $y_i \in Y$, $Y = \{y_1, y_2, ..., y_n\} \in OUNB$ տարրի մասին արժեքավոր տեղեկույթի առկայության հավանականությունը, որի դեպքում, քանի որ դիտարկվող օբյեկտը *JP*-ով վերահսկվում է ոչ բավարար չափով՝ $\Phi_i(K_i(JKT)), \varepsilon_i) \le \Phi_d$, ապա այդ տեղեկույթը բաց թողնելու կամ ուշացումով ստանալու ռիսկը գերազանցում է (4)-ի թույլատրելի շեմային արժեքը՝

$$r_i(\overline{C_i} \mid g_i) = \int p_u(\overline{W_i} \mid \overline{C_i}) Z(\overline{C_i} \mid \overline{W_i}, \lambda(y_i))) \, d\overline{W_i} \ge r_d :$$

*JP*-ի ելքային կոդ չլինելու դեպքում այն կարող է հայտնաբերվել կառավարման զավթման բանելակարգում կամ այն դեպքում, երբ դրա գոյության երկրորդային հայտանիշների դրսևորման հավանականությունը մեծ է որոշ $p_m(M_p) > \underline{p_m'}$ արժեքից, որը անվանենք ծածուկության շեմ: Եթե տեղեկույթի գնի $Z(\overline{C_i} \mid \overline{W_i}, \lambda(y_i))$ ֆունկցիան գերազանցում է ծածուկության շեմի պայմանական գինը, այսինքն՝ $Z(\overline{C_i} \mid \overline{W_i}, \lambda(y_i)) > Z(p_m')$, և տեղեկույթի կորստի սպառնալիքը գերազանցում է մերկացման սպառնալիքը, ապա *JP*-ն հարկադրաբար կատարում է ուղղորդված ներգործության վեկտորի ուժեղացում՝ $\sigma_i \overline{H}(h_i)$ (5), որտեղ $\sigma_i$-ն ուժեղացման գործակիցն է, և *VPS* հայտնաբերման հավանականությունը մեծանում է: Ընդհանուր առմամբ, *VPS*-ը դրսևորվում է $\overline{P} - \overline{E_t}$ վեկտորային բաղադրիչի միջոցով՝ $\sigma$ ուժեղացման աճման համեմատ:

Դիցուք *JP*-ն կարդացել է $y_i$ օբյեկտի վերաբերյալ արժեքավոր տեղեկույթը, գնահատել է դրա առաջնայնությունը՝ $PR_j^{(i)}$, $j = \overline{1, k_p}$, հրատապությունը՝ $SR_e^{(i)}$, $e = \overline{1, e_p}$, $VI^{(i)}$ ծավալը և հաղորդման բնույթը՝ $XR_i(RST^{(i)}, \varepsilon_i)$, որտեղ $RST^{(i)}$-ն մինչև *JP-Կենտրոն* սերվերը եղած պայմանական հեռավո-

ությունն է, $\varepsilon_i$-ը՝ միջավայրի դիմադրողականությունը (10): Այդ դեպքում *JP*-ն, աշխատելով իրավիճակն ըստ $f_0$-ի գնահատելու բանելակարգով, տեղեկույթի հաղորդման համար կանխապատրաստում է վիրուսային համաճարակ՝ կատարելով ցանցային փոխդասավորության վերլուծություն և լուծելով ըստ $JPK^{(i)}$ փաթեթների փոխարկման կենտրոնների բազմության $f_m$ վիրուսների երթուղայնացման խնդիրը, ընդսմին $JPK^{(i)}$-ները *JP-Յանցի JP* բաղադրատարրեր են: $\overline{G} = (g_1, g_2, ..., g_l)$ ազդանշանային համակարգը հնարավորություն է տալիս իրականացնելու համաճարակի գործնականում միաժամանակյա բռնկում այն օպերացիոն միջավայրների բազմությունում, որոնք վիրուս-«փաթեթների» տեղաշարժման երթուղիներն են: Գնահատենք հրահրվող համաճարակի մասշտաբն ու մեծությունը

$$F_e^{(i)} = f_{jp}(PR_j^{(i)}, SR_e^{(i)}, XR_i(RST^{(i)}, \varepsilon_i), JPK^{(i)}) \qquad (12)$$

պայմանական փոփոխականի արժեքի միջոցով:

Դիտարկենք *VPS* երկրորդային հայտանիշների համախումբը:

- $\Delta\lambda_c(R_p, S_t)/\Delta\lambda_f(F_v)$-ով նշագրենք ծրագրի չափերի մեծացման $R_p$ պայմանական աստիճանի և նոր տարբերակով $F_V$ գործառութային հնարավորությունների մեծացման աստիճանին այդ ծրագրի կողմից ներկայացվող $S_t$ համակարգային պահանջների հարաբերությունը: Եթե կա էական անհամապատասխանություն, ապա դա նշանակում է, որ աճած պահանջները և չափերը ուղղված են $IM_2$-ի զարգացմանը:
- Եթե կա իր գործառութային հնարավորություններով նման որևէ $F_p^{'}$ ծրագրային համալիր, որի համար կատարվում է $R_p^{'} << R_p, S_t^{'} << S_p$ պայմանը, $F_p^{'} \approx F_p$ դեպքում (այսինքն՝ համեմատաբար միանման հնարավորությունների դեպքում) չափերի և համակարգային պահանջների միջև՝ $\Delta\lambda_h^{'}(R_p^{'}, S_t^{'})/\Delta\lambda_h(R_p, S_t)$, կա զգալի տարբերություն, ապա դա նշանակում է, որ ըստ երևույթին մենք գործ ունենք երկակի նախանշանակման ծրագրի հետ:
- Դիցուք *Internet*-ին կապակցման պարտադրվածության աստիճանը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է համակարգչային միջավայրը կախված կանոնավոր կերպով *UpDate* և *UpGrade* կատարելու՝ $\Delta\lambda_u(UpDate, UpGrade)$-ի, լիցենզավորված ծրագրերը միայն *Internet*-ի միջոցով տեղակայելու՝ $\Delta\lambda_i(Internet)$ և ցանցային ծառայություններից օգտվելու՝ $\Delta\lambda_y(U_n)$, անհրաժեշտությունից, այսինքն՝

$$\Delta\lambda_h = \Delta\lambda_u(UpDate, UpGrade) + \Delta\lambda_i(Internet) + \Delta\lambda_y(U_n):$$

Եթե $\Delta\lambda_p = \Delta\lambda_u^{'}(UpDate, UpGrade) + \Delta\lambda_i^{'}(Internet) + \Delta\lambda_y^{'}(U_n)$-ով նշագրենք այդ ծրագրերի պատվիրատուների սպասվող շահույթի աստիճանը, ապա աստիճանների $\Delta\lambda_h/\Delta\lambda_p >> 1$ պայմանական հարաբերությունը կարող է

վկայել $\overline{H}(h)$ ուղղորդված ներգործության վեկտորի առկայության մասին՝ $\max F_c(\psi,\zeta,\mu)$ -ն ապահովելու համար:

• Դիտարկենք չլիցենզավորված ծրագրային համալիրների տարածման արգելման $\Delta\lambda_z$ աստիճանի և շահույթի կորստի $\Delta\lambda_k$ աստիճանի պայմանական հարաբերությունը: Եթե տեղի ունի $\Delta\lambda_z / \Delta\lambda_k << 1$ պայմանը, ապա դա վկայում է չլիցենզավորված ծրագրերում $IM_2$ բաղադրատարրերի գոյության մասին:

• $M_v$-ով նշագրենք այն համակարգիչների ենթադրելի թվաքանակը, որոնք ենթարկվել են որոշ վիրուսային գրոհի և ունեն $A_v$ հակավիրուսը, որը բնորոշվում է $F_v$ պայմանական ուժով, իսկ $M'_v$-ով նշագրենք այդ համակարգիչների այն թվաքանակը, որոնցում այդ համաճարակի հետևանքով տեղի է ունեցել $A_V$ հակավիրուսի փոխարինում «հավասարազոր» $A'_v$ - $F'_v$ $(F_v \approx F'_v)$ հակավիրուսով: Դիցուք $p_v$ ցուցիչը հավասար է $A'_v$ «համարժեք» հակավիրուսով $A_v$ հակավիրուսի փոխարինման սպասվող բնական հավանականությանը: Այդ դեպքում $A_v$-ն $A'_v$-ով փոխարինած համակարգիչների թվաքանակի տարամիտման աստիճանի և $p_v$- $\Delta\lambda_z$ $(M'_v/M_v, p_v)$>>1-ի պայմանական հարաբերության արժեքը կնշանակի՝

– կա վիրուս, որը ծանոթ է $A'_v$-ին և հայտնի չէ $A_v$-ին: Հնարավոր է, որ վիրուսային համաճարակը հրահրվել է $A'_v$-ով, կամ էլ դրա հետ համատեղելի *JP*-ով,

– եթե $A'_v$-ն *AVJP* է, ապա $A_v$-ն դրա հետ անհամատեղելի է, և *JPT*-ի ձևավորման համար տեղի է ունենում հակավիրուսի հարկադրական փոխարինում:

• $\Delta\lambda_n(L_z, L_m)$ -ով նշագրենք համակարգչի «կախման» ու «դանդաղեցման» և ՕՀ բեռնվածության ու սկզբնական բեռնման՝ *StartUp*- $\Delta\lambda_p(OC, StartUp)$ -ի աստիճանների հարաբերությունը: Եթե $\Delta\lambda_n(L_z, L_m) / \Delta\lambda_p(OC, StartUp) >> 1$, ապա դա նշանակում է, որ առկա են տեղեկույթի վերահսկման ու փոխանցման հետ կապված ծածուկ *JP* գործընթացներ:

Քննարկենք այնպիսի ծրագրային համալիրի դեպքը, որում հնարավոր է *JP*-ի գոյություն Կասպերսկու հակավիրուսի օրինակով: Այն ունի տվյալների բազա, որի չափողականությունը կարող է կազմել մի քանի գիգաբայթ, ինչն էական տարամիտում է այլ «հավասարազոր» հակավիրուսների համեմատությամբ՝ $\Delta\lambda'_h(R'_p, S'_t) / \Delta\lambda_h(R_p, S_t)$: Եթե հաշվի առնենք տվյալ հակավիրուսի «ազգային պատկանելությունը», ապա կարելի է հիմնավոր կերպով ենթադրել, որ այն ստիպված կլինի գործել թշնամական *Microsoft* ՕՀ-ում, որը անհամատեղելի *JP* է: Քանի որ ռուսները չունեն իրենց ՕՀ-ն, ապա «ռուսական» *JPT*-ի ստեղծման դեպքում այն կարող է ներկայացված լինել որպես միակը, բոլոր ֆունկցիաները հարկադրաբար իրացնել ինքնուրույնաբար և պաշտպանել համակարգչային միջավայրը իր իսկ ՕՀ-ից: Դիտարկվող դեպքում անհամատեղելի *JP*-ներից պաշտպանվելու համար անհրաժեշտություն է *VPS*-ը:

Դիտարկենք *VPS* հնարավոր դեպքերը:

Մի խումբ նորզելանդացի գիտնականներ, որոնք անհանգստացած էին վիրուսային համաճարակների բռնկումների օրինաչափությամբ, դրանք ուսումնասիրելու նպատակով ստեղծել են տվյալների փոխանակման մեծ փորձարարական ցանց՝ լիովին մեկուսացված ու պաշտպանված վիրուսների ներթափանցումից, և կանխապատրաստել են տեղեկութային հոսքերի ձևավորման գործընթացները: Չնայած գիտափորձի բազմաթիվ կրկնումներին՝ որոշ ժամանակ անց ցանցում հայտնվում էին վիրուսներ: Այդ երևույթը բացատրելու համար ստեղծվել է վիրուսների ինքնագոյացման տեսություն:

Հարևան երկրներից մեկի խստագույնս պաշտպանված և լիովին մեկուսացված ծրագրային համալիրում, որը նախատեսված էր ուրանի հարստացման պրոցեսները վերահսկելու և կարգավորելու համար, անհավանական ձևով ներթափանցել էր մի մասնագիտացված վիրուս և հսկայական վնաս էր հասցրել միջուկային պլանավորման ծրագրին:

*JP*-ից պաշտպանվելու համար անհրաժեշտ է, բայց՝ ոչ բավարար, ունենալ ծրագրային համալիրի սկզբնական կոդը, քանի որ դրա ընթացակարգային բաղադրատարրերը կարող են հատվածայնորեն ներգրված լինել $IM_1$-ի տարբեր մասերում, կրել բազմամուտք բնույթ, քողարկված լինել «օրինական» ծրագրային ընդհատումներով: Եթե ԾՄՀ-ն պարունակում է տասնյակ հազարավոր կոդեր, ապա ավելի հեշտ է այն նորից գրել, քան ստուգել և սկզբնական կոդից ջնջել բոլոր «լրտեսներին»: Ընդսմին հարկ է հաշվի առնել, որ հետագայում կանոնավոր *UpGrade*-ները կարող են վերականգնել *JP*-ն:

*JP*-տեխնոլոգիաների անտեսանելի «լուռ» պատերազմը թափ է առնում, քանի որ ներկայումս պետության կենսագործունեության և ազգային անվտանգության ապահովման գործընթացների կառավարման բոլոր կառույցներում կիրառվում է համակարգչային տեխնիկա: Վիրուսը, որն ունակ է «վերակողմնորոշելու» $IM_2$-ը, կարող է ցանկացած միջուկային զենքից վտանգավոր և արդյունավետ լինել, քանի որ ի վիճակի է կառավարելու $IM_2$-ի կանխապատրաստման, կողմնորոշման և առբերման միջոցները:

ՈՒստի նպատակահարմար է ստեղծել *JP*-տեխնոլոգիաների դպրոց, միավորել կարող ծրագրավորողների և նրանց ջանքերն ուղղորդել ազգային անվտանգության ապահովման հետ կապված կոնկրետ խնդիրների լուծմանը: Այդ դպրոցի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ ընդունակ երիտասարդների գտնելու և նրանց՝ որպես *JP*-տեխնոլոգ-ծրագրավորողների վերապատրաստելու հետ կապված ծախսերը մեծ չեն և միանգամայն ընդունելի են, մինչդեռ նման դպրոցը հետագայում կարող է դառնալ ՀՀ գոյությունը երաշխավորող կարևոր գործոններից մեկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Д. А. Козлов, А. А. Парандовский, А. К. Парандовский.* Энциклопедия компьютерных вирусов. М., 2004.
2. *А. В. Михайлов.* Компьютерные вирусы и борьба с ними. М., 2004.
3. *Կ. Ռ. Մուրադյան, Ա. Գ. Գևորգյան, Ա. Ա. Մուրադյան,* Պետության ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքների գնահատման, կանխատեսման և դրանց հակազդեցության մոդել: «ՀԲ», 2010, հմ. 3:
4. «Тайна компьютерных вирусов раскрыта». «dekanat.RU» (www.dekanat.ru/article.shtml?show=dF1VK3TpJxoF).


**ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

# КОМПЬЮТЕРНАЯ УГРОЗА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*К. Р. МУРАДЯН, полковник, Начальник Войск связи ВС РА—Начальник Управления связи и АСУ ВС РА, А. А. МУРАДЯН, подполковник, кандидат технических наук, начальник отделения программирования отдела АСУ*

РЕЗЮМЕ

Анализируется ситуация, в которой АСУ, предназначенная для управления процессами, связанными с обеспечением национальной безопасности, может перейти в такой режим функционирования, при котором нерегламентированно происходит частичная или полная потеря управления либо его перехват компьютером, возникает преднамеренная утечка информации, блокировка ряда жизненно важных функций и т. д. Предполагается, что причиной этого являются скрытые функциональные возможности, заложенные иностранными разработчиками в стандартную операционную среду, антивирус или какую-либо из прикладных программ, инсталлированных в компьютерную систему. Такие программные комплексы двойного предназначения названы янусными (двуликими), состоящими из видимой и скрытой частей, проанализированы их возможная структура и композиция. Обосновывается предположение о том, что они сами являются источниками вирусов, которые используются не только с целью нарушения и подавления нормального функционирования разнообразных процессов регулировки, взаимодействия и согласования, но и для передачи ценной информации. На основе данных рассуждений предлагается алгоритм выявления янусных программ.

**INFORMATION SECURITY**

# COMPUTER THREAT TO NATIONAL SECURITY

*K. R. MURADYAN, Colonel, Head of the Communications Troops of the RA Armed Forces—Head of the Directorate of the Communications and ACS of the RA Armed Forces, A. A. MURADYAN, Lieutenant-Colonel, PhD in Technical Sciences, Head of the Branch of Programming of the ACS Department*

SUMMARY

This article analyzes the situation in which the ACS, designed for controlling the processes related to ensuring national security, can switch to such a mode of operation in which a partial or complete loss of control or its takeover by computer occurs in an unregulated way, premeditated news leak, lockout of a set of vital functions, etc. take place. It is assumed that the reason for this is the latent features put by foreign developers into the standard operational environment, antivirus or any of the application programs installed in the computer system. Such dual-purpose software systems are called Janus (bifacial), composed of the visual and latent parts, and their possible structure and composition are analyzed. The article substantiates the assumption that they themselves serve as sources of viruses, which are applied not only for breaking and depressing the normal functioning of various control, coordination and coherence processes, but also for the transfer of valuable information. An algorithm for identifying Janus programs is proposed based on these arguments.

# ՊԻՆԴ ՎԱՌԵԼԻՔՈՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

*Ա. Հ. ԲԱՂԻՅԱՆ, ավագ լեյտենանտ, ավիացիոն սպառազինության խմբի ավագ ավիացիոն տեխնիկ*

Չկառավարվող ավիացիոն հրթիռները (ՉԱՀ) ժամանակակից մարտավարական և բանակային ավիացիայի հիմնական զինատեսակներից են: Դրանք ունեն պարզ կառուցվածք, շահագործման տեսակետից հարմար են և օժտված են վրագետնյա ու ստորգետնյա նշանակետերի խոցման մեծ արդյունավետությամբ: Դա ապահովվում է ՉԱՀ-ի մարտական մասի (ՄՄ) զգալի զանգվածով (կազմում է հրթիռի սկզբնական զանգվածի մոտ 50 %-ը կամ ավելի), հրթիռների հրաձգային դիպուկությամբ, ինչպես նաև ՉԱՀ-ի ծակող և ներթափանցող ազդեցությամբ, ինչը կարևոր է ամուր և ստորգետնյա նշանակետերի խոցման ժամանակ:

ՉԱՀ-երը (տես նկ. 1) հիմնականում բաղկացած են ՄՄ-ից և պինդ վառելիքով հրթիռային շարժիչից (ՊՎՀՇ):




Նկ. 1. ՉԱՀ-ի գծապատկերը.
1 – ՄՄ, 2 – պայթուցիկ նյութի լիցք, 3 – ՊՎՀՇ, 4 – կայունարար

Քանի որ ՊՎՀՇ-ն ՉԱՀ-ի բաղկացուցիչ մասն է, դրա նախագծումը պետք է անմիջականորեն կապված լինի հրթիռի նախագծման հետ: ՊՎՀՇ-ն (նկ. 2) ՉԱՀ-ում կազմում է պասիվ զանգված, հետևաբար հրթիռները նախագծելիս այն անհրաժեշտ է նվազարկել:




Նկ. 2. ՊՎՀՇ գծապատկերը.
1 – վառելիքի լիցք, 2 – խցիկ, 3 – ծայրափողակ, 4 – ցանց

ՊՎՀԾ հաշվարկման ժամանակ որոշվում են դրա երկրաչափական և զանգվածային պարամետրները, որոնք պետք է առավելագույնս բավարարեն հրթիռին ներկայացվող պահանջներին: Որոնելի պարամետրերի համախումբը որոշող հիմնական չափանիշը էներգազանգվածային չափանիշն է՝ $\overline{m}$ -ը,

$$\overline{m} = \frac{m_{\text{օգ}}}{m_0},$$

որտեղ՝ $m_{\text{օգ}}$-ը հրթիռի օգտակար զանգվածն է (ՄՄ զանգվածը), $m_0$-ն՝ հրթիռի սկզբնական զանգվածը՝ $m_0 = m_{\text{օգ}} + m_{\text{վ}} + m_{\text{շ}}$,

$m_{\text{վ}}$-ն՝ պինդ վառելիքի լիցքի զանգվածը,

$m_{\text{շ}}$-ն՝ շարժիչի զանգվածը:

Օգտվելով զանգվածային կատարելության գործակցի սահմանումից՝ $a = m_{\text{շ}}/m_{\text{վ}}$, և Ցիոլկովսկու հայտնի թվից՝ $\lambda = m_{\text{վ}}/(m_{\text{օգ}} + m_{\text{շ}})$, էներգազանգվածային չափանիշը կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով.

$$\overline{m} = \frac{1 - a\lambda}{1 + \lambda}: \quad (1)$$

ՊՎՀԾ օպտիմալ պարամետրերն ստացվում են $\overline{m}$ չափանիշի առավելագույն արժեքի դեպքում: Այդ արժեքին հնարավոր է հասնել երկու եղանակով. կա՛մ մեծացնելով ՄՄ զանգվածը, բայց անփոփոխ պահելով հրթիռի $m_0$ սկզբնական զանգվածը, կա՛մ փոքրացնելով հրթիռի սկզբնական զանգվածը, բայց անփոփոխ պահելով $m_{\text{օգ}}$-ը:

(1) բանաձևից հետևում է, որ $\overline{m}$ չափանիշի առավելագույն արժեքն ապահովվում է նվազագույն $a$-ի և $\lambda$-ի դեպքում: Դիտարկենք այդ մեծություններն ավելի հանգամանորեն:

Ցիոլկովսկու բանաձևից կարելի է գտնել՝

$$\lambda = \exp\left(\frac{v_{\text{լ}}}{v_{\text{ա}}}\right) - 1, \quad (2)$$

որտեղ՝ $v_{\text{լ}}$-ն այն լրացուցիչ արագությունն է, որը շարժիչը հաղորդում է հրթիռին (սովորաբար որոշվում է նախապես՝ հրթիռի նախագծման ժամանակ),

$v_{\text{ա}}$-ն ծայրափողակից գազերի արտահոսքի արդյունավետ արագությունն է, որը ծայրափողակի հաշվարկային բանելակարգում (երբ դրա կտրվածքում գազերի $p_a$ ճնշումը հավասար է արտաքին ճնշմանը) համապատասխանում է այդ կտրվածքում գազերի արտահոսքի արագությանը՝ $v_{\text{ա}} = v_a$, և արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$v_{\text{ա}} = \varphi_1 \sqrt{\frac{2k}{k-1}\,\chi\, f_2\left(1 - \overline{p}^{\frac{k-1}{k}}\right)}, \quad (3)$$

որտեղ՝ $\varphi_1$-ը ծայրափողակից գազերի արտահոսքի արագության կորուստների հաշվառման գործակիցն է,

$k$-ն՝ վառելիքի գազերի ադիաբատի ցուցիչը,

$\chi$-ն՝ ջերմային կորուստների հաշվառման գործակիցը,

$f_2$ -ը՝ վառելիքի բերված ուժը,

$\overline{p} = p_0 / p$-ն՝ արտաքին $p_0 = 1{,}013 \cdot 10^5$ Պա և խցիկի ներքին (աշխատանքային) $p$ ճնշումների հարաբերությունը:

Ջանգվածային կատարելության $\alpha$ գործակիցը արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$\alpha = \frac{C_{\text{խ}} + C_{\text{տ}}}{C_{\text{վ}}}: \quad (4)$$

$C_{\text{խ}}$ և $C_{\text{վ}}$ մեծություններն իրենց հերթին արտահայտվում են հետևյալ կերպ՝

$$C_{\text{խ}} = \frac{\pi}{8} \frac{k_\Sigma \, p \chi \rho_m}{\sigma_e \sqrt{n}} \frac{1-\eta}{\sqrt{2-\eta}}, \quad (5)$$

որտեղ՝ $k_\Sigma = k_{\text{խ}} k_\delta k_\gamma k_t$-ն խցիկի ներքին առանձնահատկությունները հաշվի առնող գումարային գործակիցն է ($k_{\text{խ}}$-ն արտահայտում է խցիկի և լիցքամասի երկարությունների հարաբերությունը, $k_\delta$ -ն՝ խցիկի պատերի տարահաստությունը, $k_\gamma$-ն՝ հաշվարկային ճնշման տատանումը խցիկում, $k_t$-ն՝ աշխատանքային ճնշման փոփոխությունը՝ կախված վառելիքի լիցքի ջերմաստիճանից),

$\varkappa$-ն Պոբեդոնոսցևի պարամետրն է, որն արտահայտում է այրվող մակերևույթի և այրման հետևանքով առաջացած նյութերի ելքի մակերեսների հարաբերությունը,

$\rho_m$-ը՝ խցիկի նյութի խտությունը,

$\eta$-ն՝ խցիկի ճակատային հատույթի՝ վառելիքով լցման գործակիցը,

$\sigma_e$-ն՝ խցիկի նյութի ամրության բնութագիրը,

$n$-ը՝ վառելիքի լիցքի քանակը,

$$C_{\text{վ}} = \frac{\pi}{16} \frac{\rho_{\text{վ}}}{\sqrt{n}} \varkappa \frac{\eta(1-\eta)}{\sqrt{2-\eta}}, \quad (6)$$

որտեղ $\rho_{\text{վ}}$-ն վառելիքի խտությունն է:

Գոյություն ունեցող ՉԱՀ-երի կառուցվածքի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ հրթիռի լրացուցիչ տարրերի (կայունարար, ցանց, հատակներ և այլն) բնութագրի $C_{\text{տ}}$ մեծությունը կարող է ընդունել երկու արժեք. կոշտ կայունարարի դեպքում՝ $C_{\text{տ}1} = 4 \cdot 10^3$ կգ/մ$^3$, և բացվող կայունարարի դեպքում՝ $C_{\text{տ}2} = 8 \cdot 10^3$ կգ/մ$^3$:

(5) և (6) բանաձևերն ստացվել են այն պայմանից, որ խցիկի և վառելիքի գլանաձև մասերի զանգվածն ուղիղ համեմատական է ՊՎՀԾ խցիկի տրամագծի խորանարդին՝ $D_{\text{խ}}^3$-ին:

(2)–(6) բանաձևերից հետևում է, որ էներգազանգվածային չափանիշը կախված է ՊՎՀԾ ներքին բալիստիկան բնորոշող հետևյալ պարամետրերից՝ $n$-ից (լիցքի քանակ), $\eta$-ից (խցիկի ճակատային հատույթի՝ վառելիքով լցման գործակից), $p_m=p_{m1}$-ից (խցիկի աշխատանքային ճնշում, ընդսմին ենթադրվում է, որ ՊՎՀԾ խցիկում ճնշումն առավելագույնն է), $\varkappa$-ից (Պոբեդոնոսցևի պարամետր):

Քանի որ խցիկի աշխատանքային $p_{m1}$ ճնշման և Պոբեդոնոսցևի $\varkappa$ պարամետրի միջև գոյություն ունի միարժեք կապ՝ տրված աղյուսակների կամ գրաֆիկների տեսքով (տես, օրինակ, աղյուսակը), ապա էներգազանգվածային չափանիշը կարելի է դիտել որպես երեք արգումենտից կախված ֆունկցիա՝ $\overline{m}=\overline{m}\,(n,\eta,\varkappa)$: Այդ ֆունկցիան իր առավելագույն արժեքն է ընդունում արգումենտների $n^*$, $\eta^*$, $\varkappa^*$ օպտիմալ արժեքների դեպքում:

Հայտնի է, որ խցիկի ճակատային հատույթի՝ վառելիքով լցման գործակցի սահմանային արժեքը՝ $\eta_{\text{u}}$-ն, կախված է ՊՎՀԾ վառելիքի լիցքի $n$ քանակից: Հետևաբար, ընտրելով ՊՎՀԾ վառելիքի լիցքի քանակը, կարելի է $n$ էներգազանգվածային գործակիցը բերել երկու արգումենտով ֆունկցիայի տեսքի՝ $\overline{m}=\overline{m}\,(\eta,\varkappa)$:

$\overline{m}=\overline{m}\,(\eta,\varkappa)$ ֆունկցիայի նկատմամբ կիրառելով մասնավոր ածանցում և դիֆերենցիալները հավասարեցնելով զրոյի՝ ստանում ենք երկու հավասարումներից կազմված համակարգ՝

$$\begin{cases} \dfrac{\partial \overline{m}}{\partial \eta}=0, \\ \dfrac{\partial \overline{m}}{\partial \varkappa}=0: \end{cases} \qquad (7)$$

Այդ համակարգի՝ հաշվողական մեթոդներով ստացվող լուծումներն արտահայտում են $\overline{m}$ ֆունկցիայի էքստրեմումները: Համեմատելով ֆունկցիայի այն արժեքները, որոնք համապատասխանում են ստացված լուծումներին և սահմանային դեպքերին, գտնում ենք էներգազանգվածային գործակցի առավելագույն արժեքը, որն էլ իր հերթին արտահայտում է $\eta^*$, $\varkappa^*$ օպտիմալ պարամետրները:

Դիտարկենք այս մեթոդիկայի գործնական կիրառման օրինակ: Աղ. 1-ում ներկայացված է խցիկի աշխատանքային $p_{\text{m}1}$ ճնշման և Պոբեդոնոսցևի $\varkappa$ պարամետրի կախումը որոշակի վառելիքի համար՝ $-60^{\circ}$C ջերմաստիճանում:

*Աղյուսակ*

| $\varkappa$ | 100 | 105 | 110 | 115 | 120 | 125 | 130 | 135 | 140 | 145 | 150 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| $p_{m1}$, ՄՊա | 9,18 | 9,19 | 9,19 | 9,21 | 9,23 | 9,26 | 9,29 | 9,33 | 9,38 | 9,43 | 9,50 |
| $\varkappa$ | 155 | 160 | 165 | 170 | 175 | 180 | 185 | 190 | 195 | 200 | 205 |
| $p_{m1}$, ՄՊա | 9,60 | 9,68 | 9,80 | 9,93 | 10,08 | 10,24 | 10,41 | 10,61 | 10,92 | 11,05 | 11,30 |
| $\varkappa$ | 210 | 215 | 220 | 225 | 230 | 235 | 240 | 245 | 250 | 255 | 260 |
| $p_{m1}$, ՄՊա | 11,55 | 11,82 | 12,13 | 12,46 | 12,84 | 13,26 | 13,72 | 14,23 | 14,80 | 15,41 | 16,07 |

Փոքրագույն քառակուսիների մեթոդով մոտարկենք խցիկի աշխատանքային $p_{m1}$ ճնշման կախումը Պոբեդոնոսցևի $\varkappa$ պարամետրից հետևյալ բանաձևով՝

$$p_{m1} = p_1 + a\left(\frac{\varkappa}{100}\right) + b\left(\frac{\varkappa}{100}\right)^2 + c\left(\frac{\varkappa}{100}\right)^3 \qquad (8)$$

և գտնենք (8) բանաձևով տրվող կախման գործակիցները՝ $p_1 = 6{,}4232 \cdot 10^6$, $\alpha = 6{,}5252 \cdot 10^6$, $b = -5{,}5142 \cdot 10^6$, $c = 1{,}6979 \cdot 10^6$: Մոտարկման եղանակով ստացված $p_{m1} = f(\varkappa)$ ֆունկցիայի տեսքը ներկայացված է նկ. 3-ում:




Նկ. 3. Խցիկի աշխատանքային $p_{m1}$ ճնշման կախումը Պոբեդոնոսցևի $\varkappa$ պարամետրից

Եթե ՊՎՀՇ վառելիքի լիցքի քանակն ընդունենք հավասար մեկի՝ n=1, ապա կստանանք խցիկի ճակատային հատույթի՝ վառելիքով լցման գործակցի սահմանային արժեքը՝ $\eta_u = 0{,}85$: Մյուս պարամետրերի համար ընդունենք, որ՝ $v_l = 500$ մ/վ, $\varphi_1 = 0{,}95$, $k = 1{,}25$, $\chi = 0{,}98$, $f_2 = 9{,}5 \cdot 10^5$ Ձ/կգ, $k_{\text{խ}} = 1{,}1$, $k_\delta = 1{,}1$,

$k_\gamma$=1,15, $k_t$=2,32, $\rho_ц$=1,6·10$^3$ կգ/մ$^3$, $\rho_m$=7,8·10$^3$ կգ/մ$^3$, $\sigma_e$= 1,2·10$^9$ Պա: Խնդրի լուծման ընթացքում ամրության $\sigma_e$ բնութագիրը և խցիկի նյութի $\rho_m$ խտությունը կարող են փոփոխվել:

Հիմնվելով ընտրված նախնական տվյալների և (8) բանաձևի վրա՝ էներգազանգվածային գործակիցը բերենք երկու արգումենտով ֆունկցիայի տեսքի՝ $\overline{m} = \overline{m}\,(\eta, \varkappa)$, և որոշենք $\eta$, $\varkappa$ պարամետրների օպտիմալ արժեքները:

Հաշվարկներով ստանում ենք, որ էներգազանգվածային $\overline{m}$ չափանիշի առավելագույն արժեքը կոշտ կայունարար ունեցող հրթիռի համար ($\overline{m}^*$=0,6517) համապատասխանում է $\varkappa$, $\eta$ պարամետրների հետևյալ արժեքներին՝ $\varkappa^*$=209,5495, $\eta^*$=0,7165 (նկ. 4, 5), իսկ բացվող կայունարարով հրթիռների ($\overline{m}^*$=0,5905) համար՝ $\varkappa^*$=231,9720, $\eta^*$=0,6800 (նկ. 6, 7):




Նկ. 4. $\overline{m} = \overline{m}\,(\eta, \varkappa)$ կախումը պինդ կայունարարով հրթիռի համար




Նկ. 5. $\overline{m} = \overline{m}\,(\eta, \varkappa)$ կախման պրոյեկցիան պինդ կայունարարով հրթիռի համար




Նկ. 6. $\overline{m} = \overline{m}\,(\eta, \varkappa)$ կախումը բացվող կայունարարով հրթիռի համար




Նկ. 7. $\overline{m} = \overline{m}\,(\eta, \varkappa)$ կախման պրոյեկցիան բացվող կայունարարով հրթիռի համար

Այսպիսով՝ ՊՎՀՇ անհայտ բնութագրերից կարելի է առանձնացնել երկու հիմնական մեծություն, որոնք են խցիկի ճակատային հատույթի՝ վառելիքով լցման գործակիցը և Պոբեդոնոսցևի պարամետրը: Հիմնվելով այդ երկու մեծությունների վրա՝ կարող ենք տվյալ մեթոդիկայով որոշակի հաշվարկումների միջոցով գտնել էներգազանգվածային գործակցի առավելագույն արժեքը, որին համապատասխանում են օպտիմալ $\eta^*$, $\varkappa^*$ պարամետրները:

Տվյալ մոտեցումը բավական հեշտացնում է դրված խնդրի լուծումը: Լուծման ընթացքը գրաֆիկների տեսքով ներկայացնելու դեպքում կարելի է գնահատել բոլոր հիմնական մեծությունների ազդեցությունը արդյունքների վրա: Այն դեպքերում, երբ օպտիմալ պարամետրների ճշգրիտ արժեքները հնարավոր չէ գործնականում իրացնել կամ դրանց իրացումը նպատակահարմար չէ, ստացված օպտիմալ արժեքները, համարվելով խնդրի լուծման սկզբնական տվյալներ, օգտագործվում են ցանկալի արդյունքին ավելի պարզ եղանակով հասնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Б. П. Александров, В. Г. Шарафанов.* Внутренняя баллистика ствольных систем и ракетные двигатели твердого топлива. М., 1997.

2. *А. А. Дорофеев.* Основы теории тепловых ракетных двигателей. М., 1999.

3. *Б. Т. Ерохин.* Теория внутрикамерных процессов и проектирование РДТТ. М., 1991.

4. *А. Е. Кувеко, Ф. П. Миропольский.* Внутренняя баллистика ствольных систем и ракетные двигатели твердого топлива. М., 1989.

5. *Ф. П. Миропольский, Р. С. Саркисян, О. Л. Вишняков, А. М. Попов.* Авиационные боеприпасы и их исследование. М., 1996.

6. *G. P. Sutton, O. Biblarz.* Rocket Propulsion Elements: an Introduction to Engineering of Rockets. Hoboken, New Jersey, 2010.

7. *J. L. Turner Martin.* Rocket and Spacecraft Propulsion: Principles, Practice and New Development. Chichester, UK, 2009.

**ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ**

# МЕТОДИКА ОПТИМИЗАЦИИ РАКЕТНЫХ ДВИГАТЕЛЕЙ ТВЕРДОГО ТОПЛИВА

*А. А. БАГИЯН, старший лейтенант, старший авиационный техник группы авиационного вооружения*

РЕЗЮМЕ

Вследствие простоты конструкции и эксплуатации, высокой эффективности поражения малоразмерных наземных целей и низкой стоимости неуправляемые авиационные ракеты (НАР) являются одним из основных видов оружия современной фронтовой и армейской авиации.

Основными частями НАР являются боевая часть (БЧ) и ракетный двигатель твёрдого топлива (РДТТ), причем РДТТ считается пассивной массой. В связи с этим при разработке ракет массу РДТТ необходимо минимизировать. Для оптимизации конструктивных параметров НАР используют энергомассовый критерий. В общем случае этот критерий представляется в виде функции от многих неизвестных характеристик НАР и её РДТТ, а также от большого числа исходных величин или заданных параметров. Из числа неизвестных характеристик РДТТ можно выделить две основные — параметр Победоносцева и коэффициент заполнения торцевого сечения камеры топливом. Эти параметры в определенных расчетных случаях полностью определяют энергомассовый критерий,

нахождение максимального значения которого становится простой задачей определения экстремумов функции двух аргументов и их сравнения с граничными условиями.

Данный подход значительно упрощает методику решения задачи. Представление искомых параметров в виде семейства графических зависимостей позволяет наглядно оценить влияние всех основных величин. Если точные значения оптимальных характеристик не могут быть реализованы или их реализация не целесообразна, то задача решается на основе полученных оптимальных значений, которые в данном случае выступают в качестве исходных данных. Тем самым, упрощается процесс проектирования ракеты в целом.

**MILITARY ENGINEERING**

## THE METHOD OF OPTIMIZING THE SOLID PROPELLANT ROCKET ENGINES

*A. H. BAGHIYAN, Senior Lieutenant, Senior Aircraft Technician of Aircraft Armament*

SUMMARY

The unguided aircraft rockets (UAR) are one of the basic types of weapons of the modern frontline and army aviation due to the simplicity of construction and use, high efficiency of destruction of small surface targets and low cost.

The main parts of the UAR are warhead (WH) and the solid propellant rocket engine (SPRE), the latter being a dead mass in the UAR. In these terms, the mass of the SPRE must be minimized while designing the rockets. The energy-mass criterion is used to optimize the design parameters of the UAR. This criterion is generally represented as a function of many unknown characteristics of the UAR and its SPRE, as well as a large number of basic values or set-up parameters. Two main characteristics of the SPRE—Pobedonostsev's parameter and the propellant filling factor of butt-end section of the chamber—can be singled out among its unknown ones. These parameters can completely determine the energy-mass criterion in certain calculated cases and finding of its maximum value becomes a simple task for defining function extrema of two arguments and comparing them with the boundary conditions.

This approach greatly simplifies the method of solving the problem. Displaying the required parameters as a family of graphical dependencies makes it possible to clearly evaluate the influence of all the key ratios. In the case when the exact values of optimum parameters cannot be implemented or their implementation is impractical, the solution to the problem is based on the obtained optimum values which serve as basic data. Hence, this method of solving the problem simplifies the process of designing the rocket in the whole.

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Ա. Ս. ՍԵԴՐԱԿՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու,*
*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դոցենտ*

Հայաստանի Երրորդ Հանրապետությունն ստեղծվեց բարդ աշխարհաքաղաքական ժամանակաշրջանում: ԽՍՀՄ փլուզումը, որով նշանավորվեց Սառը պատերազմի ավարտը[1], առաջ բերեց գերիշխող աշխարհաքաղաքական տեսությունների հիմնարար դրույթների վերանայման անհրաժեշտություն՝ պայմանավորված աշխարհի երկբևեռ մոդելից միաբևեռին անցմամբ: Այդ ֆոնի վրա նախկին միութենական հանրապետությունները ձեռնամուխ եղան իրենց անկախ պետականության հաստատմանը, ինչը առաջ բերեց նոր մարտահրավերներ: Դրանք ծագել էին նաև Հայաստանի և հայության համար: Թերևս անհրաժեշտ է դրանցից առանձնացնել երկուսը՝ անկախ պետականության ձևավորումը և Արցախյան ազատամարտը հաղթական ավարտին հասցնելը:

Այդ մարտահրավերները սերտորեն փոխկապված էին և ուղղակիորեն առնչվում էին ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրին: Դրանց հաղթահարումը կենսական անհրաժեշտություն էր, քանի որ նպատակը ցեղասպանության և պետականության կորստի կրկնության բացառումն էր[2]:

---

[1] Որոշ քաղաքագետներ ու քաղաքական գործիչներ Սառը պատերազմի ավարտ համարում են «երկաթե վարագույրի» վերացումը, երբ 1989 թվականի նոյեմբերի 9-ին փլուզվեց Բեռլինյան պատը (տես *Samuel P. Huntington*. The Clash of Civilizations? «Foreign Affairs», Summer 1993, Vol. 72, N 3), կամ Մալթյան հանդիպման օրը, երբ 1989 թվականի դեկտեմբերի 3-ին ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի Նախագահներ Ջ. Բուշ Ավագն ու Մ. Գորբաչևը պայմանավորվեցին ավելի սերտացնել ԱՄՆ – ԽՍՀՄ համագործակցությունը (տես «1989: Malta summit ends Cold War». «BBC News» (http://news.bbc.co.uk/onthisday/hi/dates/stories/december/3/newsid_4119000/4119950.stm)): Կա նաև կարծիք, որ Սառը պատերազմի ավարտ պետք է համարել 1991 թվականի դեկտեմբերի 26-ը, երբ մոսկովյան Կրեմլում իջեցվեց կարմիր դրոշը՝ ազդարարելով Խորհրդային Միության փլուզումը (տես *Henry Kissinger*. Diplomacy. New York, 1994, PP. 804 – 805; *Zbigniew Brzezinski*. Out of Control: Global Turmoil on the Eve of the 21st Century. New York, 1993, P. 156; *Zbigniew Brzezinski* and *Brent Scowcroft*. America and the World: Conversations on the Future of American Foreign Policy (moderated by David Ignatius). New York, 2008, PP. 7 – 8):

[2] Տես ««Никогда опять» – императив безопасности еврейского и армянского народов: интервью Гайка Котанджяна». ИА «REGNUM», 27.05.2011 (http://www.regnum.ru/news/fd-abroad/polit/1409694.html):

Այսօր՝ գրեթե երկու տասնամյակ անց, կարելի է փաստել, որ այդ պատմական փուլում նշված մարտահրավերներն սկզբունքորեն հաղթահարվեցին: Սակայն հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրի երաշխավորված լուծման համար, մեր կարծիքով, այսօր անհրաժեշտ են որակապես նոր և համակարգված մոտեցումներ: Կարիք է զգացվում ձևավորելու ազգային անվտանգության ապահովման ժամանակակից համակարգ, որի առանցքային ու համակարգաստեղծ բաղադրիչներից մեկը իրավականն է: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգի իրավական բաղադրիչի (իրավական հիմքի) ստեղծման ուղղությամբ կատարվել է զգալի աշխատանք, և արձանագրված ձեռքբերումները հիմք են տալիս պնդելու, որ առկա են այդ բաղադրիչի զարգացման և, դրանով հանդերձ, ազգային անվտանգության իրավական ապահովման ժամանակակից համակարգի ձևավորման բոլոր նախադրյալները:

Անկախ պետականության կայացման առաջին քայլով՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի[3] ընդունմամբ, կատարվեց ազգային անվտանգության ապահովման հիմքը կազմող հիմնարար արժեքների իրավական ամրագրումը: Պատմական-հայեցակարգային նշանակություն ունեցող այդ փաստաթուղթը կարելի է համարել նաև ազգային անվտանգության ապահովման իրավական հիմքի առաջին տարրը, որի ներածականում (պրեամբուլա) հռչակվեց «անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»: Այդ փաստաթղթով ամրագրվեց, որ «Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է… սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ» (կետ 5): Հռչակվեց նաև, որ Հայաստանը «վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների… հետ» (կետ 6), ինչպես նաև «ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից» (կետ 4):

Հույժ կարևոր է թվում նաև Հռչակագրի 10-րդ կետում ամրագրված այն դրույթը, որ «Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ»: Փաստորեն, ներածականի և նշված չորս կետերի միջոցով, հռչակվեց ազգային անվտանգության այն հինգ հիմնարար արժեքները[*], որոնք հետագայում ամրագրվեցին ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմա-

[3] Տես ՀՀ Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսի 23-ի «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը («ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1990, հմ. 16):

[*] Խոսքը վերաբերում է՝ անկախությանը, պաշտպանվածությանը, խաղաղությանն ու համագործակցությանը, հայապահպանությանը, բարեկեցությանը:

նադրությամբ[4], այնպես էլ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ[5]:

Սահմանադրության ընդունմամբ կատարվեց ազգային անվտանգության իրավական ապահովման երկրորդ քայլը, որը նախորդի համեմատությամբ ուներ ավելի հիմնարար ու հեռանկարային բնույթ: Այն հիմք դարձավ ազգային անվտանգության առանցքային բաղադրիչների՝ սահմանադրական, ռազմական, տնտեսական անվտանգության ապահովման օրենսդրական համակարգը ձևավորելու համար և հնարավորություն տվեց դրանց ռազմավարական ապահովման ուղղությամբ մշակելու անհրաժեշտ մարտավարական քայլեր: Սահմանադրությունն ընդունվեց՝ հիմք ունենալով Հռչակագրում «հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը», ինչպես նաև «ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը»[6]: Ավելին. Սահմանադրությունը (1995 թ.), Հայաստանը հռչակելով որպես ինքնիշխան պետություն *(անկախություն),* որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին, և հանրապետության պաշտպանությունը վերապահելով նրա քաղաքացիներին *(պաշտպանվածություն)*[7], նպատակ էր հետապնդում.

1. ապահովելու երկրում *խաղաղություն* և երաշխավորելու *համագործակցությունը* այլ ազգերի ու պետությունների հետ (հոդվածներ 4, 6, 9, 47, 49, 55, 81, 89),

2. ձևավորելու ամուր իրավական հիմք *հայապահպանության* համար (հոդվածներ 11–13, 36),

3. ստեղծելու նախադրյալներ հասարակության *բարեկեցությունը* երաշխավորելու համար (հոդվածներ 1, 2, 4, 8, 10, գլուխ 2, հոդվածներ 55, 75, 89, 91):

Ինչպես երևում է, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ հռչակված հիմնարար արժեքները համահունչ են նշված նպատակներին[8]:

Պետք է արձանագրել, որ այդ նպատակները պահպանվել են նաև Սահմանադրության մեջ 2005 թվականին կատարված փոփոխություններից հետո: Ընդսմին այդ արժեքների պահպանման համար ստեղծվել են լրացուցիչ երաշ-

[4] Տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)», ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին, փոփոխությունները կատարվել են 2005 թվականի նոյեմբերի 27-ին («ՀՀ պաշտոնական տեղեկագիր» («ՀՀՊՏ»), հատուկ թողարկում, 2005):

[5] Տես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 2-ի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀՊՏ», 2007, հմ. 11(535)):

[6] «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)», նախաբան:

[7] Տես «ՀՀ Սահմանադրություն» (ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին), հոդ. 1, 2 և 47: «ARLIS» (www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1):

[8] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

խիքներ: Այսպես. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով) 8.2 հոդվածի համաձայն՝ «զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը»: Այս դրույթով հստակ կերպով ամրագրվեց պետության *պաշտպանվածության* սահմանադրահիրավական հիմքը: Եվ քանի որ յուրաքանչյուր պետության ինքնիշխանության առանցքային երաշխիքներից մեկը բանակն է, ապա ավելի ակնառու է դառնում նշված դրույթի կարևորությունը պետության *անկախության* ապահովման գործում:

Անառարկելի է հիմնարար արժեքների փաստացի պաշտպանության կարևորությունը, սակայն նվազ կարևոր չէ, թե դրանք ի՛նչ մակարդակի իրավաբանական ուժով են ամրագրվում: Մեր պետությունում դրանք ամրագրված են բարձրագույն իրավաբանական ուժով և գտնվում են «սահմանադրական հովանոցի» ներքո: Ազգային անվտանգության ապահովման սահմանադրահիրավական երաշխիքների ստեղծմամբ ամուր հիմք է դրվում նաև այդ ոլորտի ներպետական օրենսդրական ու ենթաօրենսդրական կարգավորման համար:

Ինչպես հայտնի է, Սահմանադրությունը «երկրի օրենսդրության ստեղծվելիք համակարգի հիմքն է»[9]: Ըստ այդմ՝ Սահմանադրության ընդունումը պայմանավորեց ազգային անվտանգության ոլորտում համապատասխան օրենսդրության ստեղծումը: Ընդունվեցին «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» (1996 թ.), «Պաշտպանության մասին» (1997 թ.), «Ռազմական դրության մասին» (1997 թ., 2006 թվականին՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»), «Ոստիկանության զորքերի մասին» (1997 թ.), «Զինապարտության մասին» (1998 թ.), «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» (1998 թ.), «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» (1999 թ.), «Ոստիկանության մասին» (2001 թ.), «Ոստիկանությունում ծառայության մասին» (2002 թ.), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (2002 թ.), «Քաղաքացիական պաշտպանության մասին» (2002 թ.), «Այլընտրանքային ծառայության մասին» (2003 թ.), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (2003 թ.), «Քաղաքացիական պաշտպանության զորքերի մասին» (2004 թ.), «Ռազմական ոստիկանության մասին» (2006 թ.), «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» (2007 թ.) Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կայազորային և պահակային ծառայության» և «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության» կանոնագրքերը (1996 թ.)[10]: Ազգային անվտանգության ապահովման առումով իրենց ուրույն

[9] *Ա. Ս. Նազարյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

[10] Տես «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-94 օրենքը («ՀՀ Ազգային ժողովի տեղեկագիր» («ՀՀԱԺՏ»), 1996, հմ. 23-24), «Պաշտպանության

տեղն ունեն այնպիսի փաստաթղթեր*, ինչպիսիք են «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը»[11], ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը»[12]:

Սակայն հատկանշական է, որ վերը թվարկված օրենքներից յուրաքանչյուրը պարունակում է ազգային անվտանգության ապահովմանն առնչվող ընդամենը մեկ կամ երկու-երեք նորմեր: Նման քանակով և ոչ համակարգված՝ տար-

մասին» ՀՀ 1997 թ. մայիսի 29-ի հմ. ՀՕ-120 օրենքը («ՀՀՊՏ», 1997, հմ. 15), «Ռազմական դրության մասին» ՀՀ 1997 թ. մայիսի 29-ի հմ. ՀՕ-121 օրենքը («ՀՀՊՏ», 1997, հմ. 15), «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ 2006 թ. դեկտեմբերի 5-ի հմ. ՀՕ-258-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2007, հմ. 4(528)), «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ 1997 թ. նոյեմբերի 17-ի հմ. ՀՕ-163 օրենքը («ՀՀՊՏ», 1997, հմ. 29), «Զինապարտության մասին» ՀՀ 1998 թ. սեպտեմբերի 16-ի հմ. ՀՕ-250 օրենքը («ՀՀՊՏ», 1998, հմ. 26(59)), «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ 1998 թ. դեկտեմբերի 2-ի հմ. ՀՕ-265 օրենքը («ՀՀՊՏ», 1998, հմ. 33(66)), «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ 1999 թ. մարտի 3-ի հմ. ՀՕ-289 օրենքը («ՀՀՊՏ», 1999, հմ. 8(74)), «Ոստիկանության մասին» ՀՀ 2001 թ. ապրիլի 16-ի հմ. ՀՕ-177 օրենքը («ՀՀՊՏ», 2001, հմ. 15(147)), «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ 2002 թ. հուլիսի 3-ի հմ. ՀՕ-401-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2002, հմ. 32(207)), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ 2002 թ. հուլիսի 3-ի հմ. ՀՕ-380-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2002, հմ. 26(201)), «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ 2002 թ. մարտի 5-ի հմ. ՀՕ-309 օրենքը («ՀՀՊՏ», 2002, հմ. 12(187)), «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ 2003 թ. դեկտեմբերի 17-ի հմ. ՀՕ-6-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2004, հմ. 6(305)), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ 2003 թ. ապրիլի 11-ի հմ. ՀՕ-532-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2003, հմ. 28(263)), «Քաղաքացիական պաշտպանության զորքերի մասին» ՀՀ 2004 թ. մարտի 31-ի հմ. ՀՕ-60-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2004, հմ. 25(324)), «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ 2006 թ. դեկտեմբերի 21-ի հմ. ՀՕ-13-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2007, հմ. 6(530)), «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ 2007 թ. նոյեմբերի 28-ի հմ. ՀՕ-286-Ն օրենքը («ՀՀՊՏ», 2007, հմ. 66(590)), *նաև* «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կայազորային և պահակային ծառայության կանոնագիրք հաստատելու մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-98 օրենքը («ՀՀՊՏ», 1997, հմ. 1), «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենքը («ՀՀՊՏ», 1997, հմ. 1):

* Ազգային անվտանգության ապահովմանը վերաբերող հայեցակարգային-ռազմավարական փաստաթղթերը, թեև հաստատվել են Նախագահի հրամանագրերով, գերազանցապես քաղաքական բնույթի են (տես «Հարցազրույց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, Ազգային անվտանգության ռազմավարության նախագծի աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանի հետ»: «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 5–6, «ՀՀ ռազմական դոկտրինի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի նախագիծը» զեկուցումը»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ 4, *Հ. Ս. Քորանջյան*, Հայ հասարակության անվտանգ և կայուն զարգացման ռազմավարության մշակման միջգերատեսչական գործընթացի մասին: «ՀԲ», 2007, հմ. 2–3, նաև *А. Б. Логунов*. Региональная и национальная безопасность. Учебное пособие. М., 2009, с. 48):

[11] Տես ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը («ՀՀՊՏ», 2008, հմ. 1(591)):

[12] Տես ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը («ՀՀՊՏ», 2009, հմ. 35(701)):

բեր տեղերում զետեղված, նորմերի միջոցով գործնականում հնարավոր չէ ստեղծել Սահմանադրությամբ սահմանված հիմունքներից ածանցված ամուր օրենսդրական հիմքեր և ենթաօրենսդրական մակարդակում արդյունավետ կերպով կարգավորել ազգային անվտանգության հետ կապված հարաբերությունները:

Ընդհանրապես իրավագիտության մեջ գերակշռում է այն տեսակետը, որ իրավահարաբերություններն արդյունավետ կերպով կարգավորվում են ուղղաձիգով՝ վերևից ներքև[13], «սահմանադրություն – օրենք – ենթաօրենսդրական ակտ» շղթայով: Այլ կերպ ասած՝ ամենավերևում գտնվող իրավական ակտը՝ սահմանադրությունը, սահմանում է իրավահարաբերությունների կարգավորման իրավական հիմունքները, դրանից մեկ աստիճան ցածր գտնվող իրավական ակտերը՝ օրենքները, մանրամասնելով այդ հիմունքները, կարգավորում են իրավահարաբերությունները կոնկրետ ոլորտներում և ածանցյալ հիմքեր են ստեղծում հաջորդ մակարդակում այդ հարաբերությունների կարգավորման համար, իսկ ստորին հարթակում գտնվող ակտերը՝ ենթաօրենսդրական ակտերը, մանրամասն և դինամիկ կարգավորման են ենթարկում կոնկրետ հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրավական ապահովման համատեքստում ստանում ենք հետևյալ խճճված պատկերը. Սահմանադրությունն ամրագրում է ազգային անվտանգության իրավական հիմունքները, որոշ օրենքներ պարունակում են ազգային անվտանգությանն առնչվող ընդամենը երկու-երեք նորմեր, որոնք գործում են ոչ միասնական ձևով, իսկ ենթաօրենսդրական՝ իրավական-քաղաքական, ակտերով փորձ է արվում կարգավորման ենթարկել նման հարաբերությունները[14]: Նշված օրենքների առկա բովանդակության պարագայում չի երաշխավորվում կոնկրետ օրենսդրական նորմերի համակարգվածությունը, իսկ ոչ համակարգված հիմքի վրա խարսխվող ենթաօրենսդրական (իրավական-քաղաքական) կարգավորմամբ չի ապահովվում պահանջվող խնդիրների երաշխավորված լուծումը: Հետևաբար նման պայմաններում արդյունավետ չի գործում «սահմանադրություն–օրենք–ենթաօրենսդրական ակտ» շղթան:

Սահմանադրության հիմնական դրույթների վերլուծությունը հնարավորություն է տալիս վստահորեն պնդելու, որ սահմանադրահիրավական հիմունքները բավարար են «անհատ–հասարակություն–պետություն» շղթայով անվտանգության խնդիրները իրավական առումով լուծելու համար: Բավարար են նաև քաղաքական-ռազմավարական ապահովման հնարավորությունը սահմանող հայեցակարգային դրույթները: Մինչդեռ թերի են բարձրագույն սահմանադրահիրավական և ստորին ռազմավարական-հայեցակարգային դրույթների միջև

[13] Իրավահարաբերությունների կարգավորման արդյունավետության մասին տես *Ա. Գ. Վաղարշյան*, Պետության և իրավունքի տեսություն – 2: Դասախոսություններ: Ե., 2011, էջ 88–107, 250–267, «Сравнительное конституционное право». Учебное пособие. Отв. ред. *В. Е. Чиркин*. М., 2002, сс. 18 – 37; *В. С. Нерсесянц*. Философия права. Учебник для вузов, 2-е изд., перераб. и доп. М., 2009, сс. 30 – 57:

[14] Իրավական ակտերի ենթակարգության մասին տես «Իրավական ակտերի մասին» ՀՀ 2002 թ. ապրիլի 3-ի հմ. ՀՕ-320 օրենքը, հոդ. 4 («ՀՀՊՏ», 2002, հմ. 15(190)):

գտնվող օրենսդրական դրույթները: Վերը թվարկված օրենքները, ինչպես նշվեց, պարունակում են երկու-երեք նորմեր, որոնք ուղղակիորեն վերաբերում են ազգային անվտանգության ապահովմանը: Նման պարագայում դժվար է ապահովել կարգավորման լիակատարություն և համակարգվածություն:

Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր ազգային անվտանգության ապահովման իրավական (օրենսդրական, ենթաօրենսդրական) պրոբլեմները լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն մարտահրավերներն ու իրողությունները, որոնք առկա են թե՛ մեր հանրապետությունում, թե՛ տարածաշրջանում, թե՛ ընդհանրապես աշխարհում և կարող են ազդել մեր անվտանգության համակարգի վրա (օրինակ՝ համընդհանրացում, կրոնական բախումներ և միջէթնիկական հուզումների անընդմեջ զարգացումներ, աշխարհաքաղաքական առանցքի՝ Ատլանտիկ օվկիանոսից դեպի Խաղաղ օվկիանոս տեղաշարժում[15] և այլն): Ընդ որում, հարկավոր է առանձնացնել այն հարցերը, որոնք պարտադիր կերպով պետք է դրվեն ազգային անվտանգության ապահովման նոր իրավական մեխանիզմների մշակման հիմքում.

1) ինչպիսի՞ն է ազգային անվտանգության ապահովման իրական իրավական հիմքը, և ի՞նչ իրավական մեխանիզմներ են ամրագրված սահմանադրական, օրենսդրական և ենթաօրենսդրական նորմերով,

2) ինչպե՞ս է ապահովվում անհատի, հասարակության ու պետության անվտանգությունը «սահմանադրություն–օրենք–ենթաօրենսդրական ակտ» շղթայի համատեքստում,

3) որքա՞ն արդյունավետ են գործում և համագործակցում ազգային անվտանգության ապահովման սուբյեկտները* (անվտանգության ապահովման իրավունքի ու պարտականության կրողները) ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին և արտաքին սպառնալիքների կանխման ու հետևանքների վերացման համապետական ասպարեզում,

4) ի՞նչ օրենք կամ օրենքներ են անհրաժեշտ ազգային անվտանգության ապահովման միասնական իրավական համակարգի ձևավորման և «սահմանա-

[15] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Henry Kissinger.* The Intellectual Underpinnings of the Trilateral Partnership in the 21st Century. «Seeking Opportunities in Crisis: Trilateral Cooperation in Meeting Global Challenges», 2009, P. 98 (http://www.trilateral.org/download/doc/seeking_opportunities2.pdf); «Brzezinski talks human survival». «Yale Daily News», 10 April 2009 (http://www.yaledailynews.com/news/2009/apr/10/brzezinski-talks-human-survival); *Fareed Zakaria.* The Post-American World. New York, 2009, P. 2; ինչպես նաև «Asia-Pacific Security». «Center for a New American Security» (http://www.cnas.org/asia):

* Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով) ընդհանուր վերլուծությամբ կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության ապահովման սուբյեկտներն են Հանրապետության Նախագահը (հոդվածներ 49, 53.1, 55, 56, 56.1, 74.1), Ազգային ժողովը (հոդվածներ 62, 63, 66, 72, 74–77, 80, 81, 83.1, 84), Կառավարությունը (հոդվածներ 85–90, 109), այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները (հոդվածներ 83.1–83.4, 91–96, 100–108, 110): Անհրաժեշտ է նկատել, որ ազգային անվտանգության ապահովման սուբյեկտների շարքն է դասվում նաև ժողովուրդը (հոդված 1, 2, 114), որի կամքն ու դերակատարումը պետք է լինեն անառարկելիորեն կարևոր մյուս սուբյեկտների համար:

դրություն – օրենք – ենթաօրենսդրական ակտ» շղթայի մեջ սահմանադրականի և ենթաօրենսդրականի միջև եղած օրենսդրական կապի ամրապնդման համար:

Համախմբելով առաջին երեք հարցերը և փորձելով դրանց պատասխանները գտնել միասնության մեջ՝ կարող ենք պնդել, որ, եթե սահմանադրական դիրքերից ազգային անվտանգությունն ապահովված է գրեթե լիովին, իսկ ենթաօրենսդրական (քաղաքական-ռազմավարական) տեսանկյունից՝ բավականաչափ, ապա նույնը չի կարելի ասել օրենսդրական ապահովման, մասնավորապես՝ օրենքի կամ օրենքների մակարդակով ազգային անվտանգության համապարփակ իրավական ապահովման առումով: Ավելին. չկա միասնական օրենսդրական համակարգ, որն ի վիճակի լիներ արդյունավետ կերպով երաշխավորելու ազգային անվտանգության ապահովման սուբյեկտների, այդ թվում՝ անհատի, հասարակության ու պետության, իրավունքների և պարտականությունների իրականացումը:

Ինչ վերաբերում է չորրորդ հարցին, ապա գոյություն ունեցող իրավական իրականությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ անհրաժեշտ է համակարգել ու հավասարակշռել ազգային անվտանգության ապահովման իրավական հիմքը: Այս առումով, եթե փորձենք պատասխանել այն հարցին, թե որն է այսօր առաջնային քայլը, կարելի է ասել, որ ըստ միասնականության ապահովման անհրաժեշտության՝ առաջնայինը տվյալ բնագավառում իրավական հիմքի համակարգումն է:

Գործող իրավական ակտերի համակարգի վերլուծությամբ կարելի է երևան հանել այն բացերը, որոնք առկա են ազգային անվտանգության օրենսդրական ապահովման ոլորտում, և որոշել այդ համակարգի զարգացման ուղղությունները: Ներպետական օրենսդրության հետագա կատարելագործումը պետք է կատարվի, ինչպես արդեն նշվեց, ազգային անվտանգության բոլոր ոլորտների իրավական կարգավորումն ապահովող փոխհամաձայնեցված և ամբողջական համակարգի ձևավորմամբ, և դրա հիմքում պետք է դրվի «սահմանադրություն–օրենք–ենթաօրենսդրական ակտ» շղթան:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրավական ապահովման գլխավոր բացերից մեկն այն է, որ չկա միասնական հիմքային օրենք, ինչը թուլացնում է վերը նշված շղթայի ամրությունը, խոչընդոտում է ազգային անվտանգության ոլորտում իրավահարաբերությունների ամբողջական կարգավորման արդյունավետ ապահովմանը: Այդ տեսակետից նպատակահարմար է մշակել և ընդունել *«Ազգային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք*, որը հիմնված լինի Սահմանադրության վրա և իր հերթին հիմքային բնույթ ունենա ճյուղային մյուս օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի (այդ թվում՝ իրավական-քաղաքական փաստաթղթերի) նկատմամբ: Դրա հետ մեկտեղ, օրենքը կունենա նաև կողմնորոշիչ նշանակություն, այսինքն՝ կամրագրի այն սահմանները և ուղղությունները, որոնք ենթակա են կարգավորման այդ ճյուղային օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

Օրենքի նախագիծը մշակելիս, անշուշտ, արդյունավետ կլինի միջազգային փորձի ուսումնասիրությունը*:

Առաջարկվող օրենքի ընդունմամբ կլուծվեն հետևյալ կարևոր խնդիրները.

– օրենսդիր և ներկայացուցչական բարձրագույն մարմնի (խորհրդարանի) ընդունած իրավական ակտն առավելապես կարտահայտի ժողովրդի՝ որպես ազգային անվտանգության ապահովման առաջնային սուբյեկտի կամքը,

– կապահովվի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այն պահանջը, որ բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով են սահմանվում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև անձանց պարտականություններն ու իրավունքները (լիազորությունները),

– միասնական օրենքը, պարունակելով ազգային անվտանգության հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմեր, կերաշխավորի ազգային անվտանգության ապահովման համակարգի իրավական բաղադրիչի միասնականությունը, ինչը հնարավորություն կտա ձևավորելու ամբողջական, ներդաշնակ և անընդհատ զարգացող ու կատարելագործվող համակարգ:

Մեր կարծիքով՝ «Ազգային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո միայն հնարավոր կլինի խոսել լրացուցիչ օրենքներ ընդունելու, ճյուղային և այլ օրենքներում անհրաժեշտ փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին:

Քննարկվող ոլորտում իրավական համակարգի զարգացումն ապահովելու դեպքում կստեղծվեն բոլոր նախապայմանները *Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության իրավունքի* ձևավորման համար: Տվյալ նոր իրավունքը՝ որպես համալիր իրավունք, իր մեջ կներառի այն բոլոր նորմերը, որոնք կարգավորում են ազգային անվտանգության հետ կապված հասարակական հարաբերությունները, կնպաստի անհրաժեշտ համակարգի կատարելագործմանը և որպես արդյունք՝ հաստատուն իրավական հիմքերի վրա կդնի Հայաստանի Երրորդ Հանրապետության ազգային անվտանգության ապահովումը:

* Նման օրենքի կիրարկման փորձ ունեն, օրինակ, Միացյալ Նահանգները, Հնդկաստանը, Հարավային Կորեան, Ղազախստանը, մասամբ՝ Ռուսաստանը:

**ВОЕННОЕ ПРАВО**

# ПЕРСПЕКТИВЫ ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*А. С. СЕДРАКЯН, кандидат юридических наук, доцент Международного научно-образовательного центра НАН РА*

РЕЗЮМЕ

Согласно доминирующей в правоведении концепции, правоотношения надлежащим образом регулируются по вертикали — сверху вниз, по цепи «конституция — закон — подзаконный акт». Обладающий высшей юридической силой правовой акт — Конституция определяет основы правового регулирования общественных отношений, стоящие уровнем ниже правовые акты — законы, детализируя эти основы, регулируют правовые отношения в конкретных отраслях, а подзаконные акты — на базе созданных законами производных основ более детально и динамично регулируют конкретные отношения.

Если правовая составляющая обеспечения национальной безопасности РА на конституционном уровне в целом сформирована, а на подзаконном уровне сформирована в достаточной степени (по части содержания концептуальных положений, определяющих возможность политико-стратегического обеспечения), то задача всеобъемлющего правового обеспечения национальной безопасности на уровне среднего звена — закона или законов — остается нерешенной. Отдельные нормы, содержащиеся в различных законах, не в состоянии сформировать единой и целостной законодательной системы, эффективно гарантирующей осуществление прав и обязанностей субъектами обеспечения национальной безопасности, в том числе — личностью, обществом и государством.

В качестве решения данной задачи предлагается разработать и принять соответствующий нормам Конституции по части национальной безопасности Закон Республики Армения «О национальной безопасности», который будет являться базовым для других отраслевых законов и подзаконных актов, в том числе — политико-правовых документов. Вместе с тем, этот закон может служить в качестве ориентира, закрепляя те границы и направления, которые подлежат регулированию вышеупомянутыми отраслевыми законами и подзаконными актами.

Подобное развитие правовой составляющей обеспечения национальной безопасности позволит создать реальные предпосылки для формирования «права национальной безопасности» Республики Армения. Данное право, являясь комплексным, вберет в себя все нормы, регулирующие общественные отношения в сфере обеспечения национальной безопасности.

**MILITARY LAW**

# PERSPECTIVES FOR LEGAL SUPPORT OF NATIONAL SECURITY IN THE THIRD REPUBLIC OF ARMENIA

*A. S. SEDRAKYAN, PhD in Law, Associate Professor of the International Scientific and Educational Center of the NAS of the Republic of Armenia*

SUMMARY

According to the dominant concept in the Science of Law the legal relationships are properly regulated vertically – from top to bottom, through the chain «constitution – law – by-law». The enactment of supreme legal force – the Constitution defines the basics of the legal regulation of social relations, the legal acts at the level below – the laws regulate legal relations in particular branches, detailing these basics, and the by-laws more minutely and dynamically regulate specific relations on the grounds of derivative bases established by laws.

If the legal component of ensuring the RA national security at the constitutional level is formed on the whole, and at the by-law level is formed to a considerable extent (in terms of the content of conceptual provisions defining the political and strategic support potential), then the task of the comprehensive legal support of the national security at the middle level – that of law or laws – remains pending. Some provisions contained in various laws, are unable to form a unified and coherent legal system effectively guaranteeing the implementation of rights and duties by the subjects ensuring national security, including by the individual, the society and the state.

As a solution to this problem we suggest elaborating and adopting the Law of the Republic of Armenia «On National Security» according to the norms of the Constitution in regard to the national security, which will be basic for other specialized laws and by-laws, including political and legal documents. In addition, this law could serve as a guideline fixing the borders and areas that are subject to regulation by the aforesaid specialized laws and by-laws.

Such a development of the legal component of ensuring national security will create real premises for the formation of the «national security law» of the Republic of Armenia. This law, being integrated, will absorb all the norms regulating social relations in the sphere of ensuring national security.

# ՍՏԱՄՈՔՍԱՄՈՒՏՔԱՅԻՆ-ԿԵՐԱԿՐԱՓՈՂԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՓՈՐՁԻՑ

*Գ. Վ. ԹՈՒՆՅԱՆ, բ/ծ ավագ լեյտենանտ, բժշկական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վիրաբուժական բաժանմունքի ավագ օրդինատոր, Ա. Մ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, բ/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՌԲՎ պետ, Գ. Ս. ՈՍԿԱՆՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ կրծքային վիրաբուժության բաժանմունքի պետ, Ա. Ս. ԶՈՀՐԱԲՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ բուժծառայության պետ, Ա. Ք. ՀՈՎԵԼՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վերակենդանացման բաժանմունքի պետ, Մ. Ս. ՍԱՄՍՈՆՅԱՆ, բ/ծ մայոր, ԵՊԲՀ ՌԲՖ ՌԴՎ ամբիոնի կլինիկական օրդինատոր, Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ, բ/ծ կապիտան, բժշկական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ պաթոլոգոանատոմիական ծառայության պետ, ԵՊԲՀ պաթոլոգիական անատոմիայի ամբիոնի դոցենտ, Ս. Վ. ԶԱՐԳԱՐՅԱՆ, բ/ծ կապիտան, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ անզգայացման բաժանմունքի բժիշկ-օրդինատոր*

Ստամոքսամուտքային-կերակրափողային քաղցկեղը (ՍԿՔ) բնորոշվում է մեծ չարորակությամբ, առաջնային ուռուցքի արագ աճմամբ և ախտօջախավորման բազմաուղղվածությամբ, վատ կանխատեսմամբ: Այսօր բուժման միակ արմատական մեթոդը վիրահատությունն է: Վիրահատության և կտրման ցուցանիշները չեն գերազանցում 38,0–49,8 %-ը[1], իսկ 5 տարվա ապրելունակության ցուցանիշները նույնիսկ լավագույն մասնագիտացված կլինիկաների տվյալներով չեն գերազանցում 20–30 %-ը[2]:

Հաճախակի են տեղային ախտադարձները, վաղ ախտօջախավորումը հեռավոր թիրախ-օրգաններ (20–46 %), ինչի պատճառը հիմնականում այն է, որ վերջին ժամանակներում ուռուցք ունեցող հիվանդների այդ բարդ կատեգորիայի

[1] Տես *J. R. Siewert, R. Bottcher, J. D. Roder, R. Busch, P. Hermanec, H. J. Meyer.* Prognostic relevance of systematic lymph node dissection in gastric carcinoma. «Germans Gastric Carcinoma Study Group». «British Journal of Surgery», 2006, N 80 (8):

[2] Տես *М. И. Давыдов, И. Н. Туркин, И. С. Стилиди и др.* Кардиоэзофагеальный рак: классификация, хирургическая тактика, основные факторы прогноза. «Вестник РОНЦ им. Н. Н. Блохина РАМН», 2003, № 1:

վիրահատական բուժմամբ սկսել են զբաղվել ընդհանուր պրոֆիլի վիրաբույժները: Վիրահատական բուժման վերաբերյալ արդարացի է Ստոունի հետևյալ խոսքը. «Քաղցկեղի դեպքում վիրաբուժական վիրահատությունը ոչ թե ճշգրիտ ու խնայողական գրոհ է հենց հիվանդության վրա, այլ հաճախ՝ կործանարար ու վտանգավոր խաղ կենսականորեն կարևոր օրգանների հեռացմամբ կամ վնասմամբ»[3]:

Ժամանակակից կլինիկական ուռուցքաբանության մեջ կան ՍԿՔ-ին վերաբերող մի շարք չլուծված կարևոր խնդիրներ: ՍԿՔ վիրահատական բուժման հիմնական պրոբլեմներից է օպտիմալ հասանելիության, ինչպես ախտահարված օրգանի, այնպես էլ ավշահոսքի ուղիների վրա օպերատիվ միջամտության համապատասխան ծավալի ընտրությունը: Գրականության մեջ կան տարբեր, երբեմն էլ տրամագծորեն հակառակ կարծիքներ: ՍԿՔ-ի դեպքում ընտրությունը կատարվում է երկու վիրահատությունների միջև՝ ստամոքսի պրոքսիմալ ոչ լրիվ մասնահատում (ՍՊՎՄ) և ստամոքսազերծում (ՍԶ): Շատ հեղինակներ բավարար են համարում ՍՊՎՄ-ն: Ստամոքսի մի մասի թողնելը պահպանում է սննդի անցումը տասներկումատնյա աղիքով (ՏՄԱ), բացառում է ՏՄԱ-ի ծայրատի չկայացածության, դեմպինգ համախտանիշի, առբերիչ օղակի համախտանիշի վերաբերյալ հարցերը, կանխում է հեռանկարում այնպիսի բարդությունների զարգացումը, ինչպիսիք են թերգուանային սակավարյունությունը, ստամոքսի հետմասնահատումային (ագաստրալ) չարորակ (պեռնիցիոզ) սակավարյունությունն ու անուժակությունը, հյուծումը:

Վիրահատությունը բնութագրվում է տեխնիկական դժվարություններով և վիրաբույժից պահանջում է բարդ վերակառուցումներ կատարելու որոշակի հմտություններ: Ելնելով ստամոքսի մասնահատման ժամանակ նաև կերակրափողն ընդգրկելու անհրաժեշտությունից՝ վիրաբույժը հաճախ ստիպված է միաժամանակ գործել որովայնային և թոքամզային խոռոչներում, հետին միջնորմի շրջանում: Բարդ է նաև վերականգնողական փուլը: Դիտվում են մեծ թվով բարդություններ (23–62 %), հետվիրահատական մահացությունը հասնում է 27,1 %-ի: ՍԿՔ արմատական վիրահատություններից հետո որպես հիմնական, հաճախ մահաբեր բարդություն շարունակում է մնալ ծայրակցման կարանների անկատարությունը (ԾԿԱ): Կերակրափողի ծայրակցման ձևավորման այսօր կիրառվող ավելի քան 90 եղանակները չեն երաշխավորում ԾԿԱ զարգացումից:

Չնսեմացնելով հեռացված հյուսվածքների ծավալի համապատասխանության դերը և նշանակությունը՝ նշենք, որ ստամոքսամուտքային-կերակրափողային անցումի քաղցկեղի վիրահատական բուժման վճռորոշ փուլը մարսողական փողի վերականգնումն է: Կերակրափողի ծայրակցման ձևավորումը ամենապատասխանատու պահերից է, որով հաճախակի պայմանավորվում են ամբողջ բուժման ընթացքի հաջողությունն ու արդյունավետությունը: Այս ուղղությամբ տարվող որոնումները օբյեկտիվ պատճառներով հետևողականորեն շարունակ-

[3] Տես նույն տեղում:

վում են առ այսօր: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ վիրաբույժները ձգտում են ՍՊՎՄ-ի և ՍԶ-ի դեպքում նվազեցնելու հետվիրահատական բարդությունների թիվը, հատկապես՝ ԾԿԱ-ն, ստանալու ամենալավ անմիջական և ոչ անմիջական արդյունքները:

Ստամոքսի քաղցկեղի պրոբլեմներով զբաղվող ուռուցքաբան-վիրաբույժների համար վիրահատական միջամտությունների արմատականության մեծացման, հետվիրահատական բարդությունների և մահացու ելքերի հաճախականության նվազեցման հարցերի հետ մեկտեղ էլ ավելի են կարևորվում վիրահատությունների հեռամետ ֆունկցիոնալ արդյունքները: Մեծ թվով վիրաբույժներ տարբեր ախտաբանական վիճակների (կայուն կերակրափողաբորբ, սպիական նեղացում և այլն) զարգացումը, հիվանդներին որակյալ սոցիալական կյանք վերադարձնելու պրոբլեմը կապում են կերակրափողի ծայրակցման տեսակի հետ:

Կարևոր ենք համարում ներկայացնել ՀՀ ՊՆ ԿԿԶՀ (պետ՝ բ/ծ գնդապետ Մ. Ժ. Միքայելյան) վիրաբուժական կլինիկայում ստամոքսամուտքային-կերակրափողային անցումի քաղցկեղի վիրահատական բուժման մեր կլինիկական փորձը: 51 տարեկան հիվանդը, որը ԼՂՀ անկախության համար մղված մարտերի մասնակից էր, զինքոշակառու, վիրաբուժական կլինիկա էր ընդունվել 2011 թ. փետրվարին՝ կլլման խանգարմամբ, ուտելու ընթացքում թրաձև ելունի շրջանում ցավերով, հյուծվածությամբ: Կատարված լաբորատորագործիքային հետազոտությունների (լաբորատորային, ՈՒԶՀ, ԷՍԳ, ստամոքսաաղիքային ուղու ռենտգենացայտուն, բիոպսիայով էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա (ԷԳԴԴՍ), հյուսվածքաբանական), նեղ մասնագետների խորհրդատվությունների արդյունքներով ախտորոշվեց՝ ստամոքսամուտքի անցման գեղձային քաղցկեղ, 1–2-րդ աստիճանի հյուծում: 2011 թ. փետրվարի 17-ին համակցված շնչափողային թմրեցմամբ կատարվել է Գառլոկ-Օսավայի արմատական վիրահատություն՝ վերնամիջնային որովայնահատում, ձախակողմյան կրծքավանդակահատում, ստամոքսի պրոքսիմալ ոչ լրիվ մասնահատում կերակրափողի որովայնային հատվածում, R2 ավշահատում, ինչպես նաև կերակրափողի և ստամոքսի ներագուցումային ծայրակցման ձևավորում՝ «Գոլդ» տեսակի հանգուցային շճամկանային կարաների կիրառմամբ: Հետվիրահատական շրջանում համապատասխան ցավազրկումը, հիվանդի վաղ ակտիվացումը ապահովվել են կրծքավանդակի Th6–Th5 հատվածների մակարդակով կատարված բարձր վերկարծրենային անցավազգայության կիրառմամբ: ԾԿԱ-ն պարզելու նպատակով կատարված՝ կերակրափողի ծայրակցման ռենտգենացայտուն հետազոտությունից 5 օր անց (կերակրափողի և ստամոքսի համալիրի ուրվագծից դուրս կոնտրաստի արտահոսք չկար) թույլատրվել է կերակրում զոնդով, իսկ 7-րդ օրը ներստամոքսային (նազոգաստրալ) զոնդը հանվել է: Վերքերի լավացումը տեղի է ունեցել առաջնային ձգումով:

*Հյուսվածքաբանական եզրակացություն.* ստամոքսի չափավոր կերպով տարբերակված, կերակրափողին անցնող գեղձային քաղցկեղ, 11-ից մի ավշահանգույցում քաղցկեղի *Mts* (ախտօջախ): Վիրահատությունից հետո 14-րդ օրը

համակցված բուժման շրջանակներում կատարվել է Օ-թունավորությամբ բազմաքիմիաթերապիայի երկու կուրս: 3 ամիս անց՝ պլանային հետազոտության ժամանակ (ԷԳԴԴՍ, տարբեր դիրքերից ՍԱՌՒ-ի ցայտուն ռենտգենաղիտում), ենթաստամոքսային գեղձի կերակրափողաստամոքսային ծայրակցման շրջանում ախտաբանական շեղումներ չեն հայտնաբերվել. կա գազային խոռոչի նմանակ, լորձաթաղանթը վարդագույն է, ծայրակցման գոտին կիպ է, հեշտ բացվում է, չկա ստամոքսակերակրափողային հետհոսք: Քաշն ավելացել է 7 կգ-ով:

**Եզրակացություններ**

1. ՍԿՔ վիրահատական բուժման հարցերով պետք է զբաղվեն միայն այն ուռուցքաբան-վիրաբույժները, որոնք ունեն նման բարդ հիվանդությամբ տառապողների հետ աշխատելու պատկառելի գործնական փորձ և բարդ վերակառուցումների հմտություն:

2. Որովայնի շրջանից ստամոքսի և կերակրափողի որովայնային հատվածի պրոքսիմալ մասնահատման դեպքում հիվանդների լիարժեք հետազոտումը և վիրահատությանը նախապատրաստումը, բարձր վերկարծրենային անցավազգայության կիրառումը հնարավորություն են տալիս նվազարկելու շատ վիրահատական և հետվիրահատական բարդությունների զարգացման ռիսկը:

3. Կերակրափողային ծայրակցման ձևավորման ճշգրիտ տեխնիկայի պահպանումը, «Գոլդ» տեսակի հանգուցային շճամկանային կարանների կիրառումը հնարավորություն են տալիս վաղ հետվիրահատական շրջանում խուսափելու ԾԿԱ-ի զարգացումից, իսկ ծայրակցման ճկունությունը, կեղծ սեղմամկանի և գազային խոռոչի նմանակի առկայությունը հնարավորություն են տալիս հասնելու կերակրափողի ծայրակցման հուսալի գործառական արդյունքների, բարելավելու վիրահատված հիվանդների ապագա կյանքի որակը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Ю. С. Сидоренко, В. Ф. Касаткин.* Патогенетический подход к профилактике и лечению несостоятельности пищеводных анастомозов. Ростов-на-Дону, 2009.

2. *Ф. А. Черноусов, Т. В. Хоробрых, Д. В. Вычужанин.* Лимфаденэктомия при кардиоэзофагеальном раке. «Вестник лимфологии», 2007, № 1.

3. *А. В. Янкин.* Современная хирургия рака желудка. «Практическая онкология», 2009, т. 10, № 1.

4. *Y. Ikeda, M. Saku* et al. Effective follow-up for recurrence or a second primary cancer in patients with early gastric cancer. «British Journal of Surgery», 2005, Vol. 92.

5. *T. Sano, M. Sasako, S. Yamamoto, A. Nashimoto, A. Kurita, M. Hiratsuka, T. Tsujinaka, T. Kinoshita, K. Arai, Y. Yamamura, K. Okajima.* Gastric cancer surgery: morbidity and mortality results from a prospective randomized controlled trial comparing D2 and extended para-aortic lymphadenectomy. «Japan Clinical Oncology Group study 9501». «Journal of Clinical Oncology», 2004, Vol. 22.

6. *M. Sasako, T. Sano, S. Yamamoto* et al. D2 lymphadenectomy alone or with para-aortic nodal dissection for gastric cancer. «New England Journal of Medicine», 2008, Vol. 359.

# ՄԱՇԿԱՆՑ ՈՂՆԱՊԼԱՍՏԻԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ՈՂՆԱԾԱՐԻ ՀԵՆԱԾԱՐԺՈՂԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԵԹՈԴ

*Ա. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ, բ/ծ կապիտան, բժշկական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ նյարդավիրաբուժության բաժանմունքի պետ, Ա. Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ ճառագայթային ախտորոշման բաժանմունքի պետ, Ս. Գ. ՍԵՀԻՆՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային ինստիտուտի ոսկրային ախտաբանության բաժանմունքի վարիչ*

**Ներածություն**

Մաշկանց ողնապլաստիկայի (պերկուտանային վերտեբրոպլաստիկա) մեթոդն առաջին անգամ կիրառել են Գալիբերը և Դերամոնը՝ 1984 թ. Ամիենի (Ֆրանսիա) համալսարանական կլինիկայի ճառագայթաբանության բաժանմունքում 54 տարեկան մի կնոջ պարանոցային երկրորդ ողնի մարմնի արագ աճող հեմանգիոման (արյունանոթուռուցք) վիրահատելիս: Մեթոդի էությունն այն է, որ ողնի մարմնի մեջ ներարկվում է հատուկ ոսկրային ցեմենտ, որը, վերականգնելով վնասված ողնի հենարանային ֆունկցիան, հանգեցնում է ցավի համախտանիշի նվազման: Բուժման արդյունավետությունն ապահովվում է ողնի մարմնի մեջ ներարկվող ցեմենտի ջերմային ու մեխանիկական գործոնների համախումբ ազդեցությամբ: Պոլիմերացման ջերմատու ռեակցիայի հետևանքով տեղի է ունենում նյարդային վերջույթների և ուռուցքի բջիջների մեռուկացում: Առավելապես մեխանիկական էֆեկտով է պայմանավորվում ցավի նվազումը՝ ի հաշիվ ողնի մարմնի կայունացման և ամրապնդման, կոտրվածքի շրջանում միկրոշարժումների կանխման և դրանով իսկ նյարդային վերջույթների գրգռման նվազեցման [1, 5, 7, 9]:

Ողնաշարի մարմինների առաջնային ուռուցքային և ախտաջնջային ախտահարումները հանգեցնում են բարդացած սեղմումային կոտրվածքի արագ զարգացմանը և հիվանդի հաշմանդամացմանը: Մինչ այսօր նման հիվանդների բուժման հնարավոր և միակ մեթոդը ամրացնող մետաղական կառուցվածքների կիրառմամբ կատարվող բաց վիրահատությունն էր, որը բուժման ախտահարումային և վնասվածքային մեթոդ է: Բուժման այլընտրանքային մեթոդ է մաշկանց ողնապլաստիկան, որն ամբողջ աշխարհում կիրառվում է 90-ական թվականների կեսերից [2, 3, 4], իսկ ՀՀ-ում՝ ՀՀ ՊՆ ԿԿԶՀ նյարդավիրաբուժության բաժանմունքում 2009 թ. մայիսից:

Վիրահատությունից առաջ բոլոր հիվանդները պարտադիր կերպով անցնում են ողնաշարի ռենտգենագրական հետազոտություն՝ երկու պրոյեկցիայով, համակարգչային տոմոգրաֆիական (ՀՏ) հետազոտություն՝ եռաչափ վերարտադրմամբ: ՀՏ հետազոտություն անցնում են նույնիսկ այն հիվանդները, որոնք անցել են մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիական (ՄՌՏ) հետազոտություն, քանի որ մի շարք դեպքերում ոսկրային կառուցվածքների հետազոտության ժամանակ նկատվում է ՄՌՏ-ի համեմատությամբ ՀՏ հետազոտության ավելի մեծ տեղեկունակություն: Բոլոր հիվանդների համար պարտադիր է նաև օպտիկական խտաչափությունը:

**Նյութն ու մեթոդները:** 2009 թվականից ԿԿԶՀ նյարդավիրաբուժական բաժանմունքում կատարվել է 14 հիվանդի ողնապլաստիկա: Ցուցումներն էին. ողնաշարի՝ ուռուցքի կամ վնասվածքի հետևանքով վնասված հատվածում ցավի համախտանիշը, և/կամ նույնիսկ ցավի համախտանիշ չլինելու դեպքում՝ ողնի մարմնում կոտրվածքի առաջացման սպառնալիք ներկայացնող նորագոյացությունների առկայությունը: Կոտրվածքի սպառնալիք ներկայացնող նորագոյացությունների թվին մենք դասում ենք այն նորագոյացությունները, որոնք զբաղեցնում են ողնի մարմնի կեսից ավելին և այդ պատճառով կարող են առաջ բերել ողնի մարմնի կոտրվածք (նկ. 1):




Նկ. 1. Ողնապլաստիկայի մեթոդով բուժման օրինակ.

*ա, բ* – հեմանգիոմայով խոցված 7-րդ կրծքային ողնի ՀՏ-վերակերտվածքը ողնապլաստիկայից առաջ, *գ* – 7-րդ կրծքային ողնի մարմնի ամբողջ խոռոչն զբաղեցնող հեմանգիոմայի առանցքային կտրվածքը (նշված է սպիտակ սլաքներով, հաստ սպիտակ սլաքով նշված է մետաղական տարբերանիշը՝ հաշվարկային կողմնորոշիչը), *դ, ե* – ողնապլաստիկայից հետո 7-րդ կրծքային ողնի ՀՏ-վերակերտվածքը, *զ* – առանցքային կտրվածք. հեմանգիոմայի խոռոչը ամբողջովին լցված է ոսկրային ցեմենտով (նշված է սպիտակ սլաքներով)

Մեր հետազոտություններում գերակշռում էին ողնի մարմնի հեմանգիոմայով հիվանդները (աղ. 1):

*Աղյուսակ 1*

ՈՂՆԱՊԼԱՍՏԻԿԱՅԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՀԻՎԱՆԴՆԵՐՆ
ԸՍՏ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՍԵՌԻ ԵՎ ՏԱՐԻՔԻ

| Ախտաբանությունը | Սեռը | | Տարիքը (տարի) | | |
|---|---|---|---|---|---|
| | ար. | իգ. | մինչև 40 | 40- 60 | 60-ից մեծ |
| Վնասվածքային չբարդացած կոտրվածք | – | 1 | 1 | – | – |
| Առաջնային ուռուցքներ | 4 | 8 | 1 | 10 | 1 |
| Երկրորդային ախտօջախային ախտահարումներ | – | 1 | – | 1 | – |
| Ընդամենը | 4 | 10 | 2 | 11 | 1 |

**Ողնապլաստիկայի տեխնիկան:** Վիրահատությունից առաջ բոլոր հիվանդներն անցել են հակաբիոտիկ բուժում՝ լայն սպեկտրով պատրաստուկների կիրառմամբ: Բարդություններ դիտվել են միայն մեկ դեպքում՝ անցողիկ իշեմիկ կաթվածի ձևով: Ըստ գրականության տվյալների՝ բարդություններ առաջանում են 1–10 % դեպքերում:

Վիրահատության ժամանակ ցեմենտի արտահոսքի հետ կապված բարդություններ ավելի հաճախ հանդիպում են միակցիչ սկավառակների զգալի քայքայման դեպքում [8]: Ողնային հեմանգիոմայի և սեղմումային կոտրվածքի դեպքում ոսկրածակոտկենության ֆոնի վրա կլինիկորեն արտահայտվող բարդությունների ռիսկը չի գերազանցում 1 %-ը, այդ թիվը ախտօջախային ուռուցքներ ունեցող հիվանդների համար 5-10 %-ից մեծ չէ: Դա առավելապես կապված է ինչպես հիվանդների թվակազմի, այնպես էլ ողնի կազմալուծման բնույթի հետ: Գրականության մեջ նկարագրված են այնպիսի դեպքեր, որոնք ունեցել են մահացու ելք՝ մեծ թվով ողների միաժամանակյա ցեմենտավորման պատճառով [1, 5, 6]:

Հաշվի առնելով գրականությունում բերվող և բոլորի կողմից ընդունված տեղեկությունները [1, 2], ինչպես նաև մեր համեստ փորձը՝ ներկայացնում ենք ողնապլաստիկայի համար գոյություն ունեցող բացարձակ հակացուցումները, որոնք են՝ տեղային ոսկրախտը, վերկարծրենային թարախակույտը կամ նեխավարակումը, կոագուլոպաթիան (100 000-ից պակաս թրոմբոցիտներ, պրոթրոմբինային ժամանակը 3 անգամ ավելի է նորմայի վերին սահմանից, մասնակի թրոմբապլաստինային ժամանակը 1,5 անգամ գերազանցում է նորմալ ցուցանիշները), ողնուղեղի սեղմումը երկրորդային ողնուղեղախտի զարգացմամբ, պոլիմեթիլմետակրիլատի բաղկացուցիչների ալերգիկ ոչ տանելիությունը, սեղմումային կոտրվածքները՝ մարմնի բարձրության 70 %-ից ավելի նվազմամբ:

Նյարդարմատների ախտահարումը և ողնի մարմնի հետին պատի քայքայումը ողնապլաստիկայի համար բացարձակ հակացուցումներ չեն, թեև զգալիորեն աճում է բարդացումների վտանգը: Տվյալ իրավիճակում հիվանդը պետք է նախազգուշացվի վիրահատության հնարավոր բացասական հետևանքների մասին [2]:

**Հիվանդների բուժման արդյունքները:** Հիվանդների բուժման արդյունքները բերված են աղ. 2-ում: Մեր հետազոտություններում լավ արդյունք՝ առաջին օրերին ցավի համախտանիշի լրիվ վերացում, դիտվել է 5 (32 %) դեպքում, բավարար՝ ցավի համախտանիշի զգալի հետընթաց 10 օրվա ընթացքում՝ 8 (72,6 %) դեպքում, անբավարար՝ հիվանդի ողնի մարմնի ախտօջախային ախտահարմամբ 1 դեպք:

*Աղյուսակ 2*

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝
ԿԱԽՎԱԾ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

| Ախտաբանության անվանումը | Հիվանդների թիվը | Բուժման արդյունքները | | |
|---|---|---|---|---|
| | | լավ | բավարար | անբավարար |
| Վնասվածքային չբարդացած կոտրվածք | 1 | 1 | – | – |
| Առաջնային ուռուցքներ | 12 | 4 | 8 | – |
| Երկրորդային ախտօջախային ախտահարումներ | 1 | – | – | 1 |
| Ընդամենը | 14 | 5 | 8 | 1 |

**Եզրակացություններ**

Ասեղնածակումային մաշկանց ողնապլաստիկան այն հիվանդների բուժման նոր և բավականաչափ արդյունավետ մեթոդ է, որոնք տառապում են ողնաշարի վնասվածքային կամ ուռուցքաբանական ախտահարմամբ, ինչի հետևանքով խախտվել է ողնաշարի հենաշարժողական ֆունկցիան:

Ողնապլաստիկայի ենթարկվող հիվանդների ընտրության ժամանակ ցուցումների և հակացուցումների պահպանումը, ինչպես նաև ճիշտ մեթոդիկայի կիրառումը հնարավորություն են տալիս նվազագույնի հասցնելու բարդությունների առաջացման վտանգը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *О. Н. Древаль, В. Н. Яковлев.* Перкутанная вертебропластика. «Нейрохирургия», 2005, № 1.

2. *Е. Г. Педаченко, С. В. Кущаев.* Пункционная вертебропластика при компрессионных переломах тел позвонков у больных с остеопорозом. «Украинський Медичний Часопис», 2006, № 6.

3. *C. Cyteval, M. P. Sarrabere, J. O. Roux, E. Thomas, C. Jorgensen, F. Blotman, J. Sany, P. Taourel.* Acute osteoporotic vertebral collapse: open study on percutaneous injection of acrylic surgical cement in 20 patients. «American Journal of Roentgenology», 1999, Vol. 173, № 6.

4. *B. Cortet, A. Cotton, N. Boutry, R. M. Flipo, B. Duquesnoy, P. Chastanet, B. Delcambre.* Percutaneous vertebroplasty in the treatment of osteoporotic vertebral compression fractures: an open prospective study. «The Journal of Rheumatology», 1999, Vol. 26, № 10.

5. G. *Guglielmi, C. Andreula, M. G. Muto, L. A. Gilula.* Percutaneous vertebroplasty: indications, contraindications, technique and complications. «Acta Radiologica», May 2005, Vol. 46, Issue 3.

6. *S. H. Kim, H. S. Kang, J. A. Choi, J. M. Ahn.* Risk factors of new compression fractures in adjacent vertebrae after percutaneous vertebroplasty. «Acta Radiologica», 2004, Vol. 45, Issue 4.

7. *K. Kobayashi, K. Shimoyama, K. Nakamura, K. Murata.* Percutaneous vertebroplasty immediately relieves pain of osteoporotic vertebral compression fractures and prevents prolonged immobilization of patients. «European Radiology», 2005, Vol. 15, № 2.

8. *E. P. Lin, S. Ekholm, A. Hiwatashi, P. L. Westesson.* Vertebroplasty: cement leakage into the disc increases the risk of new fracture of adjacent vertebral body. «American Journal of Neuroradiology», February 2004, Vol. 25, № 2.

9. *J. Mathis, H. Deramond, S. Belkoff.* Percutaneous vertebroplasty. New York, 2002.

# ՀՀ ՊՆ ԿԿԶՀ-ՈՒՄ ԿՈՆՔԻ ՈՍԿՐԵՐԻ ԿՈՏՐՎԱԾՔԻ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Լ. Մ. ԺԱՄԱԳՈՐԾՅԱՆ, բ/ծ մայոր, բժշկական գիտությունների դոկտոր,*
*ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վնասվածքաբանական բաժանմունքի պետ,*
*Ա. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, բ/ծ կապիտան, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վնասվածքաբանական բաժանմունքի բժիշկ-օրդինատոր*

Կոնքի վնասվածքները, ըստ մի շարք հետազոտողների տվյալների, խաղաղ և պատերազմական ժամանակների վնասվածքների կառույցում գրավում են առաջնային տեղ և կազմում են ընդհանուր վնասվածքների մինչև 22 %-ը: Դրանք տուժածների մեծ մասի ստացած համակցված վնասվածքների բաղադրատարրն են (61,7–70,5 %):

ՀՀ-ում համակցված ծանր և բազմակի վնասվածքների բուժմամբ զբաղվող վնասվածքաբանների շրջանում երբեմն գերակշռում է այն կարծիքը, որ եթե կոնքի վնասվածքով տուժածները ապրում են, ապա հետագայում հաճախ չի դիտվում կյանքի որակի լուրջ վատթարացում՝ կապված կոնքի ոսկրերի համախմբման խախտման կամ սխալ սերտաճման հետ: Նման կարծիքը, որը

միանգամայն արդարացի է կայուն վնասվածքների դեպքում, միշտ չէ, որ հաստատվում է կոնքի ոչ կայուն վնասվածքների ելքի վերլուծությամբ:

Որպես կանոն, նման վնասվածքով հիվանդները գանգատվում են ողնաշարի գոտկային հատվածի, սրբոսկրի կամ սրբոսկրազստային հոդերում առաջացող ցավերից, երբեմն էլ երկարատև ցավային համախտանիշի պատճառ է դառնում կոտրվածքի անլիարժեք համախմբումը: Հիվանդներին անհանգստացնում են նաև կոսմետիկ թերությունները՝ կապված կոնքային օղի ձևախախտման հետ, քայլվածքի խախտումը, ստորին վերջույթի կարճացումը կամ սխալ դիրքավորումը: Հաճախ դիտվում են նաև կայուն նյարդաբանական խանգարումներ, որոնք պայմանավորված են գոտկասրբանային հյուսակում նյարդարմատների սալջարդով, ոչ ճիշտ սերտաճած ոսկրաբեկորներով սեղմմամբ, ինչպես նաև միզասեռական, իսկ կանանց դեպքում նաև ծննդաբերական խանգարումներ: Բացի այդ, զգալի են ստացիոնար բուժման ժամկետները և հետագա վերականգնումը, ինչը հանգեցնում է շոշափելի տնտեսական ծախսերի և հիվանդների կյանքի սովորական կենսաձևի երկարատև փոփոխման:

Գրականության տվյալների վերլուծության համաձայն՝ Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի զարգացած երկրներում կոնքի ծանր անկայուն վնասվածքներով տուժածների բուժման ժամանակ նախապատվությունը տրվում է կոնքային օղի վիրաբուժական կայունացման մեթոդներին: Կոնքի անկայուն վնասվածքներով հիվանդներից շատերին (83–98 %) վնասվածքային շոկից (ցնցակաթվածից) հանելուց և օրգանիզմի կենսականորեն կարևոր համակարգերի ֆունկցիաների կայունացումից հետո կատարում են կոնքի ներքին ֆիքսում: ՀՀ-ում այդ առաջադիմական մեթոդները կիրառվում են միայն եզակի բուժհիմնարկներում և գիտական կենտրոններում: Կոնքի անկայուն վնասվածքներով տուժածների 85–90 %-ը նախկինի պես բուժվում է պահպանողական մեթոդներով, ինչը խիստ բացասաբար է ազդում մահացության, հաշմանդամության ցուցանիշների, բուժվերականգնման ժամկետների և արդյունքների վրա:

Ստորև ներկայացնում ենք կոնքի ձախ հատվածի անկայուն բարդ բազմաբեկորային կոտրվածքի (կոտրվածք ըստ Մալգենի) վիրահատական բուժման մի դեպք (նկ. 1):

21 տարեկան հիվանդը, որը ժամկետային ծառայության շարքային էր, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վնասվածքաբանական բաժանմունք էր տեղափոխվել այլ զինվորական հոսպիտալից՝ 2010 թ. հոկտեմբերի 28-ին: Ըստ բուժեզրակացության՝ հիվանդը այդ հոսպիտալ էր ընդունվել բազմակի համակցված վնասվածքներով, որոնք նա ստացել էր ՃՏՊ հետևանքով: Հոսպիտալում ախտորոշվել էր կոնքի ոսկրերի ձախ հատվածի բազմաբեկորային կոտրվածք, փայծաղի պատռվածք՝ ներքին արյունահոսությամբ, 2–3-րդ աստիճանի վնասվածքային շոկ: Շտապ կերպով կատարվել էր փայծաղի հեռացում:

Վիճակի կայունացումից հետո հիվանդը տեղափոխվել էր ԿԿԶՀ և մանրազնին կերպով հետազոտվել, մասնավորապես՝ կատարվել էր կոնքի համակարգչային տոմոգրաֆիական հետազոտություն (ՀՏՀ):

Նկ. 1. Կոնքի ձախ հատվածի բազմաբեկորային անկայուն բարդ կոտրվածք ըստ Մալգենի

Ինչպես երևում է նկ. 1-ում բերված ՀՏՀ պատկերներից, առկա է կոնքի ոսկրերի ձախ հատվածի բազմաբեկորային բարդ կոտրվածք: Քացախափոսի առջևի սյունը ամբողջությամբ բաց է, իսկ հետևի սյան շրջանում կա ոչ ամբողջական կոտրվածք, նկատվում է նաև զստոսկրի թևի բազմաբեկորային կոտրվածք: Զստոսկրի թևի և քացախափոսի հետին սյան շրջանում ոսկրաբեկորների դիրքը բավարար է: Քացախափոսի առջևի սյան շրջանում կա ոսկրային դեֆեկտ, հոդամակերեսի համաչափությունը ամբողջությամբ խախտված է:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ անհրաժեշտ համարեցինք վերականգնել քացախափոսի առջևի սյան օստեոսինթեզի և հոդամակերեսի համաչափութ-

յունը: Վիրահատությունը կատարվեց 2010 թ. նոյեմբերի 10-ին շնչափողային թմրեցմամբ: Կիրառվեց զստազդրային կտրվածք: Հարթակը տեղադրելուց և հոդը ամբողջությամբ վերականգնելուց հետո քացախափոսի առջևի սյան կենտրոնական հատվածում մնաց մոտ 2×1,5 սմ ոսկրային դեֆեկտ: Այդ հանգամանքի հաշվառմամբ կատարվեց ոսկրային աուտոպլաստիկա՝ զստոսկրի թևից վերցված փոխպատվաստուկով: Վիրահատական միջամտությունը տևեց 3 ժամ 40 րոպե: Նկ. 2-ում ցույց է տրված օստեոսինթեզի արդյունքը:




Նկ. 2. Քացախափոսի առջևի սյան օստեոսինթեզի արդյունքը

Հետվիրահատական շրջանը հարթ էր, վերքերը լավացան առաջնային ձգումով: Վերականգնողական բուժումն սկսվեց 15 օր անց: Հիվանդը հենակների օգնությամբ սկսեց քայլել վիրահատությունից մեկ ամիս անց, այդ ժամանակ կոնքազդրային հոդում շարժումները գործնականում լրիվ ծավալով էին:

Վիրահատությունից 4 ամիս անց կատարված հսկողական ռենտգենյան նկարում դիտվեց գործնականում սերտաճած կոտրվածք (նկ. 3): Վերջույթի հենարանային ֆունկցիան ամբողջությամբ վերականգնված էր, չկար ցավային համախտանիշ, կոնքազդրային հոդի շարժումները լրիվ ծավալով էին:



Նկ. 3. Չորս ամիս անց՝ քացախափոսի առջևի սյան օստեոսինթեզից հետո

Այսպիսով՝ կոնքի անկայուն ծանր վնասվածքների բուժման պրոբլեմը կարող է լուծվել ոչ միայն տուժածի կյանքի փրկմանն ուղղված անհետաձգելի միջոցառումների կիրառմամբ, այլև մասնագիտացված բուժման համապատասխան համակարգերի և մեթոդների մշակմամբ ու ներդրմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *М. Е. Мюллер, М. Алльговер, Р. Шнейдер, Х. Виллингер.* Руководство по внутреннему остеосинтезу. М., 1996.
2. *В. М. Шаповалов, Е. К. Гуманенко, А. К. Дулаев, В. Н. Ганин и др.* Хирургическая стабилизация таза у раненых и пострадавших. СПб., 2000.
3. *T. Hao, Y. Changwei, Z. Qiulin.* Treatment of posterior pelvic ring injuries with minimally invasive percutaneous plate osteosynthesis. «International Orthopaedics», October 2009, Vol. 33, Issue 5.
4. *D. Krappinger, R. Larndorfer, P. Struve, R. Rosenberger et al.* Minimally invasive transiliac plate osteosynthesis for type C injuries of the pelvic ring: a clinical and radiological follow-up. «Journal of Orthopaedic Trauma», October 2007, Vol. 21, Issue 9.

# ՍՏԱՄՈՔՍԱՄՈՒՏՔԻ ԱԽԱԼԱԶԻԱՅԻ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Գ. Վ. ԹՈՒՆՅԱՆ, բ/ծ ավագ լեյտենանտ, բժշկական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վիրաբուժական բաժանմունքի ավագ օրդինատոր,*
*Ա. Մ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, բ/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԶՈՒ-ի ՌԲՎ պետ, Ա. Ս. ԶՈՀՐԱԲՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ բուժծառայության պետ,*
*Ա. Ք. ՀՈՎԵԼՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վերակենդանացման բաժանմունքի պետ, Մ. Ս. ՍԱՄՍՈՆՅԱՆ, բ/ծ մայոր, ԵՊԲՀ ՌԲՖ ՌԴՎ ամբիոնի կլինիկական օրդինատոր, Ա. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ առաջատար վիրաբույժ, Ս. Վ. ԶԱՐԳԱՐՅԱՆ, բ/ծ կապիտան, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ անզգայացման բաժանմունքի բժիշկ-օրդինատոր*

Կերակրափողի առավել տարածված նյարդամկանային հիվանդություններից է ստամոքսամուտքի ախալազիան (ՍԱ), կամ ստամոքսամուտքի կծկումը, որը բնութագրվում է ամբողջ կերակրափողի գալարակծկանք չլինելով և՝ ի պատասխան կլլմանը ստամոքսամուտքի թուլանալու անկարողությամբ: Ստամոքսամուտքը թուլանալու հատկությունը կորցնում է ներպատային նյարդավորման օրգանական խախտումների հետևանքով: ՍԱ-ն բազմապատճառային հիվանդություն է, որի առաջացման տարբեր պատճառներ հանգեցնում են կերակրափողի և ստամոքսամուտքի նյարդավորման շղթայում քայքայումային փոփոխությունների: Առաջին անգամ այս ախտաբանական շեղումները նկարագրել է Ռիլիսը 1697 թվականին:

ՍԱ-ն ցանկացած տարիքում առավել հաճախ հանդիպում է կանանց շրջանում, ինչը կապված է կենտրոնական նյարդային համակարգի ավելի մեծ անկայունության հետ:

ՍԱ-ի հիմնական կլինիկական դրսևորումները (կլլման խանգարում, ռեգուրգիտացիա, ցավեր կրծոսկրի հետին շրջանում) պայմանավորված են այն հան-

գամանքով, որ դանդաղում է կլլված սննդի շարժումը կերակրափողով, տեղի են ունենում գալարակծկանքի փոփոխություն և կերակրափողի պատի տոնուսի թուլացում: Կլլման խանգարման սուր սկիզբը սովորաբար կապված է երկարատև ապրումների կամ հանկարծակի հուզական ստրեսի հետ: ՍԱ-ով հիվանդներից շատերին բնորոշ է յուրահատուկ «արատավոր շրջան». հուզմունքը և բացասական հույզերը ուժեղացնում են կլլման խանգարումը, որն էլ իր հերթին վնասում է հիվանդի նյարդահոգեկան համակարգը:

Ռեգուրգիտացիան ՍԱ-ի բնորոշ ախտանիշն է: Ժամանակ առ ժամանակ այն կարող է առաջանալ ուտելու ընթացքում կլլման խանգարման հետ մեկտեղ կամ անմիջապես ուտելուց հետո (երբեմն ուտելուց 2-3 ժամ անց) մեծ քանակությամբ (լիքը բերանով) փսխման ձևով: Հաճախ ռեգուրգիտացիան առաջանում է իրանի թեքումների, ֆիզիկական լարվածության ժամանակ, կամ երբ հիվանդը գտնվում է հորիզոնական դիրքում:

Կլլման կամ ոչ ուտելու ժամանակ կրծոսկրի հետին շրջանում առաջացող ցավերը կապված են կծկանքների, կերակրափողաբորբի հետ: Ոչ ուտելու ժամանակ առաջացող ուժեղ ցավերը դիտվում են հուզմունքի, ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում, գիշերը, ինչը բացատրվում է կերակրափողի արտակլլումային, երրորդային կրճատումներով: Ցավի նոպաները տևում են մի քանի րոպեից մինչև մեկ ժամ, առաջանում են կա՛մ ամիսը մեկ անգամ, կա՛մ էլ ամեն օր: Գրեթե բոլոր հիվանդները նիհարում են, թուլանում, կորցնում աշխատունակությունը: Կերակրափողի պարունակության արտածծման հետևանքով հաճախ առաջանում են քրոնիկական բրոնխաբորբ, թոքաբորբ, թոքի թարախակույտ:

Վերջնական ախտորոշումը կատարվում է կերակրափողի, ստամոքսի տարբեր դիրքերից կատարվող ռենտգենացայտուն, ներդիտակային հետազոտությունների հիման վրա՝ կերակրափողից վերցված բիոպտատի պարտադիր կազմաբանական ստուգմամբ: Կերակրափողադիտման համար ցուցում է կերակրափողի լորձաթաղանթի վիճակն ուսումնասիրելու անհրաժեշտությունը կերակրափողաբորբի ախտորոշման և այնպիսի հիվանդությունների բացառման նպատակով, ինչպիսիք են կերակրափողի ծոցակները, բարորակ ուռուցքները, կերակրափողի նեղացումային քաղցկեղը:

Ներկայումս ՍԱ-ի բուժման համար հիմնականում կիրառվում է երկու մեթոդ՝ ստամոքսամուտքի լայնացում և վիրահատական բուժում: Վիրահատական բուժումը ցուցված է ախալազիայի 3–4-րդ փուլերում և ստամոքսամուտքի լայնացման կուրսից հետո ախտադարձների դեպքում: ՍԱ-ի վիրահատական բուժման ժամանակ առավել մեծ տարածում են ստացել արտալորձային էզոֆագոկարդիոմիոտոմիայի զանազան տարբերակներ, որոնցից շատերը որոշակի թերությունների ու տեխնիկական սխալների պատճառով հետվիրահատական շրջանում անխուսափելիորեն հանգեցնում են նեղացման, կայուն հետհոսքային կերակրափողաբորբի (ռեֆլյուքս- էզոֆագիտ):

Նպատակահարմար է ներկայացնել ՀՀ ՊՆ ԿԿԶՀ (պետ՝ բ/ծ գնդապետ Մ. Ժ. Միքայելյան) վիրաբուժական կլինիկայում ՍԱ-ի վիրահատական բուժման

մեր կլինիկական փորձը: 2010 թ. նոյեմբերին մեզ էր դիմել 45 տարեկան մի կին, որը ԼՂՀ անկախության համար մղված մարտերում զոհվածի այրի էր: Նա տառապում էր ստամոքսի ախալազիայով, որի ախտորոշումը հաստատվել էր դեռ 2003 թ.: Հիվանդը բազմիցս ընդունել էր դեղորայքային բուժման սխեմատիկ կուրսեր՝ առանց նկատելի կլինիկական արդյունքի: Տարբեր դիրքերից կատարվող ռենտգենացայտուն և կերակրափողադիտական, հյուսվածքաբանական մեթոդներով հետազոտության հիման վրա ախտորոշվել էր 3-րդ փուլի ստամոքսամուտքի ախալազիա, օրգանիզմի՝ 1–2-րդ աստիճանի հյուծում, ծայրամասային կատարալ-լորձենախախտային կերակրափողաբորբ: Համապատասխան նախավիրահատական պատրաստումից հետո շնչափողային թմրեցմամբ նա վիրահատվեց. վերմիջնային որովայնահատում, առաջահետային ստոծանիահատում, վերլորձաթաղանթային կերակրափողի ստամոքսամուտքի հատում, էզոֆագոֆրենոֆունդոպլաստիկա (ԷՖՖՊ) ըստ Սուվորովա-Բերկուտովայի՝ «Գոլդ» տեսակի կարանների կիրառմամբ:

Հետվիրահատական շրջանն ընթացավ առանց բարդությունների, վերքի լավացումը կատարվում էր առաջնային ձգումով: Երրորդ օրից թույլատրվեց կերակրում զոնդի միջոցով, իսկ մեկ շաբաթից՝ մանրահաճախ (կոտորակային) կերակրում բերանով: Արդեն հետվիրահատական առաջին օրերին հիվանդը նշում էր վիճակի ամենօրյա դրական դինամիկա, գործնականորեն անհետացել էին հիվանդության բոլոր կլինիկական դրսևորումները, թուլանյարդային համախտանիշը, կանոնավորվել էր քունը: 21-րդ օրը կատարված ռենտգենացայտուն հետազոտությամբ պարզվեց, որ կերակրափողի տոնուսը վերականգնվել է, վերացել է սուպրասթենոտիկ (վերնեղացումային) լայնացումը, կերակրափողում չկա սննդային զանգվածների մնացորդներ: Դուրսգրման ժամանակ հիվանդի քաշն ավելացել էր 3 կգ-ով:

Այսպիսով՝ ՍԱ-ի օպերատիվ բուժումը, չնայած տեխնիկական բարդությանը և որոշակի թերություններին, մի մեթոդ է, որը հնարավորություն է տալիս կանխատեսելու առողջացում: Վերլորձաթաղանթային կերակրափողի և ստամոքսամուտքի հատմամբ՝ զուգակցված ըստ Սուվորովա-Բերկուտովայի փոփոխակված ԷՖՖՊ-ով, «Գոլդ» տեսակի կարանների կիրառմամբ կարելի է հետվիրահատական շրջանում խուսափել կերակրափողի նեղացումից ու կերակրափողաբորբից և ապահովել հիվանդների կյանքի լավ որակ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Р. Золлингер, Р. Золлингер мл.* Атлас хирургических операций. М., 1996.

2. *А. А. Русанов.* Рак пищевода. М., 1974.

3. *Н. Е. Черниховская, В. Г. Андреева и др.* Эндоскопическая диагностика заболеваний пищевода, желудка и тонкой кишки. М., 2006.

4. *А. А. Шалимов, В. Н. Полупан.* Атлас операций на пищеводе, желудке и двенадцатиперстной кишке. М., 1975.

# ՀՀ ՏԱՐԲԵՐ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՂԱՆԱԿԱԶԳԱՅՈՒՆ ՀԱԿԱԶԴՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Լ. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի վարիչ,*
*Լ. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, բ/ծ կապիտան, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ռազմական թունաբանության, ճառագայթաբանության և բժշկական պաշտպանության ցիկլի ասպիրանտ, ավագ դասախոս,*
*Ա. Հ. ՔՈԹԱՆՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի դասախոս*

Մարդու առողջությունը սերտորեն կապված է նրա օրգանիզմի այնպիսի հիմնարար ֆունկցիայի հետ, ինչպիսին է հարմարվողականությունը, որի շնորհիվ շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններում ապահովվում և պահպանվում է առողջությունը: Օրգանիզմի հարմարվողական հնարավորությունների սահմանափակումը հիվանդացության առաջացման պատճառներից մեկն է: Հայտնի է, որ մինչև ախտաբանական շեղումների առաջացումն ու զարգացումը մարդու օրգանիզմն անցնում է նախահիվանդագին վիճակի փուլ, որի պատեհաժամ բացահայտումը կարևոր է արդի կանխարգելիչ բժշկության տեսակետից, քանի որ ժամանակին կատարված ախտորոշմամբ հնարավոր է կանխել նախահիվանդագին վիճակի անցումը հիվանդության[1]: Հայտնի է նաև, որ նախահիվանդագին վիճակի ֆունկցիոնալ հիմքը օրգանիզմի հակազդականության (ռեակտիվության) փոփոխությունն է, որը բնութագրվում է օրգանիզմի ինքնակարգավորման ֆունկցիայի այս կամ այն աստիճանի խանգարմամբ և պաշտպանական-հարմարվողական հնարավորությունների սահմանափակմամբ[2]:

---

[1] Տես *М. П. Захарченко, В. М. Захарченко, М. М. Захарченко, В. Н. Алфимов, В. А. Баркевич, О. Г. Цинадзе.* Проблема гигиенической диагностики здоровья в медицине окружающей среды. «Гигиена и санитария», 2005, № 6:

[2] Տես *Р. М. Баевский.* Прогнозирование состояний на грани нормы и патологии. М., 1979, с. 54:

Շրջակա միջավայրի՝ մարդու առողջության վրա ազդող բազմաթիվ ոչ կենդանական (աբիոտիկ) գործոններից հարկ է առանձնացնել կլիմայաաշխարհագրական պայմանները: Հազարավոր տարիների ընթացքում մարդը լիովին հարմարվել է կլիմայի և եղանակի պարբերական փոփոխություններին: Սակայն արևաերկրաֆիզիկական գործոններից կախված՝ եղանակի ոչ պարբերական կտրուկ փոփոխությունների ազդեցության դեպքում օրգանիզմը կարող է «տալ այլ պատասխան»: Նման եղանակային փոփոխությունները եղանակաանկայուն մարդկանց օրգանիզմում առաջացնում են տարբեր, երբեմն կյանքին սպառնացող փոփոխություններ: Վերջիններս առաջանում են եղանակազգայուն (մետեոպաթիկ) մարդկանց շրջանում հիվանդության, ստրեսի կամ որևէ այլ անբարենպաստ գործոնի երկարատև և ինտենսիվ ազդեցության հետևանքով[3]:

Դրանք արտահայտվում են ինքնազգացողության վատթարացմամբ և բազմաթիվ ֆունկցիոնալ խանգարումներով: Պատահական չէ, որ քրոնիկական ախտաբանական շեղումների թվի աճումը պայմանավորում են ամբողջ աշխարհում եղանակազգայուն հակազդումների տարածվածությամբ[4]:

Հայաստանը կլիմայական հակապատկերների երկիր է. բարձունքային գոտիականության բազմազանության հետևանքով[5] ամենափոքր տարածություններում անգամ դիտվում են կլիմայի զգալի տարբերություններ: Մակերևույթի մեծ տատանումների, լեռնաշղթաների տարբեր ուղղվածության, լեռնալանջերի տարբեր կողմնորոշվածության պայմաններում Հայկական լեռնաշխարհ թափանցող օդային զանգվածների ազդեցության հետևանքով դիտվում է կլիմայական տիպերի մեծ բազմազանություն՝ մերձարևադարձայինից մինչև բարձրլեռնային ու ձյունամերձ կլիման: ՈՒստի և զինծառայության զորակոչված երիտասարդներին հաճախ անհրաժեշտ է լինում ծառայել միանգամայն այլ կլիմայաաշխարհագրական գոտում, ինչը կարող է էապես բացասաբար ազդել նրա առողջական վիճակի և ըստ այդմ՝ ԶՈՒ-ի մարտունակության վրա:

Վերը նշված հանգամանքով էլ հենց պայմանավորված է մեր հետազոտության այժմեականությունը: Այդ հետազոտության նպատակն էր ուսումնասիրել ՀՀ տարբեր կլիմայական գոտիներում տեղակայված զորամասերի ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում եղանակազգայուն հակազդումների տարածվածությունը և առանձնահատկությունները:

Հիմք ընդունելով Հայաստանի կլիմայական մարզերը, կլիմայի տիպերը[6] և «Հայպետհիդրոմետի կլիմայական տեղեկագրերը (2000–2009 թթ.)»՝ ԵՊԲՀ

[3] Տես *Н. А. Агаджанян, Н. В. Ермакова.* Экологический портрет человека на севере. М., 1999, сс. 95–107; *В. Г. Бошка, Б. В. Богуцкий.* Медицинская климатология и климатотерапия. Киев, 1980, с. 261; «Климат и здоровье человека», тт. 1, 2. Л., 1988:

[4] Տես *В. И. Хансулин.* Общие представления о реагировании человека на погодные геофизические и космические факторы. Оценка метеопатий. Новосибирск, 2004:

[5] Տես «Հայաստանի ազգային ատլաս», հ. Ա: Ե., 2007, էջ 127:

[6] Տես *Ա. Գ. Ներսիսյան,* Հայաստանի կլիման: Ե., 1964, էջ 303, նաև՝ «Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն»: Ե., 1971, էջ 470:

հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի կողմից ըստ լանդշաֆտի առանձնահատկությունների, տեղանքի բարձրության, արևափայլքի միջին տարեկան տևողության, տեղումների մակարդակի, հունվար և հուլիս ամիսների միջին ջերմաստիճանների տարբերության՝ առանձնացվել են 6 կլիմայական գոտիներ[7]:

Ընտրվել է այդ կլիմայական գոտիներում տեղակայված 6 զորամաս և դրանց՝ ընդհանուր թվով 1400 ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում 2009–2010 թթ. կատարվել է ուսումնասիրություն:

ՈՒսումնասիրություններն անցկացվել են մեր կողմից մշակված հատուկ հարցաթերթիկների միջոցով: Հետազոտության ընթացքում ժամկետային պարտադիր զինծառայողներին տրվել են հետևյալ 4 խումբ հարցերը.

1. եղանակային կտրուկ փոփոխությունների ժամանակ նկատու՞մ եք ինքնազգացողության վատացում,

2. եղանակային կտրուկ փոփոխությունների ժամանակ նկատու՞մ եք քնի խանգարում, գլխացավ, գլխում ծանրության զգացում, վատ ինքնազգացողություն, գլխապտույտ, ցավեր սրտի շրջանում, ճնշման տատանումներ և այլն,

3. ձեր վիճակի փոփոխությունները նշված ո՞ր երևույթների հետ են կապված՝ արևոտ եղանակ, ամպրոպ, ամպամած եղանակ, անձրևոտ եղանակ, ջերմաստիճանի կտրուկ բարձրացում կամ կտրուկ նվազում, բնակության վայրի փոփոխում և այլն,

4. որքա՞ն ժամանակ է, որ նկատում եք եղանակային գործոնների հետ կապված ինքնազգացողության վատացում. մինչև 1 տարի, մինչև 5 տարի, 5 և ավելի տարի:

Հարցման մասնակիցները բաժանվեցին 3 խմբի: Ցածր մակարդակի հիվանդագին եղանակազգայունություն ունեցողների խմբում ընդգրկվեցին հարցաթերթիկի 22 հարցերից ոչ ավելի, քան 6-ին (30 % և պակաս) դրական պատասխան տված ժամկետային պարտադիր զինծառայողները, միջին մակարդակի խմբում՝ հարցերի 31–50 %-ին դրական պատասխան տված հարցվածները, և բարձր մակարդակում՝ 51 և ավելի % դրական պատասխան տվածները:

Առողջության ամրապնդման, արտաքին և ներքին անբարենպաստ գործոնների նկատմամբ օրգանիզմի դիմադրողականության ու ռեզերվային հնարավորությունների մեծացման հարցում կարևոր է նաև ճիշտ ապրելակերպը: ՈՒստի հարցաթերթիկում ընդգրկվեցին նաև հարցեր, որոնք վերաբերում էին առողջ ապրելակերպին և վնասակար սովորություններից զերծ լինելուն:

Հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 974 (69,6 %) ժամկետային պարտադիր զինծառայողներ նշեցին ինքնազգացողության վատացում և հիվանդագին վիճակ՝ կախված եղանակի փոփոխություններից (գծապատկեր 1): Ընդ որում, ցածր մակարդակի հիվանդագին եղանակազգայունություն նշել է նրանց 68,0 %-ը, միջին՝ 24,2 %-ը և բարձր՝ 7,8 %-ը: Ինչպես

[7] Տես *Ա. Հ. Քոթանյան,* ՀՀ կլիմայական վերընթաց գոտիները և որոշ ժողովրդագրական տվյալներ: «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդես, 2009, հմ. 3:

երևում է աղյուսակ 1-ից, միջին և բարձր եղանակազգայունության բարձր տոկոս արձանագրվել է Գյումրու (35,6 %) և Արարատի (38,8 %) զորամասերում:




Գծապատկեր 1. ՀՀ ԶՈՒ-ի տարբեր զորամասերում զինծառայողների շրջանում եղանակազգայուն հակազդումների տարածվածությունը

*Աղյուսակ 1*

ՀՀ ՏԱՐԲԵՐ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՂԱՆԱԿԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ

| Եղանակազգայունության մակարդակները | Զորամասեր | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյումրի | | Ճամբարակ | | Իջևան | | Գորիս | | Արարատ | | Սիսիան | |
| | n | % | n | % | n | % | n | % | n | % | n | % |
| Ցածր | 123 | 64,4 | 50 | 74,6 | 121 | 71,6 | 114 | 69,5 | 115 | 71,8 | 55 | 73,3 |
| Միջին | 51 | 26,7 | 15 | 22,4 | 38 | 22,5 | 38 | 23,2 | 53 | 28,2 | 12 | 16,0 |
| Բարձր | 17 | 8,9 | 2 | 3,0 | 10 | 5,9 | 12 | 7,3 | 20 | 10,6 | 8 | 10,7 |

Անհրաժեշտ էր պարզել, թե հատկապես որ շրջաններից եկածներն են նշել միջին և բարձր մակարդակների եղանակազգայունությունը: Պարզվեց, որ Սիսիանի կլիմայական գոտում տեղակայված զորամասում միջին և բարձր եղանակազգայունություն նշածների 83 %-ը նախկինում բնակվել են Երևանում, Շիրակում և Լոռիում (նրանք կազմում են զորամասում ծառայողների 53,8 %-ը), ուստի ներխմբային վերլուծությունը կատարվեց նրանց շրջանում: Արարատում տեղաբաշխված զորամասում միջին ու բարձր եղանակազգայունություն նշածների 62,5 %-ը շիրակցիներ էին, 45,8 %-ը՝ լոռեցիներ, և 32,3 %-ը՝ երևանցիներ (աղ. 2): Եղանակազգայունության առավել մեծ ցուցանիշ գրանցվել է լոռեցիների (29,1 %), ապա՝ Շիրակի դաշտավայրից եկածների (18,7 %) ու երևանցիների (10,7 %) շրջանում:

*Աղյուսակ 2*

ՍԻՍԻԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՂԱՆԱԿԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

| Բնակավայրը | Զինծառայողների թվաքանակը | | | |
|---|---|---|---|---|
| | ընդհանուր | | միջին և բարձր եղանակազգայունությամբ | |
| | n | % | n | % |
| Երևան | 65 | 28,9 | 21 | 32,3 |
| Շիրակ | 32 | 14,2 | 20 | 62,5 |
| Լոռի | 24 | 10,7 | 11 | 45,8 |

Գյումրու կլիմայական գոտում տեղակայված զորամասում միջին ու բարձր եղանակազգայունություն նշածների 92 %-ը Երևանից, Արարատից, Կոտայքից, Շիրակից և Տավուշից եկածներն էին (նրանք կազմում էին զորամասում ծառայողների ընդհանուր թվի 73,4 %-ը): Նրանց շրջանում կատարված ներխմբային վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել բարձր է Արարատից եկած երիտասարդների եղանակազգայունությունը, ապա՝ երևանցիներինը (8,9 %) և կոտայքցիներինը (3,3 %):

*Աղյուսակ 3*

ԳՅՈՒՄՐՈՒ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՂԱՆԱԿԱԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

| Բնակավայրը | Զինծառայողների թվաքանակը | | | |
|---|---|---|---|---|
| | ընդհանուր | | միջին և բարձր եղանակազգայունությամբ | |
| | n | % | n | % |
| Երևան | 78 | 26,0 | 31 | 39,7 |
| Արարատ | 17 | 5,7 | 11 | 64,7 |
| Կոտայք | 30 | 10,0 | 2 | 6,6 |
| Շիրակ | 86 | 28,7 | 5 | 5,8 |
| Տավուշ | 9 | 3,0 | 3 | 33,3 |

Պետք է կարևորել նաև այն փաստը, որ հիվանդագին եղանակազգայունություն նշած երիտասարդների 64,5 %-ը եղանակային կտրուկ փոփոխությամբ պայմանավորված ինքնազգացողության վատացում նկատել է ծառայության առաջին տարվա ընթացքում: Մինչդեռ նախքան ծառայությունը իրեն եղանակազգայուն է համարել այդ խմբի 1/3 մասը (աղ. 4):

Առողջ ապրելակերպի և եղանակազգայունության պատճառահետևանքային կապի վերլուծությունը ցույց է տալիս, որ ծխող երիտասարդների 72 %-ին բնորոշ է հիվանդագին եղանակազգայունությունը, ընդսմին նրանց 61 %-ն ունի բարձր մակարդակի եղանակազգայունություն:

*Աղյուսակ 4*

ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԻՆՔՆԱԶԳԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՏԱՐԲԵՐ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

| ժամանակահատվածը | Զորամաս | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյումրի | | Ճամբարակ | | Իջևան | | Գորիս | | Արարատ | | Սիսիան | | Ընդամենը | |
| | n | % | n | % | n | % | n | % | n | % | n | % | n | % |
| Մինչև 1 տարի (ծառայությունից առաջ) | 115 | 65,3 | 78 | 62,4 | 94 | 59,9 | 91 | 57,6 | 143 | 79,0 | 43 | 62,3 | 564 | 65,1 |
| Մինչև 5 տարի (ծառայությունից առաջ) | 51 | 29,0 | 42 | 33,6 | 52 | 33,1 | 56 | 35,4 | 31 | 17,1 | 24 | 34,8 | 256 | 29,6 |
| 5 և ավելի տարի (ծառայությունից առաջ) | 10 | 5,7 | 5 | 4 | 11 | 7,0 | 11 | 7,0 | 7 | 3,9 | 2 | 2,9 | 46 | 5,3 |
| Ընդամենը | 176 | 100 | 125 | 100 | 157 | 100 | 158 | 100 | 181 | 100 | 69 | 100 | 866 | 100 |

Հետազոտության ընթացքում չափվել է նաև ժամկետային պարտադիր զինծառայողների մարմնի զանգվածի ինդեքսը (ՄԶԻ)[8]: Պարզվել է, որ 25 կգ/մ$^2$-ից բարձր ցուցանիշ ունեցող 6,8 %-ի ժամկետային պարտադիր զինծառայողների 81 %-ը և 18,5 կգ/մ$^2$-ից ցածր ցուցանիշ ունեցող 1,6 %-ի 57 %-ը ունեն հիվանդագին եղանակազգայունություն: Տեղին է փաստել, որ եղանակազգայունություն նշած հետազոտվողների միայն 8 %-ի հետ են անցկացվել եղանակազգայուն հակազդումների կանխարգելման կամ ընթացքի թեթևացման միջոցառումներ:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ ժամկետային պարտադիր զինծառայողների մեծ մասը (69,6 %) ունի հիվանդագին եղանակազգայունություն, ընդսմին նրանց մոտ 1/3-ը՝ միջին և բարձր մակարդակի:

Եվ քանի որ հիվանդագին եղանակազգայունությունը օրգանիզմի հարմարվողական հնարավորությունների նվազման կարևոր ցուցանիշ է, ապա զինծառայողի լավ առողջական վիճակի և ընդհանուր առմամբ մեր ԶՈՒ-ի մարտունակության պահպանման համար անհրաժեշտ է ապահովել դրա վաղ ախտորոշումը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև շտկումը:

[8] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Լ. Գ. Հովհաննիսյան,* ՀՀ ԶՈՒ-ում ժամկետային պարտադիր զինծառայողների ֆիզիկական զարգացման հիգիենիկ բնութագիրը: «ՀԲ», 2010, հմ. 4:

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

# ИЗ ОПЫТА ХИРУРГИЧЕСКОГО ЛЕЧЕНИЯ РАКА КАРДИОЭЗОФАГЕАЛЬНОГО ПЕРЕХОДА

*Г. В. ТУНЯН, старший лейтенант м/с, кандидат медицинских наук, старший ординатор хирургического отделения ЦКВГ МО РА, А. М. ПАРСАДАНЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник ВМУ ВС РА, Г. С. ВОСКАНЯН, подполковник м/с, начальник отделения грудной хирургии ЦКВГ МО РА, А. С. ЗОГРАБЯН, подполковник м/с, доктор медицинских наук, начальник медицинской службы ЦКВГ МО РА, А. К. ОВЕЛЯН, подполковник м/с, начальник реанимационного отделения ЦКВГ МО РА, М. С. САМСОНЯН, майор м/с, клинический ординатор кафедры ВПХ ВМФ ЕГМУ, А. С. ХАЧАТРЯН, капитан м/с, кандидат медицинских наук, начальник патологоанатомической службы ЦКВГ МО РА, доцент кафедры патологической анатомии ЕГМУ, С. В. ЗАРГАРЯН, капитан м/с, врач-ординатор отделения анестезии ЦКВГ МО РА*

РЕЗЮМЕ

Кардиоэзофагеальный рак (КЭР) характеризуется высокой злокачественностью, плохим прогнозом. На сегодняшний день хирургический метод лечения остается единственно радикальным. Операциями выбора при КЭР являются проксимальная субтотальная резекция желудка и гастрэктомия. При этом наблюдается большое количество осложнений (23—62 %), послеоперационная летальность достигает 27,1 %. Формирование пищеводного соустья—один из самых ответственных моментов, нередко определяющих успех и эффективность всего лечения. Все большее число хирургов развитие различных патологических состояний (стойкий эзофагит, рубцовая стриктура и т. д.), проблему возвращения больных к качественной социальной жизни связывают с видом пищеводного соустья.

Описан клинический опыт оперативного лечения больного 60 лет, у которого была диагностирована умеренно дифференцированная аденокарцинома желудка с переходом на пищевод. Под комбинированным эндотрахиальным наркозом (ЭТН) выполнена радикальная операция Гарлока-Осавы: верхне-срединная лапаротомия, левосторонняя торакотомия, проксимальная субтотальная резекция желудка с абдоминальным сегментом пищевода, лимфодиссекция R2 с формированием инвагинационного пищеводно-желудочного соустья с применением узловых серозно-мышечных швов типа «Gold». В послеоперационном периоде адекватное обезболивание, ранняя активация больного были обеспечены применением высокой эпидуральной анальгезии на уровне торакальных сегментов Th6 — Th5. С послеоперационного 14-го дня в рамках комбинированного лечения проведены

два курса полихимиотерапии с 0-токсичностью. При плановом исследовании через 3 месяца (фагогастроденоскопия, полипозиционная контрастная рентгеноскопия желудочно-кишечного тракта) патологии в зоне пищеводно-желудочного соустья не выявлено: имеется аналог газового пузыря, слизистая — розовая, зона анастомоза сомкнутая, легко раскрывается, желудочно-пищеводного рефлюкса нет. Прибавка в весе составила 7 кг.

Авторами отмечена важность занятия вопросами хирургического лечения КЭР только хирургами-онкологами, имеющими солидный практический опыт работы с подобным сложным контингентом и навыки выполнения сложных реконструкций, применения высокой эпидуральной анальгезии, что позволяет минимизировать риск развития многих интраоперационных и послеоперационных осложнений. Соблюдение прецизионной техники формирования пищеводного анастомоза, применение узловых серозно-мышечных швов типа «Gold» позволяют в раннем послеоперационном периоде избежать развития несостоятельности швов анастомоза, добиться надежных функциональных результатов пищеводного соустья, рассчитывать на улучшение качества жизни оперированных больных в отдаленные сроки.

## ПЕРКУТАНТНАЯ ВЕРТЕБРОПЛАСТИКА КАК МЕТОД ВОССТАНОВЛЕНИЯ ОПОРНО-ДВИГАТЕЛЬНОЙ ФУНКЦИИ ПОЗВОНОЧНИКА

*А. П. АКОПЯН, капитан м/с, кандидат медицинских наук, начальник отделения нейрохирургии ЦКВГ МО РА, А. Г. ДАНИЕЛЯН, подполковник м/с, начальник отделения лучевой диагностики ЦКВГ МО РА, С. Г. СЕИНЯН, кандидат медицинских наук, заведующий отделением костной патологии Национального института онкологии им. Фанарджяна*

РЕЗЮМЕ

Впервые в Армении на базе нейрохирургического отделения ЦКВГ МО РА была выполнена вертебропластика 14 пациентам. Резюмируя полученные результаты, считаем, что перкутантная вертебропластика является весьма эффективным и новым минимально-инвазивным методом лечения больных с травматическим или онкологическим поражением позвоночника, вследствие которого нарушена опорно-двигательная функция позвоночника. Соблюдение показаний и противопоказаний при выборе больных, которым производится вертебропластика, а также соблюдение правильной методики сводят к минимуму риск возможных осложнений.

# ОПИСАНИЕ СЛУЧАЯ ОПЕРАТИВНОГО ЛЕЧЕНИЯ ПЕРЕЛОМА КОСТЕЙ ТАЗА В ЦКВГ МО РА

*Л. М. ЖАМАГОРЦЯН, майор м/с, доктор медицинских наук, начальник травматологического отделения ЦКВГ МО РА, А. С. ГАЛСТЯН, капитан м/с, врач-ординатор травматологического отделения ЦКВГ МО РА*

РЕЗЮМЕ

В статье представлен случай оперативного лечения нестабильного сложного многооскольчатого перелома левой половины костей таза (перелом по типу Мальгеня).

Больной получил множественные сочетанные травмы в результате ДТП: был диагностирован многооскольчатый перелом левой половины костей таза, разрыв селезенки с внутренним кровотечением, травматический шок II—III степени. По срочным показаниям была произведена спленэктомия. После стабилизации состояния больной был переведен в ЦКВГ, где ему была произведена компьютерная томография таза.

На КТ снимках было ясно видно, что у больного наблюдается многооскольчатый сложный перелом левой половины костей таза. Передняя колонна вертлужной впадины полностью открыта, в области задней колонны—неполный перелом, также многооскольчатый перелом крыла подвздошной кости. Стояние костных отломков в области крыла подвздошной кости и задней колонны вертлужной впадины весьма удовлетворительно. В области передней колонны имеется дефект, конгруэнтность суставной поверхности нарушена.

Больному под эндотрахеальным наркозом был произведен остеосинтез передней колонны вертлужной впадины с аутотрансплантацией костного дефекта в центральной части передней колонны.

Послеоперационный период протекал гладко. Реабилитационное лечение было начато на 15-ые сутки. Рентгеновские снимки, сделанные спустя 4 месяца после операции, показали практически сросшийся перелом. Опорная способность конечности полностью восстановилась, болевой синдром отсутствует, движения в тазобедренном суставе в полном объеме.

Таким образом, проблема лечения нестабильного сложного перелома таза может быть решена не только посредством применения неотложных мероприятий по спасению жизни пострадавшего, но и путем разработки и внедрения соответствующих систем и методов специализированного лечения.

# К ВОПРОСУ ХИРУРГИЧЕСКОГО ЛЕЧЕНИЯ АХАЛАЗИИ КАРДИИ

*Г. В. ТУНЯН, старший лейтенант м/с, кандидат медицинских наук, старший ординатор хирургического отделения ЦКВГ МО РА, А. М. ПАРСАДАНЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник ВМУ ВС РА, А. С. ЗОГРАБЯН, подполковник м/с, доктор медицинских наук, начальник медицинской службы ЦКВГ МО РА, А. К. ОВЕЛЯН, подполковник м/с, начальник реанимационного отделения ЦКВГ МО РА, М. С. САМСОНЯН, майор м/с, клинический ординатор кафедры ВПХ ВМФ ЕГМУ, А. Р. ГРИГОРЯН, подполковник м/с, ведущий хирург ЦКВГ МО РА, С. В. ЗАРГАРЯН, капитан м/с, врач-ординатор отделения анестезии ЦКВГ МО РА*

РЕЗЮМЕ

Наиболее распространенным нервно-мышечным заболеванием пищевода является ахалазия кардии (АК), или кардиоспазм, которая характеризуется отсутствием перистальтики всего пищевода и неспособностью кардии расслабляться в ответ на глотание в связи с органическими нарушениями интрамуральной иннервации. Основные клинические проявления АК (дисфагия, регургитация, боли за грудиной) обусловлены задержкой в пищеводе проглоченной пищи, изменением перистальтики и ослаблением тонуса пищеводной стенки. Окончательный диагноз устанавливается на основании рентгеноконтрастного, полипозиционного, эндоскопического исследований пищевода и желудка с обязательной морфологической верификацией биоптата из пищевода.

Для лечения АК в настоящее время применяются два основных метода: при I-II стадиях — кардиодилятация, а в III-IV стадиях ахалазии и при рецидивах после курса кардиодилятации — оперативное лечение. Наибольшее распространение в хирургическом лечении АК получили различные варианты внеслизистой эзофагокардиомиотомии, многие из которых ввиду определенных недостатков и технических просчетов неизбежно приводят к стенозу, стойкому рефлюкс-эзофагиту в послеоперационном периоде.

В статье описан клинический случай оперативного лечения ахалазии кардии III стадии, кахексии I-II степени. Больная неоднократно принимала схематичные курсы медикаментозного лечения — без заметного клинического эффекта. Операция проводилась под ЭТН и включала верхне-срединную лапаротомию, сагиттальную диафрагмотомию, внеслизистую эзофагокардиомиотомию, эзофагофренофундопластику по Суворовой-Беркутову с применением швов «Gold». Послеоперационный период протекал без осложнений, заживление раны — *per primam*. С третьих суток было разрешено питание через зонд, а через неделю — дробное питание *per os*. Уже в ближайшем послеоперационном периоде больная отмечала ежедневную положительную динамику состояния, практически исчезли все клинические проявления заболевания, астено-невротического синдрома, нормализовался сон.

На 21 сутки рентгеноконтрастным исследованием было отмечено, что тонус пищеводной трубки восстановлен, исчезло супрастенотическое расширение, отсутствуют остатки пищевых масс в пищеводе. При выписке прибавка в весе составила 3 кг.

Таким образом, несмотря на техническую сложность и уязвимость, оперативное лечение АК является единственно надежным методом, позволяющим рассчитывать на излечение. Применение внеслизистой эзофагокардиомиотомии с модифицированной эзофагофренофундопластикой по Суворовой-Беркутову с применением швов «Gold» позволяет в послеоперационном периоде избежать развития стриктур и эзофагитов, прогнозировать хорошее качество жизни.

## РАСПРОСТРАНЕННОСТЬ И ОСОБЕННОСТИ МЕТЕОПАТИЧЕСКИХ РЕАКЦИЙ СРЕДИ ВОЕННОСЛУЖАЩИХ СРОЧНОЙ СЛУЖБЫ ВОЙСКОВЫХ ЧАСТЕЙ, РАСПОЛОЖЕННЫХ В РАЗЛИЧНЫХ КЛИМАТИЧЕСКИХ ЗОНАХ РА

*Л. Р. АВЕТИСЯН, доктор медицинских наук, профессор, заведующая кафедрой гигиены и экологии ЕГМУ, Л. Г. ОГАНИСЯН, капитан м/с, аспирант, старший преподаватель цикла военной токсикологии, радиологии и медицинской защиты Военно-медицинского факультета ЕГМУ, А. Г. КОТАНЯН, кандидат медицинских наук, доцент, лектор кафедры гигиены и экологии ЕГМУ*

РЕЗЮМЕ

Среди военнослужащих-срочников семи войсковых частей ВС РА, расположенных в различных климатических зонах, посредством разработанного авторами метода анкетирования были исследованы распространенность и особенности метеопатических реакций. Оказалось, что почти 70 % респондентов метеочувствительны; из них средний и высокий уровень метеочувствительности отметили 32 % (соответственно, 24,2 и 7,8 %). В войсковых частях с распространенной высокой метеочувствительностью был проведен внутригрупповой анализ на предмет выявления тех районов Армении, из которых были призваны юноши с высоким уровнем метеочувствительности. Была исследована также связь между здоровым образом жизни, ИМТ показателем и метеочувствительностью.

Раннее выявление лиц с повышенной метеочувствительностью позволит организовать профилактику предотвращения перехода предболезненного состояния в заболевание и тем самым обеспечить высокий уровень боеспособности ВС РА.

**MILITARY MEDICINE**

# FROM THE EXPERIENCE OF THE SURGICAL TREATMENT OF CARDIOESOPHAGEAL PASSAGE CANCER

*G. V. TUNYAN, Senior Lieutenant of Medical Service, PhD in Medical Sciences, Senior Resident at the Surgical Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, A. M. PARSADANYAN, Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Professor, Head of the Military-Medical Directorate of the RA Armed Forces, G. S. VOSKANYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Head of the Branch of Thoracic Surgery of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, A. S. ZOHRABYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Head of the Medical Service of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, A. K. HOVELYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Head of the Resuscitation Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, M. S. SAMSONYAN, Major of Medical Service, Clinical Resident at the Chair of Field Surgery of the Military Medical Faculty, YSMU, A. S. KHACHATRYAN, Captain of Medical Service, PhD in Medical Sciences, Head of the Pathoanatomic Service of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, Associate Professor at the Chair of Pathoanatomy, YSMU, S. V. ZARGARYAN, Captain of Medical Service, Medical Resident at the Anaesthetics Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA*

SUMMARY

Cardioesophageal cancer (CEC) is characterized by high malignancy, and poor prognosis. Today the surgical treatment technique remains the only radical treatment of CEC. The operations of choice at CEC are proximal subtotal gastric resection and gastrectomy. Thus, a large quantity of complications (23–62 %) is observed, the postoperative mortality reaches 27,1 %. The formation of the esophageal orifice is one of the most critical moments, often determining the success and effectiveness of the whole treatment. An increasing number of surgeons associate the development of various pathological states (intractable esophagitis, corrosive stricture, etc.), the problem of patients' return to social life of high quality with the type of esophageal orifice.

A clinical experience of the surgical treatment of a 60-year-old patient with the diagnosis of moderately differentiated adenocarcinoma of the stomach with the transition into esophagus is described. The patient underwent radical surgery of Garlock-Osawa under endotracheal anaesthesia (ETA): upper-middle laparotomy, left-sided thoracotomy, proximal subtotal gastrectomy with abdominal segment of esophagus, lymphodissection R2 with the formation of invaginated esophageal-gastric orifice applying nodal seromuscular sutures of «Gold» type. Postoperatively, an adequate pain relief, the patient's early activation were ensured with the application of high epidural analgesia at the level of Th6–Th5 thoracic segments. Two

courses of polichemotherapy with 0 toxicity were conducted on the 14th postoperative day within the framework of the combined treatment. A planned examination within 3 months (fagogastrodenoscopy, poliposition contrast Rg-scopy of gastrointestinal tract) did not reveal pathology in the area of esophageal-gastric orifice; there is an analogue of a gas bubble, mucous membrane is pink, the anastomosis zone is close, it easily opens, there is no esophageal-gastric reflux. The weight gain is 7 kg.

The authors highlight the importance of the fact that only surgeons-oncologists who have a considerable practice of working with this complex contingent and skills of implementing complex reconstructions, as well as using high epidural analgesia should deal with the problems of the surgical treatment of cardioesophageal passage cancer. That will help to minimize the risk of the development of many intraoperative and postoperative complications. The adherence to the precision art of forming the esophageal anastomosis, the application of nodal seromuscular sutures of «Gold» type allow to avoid the development of the anastomotic sutures deficiency in the early postoperative period, achieve reliable functional results of the esophageal orifice, expect the improvement in the life quality of the operated patients in long-term time-frame.

## PERCUTANEOUS VERTEBROPLASTY AS A METHOD OF RECONSTRUCTING THE LOCOMOTIVE FUNCTION OF SPINE

*A. P. HAKOBYAN, Captain of Medical Service, PhD in Medical Sciences, Head of the Neurosurgical Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, A. H. DANIELYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Head of the Branch of Radiodiagnosis of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, S. G. SEHINYAN, PhD in Medical Sciences, Chief of the Branch of Bone Pathology of Fanarjyan National Oncology Center*

SUMMARY

The percutaneous vertebroplasty was performed on 14 patients for the first time in Armenia on the basis of the Neurosurgical Branch of the CCMH, MOD, RA. Summarizing the results we think that percutaneous vertebroplasty is a quite efficient and new, minimally invasive technique of treating patients with traumatic or tumorous lesion of vertebral body, and this results in breaking the locomotive function of spine. The compliance with indications and contraindications while choosing the patients subject to vertebroplasty, as well as the compliance with a right technique, minimize the risk of possible complications.

# THE DESCRIPTION OF THE CASE OF SURGICAL TREATMENT OF PELVIC FRACTURE IN THE CENTRAL CLINICAL MILITARY HOSPITAL OF THE MINISTRY OF DEFENSE OF THE REPUBLIC OF ARMENIA

*L. M. ZHAMAGORTSYAN, Major of Medical Service,*
*Doctor of Medical Sciences, Head of the Traumatological Branch*
*of the Central Clinical Military Hospital of the MOD, RA,*
*A. S. GALSTYAN, Captain of Medical Service, Medical Resident*
*at the Traumatological Branch of the Central Clinical Military Hospital*
*of the MOD, RA*

SUMMARY

This article presents the case of surgical treatment of unstable complicated multi-comminuted fracture of the left half of the pelvic bones (Malgen's fracture).

The patient sustained multisystem traumas in a traffic accident: multi-comminuted fracture of the left half of the pelvic bones, rupture of the spleen with internal haemorrhage, traumatic shock of the II-III degrees were diagnosed. Splenectomy was performed according to the urgent indications. After the patient's state stabilization he was transferred to the CCMH, where the computer-aided tomography of the pelvis was performed on him.

As it was clearly seen from the CAT photographs the patient had complicated multi-comminuted fracture of the left half of the pelvic bones. The front column of the acetabulum is completely open, in the posterior column there is an incomplete fracture, as well as a multi-comminuted fracture of the iliac wing. The standing of bone fragments in the area of the iliac wing and the posterior column of the acetabulum is quite satisfactory. There is a bone defect in the front column; the congruence of articular surface is broken.

Osteosynthesis of the front column of the acetabulum with auto-transplantation of an osseous defect in the central part of the front column was performed on the patient under endotracheal anaesthesia.

The postoperative period took its normal course. Rehabilitation treatment began on the 15th day. The X-ray photographs taken after 4 months of the operation showed that there was a practically consolidated fracture. Supporting ability of the limb was completely restored, the pain was gone, and the movements in the hip joint were in full.

Thus, the problem of treatment of unstable complicated pelvic fracture can be solved not only through the fulfilment of urgent steps on saving the life of the injured, but also by elaborating and introducing appropriate systems and methods for specialized treatment.

# TO THE PROBLEM OF THE SURGICAL TREATMENT OF CARDIAL ACHALASIA

*G. V. TUNYAN, Senior Lieutenant of Medical Service, PhD in Medical Sciences, Senior Resident at the Surgical Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, A. M. PARSADANYAN, Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Professor, Head of the Military-Medical Directorate of the RA Armed Forces, A. S. ZOHRABYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Doctor of Medical Sciences, Head of the Medical Service of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, A. K. HOVELYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Head of the Resuscitation Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA, M. S. SAMSONYAN, Major of Medical Service, Clinical Resident at the Chair of Field Surgery of the Military Medical Faculty, YSMU, A. R. GRIGORYAN, Lieutenant-Colonel of Medical Service, Leading Surgeon at the Central Clinical Military Hospital of the MOD, RA, S. V. ZARGARYAN, Captain of Medical Service, Medical Resident at the Anaesthetics Branch of the Central Clinical Military Hospital of the MOD, RA*

SUMMARY

Cardial achalasia (CA) or cardiospasm is the most commonplace neuromuscular disease of esophagus which is characterized by the absence of peristalsis of the whole esophagus and cardiac inability to relax after swallowing because of the organic disorders of intramural innervation. The main clinical manifestations of CA—dysphagia, regurgitation, and chest pain – are conditioned by the delay of swollen food in esophagus, the change of peristalsis and the weakening of esophageal wall tone. The final diagnosis is ascertained on the basis of radiopaque, polipositional, endoscopic examinations of esophagus and stomach with the required morphological verification of the biopsy sample from the esophagus.

There are currently two main methods in use for the treatment of CA: cardiodilatation—in the I-II stages, and surgical treatment—in the III and IV stages of achalasia and at the relapses after a course of cardiodilatation. Different alternatives of esophageal extramucous cardiomiotomy got mostly spread at the surgical treatment of CA. Many of them in the postoperative period inevitably bring to stenosis, intractable reflux-esophagitis because of certain deficiencies and technical miscalculations.

A medical case of surgical treatment of CA of III stage, cachexia of the I-II degree is described in the article. The patient took schematic courses of drug therapy more than once, but without an apparent clinical performance. The operation was performed under the endotracheal general anesthesia and included intermediate laparotomy, sagittal diaphragmatomy, esophageal extramucous cardiomiotomy, and esophageal frenofundoplastic by Suvorova-Berkutov using «Gold» sutures. The postoperative period was taking its normal course without complications, the cicatrization – *per primam*. A feeding through probe was allowed starting from the third day, and the fractional feeding *per os* – after a week. The patient reported a

daily positive dynamic of her state, all the clinical manifestations of disease, of asthenico-neurotic syndrome had almost disappeared, she returned to a normal sleep already in the nearest postoperative period. It was recorded that at the 21-day examination with radiopaque the tone of esophageal tube was restored, the suprastenotic dilatation disappeared; there were no food masses' remnants in the esophagus. The weight gain was 3 kg at discharge.

Thus, despite the technical complexity and vulnerability, the surgical treatment of CA is the only reliable method giving hope for a cure. The application of extramucous esophageal cardiomiotomy together with modified esophageal frenofundoplastic by Suvorova-Berkutov using «Gold» sutures prevents the development of strictures and esophagitis in postoperative period, predicting a good quality of life to patients.

## THE PREVALENCE AND PECULIARITIES OF METEOPATHIC REACTIONS AMONG DRAFTEES IN MILITARY UNITS LOCATED IN DIFFERENT CLIMATIC ZONES OF THE REPUBLIC OF ARMENIA

*L. R. AVETISYAN, Doctor of Medical Sciences, Professor, Head of the Chair of Hygiene and Ecology of the YSMU, L. G. HOVHANNISYAN, Captain of Medical Service, Graduate Student, Senior Lecturer of the Series of Military Toxicology, Radiology and Medical Protection of the Military-Medical Faculty of the YSMU, A. H. QOTANYAN, PhD in Medical Sciences, Associate Professor, Lecturer at the Chair of Hygiene and Ecology of the YSMU*

SUMMARY

The prevalence and peculiarities of meteopathic reactions were studied through the survey method elaborated by the authors among draftees in 7 military units of the RA Armed Forces located in different climatic zones. It was found out that about 70 % of respondents were meteosensitive, and the average and high levels of meteosensitivity among them made 32 % (respectively 24,2 and 7,8 %). An intragroup analysis was performed in the military units with prevailing high meteosensitivity to find out which regions of Armenia the boys having high level of meteosensitivity come from. The connection among healthy lifestyle, Bodymass Index and meteosensitivity was also examined.

The early revelation of persons with heightened meteosensitivity will make it possible to prevent the transition of presickliness into a disease, thereby to ensure high level of fighting efficiency of the RA Armed Forces.

# ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՎ ԽԹԱՆՎՈՂ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՓՈԽՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Ս. Ա. ԱՆՏՈՆՅԱՆ, հոգեբանության մագիստրոս*

Անձի[*] հոգեկան աններդաշնակության և գործունեության արդյունավետության անկման պատճառներից է հուզական սպառման համախտանիշը *(синдром эмоционального выгорания; Burnout Syndrome),* երբ ցայտունորեն արտահայտված են մարդու անբավարարության, ունայնության, ձանձրույթի, անտարբերության, գերհոգնածության զգացումը, սպառված են նրա հոգեկան ու ֆիզիկական ուժերը և այլն[1]: Հուզական սպառում ասելով նկատի ունենք մասնագիտական գործունեության մեջ տեղի ունեցող այն փոփոխությունները, որոնք պայմանավորված են օրգանիզմի էներգիայի նվազմամբ: Հուզական սպառման համախտանիշի դրսևորման

[*] Հոդվածում ռուսերեն *«личность»* տերմինի դիմաց (հակառակ մեր հանդեսում ընդունված տերմինաբանության) օգտագործված է ներկայումս Հայաստանում հոգեբանական գիտության բնագավառում տարածում ստացած «անձ» սխալ տերմինը: Մինչդեռ «Հայկական սովետական հանրագիտարանում» «անձ» տերմինը ներկայացված է միայն որպես «անձ իրավաբանական» *(юридическое лицо),* իսկ որպես *«личность»-ի* ճիշտ հայերեն համարժեք տրվում է «անձնավորություն» տերմինը, որը սահմանվում է որպես՝ «մարդկային անհատն իր հոգեբանական կերպարով՝ բնավորությամբ, խառնվածքով, մտավոր, կամային, զգացմունքային առանձնահատկություններով: Մարդը ծնվում է բնածին որոշակի ունակություններով, որոնց հետագա զարգացումը որոշվում է կյանքի պայմաններով: Կենսաբանական գործոններն ունեն ելակետային, բայց ոչ որոշիչ նշանակություն: Ա. ձևավորվում է կրթության, դաստիարակության և միջավայրի անմիջական ազդեցությամբ: Մարդը հասարակական միջավայրի ծնունդ է: Ա-յան հոգևոր կերպարի մեջ պետք է տարբերել երկու կողմ՝ հասարակական և զուտ անհատական: Հասարակական կողմն արդյունք է կյանքի հասարակական պայմանների, և նրանով որոշվում է մարդու սոցիալական տիպը: Անհատական կողմը, անհատականությունը որոշվում է մարդու կյանքի անհատական պայմաններով (նաև բնածին տվյալներով), և դրանով նա տարբերվում է մյուս բոլոր մարդկանցից» (տես «Հայկական սովետական հանրագիտարան»: Ե., 1974, հ. 1, էջ 428):–*Խմբ.*:

[1] Տես *С. Н. Леонтьева.* Синдром выгорания у сотрудников психиатрических служб: модель формирования и масштаб проблемы. «Социальная и клиническая психиатрия», 2004, № 4; *C. Maslach, M. P. Leiter.* The truth about burnout: How organizations cause personal stress and what to do about it. San Francisco, 1997:

դեպքում նվազում է մարդու գործունեության արդյունավետությունը, մեծանում է սխալների քանակը, առաջանում է խնդիրներից զատվելու ձգտում[2]:

Այս տեսանկյունից անձի ներդաշնակ զարգացման և հրամանատարի (ղեկավարի) մասնագիտական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման համար կարևոր է պարզել այն գործոնները, որոնք նպաստում են արդյունավետության մեծացմանը և խոչընդոտում են հուզական սպառման համախտանիշի դրսևորմանը: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է վերլուծել շարժառիթների ձևավորման դինամիկական պրոցեսը և դրանց ազդեցությունը հուզական սպառման համախտանիշի դրսևորման ու գործունեության արդյունավետության վրա: Պատահական չէ, որ հոգեբանական գիտության բնագավառի մասնագետները առանձնացնում են **արտաքին** *(էքստրինսիվ),* այսինքն՝ արտաքին գործոններով խթանվող, շարժառիթները, ինչպիսիք են, օրինակ, հասարակության, մարդկանց խմբի, առանձին մարդկանց նկատմամբ պարտքի ու պատասխանատվության շարժառիթները, բարձր սոցիալական կարգավիճակ ձեռք բերելու ձգտումը (վարքային շարժառիթավորում), անախորժությունից ու պատժից խուսափելու շարժառիթները, խրախուսանքը և այլն, և **ներքին** *(ինտրինսիվ),* այսինքն՝ ընթացաբովանդակային, շարժառիթները, երբ մարդուն ակտիվության է մղում գործունեության ընթացքի և բովանդակության նկատմամբ հետաքրքրությունը, նրան դուր է գալիս կատարել տվյալ գործունեությունը, ցուցաբերել մտավոր ու ֆիզիկական ակտիվություն[3]: Հ. Հեկհաուզենը, վերլուծելով ներքին և արտաքին շարժառիթավորման հայեցակարգները, նշում է, որ դրանց համար միակ ընդհանուրը ներքին գործոններով շարժառիթավորված վարքի ընկալումն է որպես հանուն իր կամ իր հետ սերտորեն կապված նպատակային վիճակների կատարվող գործողության[4]:

Հուզական սպառման համախտանիշը բնորոշ է ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական ոլորտի ղեկավար մասնագետներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանական համակարգում որոշ չափով նկատելի են ռազմական բնագավառի կադրերի գործունեության շարժառիթավորման ոլորտի ձևախախտում, նրանց շրջանում զինվորական ծառայության անհրաժեշտության, անձնային ու հանրային նշանակալիության մեջ համոզվածության կորուստ, մենք կարևորում ենք ՀՀ ԶՈՒ-ում այդ պրոբլեմի դրսևորման պատճառահետևանքային կապերի պարզումը:

Հայտնի խորհրդային հոգեբան Ն. Ի. Նայենկոն գործունեության արդյունավետության և արտաքին ու ներքին գործոններով խթանվող շարժառիթների կապը պարզելու նպատակով հետազոտել է ընթացաբովանդակային և ինքնահաստատման շարժառիթների (ներուժային հնարավորությունները իրականաց-

[2] Տես *С. В. Колосова.* К вопросу о синдроме сгорания. «Арт Маркетинг» (приложение к журналу «Практический Маркетинг»), 2007, № 3:

[3] Տես *С. Занюк.* Психология мотивации. К., 2002, сс. 65–67; *Е. П. Ильин.* Мотивация и мотивы. СПб., 2002, сс. 67–68:

[4] Տես *Х. Хекхаузен.* Мотивация и деятельность. СПб., 2003, с. 717:

նելու ձգտում, հոգեբանական կարգավիճակ և ճանաչում ձեռք բերելու, ինքնահարգանքի, հարգանքի պահանջմունք) ազդեցությունը հոգեկան լարվածության վրա: Ըստ հետազոտական տվյալների վերլուծության արդյունքների՝ Նայենկոն առանձնացրել է երկու տեսակի հոգեկան լարվածություն՝ օպերացիոն (գործառական) (ՕԼ) և հուզական (ՀԼ): Առաջինը պայմանավորված է ընթացաբովանդակային, երկրորդը՝ ինքնահաստատման շարժառիթների գերակայությամբ: ՕԼ-ի ժամանակ նպատակը և շարժառիթը կա՛մ համընկնում են, կա՛մ դրանց միջև տարբերությունը չնչին է: Այլ կերպ ասած՝ գործունեության օբյեկտիվ և սուբյեկտիվ բովանդակությունները մոտ են, անմիջական հետաքրքրություն է առաջանում հենց գործունեության բովանդակության նկատմամբ, երբ մարդը կենտրոնանում է խնդրի կատարման վրա: Հոգեբանական գրականության մեջ դա համարվում է արդյունավետ գործունեության կարևոր պայմաններից մեկը: ՕԼ-ն մոբիլիզացնող ազդեցություն է գործում անձի վրա և նպաստում նրա աշխատունակության կայունությանը: ՀԼ ժամանակ նպատակը և շարժառիթը միանգամայն տարբեր են: Օպերացիոն լարվածության դեպքում շարժառիթի և նպատակի համապատասխանությունը առաջացնում է հուզական հարմարավետություն, իսկ անհամապատասխանությունը հանգեցնում է այդ հարմարավետության խախտմանը, խորը և ուժեղ հուզական ապրումների, ինչն էլ նկատվում է հուզական լարվածության դեպքում[5]:

Խորհրդային հոգեբան Մ. Ս. Նեյմարկը նշում է, որ գործունեության բովանդակության նկատմամբ առկա հետաքրքրությունը խոչընդոտում է անհաջողության նկատմամբ սուր հուզական արձագանքի (լարվածության) առաջացմանը: Իսկ Ն. Ի. Նայենկոն եկել է այն եզրակացությանը, որ ՕԼ-ն և ՀԼ-ն տարակերպ են ազդում գործունեության արդյունավետության վրա, մասնավորապես՝

1. ՕԼ-ի ժամանակ օպերատիվ հիշողության և օպերատիվ մտածողության պրոցեսները ավելի կայուն են, մինչդեռ ՀԼ վիճակում դրանք կորցնում են իրենց ակտիվ բնույթն ու ճկունությունը, ինչը փաստացի հանգեցնում է գործունեության արդյունավետության նվազմանը,
2. ՀԼ վիճակում մտավոր խնդիրների լուծման որակը կտրուկ կերպով վատանում է. ոչ միայն ավելանում է սխալների թիվը, այլև փոխվում է դրանց որակը (մեծանում է կոպիտ սխալների թիվը),
3. ՕԼ-ի և ՀԼ վիճակները տարակերպ են ազդում վարքի կայունության, ինքնավերահսկողության հմտությունների դրսևորման վրա: Եթե ՕԼ-ի ժամանակ նկատվում էր իր ուժերի նկատմամբ վստահություն, նյարդայնության բացակայություն, սխալներ թույլ տալու դեպքում համարժեք վարքագծային դրսևորումներ՝ ուղղված դրանց շտկմանը, ապա ՀԼ դեպքում փորձարկվողների մի մասը ցուցաբերում էր գրգռողականություն, անհամբերություն, անհաջողության դեպքում ստեղծված իրավիճակի պատճառները նրանք վերագրում էին արտաքին գործոններին[6]:

[5] Տես *Н. И. Наенко.* Психическая напряжённость. М., 1976, сс. 41–44:

[6] Տես նույն տեղում, էջ 66–68:

Ն. Ի. Նայենկոյի կատարած հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընթացաբովանդակային շարժառիթների գերակայության դեպքում գործունեության արդյունավետության վերը նշված ցուցանիշները առանձնանում են իրենց կայունությամբ, իսկ արտաքին գործոններով խթանվող ինքնահաստատման շարժառիթների առաջնայնությունը հանգեցնում է դրանց անկայունությանը: Ուստի հարց է առաջանում, թե արդյոք կայունությամբ է պայմանավորված գործունեության մեծ արդյունավետությունը:

Արտաքին և ներքին գործոններով խթանվող շարժառիթների դերը հուզական սպառման համախտանիշի դրսևորման և գործունեության արդյունավետության վրա այդ համախտանիշի ազդեցությունը պարզելու նպատակով մենք հետազոտել ենք ՀՀ ԶՈՒ-ի 138 սպաների՝ գումարտակի, վաշտի, դասակի հրամանատարների: Հետազոտության ընթացքում հատկապես կարևորվել է կոնկրետ պաշտոնում հրամանատարների աշխատանքային ստաժը, քանի որ ենթադրվում էր, որ հուզական սպառմանը հանգեցնող արտաքին ու ներքին գործոններով խթանվող շարժառիթները և հրամանատարի գործունեության արդյունավետությունը՝ կախված կոնկրետ պաշտոնում աշխատանքային ստաժից, ունեն տարբեր դրսևորումներ:

Ներքին և արտաքին գործոններով խթանվող շարժառիթների ուսումնասիրության համար ընտրել ենք «Աշխատանքային գործունեության շարժառիթների կառուցվածքը» մեթոդիկան, որը մշակել է Կ. Զամֆիրը:

Շարժառիթների ուսումնասիրության մյուս մեթոդիկան «Աֆիլյացիայի շարժառիթներ» մեթոդիկան է: Այն Ա. Մեհրաբյանի թեստի՝ Մ. Շ. Մուհամեդ-Էմինովի կողմից վերամշակված տարբերակն է, որը նախատեսված է 2 ընդհանրացված կայուն շարժառիթների՝ շրջապատի կողմից ընդունված լինելու ձգտման և մերժման վախի չափման համար:

Հուզական սպառման մակարդակը պարզելու համար կիրառել ենք Վ. Վ. Բոյկոյի «Հուզական սպառման մակարդակի ախտորոշում» մեթոդիկան:

Հրամանատարի գործունեության արդյունավետությունը պարզելու նպատակով կիրառվել է «Ղեկավարի գործունեության արդյունավետության փորձագիտական գնահատում» մեթոդիկան, իսկ գործարար որակների արտահայտվածության աստիճանը պարզելու համար՝ «Անձնային և գործարար որակների փորձագիտական գնահատում» մեթոդիկան:

Մեր կողմից կատարված հետազոտության տվյալները ենթարկվել են համահարաբերակցական վերլուծության: Այն կատարվել է համակարգչային *SPSS* հաշվողական ծրագրի կիրառմամբ՝ Սպիրմենի համահարաբերակցական գործակցի հաշվառմամբ: Որպես տվյալների հավաստիության նշանակալիության մակարդակներ ընտրվել են՝ $p \leq 0,05$ և $p \leq 0,01$:

Նշենք, որ ՀՀ ԶՈՒ-ի սպաների շրջանում կատարված հետազոտությունների միջոցով ուղիղ կապ է գրանցվել արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների ու հրամանատարի գործունեության արդյունավետության ($r=0,334$, $n=138$, $p\leq0,01$), ընդունված լինելու ձգտման ու հրամանատարի գոր-

ծունեության արդյունավետության (r=0,254, n=138, p≤0,05), արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների ու գործարարության (r=0,319, n=138, p≤0,01) միջև (գործարարության բարձր ցուցանիշները արդյունավետ ղեկավարման համար հրամանատարի անհրաժեշտ գործարար որակների արտահայտվածության բարձր մակարդակի վկայությունն են): Ուղիղ կապ է գրանցվել նաև արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների և ընդունված լինելու ձգտման միջև (r=0,329, n=138, p≤0,01): Մեր վերլուծությունների համար հատկապես կարևորվում է հրամանատարի գործունեության արդյունավետության և հուզական սպառման համախտանիշի (r=–0,500, n=138, p≤0,01), հուզական սպառման ու գործարարության (r=–0,343, n=138, p≤0,01), արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների ու կոնկրետ պաշտոնում աշխատանքային ստաժի (r=–0,256, n=138, p≤0,05), հրամանատարի գործունեության արդյունավետության ու կոնկրետ պաշտոնում աշխատանքային ստաժի (r=–0,390, n=138, p≤0,01) միջև հակադարձ կապի հայտնաբերումը: Իսկ կոնկրետ պաշտոնում աշխատանքային ստաժի ու հուզական սպառման համախտանիշի միջև հայտնաբերվել է ուղիղ համահարաբերակցական կապ (r=0,350, n=138, p≤0,01) (տես գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Շարժառիթների ազդեցությունը հուզական սպառման համախտանիշի դրսևորման և հրամանատարի գործունեության արդյունավետության վրա
(հոծ գծով նշագրված է թույլ, հոծ կրկնակի գծով՝ ցայտունորեն արտահայտված ուղիղ հարաբերակցական կապը, ընդհատվող գծով նշագրված է թույլ, ընդհատվող կրկնակի գծով՝ ցայտունորեն արտահայտված հակադարձ հարաբերակցական կապը)

Հետազոտական տվյալների համահարաբերակցական վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս փաստելու, որ արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների (դրամական բավարարում, պաշտոնեական առաջխաղացում, ուրիշների կողմից հարգված լինելը) և ընդունված լինելու ձգտման ցայտուն արտահայտվածության դեպքում հրամանատարին բնորոշ են գործունեության մեծ արդյունավետություն, գործարար որակների արտահայտվածություն, սակայն կոնկրետ պաշտոնում երկար աշխատելուց հետո նկատ-

վում են հուզական սպառման համախտանիշի դրսևորում և գործունեության արդյունավետության նվազում, նվազում են նաև գործարար որակների արտահայտվածության ցուցանիշը, արտաքին գործոններով խթանվող շարժառիթների ինտենսիվությունը, ընդունված լինելու ձգտումը:

Պարզվել է նաև, որ հուզական սպառման համախտանիշի և ինքնահարգման ($r=-0,323$, $n=138$, $p\leq0,01$) միջև գոյություն ունի հակադարձ կապ, մինչդեռ հուզական սպառման համախտանիշի և մերժման վախի ($r=0,260$, $n=138$, $p\leq0,05$) միջև գրանցվել է ուղիղ կապ, իսկ ինքնահարգման և գործարարության ($r=-0,329$, $n=138$, $p\leq0,01$) միջև՝ հակադարձ կապ: Հակադարձ կապեր են գրանցվել նաև մերժման վախի և արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների ($r=-0,296$, $n=138$, $p\leq0,05$), մերժման վախի և ինքնահարգման ($r=-0,286$, $n=138$, $p\leq0,05$), մերժման վախի և գործարարության ($r=-0,346$, $n=138$, $p\leq0,01$), գործարարության և հուզական սպառման համախտանիշի ($r=-0,343$, $n=138$, $p\leq0,01$) միջև: Նշված կապերը առավել ակներև դարձնելու նպատակով նպատակահարմար ենք համարում դրանք ներկայացնել աղյուսակի տեսքով.

*Աղյուսակ 1*

ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ
(N=138 ($p\leq0,05$)`* ($p\leq0,01$)`**)

| Հատկություններ | **արտաքին** գործոններով խթանվող շարժառիթներ | ընդունված լինելու ձգտում | ղեկավարման արդյունավետություն | հուզական սպառման համախտանիշ | աշխատանքային ստաժ | մերժման վախ | ինքնահարգում | **ներքին** գործոններով խթանվող շարժառիթներ | գործարարություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **արտաքին** գործոններով խթանվող շարժառիթներ | 1,000 | 0,329** | 0,334** | -0,168 | -0,256* | -0,296* | 0,212 | 0,203 | 0,319** |
| ընդունված լինելու ձգտում | 0,329** | 1,000 | 0,254** | -0,031 | -0,200 | -0,092 | 0,003 | -0,012 | 0,081 |
| ղեկավարման արդյունավետություն | 0,334** | 0,254** | 1,000 | -0,500** | -0,390** | -0,054 | 0,224 | 0,215 | 0,159 |
| հուզական սպառման համախտանիշ | -0,168 | -0,031 | -0,500** | 1,000 | 0,350** | 0,260* | -0,323** | -0,499** | -0,343** |
| աշխատանքային ստաժ | -0,256* | -0,200 | -0,390** | 0,350** | 1,000 | 0,189 | -0,030 | -0,153 | -0,137 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| մերժման վախ | -0,296* | -0,092 | -0,054 | 0,260* | 0,189 | 1,000 | -0,286* | -0,309** | -0,346** |
| ինքնահարգում | 0,212 | 0,003 | 0,224 | -0,323** | -0,030 | -0,286* | 1,000 | -0,363** | 0,329** |
| **ներքին** գործոններով խթանվող շարժառիթներ | 0,203 | -0,012 | 0,215 | -0,499** | -0,153 | -0,309** | -0,363** | 1,000 | 0,201 |
| գործարարություն | 0,319** | 0,081 | 0,159 | -0,343** | -0,137 | -0,346** | 0,329** | 0,201 | 1,000 |

Հետազոտական տվյալների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ միևնույն պաշտոնում կարճ աշխատանքային ստաժի դեպքում, երբ արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթները ցայտունորեն արտահայտված են, ղեկավարման արդյունավետության և գործարարության մակարդակները բարձր են, իսկ հուզական սպառման մակարդակը՝ ցածր: Ավելին. բարձր է հրամանատարի ինքնահարգման ցուցանիշը, թույլ է արտահայտված մերժման վախը, սակայն երբ սպան երկար է աշխատում միևնույն պաշտոնում, հուզական սպառման ցուցանիշը աճում է, իսկ գործունեության արդյունավետության մակարդակը, գործարար որակների արտահայտվածության աստիճանը, արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների ազդեցությունը, ինքնահարգման ցուցանիշը նվազում են, մեծանում է մերժման վախի ցուցանիշը:

Ինչո՞վ է պայմանավորված այդ ամենը:

1. *Արտաքին գործոններով խթանվող գերակա սպասումների բավարարումը հանգեցնում է արտաքին գործոններով խթանվող շարժառիթների թուլացման:* Եթե վարքի հիմքում գերակայում են արտաքին գործոններով խթանվող շարժառիթները, ապա հրամանատարի գործունեության հիմքն է արտաքին գործոններով խթանվող գերակա սպասումը (շրջապատի կողմից ընդունված լինելու, իշխանություն ունենալու, գումար վաստակելու, պաշտոնեական առաջխաղացում ունենալու և այլ տեսքով) և որոշ ժամանակ անց՝ տվյալ պաշտոնում երկար աշխատելու ընթացքում, նա կարող է բավարարել այդ սպասումը: Ուստի սպասումը բավարարված լինելու հետևանքով արտաքին գործոններով խթանվող շարժառիթների ուժը թուլանում է, անձը դառնում է իր գործունեության նկատմամբ անտարբեր, չի ցանկանում որևէ գործունեություն ծավալել, նա ստիպված է լինում կատարելու այն, ինչն իրեն անիմաստ է թվում, որպես հետևանք՝ նա սպառվում է ներքուստ, ձևավորվում և դրսևորվում

է հուզական սպառման համախտանիշը, նվազում է նրա գործունեության արդյունավետության մակարդակը:

2. *Արտաքին գործոններով խթանվող գերակա սպասման իրական և իդեալական պատկերները իրար չեն համապատասխանում:* Մեր կարծիքով՝ հուզական սպառման համախտանիշը կարող է ձևավորվել նաև արտաքին գերակա սպասման իրական և իդեալական պատկերների անհամապատասխանության դեպքում, երբ՝
   - հրամանատարը պարզապես չի կարողանում բավարարել արտաքին գործոններով խթանվող իր սպասումը (օրինակ՝ իր կատարած աշխատանքի դիմաց չի արժանանում ակնկալվող հարգանքի, իշխանության, հերթական զինվորական կոչման, նյութական ապահովման, խրախուսանքի), քանի որ իր այդ սպասման բավարարումը կախված է արտաքին գործոններից, որոնք անվերահսկելի և փոփոխական են,
   - արտաքին սպասման բավարարման իրական չափը չի համապատասխանում նրա ակնկալիքներին՝ սպասման բավարարման իդեալական չափին (հարգված է, սակայն ավելի մեծ ակնկալիքներ ունի):

Երկու դեպքում էլ չի բավարարվում արտաքին գործոններով խթանվող գերակա սպասումը, ուստի և առաջանում է *անբավարարության զգացում:* Տվյալ վիճակի տևականության դեպքում մարդու էներգետիկ պաշարներն սպառվում են (աշխատում է, էներգիա է ծախսում, սակայն ստացված էներգիան փոքր է ծախսվածից և առաջացնում է հուզական սպառման համախտանիշ, ինչի հետևանքով էլ նվազում է ղեկավար գործունեության արդյունավետությունը:

Ինչ վերաբերում է ներքին գործոններով խթանվող շարժառիթների և նշված փոփոխականների միջև կապերին, ապա պարզվել է, որ ներքին գործոններով խթանվող շարժառիթների և հուզական սպառման համախտանիշի ($r=-0,429$, $n=138$, $p\leq0,01$), ինչպես նաև մերժման վախի միջև ($r=-0,309$, $n=138$, $p\leq0,01$) գոյություն ունի հակադարձ կապ, իսկ ներքին շարժառիթների և ինքնահարգման ($r=0,363$, $n=138$, $p\leq0,01$) միջև՝ ուղիղ կապ (տես գծապատկեր 2):

Հարաբերակցական կապ չի բացահայտվել ներքին գործոններով խթանվող շարժառիթների և հրամանատարի գործունեության արդյունավետության, աշխատանքային ստաժի միջև: Այսինքն՝ ներքին գործոններով խթանվող շարժառիթների ցայտուն արտահայտվածության դեպքում հրամանատարը, անկախ տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածից, աչքի է ընկնում գործունեության և՛ բարձր, և՛ միջին, և՛ ցածր մակարդակի արդյունավետությամբ, սակայն, անկախ կոնկրետ պաշտոնում աշխատանքային ստաժից, դիտվում են ցածր մակարդակի կայուն հուզական սպառման, ինքնահարգման բարձր և մերժման վախի ցածր ցուցանիշներ:




Գծապատկեր 2. Ներքին գործոններով խթանվող շարժառիթների և հուզական սպառման համախտանիշի փոխադարձ կապը

Հետազոտական տվյալների վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ.

1. հրամանատարի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է ակտիվացնել արտաքին գործոններով խթանվող շարժառիթները, իսկ անձի ներդաշնակության, մասնավորապես՝ ինքնահարգման ցուցանիշների մեծացման, հուզական սպառման համախտանիշի, մերժման վախի թույլ արտահայտվածություն ապահովելու համար՝ ներքին գործոններով խթանվող շարժառիթները,
2. եթե առկա է հրամանատարի՝ արտաքին գործոններով խթանվող շարժառիթների ցայտունորեն արտահայտված լինելու հանգամանքը, անհրաժեշտ է պարտադիր կերպով ակտիվացնել ներքին գործոններով խթանվող շարժառիթները, քանի որ հակառակ դեպքում հրամանատարի՝ արտաքին գործոններով շարժառիթավորված գործունեության արդյունավետությունը տարիների ընթացքում կնվազի, և կբարձրանա հուզական սպառման մակարդակը: Իսկ ներքին գործոններով խթանվող շարժառիթների ակտիվացման դեպքում հնարավոր է խուսափել նման զարգացումներից,
3. թեև ներքին գործոններով խթանվող շարժառիթների գերակայությունը նպաստում է հուզական սպառման ոչ ցայտուն արտահայտվածությանը, սակայն չի հանգեցնում հրամանատարի գործունեության բարձր մակարդակի արդյունավետության: ՈՒստի այս պարագայում էլ պետք է ակտիվացնել հրամանատարի՝ արտաքին գործոններով խթանվող շարժառիթները:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ արտաքին գործոններով խթանվող դրական շարժառիթների գերակայությունը նպաստում է հրամանատարի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը, սակայն՝ ոչ դրա կայունության պահպանմանը, քանի որ միևնույն հրամանատարը, կախված իր աշխատանքային ստաժից, կարող է դրսևորել գործունեության բարձր

կամ ցածր մակարդակի արդյունավետություն: Իսկ ներքին գործոններով խթանվող շարժառիթների գերակայությունը չի երաշխավորում հրամանատարի գործունեության բարձր մակարդակի արդյունավետություն, թեև նպաստում է հուզական սպառման համախտանիշի թույլ արտահայտվածությանը:

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ**

## ВЗАИМООБУСЛОВЛЕННОСТЬ ВНУТРЕННЕ И ВНЕШНЕ СТИМУЛИРУЕМЫХ МОТИВОВ И СИНДРОМА ЭМОЦИОНАЛЬНОГО ВЫГОРАНИЯ В КОНТЕКСТЕ ЭФФЕКТИВНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМАНДИРА

*С. А. АНТОНЯН, магистр психологии*

РЕЗЮМЕ

В статье проанализирована взаимообусловленность эмоционального выгорания и экстринсивных и интринсивных мотивов, стимулируемых, соответственно, внешними (поощрения, наказания и т. д.) и внутренними (процессуально-содержательные мотивы) факторами.

Представлены результаты психологических исследований, проведенных в ВС РА с привлечением 138 командиров различного уровня: от взвода до батальона. Анализ исследовательских данных показывает, что приоритет мотивов, стимулируемых внешними факторами, способствует повышению уровня эффективности управленческой деятельности командира. Однако доминирование этих мотивов носит временный характер, поскольку при долгом нахождении офицера на той же должности их сила уменьшается, что в свою очередь приводит к формированию синдрома эмоционального выгорания, снижению уровня самоуважения, активизации страха быть отвергнутым, снижению эффективности деятельности и ухудшению деловых качеств.

Проанализированы механизмы развития синдрома эмоционального выгорания при воздействии мотивов, стимулируемых внешними факторами.

Показано, что активизация мотивов, стимулируемых внутренними факторами, позволяет предотвратить формирование синдрома эмоционального выгорания.

**MILITARY PSYCHOLOGY**

# INTERDEPENDENCE OF EXTRINSIC AND INTRINSIC MOTIVATIONS AND THE EMOTIONAL BURNOUT SYNDROME IN THE CONTEXT OF THE EFFICIENCY OF COMMANDER'S ACTIVITY

*S. A. ANTONYAN, Master of Psychology*

SUMMARY

The interdependence of emotional burnout and extrinsic and intrinsic motives, stimulated, respectively, by external (encouragement, penalty, etc.) and internal (procedural-substantial motives) factors, is analyzed in this article.

The results of psychological studies carried out in the RA Armed Forces involving 138 commanders of various levels: from platoon to battalion, are presented. The analysis of the research data shows that the priority of motives stimulated by external factors favors the increase of the efficiency level of commander's managerial activity. However, the prepotency of these motives is of temporary nature, as their strength lessens when the officer holds the same post for a long time. This, in its turn, brings about the formation of the emotional burnout syndrome, decrease in the level of self-respect, the activization of fear of getting outcast, decrease in the activity efficiency and the loss of business qualities.

The mechanisms for developing the emotional burnout syndrome during the impact of extrinsic motives are analyzed.

It is shown that the activization of motives stimulated by internal factors allows preventing the formation of the emotional burnout syndrome.

# ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վ. Հ. ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,*
*ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի խորհրդական*

2011 թ. հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնք բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո (1946 թ.) 17-րդն էին: Այդ ընտրություններն ընթացան հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ներքին քաղաքական իրավիճակի աննախադեպ դինամիկության պայմաններում, որոնք ձևավորվել էին արժեհամակարգային ընկալումների և սոցիալական ու ազգամիջյան հարաբերությունների պարամետրերի վերանայման շեշտված միտումների, ինչպես նաև տնտեսության ոլորտում ձեռք բերված առաջընթացի համախումբ ազդեցությամբ: Բնականաբար, նման ընտրությունների հետևանքով ստեղծված իրավիճակը պարունակում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության որոշակի փոփոխության հավանականություն, ինչը կարող է նաև ազդել հայ-թուրքական հարաբերությունների վրա:

**Նախընտրական իրավիճակը**

2011 թ. Թուրքիայում ձևավորված նախընտրական իրավիճակին բնորոշ էին մի շարք առանձնահատկություններ, որոնց շնորհիվ էլ այն տարբերվում է բոլոր նախորդ ընտրություններից առաջ ստեղծված իրավիճակներից: Սակայն նախքան այդ առանձնահատկությունների վերլուծությանն անցնելը նպատակահարմար է համառոտ անդրադարձ կատարել անցած տասնամյակում Թուրքիայում տեղի ունեցած մի շարք կարևոր քաղաքական իրադարձություններին, որոնք ուղղակիորեն առնչվում են այս ընտրություններին:

Այդ ժամանակաշրջանում Թուրքիայում տեղի են ունեցել խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների երկուական ընտրություններ, սահմանադրական բարեփոխումների երկու հանրաքվեներ, որոնք բոլորն էլ ավարտվել են «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) հաղթանակով: Մի շարք պատճառներով առավել հիշարժան կարելի է համարել 2002 թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրությունները: Նախ. այդ ընտրություններում հաղթեց ընդամենը 15 ամսվա պատմություն ունեցող ԱԶԿ-ն, որի ղեկավար կազմը չէր սերում թուրքական ավանդական քաղաքական ընտրախավից: ԱԶԿ-ի ղեկավարներն անգամ ընկալվում էին որպես հակաընտրախավի ներկայացուցիչներ: Երկրորդ. նոր խորհրդարանի կազմը 90 %-ով թարմացվեց, ինչը

աննախադեպ երևույթ է հանրապետական Թուրքիայի պատմության մեջ: Ընդսմին դա պայմանավորված էր ոչ թե ԱԶԿ-ի լիակատար հաղթանակով, այլ Թուրքիայի ընտրական համակարգի առանձնահատկություններով*: Թեև այդ ընտրություններում ԱԶԿ-ն ստացավ քվեների ընդամենը 34 %-ը, ինչն արտացոլում էր ընտրական իրավունք ունեցող 41,4 մլն քաղաքացիներից միայն 10,8 մլն ընտրողի նախապատվությունը, սակայն 550 մանդատ ունեցող Ազգային մեծ ժողովում ի վերջո ձեռք բերեց 363 մանդատ (66 %): Դա ընդամենը 4 մանդատով էր պակաս սահմանադրության փոփոխության համար անհրաժեշտ 2/3-ից: 2003 թ. մարտի 9-ին Սղերդ նահանգում տեղի ունեցած լրացուցիչ ընտրություններից հետո ԱԶԿ-ի քվեներն ավելացան ևս երկուսով[1]: 2002 թ. ընտրություններն ուշագրավ էին նաև այն առումով, որ խորհրդարանում ներկայացվեցին ընդամենը երկու կուսակցություն՝ ԱԶԿ-ն և Հանրապետական-ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ): Վերջին անգամ նման բան տեղի է ունեցել 1956 թ., երբ Թուրքիայի խորհրդարանում ներկայացված էին Ժողովրդավարական կուսակցությունը և ՀԺԿ-ն[2]: Բացի այդ, 2002 թ. ընտրությունների արդյունքներով 1987 թվականից հետո առաջին անգամ ստեղծվեց միակուսակցական կառավարություն:

Այդ ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակը բնութագրվեց որպես «սպիտակ» կամ «անաղմուկ» հեղափոխություն[3]: Թուրք վերլուծաբանները ԱԶԿ-ի օգտին տրված քվեները ներկայացրեցին որպես քաղաքական հաշվեհարդարի դրսևորում՝ ուղղված ընդդեմ 2001 թ. տնտեսական ճգնաժամի ու 20-րդ դարի վերջի «կորսված տասնամյակի» պատասխանատուների:

ԱԶԿ-ն որդեգրեց «պահպանողական ժողովրդավարության» հայեցակարգը և փորձեց հնարավորինս հեռու դիրքավորվել քաղաքական իսլամից ու նրա

* Թուրքիայում գոյություն ունի աշխարհում ամենաբարձր ընտրական շեմերից մեկը՝ 10 %, որը փոքր կուսակցություններին զրկում է խորհրդարան մտնելու ու քաղաքական գործընթացներում ներգրավվելու հնարավորությունից: Դրան գումարվում է նաև խորհրդարանում մանդատների բաշխման դ'Օնտի համակարգը, որը հաղթող կուսակցությանը հնարավորություն է տալիս խորհրդարանում ստանալու ավելի մեծ թվով մանդատներ, քան կարող էր ձեռք բերել զուտ ընտրություններում ստացած քվեներով՝ կլանելով նաև ընտրական շեմը չհաղթահարած կուսակցություններին տրված ձայները: Նման ընտրական համակարգի պատճառով, օրինակ, 2002 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցածների 46 %-ի (15,7 մլն ընտրող) շահերը խորհրդարանում փաստորեն ներկայացված չէին: Դրան գումարվեց այն հանգամանքը, որ ընտրական իրավունք ունեցողների 21 %-ը (8,6 մլն ընտրող) չմասնակցեց ընտրություններին, իսկ քվեների 3,9 %-ը (1,2 մլն ձայն) ճանաչվեց անվավեր: Այս ամենի պատճառով նշված ընտրություններում մոտ 25,7 մլն քաղաքացիների շահերը խորհրդարանում չներկայացվեցին:

[1] Տես *Hakan Yavuz*. Secularism and Muslim Democracy in Turkey. Cambridge, 2009, P. 81:

[2] Տես *Feroz Ahmad*. Turkish Experiment in Democracy 1950—1975. London, 1977, PP. 56—57:

[3] Տես *Abd al-Halim Ghazali*. Neo-Islamists and Fundamentalist Laicism in Turkey. Cairo, 2007, P. 15; *Soli Özel*. Turkey at the Polls: After the Tsunami. «Journal of Democracy», April 2003, V. 14, N 2; *Ofra Bengio*. Turkey's Quiet Revolution and Its Impact on Israel. «Israel Journal of Foreign Affairs», 2010, V. 4, N 1; *Eric Margolis*. Turkey: The First Mideast Revolution (http://www.huffingtonpost.com/eric-margolis/turkey-the-first-mideast-_b_8803 81.html):

առաջնորդ Նեջմեթին Էրբաքանից[4]: Գաղափարական-քաղաքական շեշտադրումների՝ իսլամի, ազգայնականության ու մշակույթի սերտ համատեղման ու կիրառման առումներով ԱԶԿ-ի պահպանողականությունն զգալի չափով նման էր Ժողովրդավարական (1950–1960 թթ.) և «Մայր հայրենիք» (1983–1991 թթ.) կուսակցությունների կառավարման տարիներին այդ կուսակցությունների որդեգրած մոտեցումներին: Ուշագրավ է, որ ԱԶԿ-ի ղեկավարները բազմիցս շեշտել են, թե ԱԶԿ-ն չունի գաղափարախոսություն և ինքնություն, ու դրա շնորհիվ է, որ ստանում է վստահության քվե: Ըստ նրանց՝ Էրդողանի հեղինակությունը շատ առումներով գերազանցում է իր իսկ ղեկավարած կուսակցության հեղինակությունը, ինչը Թուրքիայում բացառություն չէ, քանի որ թե՛ Ադնան Մենդերեսի հեղինակությունը 1950-ական թթ., թե՛ Թուրգութ Օզալի հեղինակությունը 1980-ական թթ. նրանց ղեկավարած կուսակցությունների հաջողության գրավականն էին: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Էրդողանը, թեև քաղաքական մկրտություն է ստացել, մասնակցելով Էրբաքանի ղեկավարած «Ազգային տեսակետ» շարժմանը, և ակնհայտորեն գտնվում է վերջինիս անմիջական ազդեցության տակ, ձգտում է ներկայանալու որպես Մենդերեսի և Օզալի քաղաքական ուղեգծի շարունակող:

Հասնելով իշխանության՝ Էրդողանի ղեկավարած կուսակցությունը շարունակեց գործել ընդդիմադիր կուսակցության ոճով՝ քննադատելով քեմալականության ժառանգության աղավաղումները, աշխարհիկության արմատական կիրառման բացասական հետևանքները, ինչպես նաև բանակի ու դատաիրավական համակարգի մեծ քաղաքական դերը: ԱԶԿ-ի պատգամավորներից մեկի բնութագրմամբ՝ կուսակցությունը դարձել էր «սուպերմարկետ», որտեղ ցանկացած մարդ կարող էր բավարարել իր սպառողական պահանջմունքները[5]: Դա հաստատվում է նաև 2002 թ. ԱԶԿ-ի օգտին քվեարկածների քաղաքական ինքնանույնականացման վիճակագրական տվյալներով՝ 27 % իսլամականներ, 15 % աջ ուղղվածության ներկայացուցիչներ, 14 % ժողովրդավարականներ, 10 % պահպանողականներ, 10 % սոցիալ-ժողովրդավարականներ, 6 % ազգայնականներ, 3 % քեմալականներ, 3 % ազգայնական-պահպանողականներ, 10 % հստակ դիրքորոշում չունեցողներ[6]:

Հետաքրքիր դինամիկայի պատճառ դարձան նաև 2007 թ. հուլիսի 22-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունները: Դրանք տեղի ունեցան նախատեսվածից 4 ամիս շուտ: Նոր ընտրությունների անցկացումը պայմանավորված էր նախագահական ընտրություններում արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի թեկնածության առաջադրման կապակցությամբ Թուրքիայի ԶՈՒ-ի Գլխավոր

[4] Տես «Prime Minister Recep Tayyip Erdogan's speech at the American Enterprise Institute». Washington, 29 January 2004:

[5] Տես *Հաբան Յավուզ*, Նշ. աշխ., էջ 89:

[6] Տես *Ali Çarkoglu*. The New Generation Pro-Islamists in Turkey: Bases of the Justice and Development Party in Changing Electoral Space in The Emergence of a New Turkey: Democracy and AK Party, ed. by Hakan Yavuz. Salt Lake City, 2006, PP. 162–165:

շտաբի 2007 թ. ապրիլի 27-ի զգաստացնող հայտարարությամբ՝ ուղղված ԱԶԿ-ին[7]: Ընտրություններում ԱԶԿ-ն ներկայացավ այնպիսի քաղաքական ծրագրով, որով հնարավոր լիներ մեղմել աշխարհիկ քեմալականների զայրույթը, որոնք Էրդողանին ու Գյուլին մեղադրում էին Քեմալ Աթաթյուրքի աշխարհիկ ժառանգությունը նենգափոխելու մեջ:

Ինչպես 2002 թ., այնպես էլ 2007 թ. ընտրություններում ԱԶԿ-ի կարգախոսն էր՝ «Ամեն ինչ Թուրքիայի համար»: 2011 թ. դրան գումարվեց նաև «Կանգառ չկա՝ ճանապարհը շարունակվում է» կարգախոսը[8]: Ի հակադրումն քեմալականների, հատկապես ԶՈՒ-ի ղեկավարության հարուցած աննախադեպ խոչընդոտների՝ 2007 թ. ընտրություններում ԱԶԿ-ի քվեները 2002 թ. համեմատությամբ ավելացան 12 %-ով և կազմեցին 46,5 % (15,6 մլն քվե), ինչը մոտ 4,8 մլն քվեով գերազանցեց նախորդ արդյունքը: ԱԶԿ-ն խորհրդարանում ստացավ 341 մանդատ, ընդդիմադիր ՀԺԿ-ն և «Ազգային շարժում» կուսակցությունը (ԱՇԿ), համապատասխանաբար՝ 112 և 71, իսկ անկախ թեկնածուները՝ 25 մանդատ (դրանցից 20-ով ձևավորվեց քրդամետ «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության խորհրդարանական խմբակցությունը):

ԱԶԿ-ի նման հաղթանակն անակնկալ էր անգամ Էրդողանի համար: 1954 թվականից ի վեր իշխանության ղեկին գտնվող ոչ մի կուսակցության չէր հաջողվել նախորդ ընտրության համեմատությամբ մեծացնել ստացված քվեները: «Միլիյեթի» մեկնաբան Հասան Ջեմալի խոսքով՝ գեներալների ապրիլի 27-ի հայտարարությանը «ժողովուրդը պատասխանեց իր հռչակագրով» և ԱԶԿ-ին տված վստահության քվեով շեշտեց, որ «չի ցանկանում բևեռացում»[9]: 2007 թ. ընտրություններին հաջորդած շրջանում հասարակական կարծիքի հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ԱԶԿ-ի օգտին քվեարկածների 78 %-ը առաջնային է համարել երկրի «տնտեսական վիճակը և ակնկալիքները», 13 %-ը՝ «ժողովրդավարացման հեռանկարները», իսկ մնացածը՝ «աշխարհիկ կարգերին սպառնացող վտանգը»[10]:

2007 թ. ապրիլից – օգոստոս ժամանակահատվածը դարձավ Էրդողանի՝ որպես քաղաքական գործչի ու առաջնորդի տոկունության և աննախադեպ ճնշման պայմաններում ճիշտ լուծումներ գտնելու ու կողմնորոշվելու հմտության փորձաշրջան: Այդ մարտահրավերները հաջողությամբ հաղթահարելուց հետո Էրդողանը կրկնապատկեց իր քաղաքական հեղինակությունը թե՛ կուսակցությունում, թե՛ Թուրքիայում, թե՛ արտաքին աշխարհում: Առավել էական էր այն հանգամանքը, որ Էրդողանը հաղթահարեց մինչ այդ անհաղթահարելի համարվող հոգեբանական պատնեշը, իսկ իր քաղաքական առաքելությունը ներկայացրեց որպես անկասելի ընթացք: 2008 թ. մարտին Թուրքիայի սահ-

[7] Տես *Emin Çölaşan*. Muhtira. «Hürriyet», 29.04.2007; *Cüneyt Ülsever*. 27 Nisan Muhtırası millete hayırlı olsun! «Hürriyet», 29.04.2007:

[8] Տես «Adalet ve Kalkinma Partisi, Dosya Arşivi» (http://www.akparti.org.tr/site/akparti/dosyalar):

[9] *Hasan Cemal*. «Milliyet», 23.07.2007.

[10] *Bekir Ağirdir.* Seçmenin röntgeni I. «Radikal», Temmuz 25, 2007.

մանադրական դատարանում ԱԶԿ-ի դեմ գործ հարուցվեց՝ հակաաշխարհիկ ու հակասահմանադրական գործունեություն վարելու մեղադրանքով, և ընդամենը մեկ ձայնի տարբերությամբ ԱԶԿ-ն խուսափեց փակվելուց[11]: Այդ քայլը ԱԶԿ-ի դեմ քեմալականների սկսած դատաիրավական պայքարի վերջին դեպքն էր:

2007 թվականից Թուրքիայի տնտեսական վիճակն ավելի էր կայունացել ու միջին խավի գնողունակությունը աճել էր: 2010 թ. տվյալներով՝ Թուրքիան տնտեսական աճի ցուցանիշներով առաջինն էր Եվրոպայում, իսկ 2011 թ. առաջին եռամսյակի տվյալներով՝ առաջինն էր աշխարհում[12]: Բնականաբար, նախընտրական պայքարում ԱԶԿ-ն այդ գործոնն օգտագործեց որպես կարևոր հաղթաթուղթ:

Անդրադառնալով մեր առաջին հարցադրմանը՝ ներկայացնենք 2011 թ. ընտրությունների առանձնահատկությունները: 1982 թ. Սահմանադրության ընդունումից և 1983 թ. կայացած առաջին խորհրդարանական ընտրություններից հետո դրանք առաջին անգամ ոչ թե արտահերթ էին, այլ՝ հերթական: 2007 թ. հոկտեմբերի 21-ի սահմանադրական բարեփոխումներով խորհրդարանի գործունեության ժամկետը 5 տարուց կրճատվեց մինչև 4 տարի, այլապես ընտրությունները պետք է տեղի ունենային 2012 թ. հուլիսին: Այսինքն՝ անցած ընտրությունները մեկ տարով վաղ անցկացնելու հանգամանքը պայմանավորված էր ոչ թե ինչ-որ քաղաքական ուժի պահանջով, այլ սահմանադրական փոփոխություններով:

Ընդդիմադիր կուսակցությունները ընտրություններին մասնակցեցին վերափոխված մարտավարությամբ: Դա հատկապես էական է ընդդիմադիր ՀԺԿ պարագայում: 2010 թ. նրա ղեկավարության փոփոխությունը հանգեցրեց 1990-ական թվականներից ճգնաժամ ապրող կուսակցության ղեկավարման սկզբունքների վերանայմանը: Կուսակցության ղեկավար Քեմալ Քըլիչդարօղլուի ներկայացրած նախընտրական ցուցակում ընդգրկված էին նոր անուններ. 101 գործող պատգամավորներից մնացել էին միայն 23-ը: Այդուհանդերձ, ընտրություններում 25 %-ից ցածր վստահության քվե ստանալու պարագայում Քըլիչդարօղլուի հեղինակությունը կարող էր անկում ապրել, և վերջին ամիսների ներկուսակցական պառակտումները կարող էին կրկնվել, քանի որ կուսակցությունը բաժանված էր երեք թևերի՝ կուսակցության գործող նախագահի, նախկին գլխավոր քարտուղար Օնդեր Սավի և կուսակցության նախկին ղեկավար Դենիզ Բայքալի միջև: Նման դժվարություններ ստիպված էր հաղթահարել նաև ԱԾԿ-ն, որի ղեկավարության վրա ևս մեծ ճնշում էր գործադրվում՝ ազգայնամոլության ու ատելության վրա հիմնված քաղաքական ծրագիրը վերանայելու պահանջով:

ԱԶԿ-ն ընտրություններում ներկայացավ թեկնածուների թարմացված ցուցակով: Նոր ցուցակում պատգամավորության թեկնածուների ընդգրկման սկզբունքը մեկն էր՝ հավատարմությունն Էրդողանին ու նրա որոշումների ան-

[11] Տես «E.2008/1 (SPK), K.2008/2», 30.07.2008. «T. C. Anayasa Mahkemesi» (http://www.anayasa.gov.tr/index.php?l=content&lang=en&id=137):

[12] Տես «Turkey's Economy Surged 11 % in Quarter». «Europe Business News», 1 July 2011:

առարկելիությունը: Ըստ երևույթին, այդ սկզբունքին դեմ լինելու հանգամանքով էր պայմանավորված հրաժարումը ԱԶԿ-ի խորհրդարանական խմբակցության կազմում եղած 164 պատգամավորների թեկնածությունների առաջադրումից: Վերընտրվելու հնարավորությունից զրկված պատգամավորների այս պատկառելի թիվը ցույց է տալիս, որ ԱԶԿ-ի շարքերում կար ընդդիմադիրների մեծաթիվ բանակ, և այդ պատճառով էր, որ ԱԶԿ-ի համար ներքաղաքական ու օրենսդրական բարեփոխումների իրագործումը դարձել էր բավական դժվար գործ: Թեև 2002 և 2007 թթ. ընտրություններում ԱԶԿ-ն ուներ սահմանադրական փոփոխություններ հարուցելու և օրենսդրական փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ թվով մանդատներ (համապատասխանաբար՝ 363 և 341), սակայն հետագա տարիներին պատգամավորների ներխորհրդարանական տեղափոխումները անընդհատ փոփոխում էին ուժերի հարաբերակցությունը, և միշտ չէ, որ նրան հաջողվում էր օգտագործել խորհրդարանում ունեցած անգամ 330 մանդատի առավելությունը: Բանն այն է, որ հենց ԱԶԿ-ի շարքերում շատ հարցերի վերաբերյալ չկար միասնական դիրքորոշում, ու թեև Էրդողանի հեղինակությունն ԱԶԿ-ի պատգամավորներին ստիպում էր դրսևորել հավաքական կամք և լինել միաձայն, սակայն մի շարք օրենսդրական ու սահմանադրական փոփոխությունների նախագծերի հաստատման դեպքում 330 մանդատի առկայությունը նույնպես չօգնեց: Դա առավել ցայտուն կերպով դրսևորվեց 2010 թ. սահմանադրական փոփոխությունների ժամանակ, երբ ներկուսակցական տարակարծությունը հնարավորություն չտվեց համաժողովրդական հանրաքվեի դնելու մի շարք սահմանադրական փոփոխությունների նախագծեր:

Քրդական հարցը շարունակում էր մնալ Թուրքիայի քաղաքական կյանքի ամենակարևոր հարցերից մեկը, և 2011 թ. ընտրություններում տվյալ գործոնն առավել քան երբևէ զգալի էր: Էրդողանը փորձում էր ցույց տալ, որ տիրապետում է իրավիճակին, և քրդերը միայն իր հետ են կապում այդ պրոբլեմի լուծման հնարավորությունը: Եվ իրոք, միայն ԱԶԿ-ի թեկնածուներն էին Քրդական հարցն անվանում քրդական՝ ի տարբերություն ՀԺԿ-ից ու ԱԾԿ-ից, որոնք այն բնութագրում էին որպես «հարավարևելյան խնդիր»:

Այս ընտրությունները բացառիկ էին նաև այն առումով, որ նախընտրական պայքարում մեծ տեղ հատկացվեց խոսքի ազատության հարցին: Կար մի քանի պատճառ, որոնցից հիշատակման առավել արժանի է այն, որ մոտ 60 լրագրողներ կա՛մ ազատազրկված էին, կա՛մ գտնվում էին պայմանական ազատազրկման վիճակում, կա՛մ էլ նրանց գործերը քննվում էին դատարաններում[13]: Դրան նպաստել էր այն հանգամանքը, որ վերջին 4 տարիներին Էրդողանը բազմիցս բացասական վերաբերմունք էր դրսևորել մամուլում իր հասցեին հնչող քննադատությունների նկատմամբ:

[13] Տես «Journalists held in Turkish plot investigation». «Sabah Daily» (http://english.sabah.com.tr/National/2011/03/04/journalists_held_in_turkish_plot_investigation); «Clinton Chides Turkey on Rights Record». «The New York Times» (http://www.nytimes.com/2011/07/17/world/middleeast/17turkey. html?_r=1):

**Թուրքիայում 2011 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները**

Ինչպես և կանխատեսվում էր, ընտրություններում կրկին հաղթեց 2002 թ. նոյեմբերից Թուրքիայում իշխող ԱԶԿ-ն: Կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ նվազագույն շեմը՝ 276 մանդատ, հեշտությամբ հաղթահարվեց, սակայն մյուս երկու կարևոր շեմերը՝ 330 և 367 մանդատներ, հաղթահարել չհաջողվեց: Ավելին. ԱԶԿ-ն կորցրեց 15 էական մանդատ*:

2011 թ. հունիսի 12-ին տեղի ունեցած ընտրությունները վերլուծենք ստորև բերված աղյուսակի օգնությամբ:

*Աղյուսակ*

| Տարեթիվ | 2002 թ. | 2007 թ. | 2011 թ. |
|---|---|---|---|
| ԱԶԿ | 10,7 մլն քվե (34,3 %)<br>363 մանդատ | 16,3 մլն քվե (46,54 %)<br>341 մանդատ | 21,4 մլն քվե (49,92 %)<br>326 մանդատ |
| ՀԺԿ | 6,9 մլն քվե (19,3 %)<br>178 մանդատ | 7,3 մլն քվե (20,79 %)<br>112 մանդատ | 11,1 մլն քվե (25,92 %)<br>135 մանդատ |
| ԱՇԿ | 2,6 մլն քվե (8,3 %)<br>0 մանդատ | 5 մլն քվե (14,25 %)<br>71 մանդատ | 5,5 մլն քվե (12,98 %)<br>53 մանդատ |
| Անկախ թեկնածուներ | 340 հզ. քվե (0,9 %)<br>9 մանդատ | 1,8 մլն քվե (5,19 %)<br>22 մանդատ | 2,8 մլն քվե (6,65 %)<br>36 մանդատ |
| Ընտրողների ընդհանուր թիվը | 41 մլն ընտրող, մասնակցել է 33 մլն | 42 մլն ընտրող, մասնակցել է 35 մլն | 50 մլն ընտրող, մասնակցել է 43 մլն |

Աղյուսակից պարզ երևում է, որ 2011 թ. հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած հերթական խորհրդարանական ընտրություններում գրանցված անակնկալները «թույլատրելիության սահմաններում» են: Նախորդ երկու ընտրությունների համեմատությամբ մեծ աջակցություն ստանալու պայմաններում ԱԶԿ-ի «միանձնյա տիրապետության» միանգամայն իրատեսական նկրտումները ձախողվեցին, քանի որ ընտրողները վստահության քվե տվեցին այն կուսակցություններին, որոնք ունեին խորհրդարան մտնելու իրական շանսեր, ինչի հետևանքով ձայները չվատնվեցին փոքր կուսակցությունների վրա, ինչպես դա տեղի ունեցավ հատկապես 2002 թ. ընտրությունների ժամանակ: Արդյունքների վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ 2011 թ. ընտրություններում 10 %-ի ընտրաշեմը չհաղթահարած 12 կուսակցությունները միասին ստացել են 2 մլն-ից պակաս քվե (ընտրություններին մասնակցածների մոտ 5 %-ը): Մինչդեռ 2002 թ. ընտրություններում 10 %-ի ընտրաշեմը չհաղթահարած 16 կուսակցությունները միասին ստացել էին ավելի, քան 15 մլն քվե (ընտրություններին մասնակցածների մոտ 46 %-ը), իսկ 2007 թ. ընտրաշեմը չհաղթահարած 11 կուսակցությունները միասին ստացել էին 4,5 մլն քվե (ընտրություններին մասնակցածների մոտ 13 %-ը): Թուրքիայի ընտրական համակարգի վերը նշված առանձնահատկութ-

* 330 մանդատի առկայության դեպքում ԱԶԿ-ն հնարավորություն կունենար խորհրդարանում հավանության արժանացած սահմանադրական փոփոխության նախագիծը դնելու հանրաքվեի՝ առանց մյուս քաղաքական ուժերի աջակցության, իսկ 367 մանդատը հնարավորություն կտար սահմանադրական փոփոխությունները հաստատելու հենց խորհրդարանում՝ առանց հանրաքվեի:

յունների հաշվառմամբ փորձենք կանխատեսել ԱԶԿ-ի և մյուս խորհրդարանական կուսակցությունների հնարավոր գործելակերպի ու փոխհարաբերությունների ձևաչափն ու բովանդակությունը:

2011 թ. ընտրություններում ԱԶԿ-ի՝ ընդամենը 326 մանդատ ստանալու հանգամանքը Էրդողանի համար առաջացրել է մի շարք դժվարություններ, որոնց հաղթահարումը նրանից կպահանջի մյուս կուսակցությունների հետ հարաբերություններում դրսևորել համագործակցության ձգտում ու կառուցողականություն: Մինչդեռ այս հատկանիշներն Էրդողանի համար վերջին տարիներին եղել են օտար ու շատ դեպքերում՝ անընդունելի: Անցած տարիներին երկրի համար կարևոր քայլեր կատարելու ժամանակ Էրդողանը փորձել է հեռու պահել ընդդիմադիր կուսակցություններին, և դրանց տեսակետները նվազագույնս են արտացոլվել էական որոշումներում: «Նա թիմային խաղացող չէ, փոխարենը նա դիրքավորվում է որպես առաջնորդ և մյուսներից ակնկալում անվերապահ ենթարկում»[14], ուստի անհրաժեշտ կլինի արմատապես վերանայել կառավարման այն մեթոդները, որոնք նա կիրառել է վերջին տարիներին, և որոնք արժանացել են լուրջ քննադատության:

Մոտակա ամիսներին Էրդողանը կփորձի բարձրաձայնել նոր սահմանադրության խնդիրը՝ իրենից ակնկալվող կառուցողականության ու համագործակցության հարցերում դրսևորելով դրական տրամադրվածություն: ՀԺԿ-ն, ԱՇԿ-ը և քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը (ԽԺԿ), թեև զգալիորեն հեռու են որակյալ մեծամասնություն կազմելու հնարավորությունից, սակայն կանեն հնարավորը, որպեսզի «թանկ վաճառեն» իրենց համագործակցությունը, իսկ ԱԶԿ-ի դիրքորոշումը կլինի հնարավորինս զիջողական: Անգամ նոր սահմանադրության նախագծի մշակման գործում ԱԶԿ-ն կզրկվի իր դիրքորոշումները գերակա դարձնելու հնարավորությունից: Քրդական կուսակցությունը կփորձի առավել իրատեսական դարձնել այն պահանջները, որոնք բարձրացվում էին նախընտրական պայքարում: Հասկանալի է, որ այդ նախաձեռնությունը կարժանանա ԱՇԿ-ի, իսկ մի շարք դեպքերում՝ նաև ՀԺԿ հակազդեցությանը: Այդ գործընթացի վրա կփորձեն ազդել թե՛ քաղաքացիական հասարակությունը, թե՛ քեմալականները (ռազմաբյուրոկրատական ու դատաիրավական համակարգը), թե՛ Եվրամիությունը: Հետևաբար նոր սահմանադրությունը շուտափույթ ընդունելու հարցում ԱԶԿ-ի ցուցաբերած ինքնավստահությանը պետք է վերաբերվել զգուշությամբ: 29 տարի առաջ ընդունված սահմանադրությունը փոխելու ու դրանից բխող մեծածավալ օրենսդրական փոփոխությունների ալիքն ուղղորդելու համար ԱԶԿ-ն պետք է լուրջ քայլեր կատարի համագործակցություն հաստատելու ուղղությամբ: ԱԶԿ-ին սպասում է բարդ ներքաղաքական իրադրություն, որը կպահանջի մեծ ջանքեր ու միջոցներ: Հավանական է, որ հնարավոր համագործակցության որոշ հարցերում (Քրդական հարց, նոր սահմանադրության նախագծի մշակում) ԱԶԿ-ն հենվի քրդերի և ազգայնականների, իսկ սոցիալ-տնտեսական բնույթի հարցերում՝ ՀԺԿ-ի վրա:

[14] *Հաքան Յավուզ*, Նշ. աշխ., էջ 130:

Թեև ներկուսակցական տարակարծության նախկին դրսևորումները բացառելու համար Էրդողանը փոխեց նախորդ գումարման խորհրդարանում ԱԶԿ-ն ներկայացնող պատգամավորների 50 %-ին, այնուհանդերձ, կուսակցության շարքերում շարունակում են գոյություն ունենալ որոշ տարաձայնություններ, հատկապես՝ Էրդողանի նախագահական հավակնությունների հարցում: Ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Էրդողանն ունի ժողովրդի ուղիղ մանդատով նախագահ դառնալու բոլոր հնարավորությունները, սակայն նոր սահմանադրությամբ նախատեսվելիք ընթացակարգի հաշվառմամբ կազմված այդ ծրագիրը հնարավոր կլինի իրականացնել ոչ թե 2012 թ., այլ գործող սահմանադրությամբ սահմանված կարգին համապատասխան՝ 2014 թ.*:

Կրկնելով անկախ թեկնածուների խորհրդարան մտնելու 2007 թ հաջողությամբ կիրառած մեթոդը՝ ԽԺԿ խմբակցությունը նոր խորհրդարանում ներկայացված կլինի 36 պատգամավորով: Կուսակցության շարքերում ներկայացված են քրդական շարժման՝ վերջին 20 տարիների ակտիվիստներ, որոնք խորհրդարանում ըստ պատշաճի կբարձրաձայնեն քրդերի իրավունքներն ու շահերը, եթե իհարկե զերծ մնան նախորդ գումարումների խորհրդարաններում ցուցաբերած սադրիչ ձեռնարկումներից ու արտախորհրդարանական ընդվզումներից, ինչն ապացուցվում է վերջին մի քանի շաբաթվա ընթացքում ԽԺԿ կատարած քայլերով: Քրդական կուսակցության ակտիվությունից և Օջալանի կողմից ՔԲԿ օգտագործման հնարավորությունից է կախված Քրդական հարցի լուծման հեռանկարը: Քրդական պրոբլեմի շուտափույթ լուծման և սոցիալ-տնտեսական ոլորտում շոշափելի առաջընթացի հասնելու խնդրում Էրդողանի վրա ճնշումները մեծանում են թե՛ երկրի ներսում, թե՛ արտերկրից:

ՀԺԿ ստացած քվեները կարիք ունեն առանձին վերլուծության: Նախորդ ընտրություններում 19 և 20 % քվեների փոխարեն այս ընտրություններում ստացված 26 %-ը ցույց է տալիս, որ կուսակցության նոր ղեկավար Քեմալ

* Թուրքիայի Նախագահի ընտրության կարգի և լիազորությունների վերաբերյալ սահմանադրական փոփոխություններն ընդունվել են ոչ վաղ անցյալում՝ 2007 թ. հոկտեմբերի 21-ի հանրաքվեով, և ուժի մեջ են մտել Աբդուլլահ Գյուլի Նախագահ դառնալուց հետո: Սակայն Էրդողանը, այդ լիազորություններն անբավարար համարելով, ծրագրում էր խորհրդարանական ընտրություններում հաղթահարել սահմանադրության փոփոխման համար անհրաժեշտ մեծամասնության շեմը և, 2012 թ. ներդրելով ֆրանսիական կամ ամերիկյան տիպի նախագահական համակարգ, ժողովրդի վստահության բարձր ալիքի վրա դառնալ Նախագահ ու ավելի վաղ ձեռնամուխ լինել իր քաղաքական հավակնությունների լիարժեք իրականացմանը: Այդ ծրագիրը խափանվեց, իսկ ըստ Էրդողանի հայտարարության՝ գործող Սահմանադրությամբ Նախագահին տրված լիազորությունները նրա համար չափազանց քիչ են: Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ խորհրդարանում անհրաժեշտ 3/5-ի (330 մանդատի) առավելություն չունենալու պայմաններում տեխնիկապես քիչ է հավանական, որ Էրդողանը կարողանա ծրագրված 2012 թ. հասնել սահմանադրական կարգի ցանկալի փոփոխության, իսկ հասնելու դեպքում անգամ նրա համար շատ դժվար կլինի լրջորեն նախապատրաստվել ու հաղթանակի հավակնել, քանի որ ստիպված կլինի իր ժամանակի, ռեսուրսի ու ներուժի մեծ մասը ծախսել համաձայնեցումների ու փոխզիջումների վրա: Հետևաբար Էրդողանը կկարողանա հավակնել Նախագահի պաշտոնին 2014 թ., երբ կավարտվի 2007 թ. 7 տարով ընտրված Աբդուլլահ Գյուլի նախագահության ժամկետը, եթե, իհարկե, նրան հաջողվի սահմանադրության մակարդակով արտացոլել իր համար ցանկալի քաղաքական և օրենսդրական փոփոխությունների սցենարները:

Քըլիչդարօղլուին հաջողվել է անել գրեթե անհնարինը: Ներկուսակցական պառակտումները հաղթահարելու և ընտրազանգվածի վստահության քվե ստանալու համար ՀԺԿ նոր ղեկավարության ժամանակը բավական սուղ էր: Ղեկավարության մեջ առկա արմատական պառակտումները հնարավոր եղավ մեղմել միայն 2010 թ. դեկտեմբերին՝ կուսակցության արտակարգ համագումարում: Այլ խոսքով՝ կուսակցությունն ընտրություններին պատրաստելու համար Քըլիչդարօղլուն ուներ ընդամենը 5-6 ամիս: Ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ այդ կարճ ժամանակահատվածում կուսակցության նոր ղեկավարությանը հաջողվեց ստանալ լրացուցիչ մոտ 3,8 մլն ձայն, ինչը լավ ցուցանիշ է: Հասկանալի է, որ ԱԶԿ-ն ու ՀԺԿ-ի ներսում առկա ընդդիմությունն ուղղակի կամ միջնորդավորված կերպով փորձում են ՀԺԿ ստացած 26 % ձայները ներկայացնել որպես Քըլիչդարօղլուի պարտություն՝ մատնացույց անելով այն փաստը, որ նա չի կարողացել ստանալ իր խոստացած 30 %-ը: Սակայն ԱԶԿ-ի նման մոտեցումը ցույց է տալիս, որ իրականում այդ կուսակցության համար այնքան էլ պարզ չէ, թե հետընտրական պայքարում Քըլիչդարօղլուն ինչպիսի ակտիվություն կցուցաբերի: Նախընտրական պայքարում նա՝ որպես քաղաքական գործիչ ու կուսակցության առաջնորդ, ստացավ իր մկրտությունը և թրծվեց: Իհարկե, 2009 թ. Ստամբուլի քաղաքապետի ընտրություններում ևս նա մեծ փորձ էր կուտակել, սակայն համապետական ընտրությունների փորձ չուներ: Ակնհայտ է, որ Քըլիչդարօղլուն իր ապագա քաղաքական պայքարում կներդրի ավելի մեծ ջանքեր:

Թեև հոռետեսները կարծում էին, որ ԱԾԿ-ն անկարող է հաղթահարել 10 %-ի ընտրաշեմը, սակայն այն ոչ միայն ստացավ անհրաժեշտ քվեները, այլև նվազագույն ընտրաշեմը գերազանցեց 3 %-ով: 13 % արդյունքը ընդամենը մեկ տոկոսով էր քիչ 2007 թ. ընտրություններում ունեցած հաջողությունից, սակայն, եթե հաշվի առնվեն ԱԾԿ-ում տեղի ունեցող բարդ ու խորքային գործընթացները, կարելի է պնդել, որ այն հազիվ թե կարողանա նույն ղեկավարությամբ և նույն մեթոդներով ունենալ էական քաղաքական դերակատարություն: ԱԾԿ-ի քաղաքական օրակարգը և ընտրազանգվածը շարունակում են մնալ խարըսխված իրենց արդիականությունը կորցրած խնդիրների վրա, հետևաբար միայն ԱԾԿ-ի ղեկավարների փոփոխությունը կարող է մեծացնել կուսակցության կորսված հեղինակությունը:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքների մեկ այլ ուշագրավ դրվագ է հանրապետության հիմնադրումից ի վեր աննախադեպ թվով կին պատգամավորների մուտքը խորհրդարան՝ 14 %: Հարկ է հիշել, որ 1935 թ., երբ կանայք առաջին անգամ օգտվեցին ընտրվելու իրավունքից, խորհրդարանում հայտնվեց ընդամենը 14 կին պատգամավոր: Թվում էր, թե Աթաթյուրքի մշակութային բարեփոխումների ազդեցության ներքո կանանց թիվը հաջորդ գումարման խորհրդարաններում պետք է անշեղորեն աճի, սակայն միայն 67 տարի անց՝ 2002 թ. ընտրություններում, հնարավոր եղավ գերազանցել 1935 թ. ցուցանիշը. ընտրվեց 24 կին պատգամավոր (4,2 %), իսկ 2007 թ. այդ թիվն արդեն հասավ 50-ի (9,1 %): Նոր խորհրդարանում 78 կանանց ներկայությունը թեև

նախորդ ցուցանիշների համեմատությամբ առաջընթաց է, սակայն կին ակտիվիստները դժգոհ են տվյալ ցուցանիշից և նպատակ ունեն 2015 թ. ընտրություններում այն հասցնել 25 %-ի:

Նոր խորհրդարանում կան 350 անուններ, որոնք ներկայացված չէին նախորդ գումարման խորհրդարանում: ԱԶԿ-ի՝ Աբդուլլահ Գյուլի, Բյուլենթ Արինջի և Աբդուլլահ Շեների գլխավորած խմբակցությունների ներկայացվածությունը այժմ հասցված է նվազագույնի: Էրդողանը միանձնյա գլխավորում է ԱԶԿ-ն, և այս գումարման խորհրդարանում ԱԶԿ-ի խմբակցությունը կլինի հնարավորինս վերահսկելի: Հարկ է նաև փաստել, որ, ինչպես և նախորդ գումարման խորհրդարաններում, գործող խորհրդարանում ևս հնարավոր են մի խմբակցությունից մյուսն անցնելու դեպքեր, հետևաբար՝ որոշ կուսակցությունների պատգամավորական մանդատների թիվը կարող է աճել մյուսների հաշվին:

Թուրքիայի խորհրդարանը պետության քաղաքականության ձևավորման կարևոր կենտրոնն է: ՈՒստի և այն լավագույնս արտացոլում է Թուրքիայի քաղաքական մշակույթում առկա բացասական դրսևորումները, ինչպիսիք են՝ փոխզիջողականության մերժումը, փոխադարձ բացառման սկզբունքի համատարածությունը և այլն: Ընդդիմադիր կուսակցությունները կարող են վիժեցնել որոշ քվեարկություններ, խորհրդարանում հրահրել անկարգություններ, որոնք կդառնան հետաձգումների պատճառ: Կվերսկսվեն և կաճեն բոլոր կողմերից Էրդողանի վրա գործադրվող ճնշումները: Խորհրդարանում նրա ղեկավարած կուսակցության կողմից քվեների նվազման փաստը նրա համար դժվար ընդունելի իրողություն է, և սկզբնական շրջանում նա կփորձի մտածել ու գործել՝ ելնելով ուժերի նախկին տարաբաժանման պայմաններից:

Այսպիսով՝ հունիսի 12-ի ընտրություններում Էրդողանի հաղթանակն էական հաջողություն էր Թուրքիայում նախորդ տասնամյակներում արձանագրված ձեռքբերումների շարունակականության պահպանման և ներքաղաքական ճգնաժամների բացառման առումներով: Միևնույն ժամանակ, Թուրքիայի հիմնական քաղաքական ուժերը գիտակցում են, որ գործող Սահմանադրության փոխարեն նախատեսվող նոր սահմանադրության ընդունումը կփոխի ստատուս քվոն, սակայն հարկավոր է դեռ երկար ճանապարհ անցնել՝ նախատեսվող լայնածավալ ու արմատական փոփոխությունների նկատմամբ նաև բյուրոկրատիայի և զինվորականության վերաբերմունքը փոխելու համար:

**Ընտրություններից հետո հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարը**

2011 թ. փետրվար–մարտ ամիսներին Թուրքիայի քաղաքական կուսակցությունները հայտարարեցին վեց հայ թեկնածուների անուններ, որոնք հնարավորություն ունեին առաջադրվելու հունիսյան ընտրություններում: Վերջին անգամ Թուրքիայի խորհրդարանում հայազգի պատգամավոր եղել է կես դար առաջ, հետևաբար այս ընտրություններում հայազգի թեկնածուների առաջադրումը դրական տրամադրություններ առաջ բերեց թե՛ Թուրքիայում ապրող հայության, թե՛ հայաստանյան հասարակական-քաղաքական ու վերլուծական շրջաններում: Իրականում, դեռ 2002 թ. նորաստեղծ ԱԶԿ-ն փորձել էր ներ-

գրավել հայազգի թեկնածուների, սակայն որոշակի պատճառներով այդ ջանքերն արդյունք չտվեցին[15], իսկ 2007 թ. ընտրություններում հայազգի թեկնածուների հարցն ընդհանրապես չքննարկվեց: Սակայն սպասումներն ի դերևս եղան, քանի որ ապրիլին հայտարարվեց, որ ոչ մի հայազգի թեկնածու չի ընդգրկվել որևէ քաղաքական ուժի նախընտրական ցուցակներում[16]:

ՈՒշագրավ են Հայաստանին սահմանակից երեք նահանգներում ներկայացված չորս կուսակցությունների ընտրական արդյունքները: Իգդիրում հաղթեց ԱԾԿ-ն, իսկ Արդահանում և Կարսում՝ ԱԶԿ-ն (մեկ պատգամավոր Արդահանից, երկուսը՝ Կարսից): ԽԺԿ աջակցությունը վայելող մեկական անկախ թեկնածուներ հաղթեցին Իգդիրում և Կարսում: ՀԺԿ-ից միայն մեկ պատգամավոր կներկայացնի Արդահանը, որտեղ 2002 թվականից ի վեր ԱԶԿ-ն ու ՀԺԿ-ն ունենում են միևնույն արդյունքները:

Թուրքիայի խորհրդարանի նոր կազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ հակահայկական տրամադրություններ սնուցող ինչպես քաղաքական ուժերը ներկայացնող, այնպես էլ և անհատ պատգամավորների պակասություն չի լինի: Դրա վկայությունն է ԱԾԿ-ի և, հատկապես, Յուսուֆ Հալաջիօղլուի ու Սինան Օղանի ներկայությունը: Այս երկու պատգամավորները հայտնի են իրենց բացահայտորեն հակահայկական դիրքորոշումներով: Յ. Հալաջիօղլուն Հայաստանում հայտնի է որպես երկար տարիներ հակահայկական տրամադրություններ սերմանող քաղաքական գործիչ, որը նաև ժամանակին ղեկավարում էր Թուրքիայի պատմական ընկերակցությունը: Սինան Օղանը Հայաստանում սակավ հայտնի է: Իգդիրի նահանգից ընտրված և ադրբեջանական լոբբինգի կողմից մեծ աջակցություն ստացած Ս. Օղանն աչքի է ընկնում իր ադրբեջանամետ դիրքորոշմամբ: Նրա նախընտրական ծրագրի առաջին երկու կետերը վերաբերում էին Մեծամորի ատոմակայանը փակելու և Արցախյան հակամարտությունը Ադրբեջանի օգտին լուծելու պահանջին, ապա նոր նշվում էր Իգդիրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման խնդիրը:

Նոր խորհրդարանում Հայաստանի հետ համագործակցելու հնարավոր դերակատարներ կարող են դառնալ քրդերը: Նախորդ գումարման խորհրդարանում նրանք մի քանի անգամ բարձրաձայնել են Ցեղասպանության և Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրները, ուստի և այդ հարցում ձևավորվել է որոշակի փորձ: Նոր խորհրդարանում ունենալով համեմատաբար շատ քվեներ՝ նրանք կարող են ավելի հետևողական լինել Հայաստանի հետ կապված պրոբլեմների վերհանման գործում: Վերջին շրջանում նրանց և Հայաստանի գործակցությունը խորանում է, և կան բոլոր հիմքերը պնդելու, որ քրդերն այդ հարցում կդրսևորեն առավելագույն շահագրգռվածությունը: Վերջին շրջանում հայ-քրդական շփումները ցույց են տալիս, որ քրդերը

[15] Այդ մասին հանգամանորեն տես *Vahram Ter-Matevosyan*. The Armenian Community and the AK Party: Finding Trust Under the Crescent. «Insight Turkey», 2010, V. 12, N 4:

[16] Տես «Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին ներկայացված ընտրացուցակներում հայեր չկան», 25.04.2011 (http://www.azatutyun.am/content/article/9504359.html):

պատրաստ են առաջինը օգտվել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումից: Դրա վկայությունն են Դիարբեքիրի քաղաքապետի վերջին շրջանի հայտարարությունները:

* * *

Այսպիսով՝ նոր խորհրդարանն առանձնահատուկ է մի շարք առումներով, ինչի վառ ապացույցն են ընտրություններից հետո շարունակվող ներքաղաքական ճգնաժամը, քուրդ պատգամավորների բոյկոտը և ՔԲԿ պայքարի վերաակտիվացումը: Հին պրոբլեմների վերհանումը և դրանց լուծման ուղղությամբ գործնական ու անհետաձգելի քայլերի ձեռնարկումը Էրդողանի համար հույժ կարևոր և հրատապ խնդիրներ են: Քանի որ 2014 թ. նա չի կարող դառնալ վարչապետ, ուստի առաջիկա 4 տարիներին կարող է լիարժեք կերպով զբաղվել քաղաքական բարդ պրոբլեմների լուծմամբ: Իսկ դրա համար նա ունի անհրաժեշտ լծակներ և հեղինակություն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

*Լ. Ռ. ՄՈՎՍԻՍՅԱՆ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս*

Ընդհանուր թյուրքերենի (համընդհանուր գրական լեզվի)՝ որպես թյուրքական ժողովուրդների միասնական լեզվի գաղափարը 19-րդ դարի վերջերից անցել է բարդ և հակասական ճանապարհ: Այդ գաղափարն առաջին անգամ առաջ է քաշել Գասպրալին 19-րդ դարի 80-ական թթ.: Ըստ նրա՝ ազգի ինքնությունն սկսվում է լեզվից, և բոլոր թյուրքերը պետք է խոսեն մեկ ընդհանուր լեզվով, որպեսզի դառնան մեկ միասնական հզոր ազգ[1]:

1926 թ. փետրվարին Բաքվում կազմակերպված Առաջին թյուրքագիտական խորհրդաժողովում ներկայացվեցին 38 զեկուցումներ՝ նվիրված թյուրքական աշխարհի ծագմանը, լեզվին, պատմությանը, գրականությանը, մշակույթին: Խորհրդաժողովը մեծ դեր խաղաց Խորհրդային Միությունում սլավոններից հետո իրենց թվաքանակով երկրորդը համարվող թյուրքախոս ժողովուրդների կյանքում. ընդհանուր այբուբենի, ընդհանուր գրական լեզվի հարցերով քննարկումները դարձան ոչ միայն թյուրքագետներին, այլև ընդհանրապես Արևելքով զբաղվող գիտնականներին հուզող կարևոր հարցեր:

[1] Տես «Ortaq türkcə cərəyanı, Təşəkkülü, təkamülü, tənəzzülü» (http://www.rasulzade.org/ideology/4_2.html):

Ընթերցողին պրոբլեմի էությունն ավելի պարզ դարձնելու նկատառումով նպատակահարմար ենք համարում նախքան բուն թեմայի քննարկումը ստորև բերված աղյուսակում ներկայացնել որոշ տեղեկություններ Ալթայան լեզվաընտանիքի թյուրքական խմբին պատկանող ժողովուրդների մասին՝ նշելով այդ ժողովուրդների բնակության հիմնական կենսատարածքները և գերիշխող կրոնը:

*Աղյուսակ*

ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐ ԹՅՈՒՐՔԱԽՈՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ[2]

| **Անվանումը** | **Բնակության հիմնական կենսատարածքը** | **Գերիշխող դավանանքը** |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| **Ադրբեջանցիներ** | Ադրբեջան, Վրաստան, Իրան, ՌԴ՝ *Դաղստան* | շիա մահմեդական (կան նաև սուննիներ) |
| **Ալթայցիներ** | ՌԴ՝ *Օբ գետի վերին հոսանք, Ալթայի երկրամաս, Կեմերովոյի մարզ* | գերազանցապես՝ ուղղափառ քրիստոնյա |
| **Բալկարներ** | ՌԴ՝ *Կաբարդինո-Բալկարիա* | սուննի մահմեդական |
| **Բաշկիրներ** | ՌԴ՝ *Բաշկորտոստան, Չելյաբինսկի, Պերմի, Օրենբուրգի մարզեր, Պովոլժիե* | սուննի մահմեդական |
| **Գագաուզներ** | ՌԴ՝ *եվրոպական մասի հարավարևմուտք*, Մոլդովա, ՈՒկրաինա, Բուլղարիա | ուղղափառ քրիստոնյա |
| **Թաթարներ** | ՌԴ՝ *Թաթարստան, Բաշկորտոստան, Չելյաբինսկի, Պերմի, Սվերդլովսկի, Օրենբուրգի մարզեր, եվրոպական մասի մեծ քաղաքներ, հարավային Սիբիր՝ մինչև Սահալին*, Ղազախստան, Միջին Ասիա (հիմնականում՝ ՈՒզբեկստան), Չինաստան, Ռումինիա, Բուլղարիա, Թուրքիա, ՈՒկրաինա՝ *Ղրիմ* | սուննի մահմեդական |
| **Թոֆեր** | ՌԴ՝ *Սիբիր* | շամանական |
| **Թուրքեր** | Թուրքիա, Կիպրոս, Հունաստան, Ռումինիա, Գերմանիա, Բուլղարիա, Իրաք | սուննի մահմեդական |
| **Թուրքմեններ** | Թուրքմենստան, Իրան, Աֆղանստան, Իրաք, Սիրիա, Թուրքիա | սուննի մահմեդական |

[2] Տես «Географический энциклопедический словарь», т. 5, раздел «Народы мира». М., 1966:

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| **Իրանի հարավի և արևելքի թյուրքախոս ցեղեր** | | շիա մահմեդական (նախա-մահմեդական հավատամքի տարրերով) |
| **Խակասներ** | ՌԴ՝ *Խակասիա, Տուվա, Տոմսկի մարզ* | ուղղափառ քրիստոնյա |
| **Կաշկայներ** | Իրան՝ *հարավային շրջաններ* | շիա մահմեդական |
| **Կարաիմներ** | ՈՒկրաինա՝ *Ղրիմ,* Լիտվա | հուդայական |
| **Կարակալպակներ** | ՈՒզբեկստան, Թուրքմենստան, Աֆղանստան | սուննի մահմեդական |
| **Կարաչայներ** | ՌԴ՝ *Կարաչայ-Չերքեզիա* | սուննի մահմեդական |
| **Կումիկներ** | ՌԴ՝ *Դաղստան, Չեչենո-Ինգուշեթիա, Հյուսիսային Օսեթիա* | սուննի մահմեդական |
| **Ղազախներ** | Ղազախստան, Միջին Ասիա, ՌԴ՝ *Չելյաբինսկի մարզ,* Չինաստան, Մոնղոլիա | սուննի մահմեդական |
| **Ղրղզներ** | Ղրղզստան, ՈՒզբեկստան, Տաջիկստան, Չինաստան, Աֆղանստան | սուննի մահմեդական |
| **Յակուտներ (սախա)** | ՌԴ՝ *Սախա, Արևելյան Սիբիր* | ուղղափառ քրիստոնյա |
| **Նողայներ** | ՌԴ՝ *Ստավրոպոլի երկրամաս, Դաղստան, Չեչենո-Ինգուշեթիա, Կարաչայ-Չերքեզիա* | սուննի մահմեդական |
| **Շորներ** | ՌԴ՝ *Ալտաու, Կեմերովոյի մարզ, Խակասիա* | ուղղափառ քրիստոնյա (շամանականության տարրերով) |
| **Չուվաշներ** | ՌԴ՝ *Չուվաշիա, Թաթարստան, Բաշկորտոստան, Սամարայի, Կեմերովոյի, ՈՒլյանովսկի մարզեր (Պովոլժիե)* | ուղղափառ քրիստոնյա |
| **Սալարներ** | Չինաստան | սուննի մահմեդական |
| **Տուվացիներ** | ՌԴ՝ *Տուվա,* Մոնղոլիա | լամայական (շամանակա-նության տարրերով) |
| **ՈՒզբեկներ** | ՈՒզբեկստան, Տաջիկստան, Ղրղզստան, Ղազախստան, Թուրքմենստան, Չինաստան, Աֆղանստան | սուննի մահմեդական |
| **ՈՒյգուրներ** | Չինաստան, Ղազախստան, Ղրղզստան, ՈՒզբեկստան | սուննի մահմեդական (նախամահմեդական պաշտամունքներով) |

Թյուրքախոս ժողովուրդների համախմբման, մասնավորապես՝ ընդհանուր լեզվի ստեղծման գաղափարը նոր թափ ստացավ 21-րդ դարի սկզբին: Այսպես. 2008 թ. նոյեմբերին Ստամբուլում ստորագրվեց համաձայնագիր՝ Թյուրքախոս պետությունների խորհրդարանական վեհաժողովի ստեղծման մասին, որի՝ 2009 թ. սեպտեմբերին Բաքվում կայացած առաջին լիագումար նիստում ընդունվեց Բաքվի հռչակագիրը: Դրանում շեշտվում էր, որ «Թյուրքախոս երկրների Խորհրդարանական վեհաժողովի գործունեությունը հիմնվում է մասնակից պետությունների պատմության, լեզվի և մշակույթի ընդհանրությամբ ընձեռվող հնարավորությունները հանուն մեր եղբայրական ժողովուրդների հետագա զարգացման օգտագործելու վրա»[3]:

Թուրքերենը, ադրբեջաներենը, թուրքմեներենը և գագաուզերենը պատկանում են թյուրքական լեզուների օղուզական խմբին և լեզվի կառուցվածքային տարբեր մակարդակներում ունեն զգալի ընդհանրություններ: Նշված լեզուների միջև առկա տարբերությունները որոշ թյուրքախոս շրջաններ համարում են ոչ էական և հաղթահարելի խոչընդոտներ: Նրանց կարծիքով՝ ընդհանուր լեզվի ձևավորման ու տարածման միջոցով կարելի է հասնել թյուրքախոս պետությունների մշակութային ու կրթական միավորմանը: Թուրք գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքի կարծիքով՝ պետք չէ երկյուղել մշակույթների փոխազդեցությունից: Ըստ նրա՝ թուրքերենը, լինելով աշխարհում ամենաշատ խոսվող լեզուներից մեկը, ունի նվազ ճանաչում[4]: Ավելի լավատես է Ղազախստանում լույս տեսնող «Թուրան Էքսպրես» (*«Turan Ekspress»*) թերթի գլխավոր խմբագիր, «Ղազախստան–Ադրբեջան բարեկամություն» կազմակերպության փոխնախագահ Վիդադի Սալահովը: Նա համարում է, որ թյուրքախոս պետությունների միավորումը պետք է սկսվի մշակույթի և կրթության ընդհանրացմամբ, այնուհետև կարող է շարունակվել ու ամրապնդվել քաղաքականությամբ[5]:

Թյուրքախոս պետությունների շարքում անթաքույց կերպով առաջնորդի դիրքի ձգտող Թուրքիան ընդհանուր թյուրքական լեզվի դերում տեսնում է Թուրքիայի թուրքերենը և այդ նպատակով ակտիվ քաղաքականություն է վարում աշխարհում դրա քարոզչության ու տարածման ուղղությամբ: Այդ նպատակին միտված գործնական քայլերից կարելի է նշել 1992 թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 1-ը Ստամբուլում կազմակերպված թյուրքական լեզվի

[3] «Принята Бакинская декларация Парламентской Ассамблеи тюркоязычных стран». «Вестник Кавказа», 29.09.2009 (www.vestikavkaza.ru/news/politika/summit/8986.html).

[4] Տես «Pamuk: «Kültürel etkileşimden korkmamak gerekir»». «Hürriyet» (http://arama.hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=226587):

[5] Սալահովն է հրապարակել այն միտքը, թե Ադրբեջանում կան մարդիկ, որոնք մի քանի աղվանական եկեղեցի պահպանելու համար փորձում են Ադրբեջանն ամբողջությամբ «աղվանացնել»: «Այո՛, հնարավոր է, որ այստեղ ապրել են աղվաններ, բայց ժողովրդի արմատներն ամբողջությամբ կապել աղվանների հետ, անթույլատրելի է: Մենք չպետք է զոհենք մեր պատմությունը հանուն քաղաքականության», ասել է հայտնի հասարակական գործիչը (տես «Azadliq Radiosu» կայքէջը (http://www.azadliq.org/content/Article/1377727.html)):

առաջին միջազգային համագումարը[6], 2011 թ. մայիսի 12–21-ը Ղազախստանում տեղի ունեցած Թուրքագիտական 3-րդ կոնգրեսը[7], ինչպես նաև թյուրքախոս աշակերտների միջազգային կոնգրեսները, որոնցից առաջինը գումարվել է 2011 թ. մայիսի 12-ին[8]:

Մի շարք ադրբեջանցի մասնագետների, օրինակ՝ Ադրբեջանի պետական մանկավարժական համալսարանի բանասիրության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Բուլուդխան Խելիլովի կարծիքով՝ թյուրքական աշխարհի միավորման և առաջին հերթին ընդհանուր լեզվի մշակման գաղափարը առաջ մղելու համար պետք է ստեղծվեն լուրջ համակարգող կենտրոններ, ընդհանուր ԶԼՄ-ներ՝ հեռուստաալիքներ, ռադիոհաղորդումներ և այլն[9]: Ընդհանուր լրատվամիջոցների ստեղծումը վաղ թե ուշ կհանգեցնի ընդհանուր բառապաշարի ձևավորմանը: Այդ նպատակով Ադրբեջանում 2009 թ. մարտի 21-ին՝ կրոնական «Նովրուզ բայրամ» տոնի օրը, իր գործունեությունն սկսեց համաթյուրքական «ՏՌՏ ԱՎԱԶ» *(«TRT AVAZ»)* հեռուստաալիքը, որի բացման միջոցառմանը մասնակցեց Թուրքիայի Նախագահ Աբդուլլահ Գյուլը: Հեռուստաալիքը հեռարձակվում է թուրքերեն, ադրբեջաներեն, ղազախերեն, ղրղզերեն և թուրքմեներեն:

Ընդհանրապես Ադրբեջանում թյուրքականությունն ունի բազմամյա պատմություն: Դասական պանթյուրքականության գաղափարախոսության հիմնադիրներից մեկը՝ Զիյա Գյոքալպը, 20-րդ դարի սկզբին նշել է. «Թյուրքականության գաղափարի ստեղծման վրա մեծ ազդեցություն են ունեցել Ռուսական կայսրությունում ապրող թյուրքերը»[10]: Նա առաջին հերթին նկատի է ունեցել ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող թյուրքերին: Արդի Ադրբեջանի մտավորականները համարում են, որ անհրաժեշտ է թյուրքականության գաղափարախոսության նկատմամբ մշակել նոր մոտեցում: Ըստ այդմ՝ Ադրբեջանում և Թուրքիայում քննարկվում է «ընդհանուր լեզվի»՝ որպես թյուրքականության գաղափարախոսության կարևոր բաղադրիչի ստեղծման հարցը:

Ադրբեջանի և Թուրքիայի միջև եղբայրական հարաբերությունների հիմքը դրել է Թուրքիայի Հանրապետության առաջին Նախագահ Քեմալ Աթաթյուրքը՝ որպես այդ հարաբերությունների մեկնակետ առաջ քաշելով «Ադրբեջանի վիշտը մեր վիշտն է, իսկ ուրախությունը՝ մեր ուրախությունը» կարգախոսը[11]: 1991 թ. Ադրբեջանի Հանրապետության հռչակումից հետո բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին միջպետական ձևաչափով թուրք-ադրբեջանական

[6] Տես «Uluslararası Türk Dili Kongresi 1992: 26 Eylül 1992 – 1 Ekim 1992». İstanbul, 1992:

[7] Տես «Kazakistan'da Turkoloji Kongreleri ve Ortak Dil Meselesi» (http://www.sozgazetesi.org/index.php?option=com_k2&view=item&id=1269:kazakis):

[8] Տես *Ogyz Kipchak.* Türkçe Kongesi'nin Açılış Töreni. «TURK-MEDIA» (www.turk-media.info/?p=2080):

[9] Տես «Buludxan Xəlilov: «Dil müfəttişliyinin yaradılmasına ehtiyac var»» (www.zaman.az/site/?name=content&mid=9):

[10] «Türkçülük, türk dünyası və müasir siyasi proseslər» (http://library.adau.edu.az/upload/book/220_Mövzu%2021.doc).

[11] Տես «Bizi ortaq köklər birləşdirir» (www.journal.azertag.gov.az/):

մերձեցման համար: Ադրբեջանի պետականության կառուցման ճանապարհին Թուրքիան դարձավ հզոր և անհրաժեշտ հենարան: Երկու պետությունների միջև հարաբերություններն սկսեցին զարգանալ ըստ Ադրբեջանի Նախագահ Հեյդար Ալիևի որդեգրած «Մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսի[12]: Հսկայական էր Թուրքիայի ազդեցությունը նորանկախ Ադրբեջանի հասարակական-քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, մշակութային կյանքում: Թուրք-ադրբեջանական մերձեցումն ընդգրկեց նաև կրթության ոլորտը[13]:

Հարաբերությունների նման ձևաչափը պայմանավորված է էթնիկական, կրոնական, մշակութային, գաղափարախոսական, լեզվական ընդհանրություններով, ընդհանուր բարոյահոգևոր արժեքներով, ինչպես նաև ընդհանուր աշխարհաքաղաքական շահերով, միջազգային ասպարեզում ընդհանուր գործընկերներով, արտաքին քաղաքականության մեջ ընդհանուր ուղղվածությամբ, տնտեսական հարաբերությունների փոխշահավետությամբ[14]:

Երկկողմ հարաբերությունները զարգացման նոր փուլ թևակոխեցին կրտսեր Ալիևի օրոք: «Մեզ միմյանց կապողը, միավորողը պատմական արմատներն են, մեր ընդհանուր պատմությունը, ավանդույթները, կրոնը, լեզուն և մշակույթը: Մեր երկրներին, տարածաշրջանին, աշխարհին վերաբերող կարևոր հարցերն այժմ լուծվում են Անկարայում և Բաքվում, և դա ճշմարտություն է», հայտարարել է Ադրբեջանի Նախագահը[15]: Պետության ղեկավարի նման մոտեցումը համաձայնեցված ուղեգծի առկայության վկայությունն է:

Ադրբեջանում քաղաքական վերնախավի մի մասը կողմ է լեզվաքաղաքականության միջոցով ամբողջ թյուրքական աշխարհը միավորելու գաղափարին: Թուրքիայի թուրքերենի հիմքի վրա ստեղծվելիք ընդհանուր թյուրքերեն լեզվի գաղափարը՝ որպես պանթյուրքական գաղափարախոսության փայլուն դրսևորում, հավանության է արժանանում նաև որոշ ազդեցիկ մտավորականների շրջանում: Մասնավորապես՝ Ադրբեջանի գրողների միության նախագահ Անար Ռեսուլօղլուն արդեն 15 տարի շարունակ պնդում է, թե թյուրքական աշխարհում յուրաքանչյուր լեզու պետք է պահպանի իր հարստությունն ու առանձնահատկությունը, սակայն Թուրքիայի թուրքերենը պետք է լինի ընդհանուր լեզու: Անարը բերում է հետևյալ հիմնավորումը. «Թուրքիան մի երկիր է, որը մշտապես պահպանել է իր անկախությունը, ունի պետականության ավանդույթներ և զարգացած լեզու: Ես խորհուրդ եմ տալիս սովորել թուրքերեն»[16]: Ադրբեջանի մտա-

[12] Տես նույն տեղում:

[13] 1994 թվականից Ադրբեջանում գործում է Բաքվի թուրքական անատոլիական լիցեյը *(ադրբ.* Bakı türk Anadolu Liseyi) (տես «Buludxan Xəlilov: «Dil müfəttişliyinin yaradılmasına ehtiyac var»» (www.zaman.az/site/?name=content&mid=9)):

[14] Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքվել են տարբեր բնագավառներում համագործակցության մասին երկկողմ պայմանագրեր և համաձայնագրեր (http://www.mfa.gov.tr/sub.tr.mfa?7cdbd5c3-9b43-4567-a752-415d887bf8b3):

[15] Տես «Bizi ortaq köklər birləşdirir» (www.journal.azertag.gov.az/):

[16] «Türk dünyasının dil yarası». «ZAMAN PAZAR», 01.02.2009 (http://www.zaman.com.tr/haber.do?haberno=810230&keyfield=617A6572692064696C69).

վորականության մի զգալի մասը թուրքերենը դիտում է որպես զարգացած լեզվի օրինակ: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր, Բաքվի Աթաթյուրքի կենտրոնի նախագահ պրոֆեսոր Նիզամի Զաֆարովը նշել է. «Յուրաքանչյուր ազգ ցանկանում է, որ իր լեզուն լինի ընդհանուր լեզու: Բայց նման հարցերը պետք է քննարկեն լեզվաբանները՝ բարձր մակարդակով: Եվ իմ կարծիքն այն է, որ հնարավորություն չունենք Թուրքիայի թուրքերենից բացի ընտրելու այլ ընդհանուր լեզու»: Նա առաջ է քաշում հիմնականում երկու պատճառ. «Թուրքիայի թուրքերենն առաջադիմական, զարգացած լեզու է, քանի որ ամենաարևմտյան լեզուն է: Մենք՝ թյուրքերս, մշտապես ձգտում ենք արևելքից գնալ դեպի արևմուտք» և «Աշխարհում 250 միլիոն թյուրքերի կեսը հասկանում է Թուրքիայի թուրքերենը»[17]:

Փաստենք, որ ժամանակակից ադրբեջաներենում ակնհայտ միտում կա կիրառելու հնարավորինս շատ թուրքերեն բառեր և թուրքերենի քերականությանը բնորոշ կառույցներ ու ձևեր:

Միևնույն ժամանակ, բազմաթիվ ադրբեջանցի քաղաքական գործիչների և մտավորականների կարծիքով իրենց լեզուն ադրբեջաներենն է, և եթե անգամ ընդհանուր լեզու ստեղծվի, դա չպետք է լինի Ստամբուլի թուրքերենը*: Նրանք շեշտում են ադրբեջաներենի «հարուստ, ճոխ և հին» լեզու լինելու «փաստը»: Ադրբեջանի մտավորականության այդ հատվածը ակնհայտորեն մտահոգված է ադրբեջաներենի ապագայով՝ գիտակցելով, որ լեզուն ժողովրդի ինքնության կարևորագույն բաղկացուցիչ մասն է, ուստի երկրում թուրքական հեռուստաալիքների ու լեզվի տարածումը վտանգ է ներկայացնում: Արդեն ավանդույթ է դարձել, որ ադրբեջանական «Սես» (*«Səs»*՝ ձայն) թերթը[18] պարբերաբար կազմակերպում է կլոր սեղաններ՝ ադրբեջաներենին առնչվող հարցեր քննարկելու նպատակով: Մտավորականությունը դժգոհում է, թե «հարուստ» ավանդույթներ ունեցող լեզվի նորմերը կոպտորեն խախտվում են, հաճախ անտեղի օգտագործվում են օտար բառեր: Օրինակ՝ Բաքվի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թյուրքական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռյուֆեթ Ռյուսքեմովը խորհուրդ է տալիս ճիշտ ադրբեջաներենով խոսելու համար օրինակ վերցնել «մեծ առաջնորդ Հեյդար Ալիևից»: «Նրա ելույթները լսելով՝ հնարավոր է սովորել խոսքի մշակույթ: Մի բան պետք է գիտակցենք, որ լեզուն ժողովրդի անձեռնմխելի հարստությունն է»[19]:

---

[17] *Ürfan Məmmədli.* Dilimizi qorumalıyıq, amma... (www.zaman.az/site/?name=yazar&news_id=17385&yid=2).

* Թուրքիայի թուրքերենի հիմքի վրա ընդհանուր թյուրքական լեզվի գաղափարի յուրովի ժխտում կարելի է համարել արդեն հիշատակված 3-րդ թյուրքագիտական կոնգրեսը, որը կազմակերպվեց մեկ այլ թյուրքախոս պետությունում՝ Ղազախստանում (տես «Kazakistan'da Turkoloji Kongreleri ve Ortak Dil Meselesi»:

[18] Տես *Nəzakət Ələddinqızı, Murad İsmayılzadə.* Milləti yaşadan onun dilidir (www.ses-az.com/view.php?lang=az&menu=1&id=119):

[19] Նույն տեղում:

Ադրբեջաներենի ներկայիս վիճակով մտահոգված հասարակական-քաղաքական գործիչները շեշտում են, թե անհրաժեշտ է հանրապետությունում ստեղծել լեզվի հատուկ տեսչություն, որը պատժամիջոցներ կիրառի լեզվի կանոնները խախտողների նկատմամբ. խոսքը հատկապես մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի լեզվի մասին է: Այսպիսով՝ Ադրբեջանում շատերը թուրքերեն բառերը համարում են օտար բառեր և քաղաքական վերնախավին կոչ անում՝ վերահսկելու Ադրբեջանում ընթացող բացարձակ թուրքացման գործընթացը:

2008 թ. հունվարի 1-ից ադրբեջանական հեռուստաալիքներով օտար լեզուներով, այդ թվում՝ թուրքերենով, հաղորդումներն արգելելու մասին Ադրբեջանի Ազգային ռադիոհեռուստատեսության խորհրդի որոշումը նոր բովանդակություն տվեց ընդհանուր թյուրքական լեզվի ստեղծման և ադրբեջաներենի՝ որպես պետական լեզվի պահպանման հարցերի քննարկումներին: Որոշումը բուռն արձագանք առաջ բերեց թե՛ Ադրբեջանում, թե՛ Թուրքիայում: Որոշման հրապարակումից հետո ադրբեջանական մամուլի էջերում հայտնվեցին հեգնական հոդվածներ, վերլուծություններ. «Իսկ ու՞ր մնաց «մեկ ազգ՝ երկու պետություն» գաղափարը: Սա ի՞նչ կատակ է»[20]: Թեմայի առնչությամբ Ադրբեջանի Միլլի մեջլիսում հրավիրված նիստի ժամանակ «Ենի Ազերբայջան» («Նոր Ադրբեջան») կուսակցությունը քննադատեց այդ որոշումը. «Մեկ ազգը չի կարող ունենալ երկու լեզու: Մենք ունենք մեկ դաշնակից և եղբայր. դա Թուրքիան է: Չմոռանանք, որ մեր դրոշի վրա ծածանվում է թյուրքականության նշանը: Ադրբեջանում բոլորը հասկանում են թուրքերեն, ով էլ չի հասկանում, դա նրա խնդիրն է»[21]: Ադրբեջանի վեց կուսակցություններ միավորող Ազգայնական միության ղեկավար Վյուգար Բեյթուրանը խորհրդի որոշումը համարեց հարված ազգային շահերին[22]:

Ադրբեջանի Ազգային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի նախագահ Նուշիրևան Մեհերեմլին այդ որոշումը պատճառաբանեց «Պետական լեզվի մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ԱՊՀ օրենքներով[23]:

Մինչդեռ հասարակության մի ստվար զանգված այն համոզման է, թե ռուսերենով, թուրքերենով և այլ օտար լեզուներով հաղորդումների վրա դրվող արգելքի մասին որոշումը ոչ միայն տեղին, այլև ուշացած քայլ էր:

Ադրբեջանում թուրքերենի դեմ ուղղված այս հասարակական խմորումները թուրքական կողմի համար միանգամայն անակնկալ էին: Մամուլում հայտնվեցին հոդվածներ հետևյալ վերնագրերով. «Բարեկամ և եղբայր երկիր Ադրբեջա-

[20] *Qvami Məhəbbətoğlu.* Mümkün iki dil bir-birinə tərcümə, amma... (www.zaman.az/site/?name=yazar&news_id=17328&yid=7).

[21] *ՈՒրֆան Մեմեդլի,* Նշ. աշխ.:

[22] Տես «Televiziyada türk dilinə yasaq etiraz doğurdu» (www.xeberler.az/site/shownews.php?news_id=1366):

[23] Տես *Elnur Mammadli.* Nushiravan Maharramli: «Now other bodies should have a say on broadcasting of foreign radio stations in Azerbaijan». «apa» (www.en.apa.az/news.php?id=100590):

նի Խորհուրդը «ադրբեջաներենին վնաս հասցրեցին» պատճառաբանությամբ արգելեց թուրքերեն ֆիլմերի հեռարձակումն առանց թարգմանության», ««Մեկ ազգ՝ երկու պետություն» ասող Ադրբեջանը ադրբեջաներենին վնաս հասցնող լեզուների թվում ներառեց նաև թուրքերենը» և այլն[24]:

Ադրբեջանական մամուլը, իր հերթին, անհանգստացած էր թուրքական մամուլի կոշտ արձագանքից. արգելքի մասին որոշումը արդյո՞ք չի հակասում «մեկ ազգ՝ երկու պետություն» կարգախոսին, ինչպես նաև «ընդհանուր թյուրքական լեզվի» միջոցով թյուրքական աշխարհին առավելագույնս ինտեգրվելու՝ ադրբեջանական քաղաքական վերնախավի կամքին:

Հարկ է նաև նշել, որ 2011 թ. հուլիսին Բաքվում տեղի ունեցած Աշխարհի ադրբեջանցիների գագաթնաժողովի ոչ պանթյուրքական ուղղվածությունը ևս մեկ անգամ վկայում է, որ ընդհանուր թյուրքական լեզվի նկատմամբ ադրբեջանական վերնախավի մոտեցումներն առնվազն միանշանակ չեն:

Մեր կարծիքով՝ նպատակահարմար է դիտարկել թուրքերենի հիմքի վրա ընդհանուր թյուրքական լեզվի ստեղծման գաղափարի իրականացման հնարավոր հետևյալ սցենարները:

*Սցենար 1:* Բոլոր թյուրքախոս ժողովուրդներն ընդունում են տվյալ գաղափարը, և համընդհանուր թյուրքերենը տարածվում է թյուրքախոս ժողովուրդների բնակության ամբողջ կենսատարածքում:

Այդ դեպքում էապես կմեծանա բոլոր թյուրքախոս ժողովուրդների վրա Թուրքիայի հոգևոր-մշակութային ու տեղեկատվաքարոզչական ազդեցությունը՝ առաջ բերելով նաև ազդեցիկ տնտեսական ու քաղաքական լծակներ, ինչի հետևանքով Թուրքիան կսկսի կարևոր դեր խաղալ հետխորհրդային տարածքում (Ռուսաստանում՝ Հյուսիսային Կովկաս, Պովոլժիե, Ալթայ, Հարավային և Արևելյան Սիբիր, ՈՒկրաինայում, Մոլդովայում, Լիտվայում, Միջին Ասիայում), Չինաստանում (Սինցզյանի նահանգ), Աֆղանստանում (հյուսիսային շրջաններ), Իրանում (հյուսիսային, արևելյան և հարավային շրջաններ), Իրաքում, Սիրիայում, Արևելյան ու Հարավային Եվրոպայի մի շարք պետություններում (Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան, Կիպրոս և այլն), ինչպես նաև կնպաստի ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի որոշ պետություններում (Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա և այլն) այդ ժողովուրդների համայնքների* քաղաքական միավորմանն ու հզոր թուրքամետ լոբբինգի ձևավորմանը:

*Սցենար 2:* Թյուրքախոս ժողովուրդներն ընդունում են թուրքերենի հիմքի վրա ընդհանուր թյուրքական լեզվի ստեղծման գաղափարը մասնակիորեն (ոչ բոլորն են ընդունում՝ օղուզական և ույգուրյան ճյուղերի հակադրման պատճառով):

Այս դեպքում առաջին սցենարը կկրկնվի, սակայն ավելի սահմանափակ շրջանով:

*Սցենար 3:* Թուրքերենի հիմքի վրա ընդհանուր թյուրքական լեզվի ստեղծման գաղափարը կմերժվի:

---

[24] Տես «Biz tək millət, iki ayrı dövlətik» (www.xalqcebhesi.az?news.php?id=656):

* Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ դրանցից առավել մեծաթիվ է թուրքական համայնքը:

Չենք կարծում, թե նման դեպքում թուրքերի և մյուս թյուրքախոս ժողովուրդների (հատկապես՝ ադրբեջանցիների) միջև այդ պատճառով կառաջանա որևէ լուրջ անջրպետ, եթե Թուրքիան չփորձի իր կամքը բռնի կերպով թելադրել այդ ժողովուրդներին (ինչը այնքան էլ հավանական չի թվում):

Ինչպես հետևում է քննարկված սցենարների վերլուծությունից, ընդհանուր թյուրքերենի ստեղծումը, լուրջ վտանգ ներկայացնելով հայ ժողովրդի համար, միևնույն ժամանակ, չի համապատասխանում այնպիսի համաշխարհային ու տարածաշրջանային ուժային կենտրոնների շահերին, ինչպիսիք են ԱՄՆ-ը, ՌԴ-ն, Եվրամիությունը, Չինաստանը, Իրանը: ՈՒստի նրանք ևս հնարավորինս կխոչընդոտեն նման զարգացումներին:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ ընդհանուր թյուրքական լեզվի՝ որպես պանթյուրքականության համակարգի կարևոր տարրերից մեկի կայացումը թեև տեսականորեն չի բացառվում, սակայն իրագործումը իրատեսական չէ մի շարք «ներքին» հանգամանքների պատճառով:

Նախ. որքան էլ շատ լինեն ընդհանուր թյուրքական լեզվի ստեղծման ջատագովները, այդ գաղափարի իրականացմանը խոչընդոտում են թյուրքալեզու պետություններին և ժողովուրդներին բնորոշ քաղաքական, իրավական, լեզվամշակութային, տնտեսական, սովորութային և այլ բնույթի տարբերություններն ու դրանցով պայմանավորված այլ հանգամանքներ: Մասնավորապես՝ դժվար հաղթահարելի խոչընդոտ է մի շարք թյուրքալեզու պետությունների սահմանադրություններում ինքնիշխանության կարևոր հատկանիշներից մեկը համարվող ազգային լեզուների (ադրբեջաներեն, ղազախերեն, թուրքմեներեն, ուզբեկերեն, ղրղզերեն և այլն) պետական կարգավիճակի ամրագրման փաստը: Որոշ ինքնիշխան թյուրքախոս պետությունների ժողովուրդների լայն զանգվածները, ինչպես նաև դրանց իշխանական համակարգերը շահագրգռված են իրենց լեզուների պահպանման և ինքնուրույն զարգացման գործում՝ այն համարելով ազգային ինքնությունն ու դիմագիծը պահպանելու կարևոր երաշխիքներից մեկը:

Ինչ վերաբերում է թյուրքախոս պետություններում ընդհանուր թյուրքական լեզվին երկրորդ պաշտոնական լեզվի կարգավիճակ շնորհելու տարբերակին, ապա դա նույնպես, բացի վերը նշված բնույթի խոչընդոտներից, ենթադրում է հսկայական նյութական ու մարդկային ռեսուրսների ներգրավում: Իսկ դա իրատեսական չէ քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի պրոբլեմներով հագեցած օրակարգ ունեցող երկրների համար:

Դրա հետ մեկտեղ չի կարելի բացառել նաև խնդրո առարկա գաղափարի իրականացման ճանապարհին հավանական աշխարհաքաղաքական խոչընդոտների գոյությունը պանթյուրքական նկրտումների հարցում, գերտերությունների և ուժային կենտրոնների հնարավոր կոշտ հակազդեցությունը:

# ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Մ. Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հայցորդ*

Պատմականորեն Կասպյան տարածաշրջանը համարվել է «Ռուսաստանի ազգային շահերի ավանդական գոտի»[1], և այդ հանգամանքը հարցականի տակ չէր դրվում ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը: Կասպյան տարածաշրջանում կայունություն էր այնքան ժամանակ, քանի դեռ կար Խորհրդային Միությունը, որի լիակատար վերահսկողության ներքո էր գրեթե ամբողջ ծովը՝ բացառությամբ Իրանին հարող որոշ տարածքի:

1990-ական թվականներին ծայր առավ սուր պայքար ածխաջրածնային պաշարների համար: Դրա հանգուցակետերից մեկը դարձավ նաև Կասպյան տարածաշրջանը: ՈՒշադրության կենտրոնում հայտնվեց կասպյան նավթը: Այս իրողության գլխավոր պատճառներն էին նավթով ամենահարուստ շրջանի՝ Պարսից ծոցի երկրների միջև ծագած հակասությունները, ինչպես նաև Իրանի և Իրաքի հակամարտություններն ԱՄՆ-ի հետ, ԽՍՀՄ փլուզումը:

Կասպյան պաշարներին տիրելու ձգտում, բացի Ռուսաստանից ու Իրանից, ցուցաբերեցին նաև նորանկախ Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը, որոնք փորձեցին էներգետիկ ոլորտում վարել իրենց ուրույն քաղաքականությունը:

**ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը Կասպից ծովի տարածաշրջանում:** Կասպյան տարածաշրջանը հայտնվեց ԱՄՆ-ի ռազմավարական շահերի կիզակետում ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական նկատառումներով: Հարկ է նշել, որ Կասպից ծովի էներգապաշարները սակավ դեր են կատարում ԱՄՆ-ի էներգահամակարգում, որի՝ ածխաջրածիններով մատակարարման աղբյուրները բազմազան են՝ Պարսից ծոցի արաբական երկրներ, Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի՝ նավթի պաշարներով հարուստ երկրներ, Մեքսիկական ծոց և այլն: ՈՒստի ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական տեսանկյունից պետք է դիտարկվի նաև Բաքու–Թբիլիսի–Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի կառուցումը: Մեծ թվով մասնագետներ կասկածի տակ էին

[1] *Magomed Gasanov*. The Caspian and the Caucasus in Russia's Geopolitical interests: Historical Aspects. «Central Asia and the Caucasus», Center for Social and Political Studies, Sweden, 2005, N 1(31).

առնում այն պնդումները, թե Կասպից ծովի ավազանում կան բավարար էներգետիկ պաշարներ, ինչով կարդարացվեն այդ հսկայածավալ շինարարությունը և նախատեսվող տարանցիկ վճարները: Մինչ եվրոպական գործարար ու քաղաքական շրջանները համեմատաբար նվազ հետաքրքրություն էին ցուցաբերում Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ, ԲԹՋ նավթամուղի նախագիծն ստացավ Բ. Քլինթոնի վարչակազմի ուղղակի և անթաքույց աջակցությունը: Տվյալ ուղեգիծը շարունակեցին նաև Նախագահ կրտսեր Ջ. Բուշը և նրա հաջորդը: Բաքվում կայացած «Կասպիի նավթը և գազը» 18-րդ միջազգային ցուցահանդես-գիտաժողովին Բ. Օբամայի հղած հունիսյան ուղերձում շեշտվում էր ինչպես Ադրբեջանի և նրա միջազգային գործընկերների համար ԲԹՋ և «Արևելք–Արևմուտք» էներգետիկ միջանցքի այլ բաղադրիչների, այնպես էլ «տարածաշրջանում կայունություն և առաջընթաց ապահովելու համար» Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի հետագա գործակցության կարևորությունը[2]:

2003 թ. ապրիլին սկսվեց ԲԹՋ խողովակաշարի կառուցումը, որն ավարտվեց 2006 թ.: Այդ գործընթացին նպաստեց 2006 թ. մայիսին Ադրբեջանի և Ղազախստանի միջև ստորագրված՝ ղազախական նավթի տեղափոխման վերաբերյալ համաձայնագիրը: Կենտրոնական Ասիային հարող Կասպյան տարածաշրջանի անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև «Կասպյան պահապան» ծրագիրն իրականացնելու նպատակով Ադրբեջանում տեղաբաշխվեցին հատուկ նախանշանակման ուժեր և զորակայաններ[3]: 2005 թ. ապրիլի 11-ին «ՈՒոլ Ստրիտ Ջոռնել» թերթը հրապարակեց մի հոդված, որում նշվում էր այդ ծրագրին 100 մլն դոլար հատկացնելու ԱՄՆ-ի պատրաստակամությունը, ինչով շեշտվում էր ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական անվտանգության համար տարածաշրջանի զգալի նշանակությունը[4]:

Որոշ առաջատար արևմտյան պետությունների էներգետիկ հզորությունը մեծապես կախված էր հումքային պաշարների, հատկապես՝ նավթի ներմուծումից: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները ձգտում էին ձեռք բերելու այլ երկրների պատկանող բնական հարստությունները: 1990-ական թվականներին՝ ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո, ամերիկյան ընկերությունները սկսեցին մեծ հետաքրքրություն ցուցաբերել կասպյան նավթի և գազի նկատմամբ՝ այն դիտելով որպես էներգակիրների ներմուծման նոր աղբյուր: ՈՒրվագծվում էին ԱՄՆ-ի իրական շահերը՝ շրջանցելու հիմնական մրցակիցներ Ռուսաստանը և Իրանը ու դրանով իսկ զգալիորեն թուլացնելու

[2] Տես «The Message of the President of the United States Barack Obama to the 18th International Caspian Oil & Gas Conference», 7 June 2011 (http://www.azembassy.mx/index.php?option=com_content&view=article&id=262%3Athe-message-of-the-president-of-the-united-states-barack-obama-to-the-18th-international-caspian-oil-a-gas-conference-&catid=53%3Anews):

[3] Տես *А. Ф. Клименко.* Энергетические факторы в военной политике государств Евразии. «Энергетические измерения международных отношений и безопасности в Восточной Азии», под. ред. А. В. Торкунова. М., 2007, с. 211:

[4] Տես «Caspian Guard». «GlobalSecurity.org» (http://www.globalsecurity.org/military/ops/caspian-guard.htm):

նրանց ազդեցությունը ռազմավարական կարևորություն ունեցող այդ տարածաշրջանում և, մասնավորապես, կասպյան էներգակիրների տեղափոխման հարցում:

Ամերիկացի դիվանագետ և Կասպյան տարածաշրջանի հարցերով գլխավոր խորհրդական Ստիվեն Մաննը հարցազրույցներից մեկում նշել էր, որ ԲԹՋ նավթամուղը շահութաբեր կլինի, եթե անգամ հիմնվի միայն ադրբեջանական նավթի պաշարների վրա: Սակայն ավելի հաճախ հնչում էր այն տեսակետը, որ ապագայում առանց ղազախական նավթի նախագիծը երկարաժամկետ հեռանկարում կենսունակ չի լինի[5]:

Ըստ այդմ՝ ԱՄՆ-ը որդեգրել էր մի քաղաքական ուղեգիծ, որը լայն հնարավորություններ էր ստեղծում ինչպես Հարավային Կովկասի, Պարսից ծոցի երկրների (Իրաք, Իրան, Սաուդյան Արաբիա), այնպես էլ Կենտրոնական Ասիայի նկատմամբ ռազմավարական վերահսկողություն սահմանելու համար[6]: ԱՄՆ-ի այդ քաղաքական ծրագրերում կարևոր տեղ էր զբաղեցնում Ադրբեջանը[7]: Կենտրոնական Ասիա ամերիկացիների մուտքին հարավից խոչընդոտում էր Իրանը, Հնդկաստանի և Պակիստանի հարաբերությունները բավական լարված էին, Աֆղանստանում իրավիճակը՝ նույնպես: Հյուսիսից ամերիկացիների մուտքը փակում էր Ռուսաստանը, իսկ արևելքից՝ Չինաստանը: ՈՒստի ԱՄՆ-ի և ընդհանրապես Եվրոպայի համար ամենահիրական կամուրջը դեպի Կենտրոնական Ասիա Ադրբեջանն էր: Այսպես. Նախագահ Հ. Ալիևի հետ հանդիպման ժամանակ (2003 թ. նոյեմբեր) ԱՄՆ-ի Նախագահի՝ անվտանգության հարցերով նախկին խորհրդական, հայտնի քաղաքագետ Զ. Բժեզինսկին նշել էր. «Պատահական չէ և այն, որ մենք որպես այս տարածաշրջանում ԱՄՆ-ի հիմնական գործընկեր ընտրել ենք Ադրբեջանը: Մենք ընդունում ենք և հիանալի հասկանում, որ Ադրբեջանը, իրոք, ԱՄՆ-ի համար կարևոր երկիր է»[8]:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ ԱՄՆ-ը, որն ստանձնել էր աշխարհում ժողովրդավարական կարգեր հաստատելու առաքելությունը, Ադրբեջանի դեպքում պատրաստ էր մատների արանքով նայելու այնտեղ մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներին, ինչպես նախագահական, այնպես էլ խորհրդարանական ընտրությունների ժամանակ արձանագրված մեծաթիվ կեղծիքներին[9]: Նրանց հարաբերություններում ջերմացում նկատվեց հատկապես

[5] Տես *Mark Berniker*. As Baku–Ceyhan Construction Date Nears, Debate Continues Over Project's Viability. «EURASIANET.org», 17.06.2002 (http://www.eurasianet.org/departments/business/articles/eav061702a.shtml):

[6] Տես *С. Толстов*. Энергетическая безопасность в контексте взаимоотношений Европейского Союза, России, Украины и стран Центральной Азии. «Центральная Азия и Кавказ», Швеция, 2006, № 6(48):

[7] Տես «Azerbaijan: Report on privatization (Foreign interest in Azerbaijani enterprises picks up, and citizens finally begin participating in larger numbers)». «New Europe», December 28 – January 3, 1998:

[8] «Запад и Нагорно-Карабахский конфликт». «Центральная Азия и Кавказ», 2004, № 6(36).

[9] Ադրբեջանում տիրող հակաժողովրդավարական իրավիճակի մասին տես, օրինակ,

2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, երբ Բաքուն շտապեց հայտարարել, որ ահաբեկչության դեմ պայքարում զորակից է ԱՄՆ-ին: Ադրբեջանը թույլատրեց դաշնադրության անդամ պետությունների ինքնաթիռների թռիչքներն իր օդային տարածքով, ինչպես նաև զորակազմ ուղարկեց Աֆղանստան և Իրաք[10]: Պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիտեջը բարձր գնահատեց այդ հարցում Ադրբեջանի հետ «վճռորոշ համագործակցությունը»: Սպիտակ տունը դիմեց նաև շատ կարևոր զիջման՝ հանելով Ադրբեջանին տրամադրվելիք օգնության որոշ տեսակների նկատմամբ արգելքը, որն սկսել էր կիրառվել 1992 թ., երբ Ադրբեջանը ռազմական գործողություններ էր ծավալել Ղարաբաղի դեմ[11]: Ադրբեջանի համար կարևոր իրադարձություն էր նաև Սենատում ադրբեջանցիների հետ աշխատանքի համար համապատասխան խմբի ստեղծումը[12]:

Տարածաշրջանում ԱՄՆ-ի քաղաքականությանը մեծապես նպաստում էր նաև ՆԱՏՕ-ի գործունեությունը, որի տարաբնույթ ծրագրերի միջոցով իրագործվում էր հարավկովկասյան պետությունների ինտեգրումը Արևմուտքի ռազմաքաղաքական կառույցներին: Այս առումով հարկ է նշել հատկապես Ադրբեջանի մասնակցությունը այդ ծրագրերին. 2004 թ. դրությամբ՝ շուրջ 300 ծրագրի: Ադրբեջանն առաջիններից էր, որ ներկայացրել էր ՆԱՏՕ-ի հետ «Անհատական գործակցության ծրագիր»[13]:

Խոսվում էր անգամ Ադրբեջանի տարածքում ՆԱՏՕ-ի զորակայաններ տեղակայելու մասին: Ադրբեջանում նախագահական ընտրություններից անմիջապես հետո Զ. Բժեզինսկին այցելեց Բաքու և հանդիպեց Ի. Ալիևի հետ՝ երկրի նոր ղեկավարի ազգային անվտանգության հայեցակարգը պարզելու նպատակով: Ավելի ստույգ՝ նա ցանկանում էր պարզել, թե որքանով Ի. Ալիևը հավատարիմ կմնա Ադրբեջանում ՆԱՏՕ-ի զորակայաններ տեղակայելու խոստմանը, որը տվել էր ընտրություններից առաջ ԱՄՆ կատարած այցի ժամանակ: Իրադարձությունների հետագա ընթացքը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Ի. Ալիևը չէր հրաժարվել իր խոստումը կատարելուց. հակառակ դեպքում ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդը Զբիգնև Բժեզինսկուց անմիջապես հետո չէր այցելի Բաքու[14]:

---

*Հ. Ս. Քոթանջյան,* Ադրբեջան. հակաժողովրդականությունը և գաղութատիրությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարում: «Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում–Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս–Աֆղանստան»: Ե., 2009, էջ 132–141:

[10] Տես «Ramsfeld in Baku Thanks Azerbaijan for Steadfast Support», Bureau of International Information Programs, US Department of State (http://www.usinfo.state.gov.com/):

[11] Տես *Susan B. Glasser.* Town's Defiance an Unexpected Test for Azerbaijan. «Washington Post Foreign Service», 12.01.2003 (http://www.washingtonpost.com/wpdyn/articles/A44222-2003Jan11.html):

[12] Տես «Baku: Armenian Diaspora Cannot Damage US strategic Intersets». «Azer Tag», Azerbaijan, 14.06.2004:

[13] Տես «Baku: NATO Seeking New Ways of Settlement of NK Conflict». «Azer Tag», 14.06.2004:

[14] Տես «Baku: Azeri Daily Blasts Authorities' Security Policy». «Azadliq», Baku, 25.02.2004:

Պետք է նշել, որ այդ այցերից առաջ նկատվում էր ադրբեջանական ղեկավարության որոշակի միտումը՝ շեղվելու արևմտամետ կողմնորոշումից: Դրա վկայությունն էին տարածաշրջանում ԱՄՆ-ի մրցակիցներ Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունները բարելավելու Բաքվի ջանքերը, ինպես նաև 2004 թ. օգոստոսի սկզբին ԻԻՀ Նախագահ Խաթամիի այցը Ադրբեջան: Շատերը նման միտումը կապում էին Ղարաբաղյան հարցում ԱՄՆ-ի հավասարակշռված դիրքորոշման հետ: Անգամ կարծիքներ կային, թե ԱՄՆ-ը Ադրբեջանի նկատմամբ վարում է երկակի քաղաքականություն: Այդ տեսակետը արտահայտողները նշում էին, որ Ադրբեջանն ամեն կերպ աջակցել է ԱՄՆ-ին միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, այդ թվում՝ մասնակցել է Իրաքում ռազմական գործողություններին, բայց չի ստացել փոխադարձ աջակցություն ԼՂ հարցում: Հնչում էին անգամ մեղադրանքներ, թե Վաշինգտոնի հիմնական նպատակը ոչ թե Ադրբեջանի ժողովրդի բարեկեցությանը նպաստելն է, այլ Ռուսաստանը տարածաշրջանից դուրս մղելը և Կենտրոնական Ասիայի, Կովկասի ու Եվրոպայի միջև ռազմավարական կարևորություն ունեցող էներգետիկ միջանցքի ստեղծումը[15]: Բանակցություններից հետո Ռամսֆելդը ասուլիսում նշեց, որ հնարավոր է՝ ՆԱՏՕ-ն Ադրբեջանում տեղակայի իր զորակայանները: Այդ տեսակետը հաստատեց նաև Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը[16]:

Միջազգային և տեղական քաղաքական շրջաններն արդեն սկսել էին հավատալ, որ Ադրբեջանը շարունակելու է ինտեգրումը ՆԱՏՕ-ին: Սակայն Ի. Ալիևը հայտարարեց, թե Հարավային Կովկասում ոչ մի զորակայան չի տեղակայվի, և նշեց, որ ԱՄՆ-ի հետ այս հարցով բանակցություններ չի վարել[17]:

2011 թ. հունիսի 24-ին անվտանգության վերաբերյալ Բաքվում կայացած երկկողմ բանակցությունների 12-րդ փուլի ժամանակ ԱՄՆ-ի փոխպետքարտուղար Էնդրյու Շապիրոն և Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը հայտարարեցին, որ ԱՄՆ-ն ու Ադրբեջանը մտադրված են զարգացնելու ռազմավարական համագործակցությունը անվտանգության ոլորտում[18]: Ավելին. ԱՄՆ-ը պատրաստ է հզորացնելու Կասպից ծովում Ադրբեջանի էներգետիկ ենթակառուցվածքների պաշտպանության ներուժը[19]:

---

[15] Տես *C. Entekhabi.* Ramsfeld Addresses Security Concerns On Lightening Trip to Afghanistan, Azerbaijan. «EURASIANET.org», 11.08.2004 (www.eurasianet.org/departments/insight/articles/eav081204.shtml):

[16] Տես «НАТО, армии, борьба с терроризмом». «Мир и Политика», октябрь 2006, № 1 (http://army.polpred.com/upload/pdf/Armiia.pdf):

[17] Տես *Ш. Аббасов, Х. Исмайлова.* Военный блок Азербайджан – Турция – Грузия: мнение политологов (http://www.echo-az.com/archive/2001_03/038/facts.shtml):

[18] Տես «США и Азербайджан провели консультации по вопросам безопасности». «Кавказский узел», 25 июня 2011 г. (www.kavkaz-uzel.ru/articles/187865/?print=true):

[19] Տես «США готовы усилить потенциал Азербайджана по защите энергетической инфраструктуры на Каспии», 24 июня 2011 г. (contact.az/docs/2011/Politics/06246735 ru.htm):

Այսպիսով՝ ներկայումս Կասպից ծովում ԱՄՆ-ի ազգային շահերի հիմքում դրված են առավելապես աշխարհաքաղաքական գործոնները: Վաշինգտոնին ձեռնտու է Ադրբեջանին և Ղազախստանին ռազմատեխնիկական աջակցության ցուցաբերման և երկկողմ ռազմաքաղաքական համագործակցության հետագա ընդլայնման միջոցով նվազեցնել Կասպից ծովի տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման գործում Ռուսաստանի դերը, թուլացնել նրա ռազմաքաղաքական առաջնայնությունը տարածաշրջանում: Դա հնարավորություն կտա նաև հյուսիսից ռազմավարական շրջափակման ենթարկելու Իրանը, ձեռնարկելու Հյուսիսային Իրանում իր ռազմաքաղաքական ազդեցության հաստատմանն ուղղված քայլեր: Ադրբեջանի հետ ակտիվ ռազմաքաղաքական համագործակցությունը հնարավորություն կտա այն դարձնելու Կասպյան տարածաշրջանում ռազմավարական հենադաշտ՝ նախադրյալներ ստեղծելով Կենտրոնական Ասիայի տարածաշրջան ներթափանցելու համար:

**Ռուսաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունները Կասպյան տարածաշրջանում:** Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա, 1990-ական թվականների սկզբին Կասպյան տարածաշրջանում նոր դերակատարների հայտնվելուն զուգահեռ, պետք է հաշվի առներ մերձկասպյան պետությունների ձգտումը՝ մեծացնելու միջազգային շուկաներ արտահանվող նավթի և գազի ծավալները: ԱՊՀ երկրների ինստիտուտի՝ Կենտրոնական Ասիայի և Ղազախստանի բաժնի ղեկավար Անդրեյ Գրոզինը նշել էր, որ Ռուսաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը ունեն ածխաջրածնային պաշարների արտահանման ընդհանուր ռազմավարություն[20]: Սակայն Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը հայտնվել էին Ռուսաստանից տրանսպորտահաղորդակցային կախման մեջ, որի հաղթահարումը նշված երկրների կարևորագույն խնդիրն էր: Տվյալ պայմաններում Ռուսաստանի ռազմավարական խնդիրը այն էր, որ մերձկասպյան պետություններին ստիպի ածխաջրածնային հումքը տեղափոխել իր տարածքով:

Սակայն սկզբնական շրջանում Մոսկվային չհաջողվեց լավագույնս օգտագործել այն առավելությունները, որոնք կարող էին ամրապնդել իր դիրքերը Կասպյան տարածաշրջանում: Վերահսկելով արտահանման նավթամուղները, իր տրամադրության տակ ունենալով հարուստ հանքավայրեր՝ Ռուսաստանը, այնուամենայնիվ, զիջեց դիրքերը արևմտյան պետություններին և թուլացրեց ազդեցությունը տարածաշրջանի երկրների վրա:

Նման չեզոք էներգետիկ քաղաքականությունը բացատրվում էր տեղի ունեցող գործընթացներին պետական կառույցների ուշացած հակազդմամբ: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունից հետո ռուսական կողմն սկսեց Կասպից ծովի նոր կարգավիճակի խնդիրը կապել նրա պաշարների շահագործման հետ: Հանդես գալով «ընդհանուր ջրային

[20] Տես *Андрей Грозин.* Каспий как эпицентр возможных кризисов XXI века. Октябрь 2000 (http://www.analitika.org/article.php?story=2005120202595215):

տարածքի» պահպանման օգտին՝ ՌԴ-ն մերձկասպյան երկրներին այնպիսի պայմաններ էր ներկայացնում, որ մինչև նոր պայմանագրի կնքումը նրանք չկարողանան Կասպից ծովում աշխատանք կատարել առանց Ռուսաստանի և Իրանի համաձայնության: Այսինքն՝ խոսքը Կասպից ծովում նախկին քաղաքականության շարունակության մասին էր այն դեպքում, երբ աշխարհաքաղաքական իրողությունները սկզբունքորեն փոխվել էին:

Այդ շրջանում Ռուսաստանի վարած նավթային քաղաքականությանը բնորոշ էին տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների հարցում պետական կառույցների և նավթային բիզնեսի միջև փոխհամաձայնություն չլինելը, իսկ երբեմն՝ լուրջ տարաձայնությունների առկայությունը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ չկար համատեղ գործողությունների հստակ ծրագիր: Այսպես. Ռուսաստանի ԱԳՆ-ն բազմիցս նշում էր, որ «Լուկոյլ» ընկերությունը, փաստորեն, արտահայտվում է Կասպից ծովի բաժանման այն տարբերակի օգտին, որին ինքը դեմ է՝ կտրականապես առարկելով ծովի սեկտորային բաժանման դեմ: Մինչդեռ նավթային ընկերությունները ձգտում էին ակտիվորեն ներգրավվելու կասպյան կոնսորցիումներում և ըստ այդմ ավելի գործուն էին արձագանքում փոփոխուն իրավիճակին՝ փորձելով ձեռնարկել ինքնուրույն քայլեր, որոնք, սակայն, չէին արժանանում պետական կառույցների աջակցությանը: Վերջիններս, հասկանալով, որ Կասպից ծովը Ռուսաստանի համար բացում է մեծ հեռանկարներ, դեռ չէին գտել այն մեխանիզմները, որոնցով կարելի լիներ աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում պաշտպանել Ռուսաստանի շահերը: Այլ կերպ ասած՝ նրանք նավթային ընկերությունները չէին դիտում որպես արտաքին քաղաքականության գործիք, թեև նավթային քաղաքականության ոլորտը Մոսկվայի ամենագործուն լծակներից էր ինչպես մերձկասպյան պետությունների, այնպես էլ տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող այլ պետությունների հետ հարաբերություններում:

Այսպիսով՝ Ռուսաստանը համաձայնեց, որ Կասպից ծովի առանձին հատվածներ բաժանվեն ափամերձ պետությունների միջև, այն է՝ վերանայեց իր քաղաքականությունը տարածաշրջանում: Որպես արդյունք՝ վիճելի հանքավայրերի հարցում հակամարտություն առաջանալու հավանականությունն զգալիորեն նվազեց[21]: Ռուսաստանի դիրքորոշման փոփոխությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ նրա նոր մոտեցումներում արտացոլված էին աշխարհաքաղաքական այն էական փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել տարածաշրջանում: Պարզ դարձավ, որ պահպանողական դիրքորոշումը, միայն խորհրդա-իրանական պայմանագրերի վրա հիմնվելը, համագործակցության նոր ձևերից հրաժարումը կարող են հանգեցնել Ռուսաստանի մեկուսացմանը, սահմանափակել տարածաշրջանում նրա ազդեցությունը, նրա ընկերություններին զրկել հան-

[21] Տես *С. Жильцов*. Ресурсы Северного Каспия и политика России. «Центральная Азия и Кавказ», Швеция, 2003, № 6(30):

քավայրերի շահագործմանը մասնակցելու հնարավորությունից: Այդուհանդերձ Ռուսաստանը պահպանում էր մերձկասպյան պետությունների վրա ազդելու մի գործուն միջոց՝ խողովակաշարերը: Դրանցից առաջնայինը հյուսիսային ուղղությունն էր՝ Թենգիզի հանքավայրից (Ղազախստան) և Աղրբեջանից Ռուսաստանի տարածքով դեպի սևծովյան Նովոռոսիյսկ նավահանգիստ[22]:

2000 թ. մարտին, երբ Վլադիմիր Պուտինը դարձավ ՌԴ Նախագահ, Կասպյան տարածաշրջանի առումով սկսվեց արտաքին քաղաքականության մի նոր փուլ: Ընտրություններից որոշ ժամանակ անց Ռուսաստանի ազգային անվտանգության խորհուրդը Կասպյան տարածաշրջանը հայտարարեց Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը: Այսպես. վիճելի հանքավայրերի շահագործման հարցում Մոսկվան առաջարկեց 50/50 տարբերակը, ինչպես նաև ԱԳ փոխնախարարի մակարդակով նշանակեց Կասպյան տարածաշրջանի հարցերով հատուկ ներկայացուցիչ՝ էներգետիկայի նախկին նախարար Վիկտոր Կալյուժնուն[23]: Դա Ռուսաստանին հնարավորություն տվեց տարածաշրջանում վարելու ավելի հստակ քաղաքական ուղեգիծ և համակարգելու պետական կառույցների ու բիզնեսի գործունեությունը:

Տարածաշրջանում ռուսաստանյան քաղաքականության նոր ուղեգիծ դարձավ այն, որ Վ. Պուտինը, ի տարբերություն նախորդից, երկրորդ պլան մղեց նավթային ընկերությունների դիրքերը և սկսեց Ռուսաստանի՝ որպես ածխաջրածնային հումքի խոշոր արտահանողի ու տեղափոխողի կարգավիճակն օգտագործել ազգային անվտանգության և պաշտպանունակության ամրապնդման համար: Էներգետիկ շուկայում Ռուսաստանի դիրքերի աստիճանական ուժեղացումն ավելի իրական դարձրեց նաև նրա հակազդեցությունը տարածաշրջանում իր մրցակիցների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի քաղաքականությանը: Ինչպես նշում են մասնագետները, Ռուսաստանն ավելի ու ավելի է շահարկում էներգետիկ խաղաքարտը, քանի որ անկախություն ձեռք բերած նախկին խորհրդային հանրապետությունները մեծապես կախված են ռուսաստանյան էներգակիրներից: Վ. Պուտինի իշխանության գալուց հետո արտասահմանյան ներդրողները լրջորեն անհանգստանում էին, որ իրենց ֆինանսները կարող են հոդս ցնդել, եթե Ռուսաստանն ավելի շուտ կառուցի իր խողովակաշարերը, քանի որ մինչև «հարավային» երթուղով նավթամուղի գործարկումը կանցնի դեռ մի քանի տարի, իսկ ռուսաստանյան «խողովակաշարերը» գործնականում պատրաստ են[24]:

Բացի այդ, Պուտինի օրոք՝ 2001 թ., Ռուսաստանին հաջողվեց ավարտին

[22] Տես նույն տեղում:

[23] Տես «Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company Founded». «Alexander's Gas and Oil Connections», 30.08.2002 (http://www.gasandoil.com/news/central_asia/06e64ce97241a092b52d5a35d6be6a60):

[24] Տես «Алиеву обидно», 12.06.2000. «СМИ.ru» կայքը (www.smi.ru):

հասցնել Կասպյան խողովակաշարային կոնսորցիումի (ԿԽԿ) նախագիծը՝ Թենգիզ–Նովոռոսիյսկ նավթամուղի կառուցումը: Դա կարող է համարվել Կասպյան տարածաշրջանում ռուսական դիվանագիտության ձեռքբերում, քանի որ Մոսկվան ստացավ ղազախական նավթն իր տարածքով տեղափոխելու իրավունք: Ֆինանսական օգուտից ու սևծովյան տերմինալի կառուցումից բացի, այս նավթամուղը ամրապնդում էր Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում: Ինչպես վերը նշվել էր, մեծ թվով մասնագետների կարծիքով, ԲԹՋ նավթամուղի շահութաբերությունը երկարաժամկետ կտրվածքով կախված կլինի հետագայում նախագծին Ղազախստանի միանալուց: ՈՒստի ռուս-ղազախական համաձայնագրի կնքումն զգալիորեն նվազեցնում է նավթի արտահանման այլընտրանքային ուղիների, առաջին հերթին՝ ԲԹՋ նավթամուղի նշանակությունը:

Խողովակաշարերն օգտագործելով որպես արտաքին քաղաքականության գործիք՝ Ռուսաստանը մերձկասպյան պետություններին չէր մերժում ածխաջրածնային պաշարների տեղափոխման հարցում, սակայն, բնականաբար, շահագրգռված չէր, որ Ադրբեջանը և Ղազախստանը շուկայում հայտնվեն իր մրցակցի կարգավիճակով, իսկ Թուրքմենստանն իր հետ մրցակցի բնական գազի համաշխարհային առևտրում: Օրինակ՝ 2006 թ. Ղազախստանը, կախված լինելով Ռուսաստանի նավթատարից, չմասնակցեց Լիտվայի նավթամշակման գործարանի մրցույթին այն պարզ պատճառով, որ ՌԴ «Տրանսնեֆտ» ԲԲԸ-ն թույլ չտվեց նավթի տեղափոխումը Լիտվա: Ռուսաստանը ճնշում էր գործադրում այն դեպքերում, երբ այս կամ այն հարցում պետությունների դիրքորոշումները տարբերվում էին իր դիրքորոշումից. մասնավորապես՝ տվյալ դեպքում նույն ընկերությունը կարող էր 25-ից 38 դոլարի հասցնել Ռուսաստանի տարածքով նավթի տարանցման գինը, ինչը Ղազախստանի համար ծախսատար էր[25]:

Էներգետիկ ոլորտում Ռուսաստանի Դաշնության ավելի ակտիվ քաղաքականությունը դարձավ նաև նրա պատասխանը արևմտյան պետություններին, որոնք ձգտում էին ստեղծելու Կասպից ծովի և հարակից տարածքների ածխաջրածնային պաշարների տեղափոխման նոր մայրուղիներ: Այսպես. ԱՄՆ-ի հետ գործակցելու հարցում տարածաշրջանի պետությունների հետաքրքրվածությունը նվազեցնելու համար Մոսկվան 2002 թ. սկզբին հանդես եկավ գազ արդյունահանող պետությունների Եվրասիական միություն ստեղծելու նախաձեռնությամբ, որի կազմում լինելու էին Ռուսաստանը, Թուրքմենստանը և ՈՒզբեկստանը: Խոսքը տվյալ պետությունների արտահանումային քաղաքականության համակարգման մասին էր: Ռուսաստանը, առաջ քաշելով այս առաջարկությունը, նպատակ ուներ ամրապնդել իր դիրքերը ածխաջրածնային պաշարների արտահանման ապագա ուղիների համար ակտիվացած մրցակցությունում: Այն նաև կապված էր Կենտրոնական Ասիայում

[25] Տես *Дмитрий Верхотуров.* Кавказский маршрут для нефти и газа. «Эксперт Казахстан», 2007, № 18(120):

ամերիկյան զորակայանների տեղաբաշխման հետ, ինչը հանգեցրել էր ամերիկյան ընկերությունների առևտրային հնարավորությունների մեծացմանը: Տվյալ գազային միության ստեղծման հիմքն էր խողովակաշարային համակարգը, որը կառուցվել էր դեռ խորհրդային շրջանում և միավորում էր նշված պետությունները (այդ համակարգի թողունակությունը 80 մլրդ մ$^3$ էր):

Մոսկվայի խողովակաշարային դիվանագիտության մասին խոսելիս չի կարելի չնշել նաև ղազախական նավթի տեղափոխման վերաբերյալ 2002 թ. կնքված (15 տարի ժամկետով) և վերը հիշատակված պայմանագիրը: Այդ փաստաթուղթը նախատեսում էր Ատիրաու–Սամարա նավթամուղով տարեկան 15 մլն տ և Մախաչկալա–Տիխորեցկ–Նովոռոսիյսկ նավթամուղային համակարգով ոչ պակաս, քան 2,5 մլն տ նավթի տեղափոխում: Բավականին խիստ երաշխիքները, որ այդքան երկար ժամկետով Ղազախստանը տվել է իր նավթի տեղափոխման հարցում, փաստորեն նշանակում են, որ համարյա ամբողջ արտահանումը նախկինի պես կկատարվի Ռուսաստանի տարածքով: Այս կապակցությամբ Աստանայի մասնակցությունն այլ նախագծերի, այդ թվում՝ Ադրբեջանի համար կենսական նշանակություն ունեցող ԲԹՋ նավթամուղին, բավական կասկածելի է:

Տարածաշրջանում Մոսկվայի դիրքերի ամրապնդման տեսանկյունից պետք է դիտել նաև 2003 թ. մարտին Ռուսաստանի և Թուրքմենստանի նախագահների միջև ձեռք բերված համաձայնությունը գազային ոլորտում 25-ամյա համագործակցության մասին, ինչի շնորհիվ Ռուսաստանին հաջողվեց իր շուրջը համախմբել կասպյան էներգապաշարների հիմնական մատակարարներին[26]:

Հակադրվելով ԱՄՆ-ի ձգտումներին՝ Ռուսաստանը ձեռնամուխ եղավ Բուրգաս–Ալեքսանդրուպոլիս, այնուհետև՝ մերձկասպյան խողովակաշարի նախագծերի իրականացմանը: Դրանք, ինչպես նաև խողովակաշարի շինարարության հարցում 2007 թ. մայիսին Ռուսաստանի, Ղազախստանի ու Թուրքմենստանի միջև ձեռք բերված պայմանավորվածությունը փաստորեն չեզոքացրին անդրկասպյան խողովակաշարի կառուցումը: Մերձկասպյան նախագծում Ղազախստանը ներգրավվեց Բուրգաս–Ալեքսանդրուպոլիս նախագծին պարտադիր կերպով մասնակցելու պայմանով[27]:

Տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության պահպանման աղբյուր են նաև չլուծված հակամարտությունները, որոնք նրան հնարավորություն են տալիս միջամտելու այդ երկրների ներքին գործերին[28]:

Հարկ է նշել, որ մերձկասպյան պետությունների միջև անվտանգության խնդիրների լուծումը բարձրաձայնվում է տարածաշրջանային հիմնախնդիր-

[26] Տես *Ս. Ժիլցով,* Նշ. աշխ.:

[27] Տես *Sohbet Karbuz.* Losing the Energy Battle: How and Why the US and EU Need to Engage the Black Sea Region. «Journal of Energy Security», July 2010:

[28] Տես *Jean-Cristophe Peuch.* Russia: Moscow Still Seen As a Threat to Stability In South Caucasus. «RFE/RL», 13.12.2000 (http://www.rferl.org/features/2000/12/13122000182954.asp):

ներով պարբերաբար անցկացվող հանդիպումներում: 2007 թ. հոկտեմբերին Թեհրանում կայացած Կասպյան 2-րդ գագաթնաժողովը մեծ դեր խաղաց տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովման առումով[29]:

Վերջին շրջանում Կասպիի անվտանգության ապահովման հարցում նկատելի է զգալի առաջընթաց: Այսպես. Դմիտրի Մեդվեդևը 2011 թ. հուլիսի 21-ին Դումայի վավերացմանն է ներկայացրել Կասպյան տարածաշրջանի անվտանգության համաձայնագիրը[30]: Այն Ռուսաստանին և ափամերձ մյուս պետություններին պարտավորեցնում է գործակցել ծովի անվտանգության ապահովման հարցերում, ահաբեկչությունների, կազմակերպված հանցավորության, զենքի ու թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ մղվող պայքարում: 2011 թ. օգոստոսի 17-ին Մոսկվայում Ռուսաստանի և Իրանի արտգործնախարարների հանդիպման ժամանակ քննարկվել են Կասպիի միջազգային իրավական կարգավիճակին առնչվող հարցեր, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման պրոբլեմներ, ընդսմին արձանագրվել է երկու կողմերի տեսակետների համընկնում. նրանք շահագրգռված են տարածաշրջանի կայունության, բարգավաճման գործում և ձգտում են, որ մերձկասպյան երկրները ոչ միայն չենթարկվեն արտաքին ճնշման, այլև հաստատեն բազմակողմ համագործակցություն[31]:

Այսպիսով՝ թեև մերձկասպյան հինգ պետությունների համատեղ գործունեության մեջ նկատվում է դրական առաջընթաց, սակայն Կասպից ծովի իրավական կարգավիճակի անորոշությունը դեռևս արգելակիչ գործոն է տնտեսական տեսանկյունից շահավետ անդրկասպյան ծրագրերի իրականացման համար: Արևմուտքի ակտիվ մասնակցությունը այս տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին, անշուշտ, խախտում է տարածաշրջանային համագործակցության հնգակողմ ձևաչափը, ուստի և հնարավոր դարձնում մերձկասպյան հինգ պետությունների միջև հակամարտությունների ծագումը, ինչը Արևմուտքին հնարավորություն կտա նախաձեռնելու այդ տարածաշրջանում ավելի մեծ չափով ներկայացված լինելու նոր աշխարհաքաղաքական փորձեր:

Ամփոփելով Կասպյան տարածաշրջանի անվտանգության համակարգի ձևավորման ու զարգացման հեռանկարների այս համառոտ վերլուծությունը՝ կատարված տարածաշրջանի էներգետիկ պաշարների համար ուժային կենտ-

[29] Տես «Heads of Caspian states sign 25-artcile declaration in Tehran summit:. «BayBak, Voice of a Nation», 16 October 2007 (http://en.baybak.com/heads-of-caspian-states-sign-25-artcile-declaration-in-tehran-summit.azr):

[30] Տես «Дмитрий Медведев внес на ратификацию в Госдуму Соглашение о сотрудничестве в сфере безопасности на Каспийском море». Сайт «Президент России» (www.kremlin.ru/news/12055):

[31] Տես «Выступление и ответы Министра иностранных дел России С. В. Лаврова на вопросы СМИ в ходе совместной пресс-конференции по итогам переговоров с Министром иностранных дел Ирана А. А. Салехи», 17 августа 2011 г. (http://www.mid.ru/brp_4.nsf/0/D45D9DC498E4D937C32578EF00540473):

րոնների մրցակցության լույսով, հարկ ենք համարում հիշատակել **Չինաստանի** շահագրգռված ներգրավվածությունն այդ մրցակցության մեջ: Նրա արագ տնտեսական զարգացումը և համապատասխանաբար ընդլայնվող ներքին սպառման շուկան գրավիչ են մերձկասպյան պետությունների համար: Այսպես. Ղազախստանն ու Թուրքմենստանը Չինաստանի հետ կնքել են բազմամիլիոնանոց պայմանագրեր, մշակվում են դեպի Չինաստան նավթամուղների ու գազատարների կառուցման ծրագրեր[32]: Միջազգային զարգացումների դինամիկան վկայում է, որ չի կարելի բացառել ապագայում կասպյան պետությունների կողմնորոշման վեկտորի փոփոխություն Հեռավոր Արևելքի ուղղությամբ:

Շուրջ 150 տարվա պատմություն ունի նավթի համար մղվող պայքարը: Բայց այն առանձնակի սրվեց 20-րդ դարում՝ կապված վառելիքով աշխատող տրանսպորտի, արդյունաբերության և ռազմաարդյունաբերության զարգացման հետ: 20-րդ դարի վերջին տասնամյակում «սև ոսկու» համար մրցակցությունը նոր թափ ստացավ՝ ներառելով գերտերությունները և ուժի կենտրոնները, իսկ նավթով հարուստ երկրները ձեռք բերեցին ազդեցության մեծ լծակներ այլ երկրների և ընդհանրապես՝ համաշխարհային զարգացումների վրա:

Էներգետիկ ծրագրերում Հայաստանի Հանրապետությունը ևս կարող է ունենալ իր ուրույն ազդեցությունը և դերը՝ տարանցիկ պետություն դառնալու պարագայում: Իրանի հետ համատեղ Հայաստանն իրականացնում է մի քանի նախագիծ (Իրան–Հայաստան նավթատար խողովակի, հյուսիս–հարավ ավտոմայրուղու կառուցում): Այս ծրագրերի իրացման շնորհիվ Հայաստանը կունենա միջազգային գների համեմատությամբ ավելի էժան նավթ, հնարավորություն կստանա Պարսից ծոցի նավահանգիստները մայրուղով և երկաթուղով կապելու Սև ծովի հետ[33]:

Հայաստանի Հանրապետությունը որպես սպառնալիք է դիտում «տարանցիկ ենթակառուցվածքների դեմ դիվերսիոն գործողություններից մինչև հարևան պետություններում ծավալվող ռազմական գործողությունների անդրսահմանային ներազդեցությունը»[34]: ՈՒստի ՀՀ ազգային շահերից է բխում այն, որ Կասպից ծովի ավազանի էներգակիրների և դրանց տեղափոխման հարցում առկա մրցակցությունը ոչ թե հանգեցնի առճակատման ու տարածաշրջանում նոր բաժանարար գծերի ստեղծման, այլ նպաստի տարածաշրջանի երկրների զարգացմանն ու բազմակողմ տնտեսական համագործակցությանը:

[32] *Adam Blinic*, The Kazak-China Oil Pipeline: «A Sign of the Time», «Working Paper» N 21 (http://www.cctr.ust.hk/materials/working_papers/WorkigPaper22-Blinick.pdf).

[33] Տես *Հակոբ Չաքրյան,* Թուրքիայի հայաստանյան քաղաքականությունն ու էներգետիկ անվտանգությունը Հարավային Կովկասում: «ԱԶԳ» օրաթերթ, 2010 թ. օգոստոսի 19:

[34] «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

**РЕГИОНАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ**

# ПАРЛАМЕНТСКИЕ ВЫБОРЫ 2011 ГОДА В ТУРЦИИ

*В. А. ТЕР-МАТЕВОСЯН, кандидат исторических наук,*
*советник Начальника ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

12 июня 2011 г. в Турции состоялись парламентские выборы, которые проходили в обстановке беспрецедентного за всю историю существования в республике многопартийной системы (с 1946 г.) внутриполитического динамизма, поскольку парламент Турции является одним из важнейших центров формирования политики государства.

На выборах вновь победила партия «Справедливость и развитие», возглавляемая действующим Премьер-Министром Эрдоганом (326 мандатов). Однако ее успех можно считать относительным, поскольку она имеет необходимое число мест для формирования правительства (276 мандатов), но два других порога – по инициированию изменений в Конституции путем всенародного референдума (330 мандатов) и осуществлению конституционных изменений на уровне решения парламента (367 мандатов) – преодолеть не удалось. Более того, партия по сравнению с предыдущими выборами потеряла 15 мест. Это, по мнению автора, создаст определенные трудности при осуществлении политических программ по проведению конституционных реформ, нацеленных на трансформирование Турции в президентскую республику по модели США или Франции, и значительную неопределенность в политических планах лидера партии, намеренного выдвинуть свою кандидатуру на предстоящих президентских выборах.

10-процентный избирательный порог преодолели также Республиканская-народная партия (135 мандатов) и партия «Национальное движение» (53 мандата). Избраны и 36 независимых кандидатов, представляющих курдскую партию «Мир и демократия».

В статье делается предположение о том, что политическая расстановка сил в новом составе парламента вынудит Эрдогана изменить прежнюю тактику проведения решений в парламенте с использованием подавляющего большинства однопартийцев на сотрудничество и компромиссы в отношении оппозиционных сил.

Анализ нового состава парламента указывает на то, что существенных изменений в политике Турции в отношении Армении не ожидается. Прогнозируется, что единственной реальной силой, которая может стремиться к улучшению ситуации в отношении армян и установлению отношений с РА, потенциально является курдская фракция.

# ИДЕЯ ОБЩЕГО ТЮРКСКОГО ЯЗЫКА В КОНТЕКСТЕ ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЙ. АЗЕРБАЙДЖАНСКИЕ ПОДХОДЫ

*Л. Р. МОВСИСЯН, лектор факультета востоковедения ЕГУ*

РЕЗЮМЕ

В контексте пантюркистских программ еще в начале XX в. сформировались планы создания общетюркского языка на базе турецкого. Эти планы вновь возродились и приобрели актуальность в начале XXI в. Особенно активны в данной сфере Турция и Азербайджан, что укладывается в рамки провозглашенного бывшим президентом Азербайджана Г. Алиевым девиза: «Одна нация—два государства».

Однако концепция единого тюркского языка на основе турецкого встречает отпор как со стороны других тюркоязычных государств Средней Азии, так и определенных слоев азербайджанской интеллигенции, обеспокоенных перспективой утраты национальной идентичности в случае создания и распространения единого языка.

В статье рассмотрены три возможных сценария:

—создание и распространение единого тюркского языка на базе турецкого по всему ареалу основного проживания тюркоязычных народов;

—частичное принятие такого языка вследствие взаимного противопоставления огузской и уйгурской ветвей тюркской языковой семьи;

—провал планов создания единого тюркского.

Отмечается, что в первом случае культурно-духовное и информационно-пропагандистское влияние Турции на тюркоязычные народы, часть которых проживает на территории РФ, КНР, ИРИ, ряда государств Южной и Восточной Европы, приведет к формированию экономических и политических рычагов влияния Турции на жизнедеятельность этих государств, объединению этнических общих тюркских народов в странах Западной Европы и США с усилением протурецкого лоббинга, что, естественно, не совпадает с интересами этих государств.

Второй сценарий повторяет первый—но в меньших масштабах.

В случае реализации третьего сценария существенных изменений в геополитической обстановке в регионе, включающих ареалы проживания тюркоязычных народов, в особенности в отношениях Турции и Азербайджана не произойдет.

# СИСТЕМА БЕЗОПАСНОСТИ КАСПИЙСКОГО МОРЯ В КОНТЕКСТЕ СОПЕРНИЧЕСТВА ЗА ЭНЕРГЕТИЧЕСКИЕ РЕСУРСЫ РЕГИОНА

*М. М. АБРААМЯН, соискатель кафедры международных отношений и дипломатии факультета международных отношений ЕГУ*

РЕЗЮМЕ

Исторически Каспийский регион считался «традиционной зоной национальных интересов России», и это обстоятельство не оспаривалось до распада СССР.

Однако распад СССР и появление в регионе Каспийского моря еще трех новых субъектов международного права в лице Азербайджана, Казахстана и Туркмении привели к возникновению спорных проблем.

Значительный ресурсный потенциал, уникальное географическое положение Каспийского региона делают его особенно привлекательным для тех, кто заинтересован в присутствии в этом регионе и в использовании природных богатств Каспия.

В зоне Каспийского моря развернулось соперничество мировых центров силы за получение контроля над нефтегазовыми ресурсами региона, обустройство стратегических коммуникаций и маршрутов вывоза нефти и газа из зоны Каспия на внешние рынки.

Вашингтон, исходя из своих геополитических и стратегических интересов, видит себя в роли гаранта стабильности, необходимой для обеспечения свободной и безопасной транспортировки нефти из Каспийского региона на западные рынки. В рамках реализации своих стратегических планов США расширяют зону влияния. Они обосновываются на Южном Кавказе и укрепляют свои позиции в Центральной Азии. Основными элементами реализации плана стратегического освоения Соединенными Штатами огромного пространства, в центре которого лежит Каспийское море, являются: поощрение активной деятельности на Каспии американских и других западных нефтяных компаний; строительство под деятельным американским патронажем магистрального нефтепровода Баку—Джейхан; поиск новых направлений экспорта углеводородов в обход России. В частности, нефтепровод Баку—Тбилиси—Джейхан входит в перечень объектов, которые США рассматривают в качестве «жизненно важных» для своей национальной безопасности.

Таким образом, политика, проводимая Соединенными Штатами, создавала и создает широкие возможности для установления стратегического контроля над Южным Кавказом, странами Персидского залива (Ирак, Иран и Саудовская Аравия), а также Центральной Азией.

В этом плане Азербайджан рассматривается как важный плацдарм для реализации данного политического курса, успеху которого в значительной мере способствовала и деятельность НАТО.

В условиях, когда Каспийский регион превратился в важный объект мировой геополитики, выбор Россией верной стратегии в отношении этого региона являлся чрезвычайно важным для сохранения присутствия в регионе и обеспечения своей экономической и военной безопасности в целом. Однако Москва первоначально не сумела в достаточной мере использовать представившуюся благоприятную возможность из-за несогласованности в действиях государственных структур и частных предприятий. Даже после изменения региональной геополитической ситуации российская сторона продолжала связывать проблему эксплуатации природных ресурсов с определением статуса Каспийского моря. Россия согласилась на раздел Каспийского моря между прибрежными государствами, в результате чего вероятность возникновения конфликтов по поводу спорных месторождений значительно снизилась.

Постепенное укрепление позиций России на энергетическом рынке делает более реальной ее противодействие политике конкурентов в регионе, прежде всего США. С приходом В. Путина к власти Россия пересмотрела свою политику и утвердилась как основной транспортер нефти и газа в Европу.

Все большую роль в международном соперничестве за каспийские энергетические ресурсы начинает играть Китай, быстрые экономические темпы развития и все расширяющиеся внутренние рынки которого делают его привлекательным для прикаспийских государств.

Стабильность в Каспийском регионе была до тех пор, пока существовал Советский Союз, под контролем которого находилось почти все озеро, за исключением некоторых районов, принадлежащих Ирану. В последние годы переговоры стран прикаспийской пятерки ведутся на уровне партнерства. Саммиты с участием глав прикаспийских государств дают надежду на мирное разрешение всех вопросов, связанных с безопасностью Каспийского региона, что исключает возможность возникновения на Южном Кавказе новых разделительных линий и всецело соответствует безопасностным интересам Армении.

**REGIONAL PROCESSES**

# PARLIAMENTARY ELECTIONS OF 2011 IN TURKEY

*V. H. TER-MATEVOSYAN, PhD in History,*
*Advisor to the Commandant of the INSS, MOD, RA*

SUMMARY

On June 12, 2011 parliamentary elections in Turkey took in an atmosphere of unprecedented internal political dynamism in the history of multi-party system in the Republic (since 1946), as the Turkish parliament is one of the most important stages for the formation of state policy.

The «Justice and Development» party led by the current Prime Minister Erdogan again won in the elections (326 seats). However, its success can be considered relative, since it has the required number of seats to form the government (276 seats), but two other thresholds – the initiation of amendments to the Constitution by popular referendum (330 seats) and the implementation of constitutional changes by the decision of the Parliament (367 seats) – were not overcome. Moreover, in comparison with the previous elections the party lost 15 seats. This in author's perspective will create certain difficulties in implementing the political program of constitutional reforms aimed at transforming Turkey into a presidential republic after the model of the U.S. or France, and considerable uncertainty in the political plans of the party leader, having the intention to nominate his candidacy in the upcoming presidential elections.

10-percent vote threshold was overcome by the Republican People's Party (135 seats) and the party «National Movement» (53 seats), 36 independent candidates are also elected, representing Kurdish «Peace and Democracy» party.

The article claims that the political alignment of forces in the new parliament will force Erdogan to change old tactics of decision-making in the Parliament, relying upon the vast majority of party-member, and to cooperate and compromise with the opposition forces.

The analysis of the new parliament's composition indicates that significant changes in Turkey's policy towards Armenia are not expected. It is predicted that the only real factor that may tend to ameliorate the situation in respect of the Armenians and to establish relations with the RA is potentially the Kurdish fraction.

# THE IDEA OF A COMMON TURKIC LANGUAGE IN THE CONTEXT OF TURKISH-AZERBAIJANI RELATIONS. AZERBAIJANI APPROACHES

*L. R. MOVSISYAN, Lecturer at the Faculty of Oriental Studies, YSU*

SUMMARY

The plans on creating a common Turkic language on the basis of the Turkish language were developed in the early 20th century in the context of the pan-Turkic programs. These plans regenerated and acquired relevance in the early 21st century. Both Turkey and Azerbaijan are especially active in this sphere, and this fact is put into the framework of «One nation - two states» slogan proclaimed by the former Azerbaijani president H. Aliyev.

But the concept of a common Turkic language based on the Turkish language meets with the rebuff of both other Turkic-speaking states in Central Asia and certain segments of Azerbaijani intelligentsia concerned with the perspective of losing national identity in case of the creation and spread of a common language.

This article considers three possible scenarios:

—the creation and spread of a common Turkic language on the basis of the Turkish language throughout the area of the main residence of Turkic peoples;

—the partial acceptance of such a language in consequence of the mutual opposition of Oghuz and Uighur branches of the Turkic family of languages;

—the failure of plans on creating a common Turkic language.

It is noted that in the first case, Turkey's cultural and spiritual, as well as information propaganda influence on the Turkic-speaking peoples, a part of which resides in the territory of the RF, PRC, IRI, and a number of states of Southern and Eastern Europe, will lead to the formation of economic and political leverages of Turkey's influence upon the vital activity of these states, the unification of the ethnic communities of Turkic peoples in the countries of Western Europe and the USA with an enhancement of pro-Turkish lobbying. It is natural that it does not coincide with the interests of these states.

The second scenario follows the first one but on a smaller scale.

Significant changes in the geopolitical situation in the region, including the areas of Turkic-speaking peoples' residence, especially in relations between Turkey and Azerbaijan, won't come over in case of realizing the third scenario.

# THE SECURITY SYSTEM OF THE CASPIAN SEA IN THE CONTEXT OF THE RIVALRY FOR ENERGY RESOURCES OF THE REGION

*M. M. ABRAHAMYAN, Applicant at the Chair of International Relations and Diplomacy of the Faculty of International Relations, YSU*

SUMMARY

Historically, the Caspian region was considered as a «traditional area of the Russian national interests» and this fact was not disputed till the collapse of the Soviet Union.

However, the disintegration of the Soviet Union and the emergence of three new subjects of International Law at the Caspian Sea region — Azerbaijan, Kazakhstan and Turkmenistan — resulted in the rise of controversial problems.

The significant resource potential and the unique geographical position of the Caspian region make it particularly attractive to those interested in the presence in this region and in the use of the Caspian natural resources.

A rivalry of the world power centers unfolded for the control over the oil and gas resources of the region, the construction of strategic communications and routes for oil and gas exports from the Caspian to the international markets in the area of the Caspian Sea.

Washington proceeding from its geopolitical and strategic interests sees itself as a guarantor of the stability necessary for ensuring the free and secure transportation of the oil from the Caspian region to the western markets. Within the framework of its strategic plans the U.S. expands the influence zone. It settles in the South Caucasus and strengthens its positions in Central Asia. The main tactical elements of the plan implementation for the strategic assimilation of the vast space by the United States, in the center of which the Caspian Sea lies, are: the promotion of the American and other Western oil companies activity in the Caspian region; the construction of the Baku — Ceyhan oil pipeline under the active American patronage; the search for new directions for hydrocarbon exports, bypassing Russia. In particular, the Baku — Tbilisi — Ceyhan oil pipeline is in the list of objects that the U.S. considers as «vital» to its national security.

Thus, the policy pursued by the United States created and creates ample opportunities for the establishment of strategic control over the South Caucasus, the Persian Gulf countries (Iraq, Iran and Saudi Arabia), as well as Central Asia. In this regard, Azerbaijan is considered as an important springboard for the realization of this line of policy, the success of which was significantly favored by NATO's activities as well.

At a time when the Caspian region became an important object of the world geopolitics, Russia's choice of the right strategy for the region was

extremely important for maintaining the presence in the region and ensuring its economic and military security on the whole. Moscow, however, initially failed to use the given favorable opportunity adequately because of the non-coordination in the actions of State structures and private enterprises. Even after the change of the regional geopolitical situation, the Russian side continued to link the issue of natural resources exploitation with the definition of the Caspian Sea status. Russia agreed to divide the Caspian Sea between the riparian states, and that resulted in significant decrease of the likelihood of conflict outbreak over the disputed oilfields.

The gradual strengthening of the Russian positions in the energy market makes its opposition to the political rivals in the region more real — particularly to the United States. With the advent of Vladimir Putin to power, Russia reviewed its policy and established itself as the primary transporter of crude oil and natural gas to Europe.

China, the rapid economic growth rates and permanently increasing domestic markets of which make it attractive for the Caspian littoral states, is beginning to play an increasingly important role in the international competition for the Caspian energy resources.

The stability in the Caspian region was up during the existence of the Soviet Union, which controlled almost the entire lake, except for some areas that belonged to Iran. In recent years, the talks of the five Caspian littoral countries are conducted at the level of partnership. The Summits of Heads of the Caspian States give hope for the peaceful settlement of all the issues related to the security in the Caspian region. That excludes the possibility of new dividing lines' emergence in the South Caucasus and fully corresponds to Armenia's security interests.

# 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՅ ԳԵՆԵՐԱԼՆԵՐ. ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

*Կ. Ռ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,*
*Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության և նրա մեթոդիկայի դասավանդման ամբիոնի դասախոս*

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսական կայսրության Զինված ուժերում տարբեր հրամանատարական պաշտոններ զբաղեցնող հայազգի գեներալներն իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել ցարական բանակի հաղթանակներում և բանակաշինության գործում: Ռուսական հրետանային զորքերում ավելի քան 40 տարի ծառայել և գեներալի աստիճանի են հասել Անդրեյ Ադամի Աթաբեկովը, Արտեմի Սողոմոնի Վարտանովը, Իսահակ Արտեմի Թոխաթելովը (Աբիրինյան):

Հրետանու գեներալ **Անդրեյ Ադամի Աթաբեկովը** ծնվել է 1854 թ. հոկտեմբերի 5-ին, ազնվականի ընտանիքում: Զինվորական ծառայության անցել է 1870 թ. օգոստոսի 5-ին Կիևի Վլադիմիրյան զինվորական գիմնազիայում որպես շարքային, ապա՝ Ալեքսանդրյան զինվորական ուսումնարանում: Նույն թվականի օգոստոսի 24-ին Աթաբեկովը տեղափոխվել է Միխայլյան հրետանային ուսումնարան, որն ավարտել է առաջին կարգով: 1873 թ. օգոստոսի 10-ին ստացել է պոդպորուչիկի կոչում և ծառայության է նշանակվել 6-րդ հեծյալ հրետանային բրիգադի 1-ին մարտկոցում: 1874 թ. նոյեմբերի 26-ին ստացել է պորուչիկի կոչում: 1875 թ. սեպտեմբերի 16-ից 1878 թ. հունիսի 21-ը Աթաբեկովը սովորել է Միխայլյան հրետանային ակադեմիայում, որն ավարտել է առաջին կարգով: «Գիտության բնագավառում ունեցած հաջողությունների համար» նրան շնորհվել է շտաբս-կապիտանի զինվորական կոչում, և նա ծառայության է անցել գվարդիական հեծյալ-հրետանային բրիգադի 1-ին մարտկոցում: 1889 թ. ապրիլի 9-ին Աթաբեկովն ստացել է կապիտանի, 1891 թ. ապրիլի 21-ին՝ գնդապետի զինվորական կոչում: Բրիգադի տարբեր պատասխանատու պաշտոններում օրինակելի ծառայության և Սպայական հրետանային դպրոցը հաջողությամբ ավարտելու համար Աթաբեկովը պարգևատրվել է Սբ. Աննայի 3-րդ աստիճանի (1883 թ.), Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1887 թ.), Դանիել 1-ինի 4-րդ աստիճանի (1890 թ. շնորհվել է Չեռնոգորյան իշխանի կողմից), Սբ. Աննայի 2-րդ աստիճանի (1890 թ.), Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի (1894 թ.) շքանշաններով:

1895 թ. հունիսի 30-ին Աթաբեկովը նշանակվել է Օդեսայի զինվորական օկրուգի հրետանային հրաձգարանի պետ: Օրինակելի ծառայության համար պարգևատրվել է պարսկական «Առյուծի և Արևի» 3-րդ աստիճանի (1896 թ.), Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի (1898 թ.) շքանշաններով: 1900 թ. մարտի 1-ին Աթաբեկովը նշանակվել է 1-ին գրենադերական հրետանային բրիգադի հրամանատար: Մարտական ծառայությունների համար նրան 1900 թ. ապրիլի 9-ին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում[1]: Ղեկավարել է Կոնստանտինյան հրետանային ուսումնարանը: Գերազանց ծառայության համար նա պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 1-ին աստիճանի (1903 թ.), Սբ. Աննայի 1-ին աստիճանի (1906 թ.) շքանշաններով, իսկ 1906 թ. դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում[2]:

1907–1910 թթ. 19-րդ բանակային կորպուսի հրետանու պետի, 17-րդ բանակային կորպուսի հրետանու պետի, 17-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչի պաշտոններում անբասիր ծառայության համար Աթաբեկովը պարգևատրվել է Սբ. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշանով (1910 թ.), «Ի հիշատակ 1812 թ. Հայրենական պատերազմի» (1912 թ.) և «Ռոմանովների տան գահակալության 300-ամյակի հիշատակին» (1913 թ.) բրոնզե մեդալներով: Մոսկովյան զինվորական օկրուգի հրետանու պետի պաշտոնում օրինակելի ծառայության և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զորահավաքի կազմակերպման ընթացքում գործադրված ջանքերի համար պարգևատրվել է «Սպիտակ արծիվ» շքանշանով (1914 թ.) և «Սպիտակ արծվի» ժապավենի վրա բրոնզե մեդալով (1915 թ.): Աթաբեկովը 1916 թ. ապրիլի 10-ին գերազանց ծառայության համար ստացել է հրետանու գեներալի կոչում: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո նա հաշվառվել է Մոսկովյան զինվորական օկրուգի պահեստազորում, իսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ 1918 թ. հունվարի 1-ին լուծարվեց պահեստազորը, Աթաբեկովը ազատվել է ծառայությունից: Մահացել է Մոսկվայում 1918 թ.՝ 64 տարեկան հասակում[3]:

---

[1] Տես «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 1-е сентября 1904 года». СПб., 1904, с. 838:

[2] Տես «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 1-е января 1913 года». СПб., 1913, с. 177; *Г. Аветисян.* Генералы-армяне в Российской империи. Е., 2007, сс. 233–234:

[3] Տես «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 15-е апреля 1914 года». Петроградъ, 1914, с. 197; «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 10-е июля 1916 г.». Петроградъ, 1916, с. 19; Российский государственный военно-исторический архив (РГВИА), ф. 409, п/с 146–722, лл. 10–16; *Юрий Асадов.* 1000 офицерских имен в армянской истории. Историко-биографические очерки. Пятигорск, 2004, сс. 118–119:

Հրետանու գեներալ-լեյտենանտ **Արտեմի Սողոմոնի Վարտանովը** ծնվել է 1855 թ. փետրվարի 15-ին Թիֆլիսում: Կրթությունն ստացել է նախ Թիֆլիսի ռեալական գիմնազիայում և Միխայլյան հրետանային ուսումնարանում (1882 թ.), Միխայլյան հրետանային ակադեմիայում (որն ավարտել է առաջին կարգով), ապա Սպայական հրետանային դպրոցում (1895 թ.): 1872 թ. օգոստոսի 28-ին անցել է զինվորական ծառայության: Վարտանովը 1875 թ. օգոստոսի 4-ին ստացել է պոդպորուչիկի, 1876 թ. դեկտեմբերի 9-ին՝ պորուչիկի կոչում և նշանակվել ծառայության 41-րդ հրետանային բրիգադի 6-րդ մարտկոցում: 41-րդ հրետանային բրիգադի կազմում Վարտանովը մասնակցել է 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, երկու անգամ վիրավորվել: Թուրքերի դեմ մղված մարտական գործողություններում, Կովկասի լեռնականների դեմ մարտերում ցուցաբերած արիության համար Վարտանովը պարգևատրվել է Սբ. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով (1877 թ.), Սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով (1878 թ.), Սբ. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով (1879 թ.):

1878 թ. դեկտեմբերի 18-ին Վարտանովն ստացել է շտաբս-կապիտանի զինվորական կոչում: 1879–1895 թթ. 41-րդ հրետանային բրիգադի 1-ին մարտկոցում, Կովկասյան գրենադերական հրետանային բրիգադում, Կովկասյան հրետանային հրաձգարանի պետի օգնականի պաշտոնում, նույն հրաձգարանի պետի պաշտոնում անբասիր ծառայության համար Վարտանովը 1885 թ. ապրիլի 15-ին ստացել է կապիտանի զինվորական կոչում, պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1890 թ.) և Սբ. Աննայի 2-րդ աստիճանի (1895 թ.) շքանշաններով: 1895 թ. հոկտեմբերի 1-ին Վարտանովը, ստանալով փոխգնդապետի զինվորական կոչում, նշանակվել է 39-րդ հրետանային բրիգադի 1-ին մարտկոցի հրամանատար: Ավելի քան 3 տարի նույն պաշտոնում, 1 տարի 5 ամիս (1898 թ. նոյեմբերի 20-ից) Կովկասյան զինվորական օկրուգի 2-րդ ուսումնական հրետանային հրաձգարանի պետի պաշտոնում, 4 տարի 6 ամիս Կովկասյան զինվորական օկրուգի 2-րդ ուսումնական հրետանային գնդի հրամանատարի պաշտոնում, շուրջ 8 ամիս 59-րդ հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնի հրամանատարի պաշտոնում օրինակելի ծառայության համար 1900 թ. ապրիլի 9-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում, պարգևատրվել է Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի (1895 թ.) և Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի (1904 թ.) շքանշաններով:

1905 – 1907 թթ. Վիլնոյի (այժմ՝ Վիլնյուս) 3-րդ հրասանդային հրետանային դիվիզիոնի հրամանատարի, 1907–1908 թթ. 16-րդ հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոններում գերազանց ծառայության համար 1907 թ. մայիսի 31-ին Վարտանովն ստացել է գեներալ-մայորի կոչում: 6-րդ բանակային կորպուսի հրետանու պետի, 27-րդ հրետանային բրիգադի հրամանատարի, 3-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչի, 14-րդ բանակային կորպուսի հրե-

տանու տեսուչի պաշտոններում օրինակելի ծառայության համար Վարտանովը պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 1-ին աստիճանի շքանշանով (1910 թ.), իսկ 1912 թ. դեկտեմբերի 6-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը կատարած գաղտնի հանձնարարությունների և անթերի ծառայության համար Վարտանովը պարգևատրվել է «Ռոմանովների տան գահակալության 300-ամյակի հիշատակին» և «Ի հիշատակ 1812 թ. Հայրենական պատերազմի» բրոնզե մեդալներով[4]:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 14-րդ բանակային կորպուսի հրետանու տեսուչի և 1-ին բանակի հրետանային տեսուչի պաշտոններում աչքի է ընկել Արևմտյան ճակատում տեղի ունեցած Գալիցյան ճակատամարտում և Վարշավյան-Իվանգորոդյան օպերացիայում: Պատերազմի ընթացքում Կրասնիկ, Լյուբլին, Բելժիցե, Չեկայ, Ռադոմիսլ, Նովո-Ալեքսանդրովսկ, Օպատով, Պիլիցա, Վոլբրոմ, Պետրոկով, Օպոչնո, Իզբիցա, Կրասնոստավ, Խոլմ, Սավին, Մացոշին, Բրեստ-Լիտովսկ, Կոբրին բնակավայրերի մատույցներում մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար գեներալ-լեյտենանտ Ա. Ս. Վարտանովը պարգևատրվել է Սբ. Աննայի 1-ին աստիճանի (1914 թ.), Սբ. Վլադիմիրի 2-րդ աստիճանի (1915 թ.), «Սպիտակ արծիվ»՝ սրերով (1916 թ.), շքանշաններով[5]: Մահացել է 1937 թ. Հարավսլավիայի Բանյա-Լուկա քաղաքում 83 տարեկան հասակում: Թաղված է տեղի զինվորական գերեզմանոցում:

Հրետանու գեներալ-լեյտենանտ **Իսահակ Արտեմի Թոխաթելովը (Աբիրինյան)** ծնվել է 1853 թ. փետրվարի 8-ին Թիֆլիսում՝ Արտեմի Աբիրինյանի ընտանիքում: Աբիրինյանները ծագումով Թուրքիայի Թոխաթ քաղաքից էին, այդ պատճառով էլ Իսահակ Աբիրինյանը վերցրել է Թոխաթելով ազգանունը:

Թոխաթելովը կրթություն է ստացել Թիֆլիսի ռեալական գիմնազիայում, 2-րդ Կոնստանտինյան զինվորական ուսումնարանում, որն առաջին կարգով ավարտելուց հետո՝ 1875 թ. օգոստոսի 4-ին, ստացել է ենթասպայի զինվորական կոչում և ծառայության է նշանակվել Ախալցխայի ամրոցային հրետանային զորքերում:

Թոխաթելովը 1876 թ. դեկտեմբերի 9-ին ստացել է պոդպորուչիկի, 1878 թ. դեկտեմբերի 18-ին՝ պորուչի-

[4] Տես «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 15-е апреля 1914 года», с. 369; «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 10-е июля 1916 г.», с. 39:

[5] Տես РГВИА, ф. 409, оп. 1, дело 175249, лл. 13 – 21; «Русские Ведомости», 26 февраля 1915 г., № 46, с. 4; *Հ. Ավետիսյան,* Նշ. աշխ., էջ 227 – 228:

կի, 1882 թ. նոյեմբերի 29-ին՝ շտաբս-կապիտանի զինվորական կոչում: Մասնակցել է 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: Խիզախության և անբասիր ծառայության համար պարգևատրվել է Սբ. Ստանիսլավի 3-րդ աստիճանի (1880 թ.) և Սբ. Աննայի 3-րդ աստիճանի (1883 թ.) շքանշաններով:

Թոխաթելովը 15 տարի 10 ամիս եղել է վաշտի հրամանատար, ավելի քան մեկ տարի՝ հրետանային գումարտակի հրամանատար, ութ տարի երեք ամիս ղեկավարել է Կվանտունյան ամրոցային հրետանու գործնական պարապմունքները:

Գերազանց ծառայության համար Թոխաթելովը 1889 թ. օգոստոսի 30-ին որպես պարգև ստացել է կապիտանի կոչում, արժանացել Սբ. Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1894 թ.), Սբ. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանների, իսկ 1897 թ. դեկտեմբերի 9-ին ստացել է փոխգնդապետի կոչում:

Թոխաթելովը 1900–1901 թթ. մասնակցել է դեպի Չինաստան կատարած ռազմարշավանքին, որի ընթացքում աչքի է ընկել խիզախությամբ և մարտական ծառայությունների համար 1900 թ. սեպտեմբերի 7-ին ստացել է գնդապետի զինվորական կոչում, պարգևատրվել Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով՝ սրերով և ժապավենով: Թոխաթելովը մասնակցել է նաև 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Պորտ Արտուրի պաշտպանության ժամանակ գերի է ընկել: Ընդ որում, գերության ժամանակ հնարավորություն է ունեցել միայնակ փախչելու, սակայն ընկերներին չի լքել: Գերությունից ազատվելուց հետո ապրել է Սանկտ Պետերբուրգում: Ռուս-ճապոնական պատերազմում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է Սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի (1901 թ.), Սբ. Գեորգիի 4-րդ աստիճանի[6] (1904 թ.) շքանշաններով, ոսկե զենքով՝ «Արիության համար» մակագրությամբ: 1906 թ. մարտի 14-ին արժանացել է գեներալ-մայորի կոչման[7] և նշանակվել է Վիբորգի ամրոցային հրետանու պետ: 1906 թ. հոկտեմբերի 31-ին Թոխաթելովն ստանձնել է 2-րդ Վլադիվոստոկյան ամրոցային հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոնը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է պաշտոնաթող գեներալ-լեյտենանտի կարգավիճակում: Հեղափոխությունից հետո թողել է մայրաքաղաքը և տեղափոխվել Կիսլովոդսկ: 1918 թ. հոկտեմբերին ձերբակալվել է և գնդակահարվել[8]:

Ռուսաստանի Զինված ուժերում հայազգի սպաները միշտ էլ աչքի են ընկել իրենց մարտական հմտությամբ և սխրանքներով: Տարիների ընթացքում Ռուսական կայսրության Զինված ուժերում հրետանային զորքերի հայազգի սպաները

[6] Տես «Военный орден святого великомученика и победоносца Георгия». М., 2004, с. 366:

[7] Տես «Списокъ генераламъ по старшинству. Составленъ по 4-е июля 1907 года», с. 873; *Հ. Ավետիսյան,* Նշ. աշխ., էջ 194–195:

[8] Տես *Ю. А. Асадов.* Судьба участника русско-японской войны генерал-лейтенанта Исаака Тохателова. «Научные проблемы гуманитарных исследований» (Научно-теоретический журнал). Пятигорск, 2010, № 4:

և գեներալները շարունակեցին հայ զորավարների փայլուն ավանդույթները: Տեսական և գործնական հարուստ գիտելիքների շնորհիվ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նրանցից շատերին վստահվեցին պատասխանատու զինվորական պաշտոններ: Հրետանու գեներալ Անդրեյ Աթաբեկովը, գեներալ-լեյտենանտներ Արտեմի Վարտանովը, Իսահակ Թոխաթելովը իրենց անձնվեր ծառայությամբ մեծ ավանդ ներդրեցին ի փառս ռուսական զենքի:

**АРМЯНЕ-ПОЛКОВОДЦЫ**

## АРМЯНЕ-ГЕНЕРАЛЫ АРТИЛЛЕРИЙСКИХ ВОЙСК РОССИЙСКОЙ АРМИИ КОНЦА XIX – НАЧАЛА XX ВВ.: БОЕВОЙ ПУТЬ

*К. Р. ПАХЛЕВАНЯН, кандидат исторических наук, лектор кафедры всемирной истории и преподавания ее методики Государственного педагогического университета им. Х. Абовяна*

РЕЗЮМЕ

Армянские офицеры в составе Российских вооруженных сил всегда отличались своим боевым мастерством и храбростью. Офицеры и генералы – армяне по национальности, служившие в конце XIX – начале XX вв. в артиллерийских войсках Российской империи, сохранили и преумножили блестящие традиции армянских военачальников, многим из них были доверены ответственные посты.

*Атабеков Андрей Адамович* (1854 – 1918). Генерал от артиллерии Атабеков достиг высоких должностей начальника, инспектора артиллерии армейского корпуса, начальника артиллерии Московского Военного округа. За безупречную службу удостоен орденов Св. Станислава III, II, I ст., Св. Анны III, II, I ст., Св. Владимира IV, III, II ст., Белого орла, медалей «В память столетия Отечественной войны 1812 г.», «В память 300-летия царствования Дома Романовых», бронзовой медали на ленте Белого орла и т. д.

*Вартанов Артемий Соломонович* (1855, Тифлис – 1937, Баня-Лука, Югославия). Генерал-лейтенант Вартанов был командиром артиллерийских бригад, инспектором артиллерии армейского корпуса, затем армии. За исключительную службу Артемий Вартанов был награжден орденами Св. Станислава III, I ст. с мечами и бантом, Св. Анны IV, III, II ст. с мечами и бантом, Св. Владимира III ст.

*Тохателов Исаак Артемьевич* (1853, Тифлис – 1918, Пятигорск (расстрелян большевиками)). Генерал-лейтенант Тохателов занимал высокие должности командира Выборгской крепостной артиллерии, 2-ой Владивостокской крепостной артиллерийской бригады. За проявленные мастер-

ство и мужество награжден орденами Св. Станислава III, II ст., Св. Анны III ст., Св. Владимира III ст., Св. Георгия IV ст., Золотым оружием с надписью «За храбрость», Высочайшим благоволением.

Боевой путь, пройденный генералом от артиллерии Андреем Атабековым, генерал-лейтенантами Артемием Вартановым и Исааком Тохателовым, является свидетельством того, что они своей самоотверженной службой, глубокими познаниями в сфере военного искусства внесли достойный вклад в дело строительства Вооруженных сил Российской империи и победы русских войск, способствуя упрочению славы русского оружия.

**GENERALS OF ARMENIAN ORIGIN**

## THE GENERALS OF ARMENIAN ORIGIN OF THE RUSSIAN ARMY'S ARTILLERY TROOPS IN THE LATE 19th AND EARLY 20th CENTURIES: COMBAT PATH

*K. R. PAHLEVANYAN, PhD in Historical Sciences,*
*Lecturer at the Chair of Universal History and its methodology teaching of Yerevan State Pedagogical University after Kh. Abovyan*

SUMMARY

The Armenian officers always distinguished themselves by their battlecraft and valour in the Russian Armed Forces. Officers and generals—ethnic Armenians who served in the Artillery Troops of the Russian Empire in the late 19th and early 20th centuries preserved and augmented Armenian commanders' glittering traditions. Many of them were charged with responsible posts.

*Atabekov Andrei Adamovitch* (1854—1918). General of Artillery Atabekov reached the highest posts of a Feldzeugmeister (Chief of Artillery), an Inspector of the Army Corps Artillery, a Chief of the Artillery of the Moscow Military District. He was awarded with the Orders of St. Stanislaus, III, II, I classes, of St. Anne, III, II, I classes, of St. Vladimir, VI, III, II classes, of the White Eagle, with Medals «In memory of the Centennial of the Patriotic War, 1812», «In memory of the 300th anniversary of the Reign of the Romanov Dynasty», a Bronze Medal on the ribbon of the White Eagle, etc. for his impeccable service.

*Vartanov Artemiy Solomonovitch* (1855, Tiflis—1937, Banja Luka, Yugoslavia). Lieutenant General Vartanov was a Commander of Artillery Brigades, an Inspector of the Army Corps Artillery, then of the Army. Artemiy Vartanov was awarded with the Orders of St. Stanislaus, III, I classes with swords and bow, of St. Anne, IV, III, II classes with swords and bow, of St. Vladimir, III class for his excellent service.

*Tokhatelov Isaac Artemyevitch* (1853, Tiflis — 1918, Pyatigorsk (was shot by Bolsheviks)). Lieutenant General Tokhatelov held the highest posts of the Commander of the Vyborg Fortress Artillery, 2nd Vladivostok Fortress Artillery Brigade. He was awarded with the Orders of St. Stanislaus, III, II classes, of St. Anne, III class, of St. Vladimir, III class, of St. George, IV class, the Gold Weapon inscribed «For Gallantry», the Imperial Grace.

The combat path passed by Andrei Atabekov, General of Artillery, Artemiy Vartanov and Isaac Tokhatelov, Lieutenant Generals, is the illustration of the fact that they greatly contributed to the construction of the Armed Forces of the Russian Empire and to the victories of Russian troops, favoring the strengthening of glory of the Russian arms by their selfless service, deep knowledge in the sphere of soldiership.

# ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,*
*Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր, Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

## ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ախտաղարձ—рецидив; recidivation, relapse
ախտօջախավորում—метастаз; metastasis
անհատ—индивид; individual, person
անձ—лицо; person, individual
անձնավորություն—личность; personality, individuality
անուժակություն—астения; asthenia
առերևութային բաղադրատարր—видимая компонента; apparent component
առճակատումային հարացույց—конфронтационная парадигма; confrontational paradigm
ավատառու—ленник, вассал; vassal, liegeman
ավատատեր—феодал; feudal lord
ավշահատում—лимфодиссекция; lymphodissection
եզրահանում—маргинализация; marginalization
եղանակազգայուն հակազդում—метеопатическая реакция; meteopathic reaction
զորային կառույց—войсковая структура; troop structure
զուգամիտում—конвергенция, сходимость; convergence
ՁՈՒ-ի կերպարանք—облик ВС; image of the Armed Forces
թերգունային սակավարյունություն—гипохромная анемия; erythronormoblastic anemia
թրաձև ելուն—мечевидный отросток; xiphisternum
ժողովրդավարական կացութաձև—демократический уклад; democratic setup
խմբիշխանություն—олигархия; oligarchy
ծայրակցում–анастомоз, соустье; anastomosis
—ծայրակցման կարանների անկատարություն—несовершенство швов анастомоза; anastomotic sutures deficiency
—ներագուցումային ծայրակցում—инвагинационный анастомоз; invaginated anastomosis
ծայրատ—культя; stump
ծայրափողակ—сопло; nozzle
կանխապատրաստում—инициализация; initialization
կատարալ-լորձենախախտային կերակրափողաբորբ—катарально-эрозивный эзофагит; catarrhal-erosive esophagitis
կարգավորող–1. регулировщик, 2. модератор; 1. regulator, 2. moderator
կեղծ սեղմամկան—псевдосфинктер; pseudosphincter
կերակրափող—пищевод; gullet
—կերակրափողի գալարակծկանք—перистальтика пищевода; esophageal peristalsis
—կերակրափողի ծոցակ—дивертикул пищевода; diverticulum of gullet

կլլում—глотание; gulp
կրծքավանդակահատում—торакотомия; thoracotomy, pleuracotomy
հանձնարարությունների մարտավարություն—тактика поручений; mission-type tactics
հասանելիություն—1. доступность, 2. доступ; 1. accessibility, availability, 2. approachability
հատյալ ձևաչափ—редуцированный формат; reduced format
հիմքային օրենք—базовый закон; basic law
հյուծում—истощение, кахексия; exhaustion, cachexia
հյուսվածք—ткань; tissue
հրասանդ—мортира; mortar
հուզական սպառման համախտանիշ—синдром эмоционального выгорания; emotional burnout syndrome
ձևաչափում—форматизация; formatization
մանրահաճախ կերակրում—дробное питание; fractional feeding
մաշկանց ողնապլաստիկա—чрескожная вертебропластика; percutaneous vertebroplasty
մասնահատում—резекция; resection
մատակարար—տես *մատակարարող*
մատակարարող—поставщик, провайдер; provider
մարտական—боевой; 1. combat, fighting, 2. battle
—մարտական պատրաստականություն—боевая выучка; battle training
—մարտական պատրաստություն—боевая готовность; combat readiness
—մարտական պատրաստում—боевая подготовка; combat training
մեկուսախումբ—корпорация; corporation, corporate body
մեռուկացում—омертвение; necrosis
միակցիչ սկավառակ—замыкательная пластина; closing plate
միակցված բանելակարգ—включенный режим; online mode
միջնորմ—перегородка, средостение; 1. septum, 2. mediastinum
մոտարկում—апроксимация; approximation
նախանշանակում—предназначение, назначение; predestination
նեխավարակում—сепсис; sepsis, septicaemia
ներակայում—инсталляция; installation
ներպատային նյարդավորում—внутристеночная иннервация; intramural innervation
նյարդարմատների սալջարդ—ушиб нервных корешков; injury of radices, injury of nerve roots
նշանակում—1. назначение, 2. обозначение; purpose
նշանակություն—значение
նվազարկում—минимизация; minimization
նույնականություն—идентичность; identity
—էթնիկական նույնականություն՝ этническая идентичность; ethnic identity
—վերազգային նույնականություն՝ транснациональная идентичность; transnational identity
շարակարգ—эшелон; echelon
շնչափողային թմրեցում—эндотрахеальный наркоз; endotracheal anaesthesia
ողնուղեղախտ—миелопатия; myelopathy
ոսկրածակոտկենություն—остеопороз; osteoporosis
ոչ այլընտրանքայնության ըմբռնում—понимание безальтернативности;

realization of choicelessness
ոչ ձևարկված ընկալում—неформализованное восприятие; nonformalized perception
չափողականություն—размерность; dimension, dimensionality
չկայացածություն—несостоятельность; inconsistency
պատրաստուկ—препарат; 1. medicine, drug, 2. preparation
ռենտգենացայտուն հետազոտություն—рентгеноконтрастное исследование; radiopaque examination
սեղմումային կոտրվածք—компрессионный перелом; compression fracture
սպիական նեղացում—рубцовая стриктура; corrosive stricture
ստամոքսամուտք—кардиальное отверстие, кардия; cardiac orifice, cardia
վերազգայնականություն—транснационализм; transnationalism
վերաներակայում—реинсталляция; reinstallation
վերկարծրենային անցավազգայություն—эпидуральная аналгезия; epidural analgesia
տարամիտում—дивергенция, расходимость; divergence
տեղային ոսկրախտ—локальный остеомиелит; local osteomyelitis
տեղեկության հոսակորուստ—утечка информации; information leakage
տոհմաբանություն—генеалогия, родословная; genealogy
փոխպատվաստուկ—трансплантат; graft, transplant, transplantate
քաղաքացիավարություն՝ цивилиархия; civiliarchy
քացախափոսի սյուն—колонна вертлужной впадины; column of acetabulum
օպերատիվ սարքապատում—оперативное обустройство; operational structure
օտարվածություն՝ отчужденность; alienation

## РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

анастомоз—ծայրակցում
—инвагинационный анастомоз—ներազուցումային ծայրակցում
—несовершенство швов анастомоза—ծայրակցման կարանների անկատարություն
апроксимация—մոտարկում
астения—անուժակություն
базовый закон—հիմքային օրենք
боевой—մարտական
—боевая выучка—մարտական պատրաստականություն
—боевая готовность—մարտական պատրաստություն
—боевая подготовка—մարտական պատրաստում
вассал—см. *ленник*
видимая компонента—տեսանելի բաղադրատարր, առերևութային բաղադրատարր
включенный режим—միակցված բանելակարգ
внутристеночная иннервация—ներպատային նյարդավորում
войсковая структура—զորային կառույց
генеалогия—ծագումնաբանություն, տոհմաբանություն
гипохромная анемия—թերգունային սակավարյունություն
глотание—կլլում
демократический уклад—ժողովրդա-

վարական կացութաձև
дивергенция—տարամիտում
доступ—1. մուտք, 2. հասանելիություն
доступность—մատչելիություն, հասանելիություն
дробное питание—մանրահաճախ կերակրում, կոտորակային կերակրում
замыкательная пластина—միակցիչ սկավառակ
значение—1. նշանակություն, 2. արժեք
идентичность—նույնականություն
—транснациональная идентичность—վերազգային նույնականություն
—этническая идентичность—էթնիկական նույնականություն, նույնություն
индивид—անհատ
инициализация—կանխապատրաստում
инсталляция—ներակայում
истощение—հյուծում
кардиальное отверстие—ստամոքսամուտք
кардия—см. *кардиальное отверстие*
катарально-эрозивный эзофагит—կատարալ-լորձենախախտային կերակրափողաբորբ
кахексия—см. *истощение*
колонна вертлужной впадины—քացախափոսի սյուն
компрессионный перелом—սեղմումային կոտրվածք
конвергенция—զուգամիտում
конфронтационная парадигма—առճակատումային հարացույց
корпорация—մեկուսախումբ
культя—ծայրատ
ленник—ավատառու
лимфодиссекция—ավշահատում
лицо—1. երես, դեմք, 2. անձ
личность—1. անձնավորություն, 2. անհատ
локальный остеомиелит—տեղային ոսկրախտ
маргинализация—եզրահանում
метастаз—ախտօջախավորում
метеопатическая реакция—եղանակազգայուն հակազդում
мечевидный отросток—թրաձև ելուն
миелопатия—ողնուղեղախտ
минимизация—նվազարկում
модератор—կարգավորող
мортира—հրասանդ
назначение—1. նշանակում, 2. см. *предназначение*
несостоятельность—1. անվճարունակություն, 2. չկայացածություն, 3. չունևորություն
неформализованное восприятие—ոչ ձևարկված ընկալում
облик ВС—ՁՈՒ-ի կերպարանք
обозначение—նշագրում, նշանակում
олигархия—խմբիշխանություն
омертвение—մեռուկացում
оперативное обустройство—օպերատիվ սարքապատում
остеопороз—ոսկրածակոտկենություն
отчужденность—օտարվածություն
перегородка—միջնորմ
пищевод—կերակրափող
—дивертикул пищевода—կերակրափողի ծոցակ
—перистальтика пищевода—կերակրափողի գալարակծկանք
понимание безальтернативности—ոչ այլընտրանքայնության ըմբռնում
поставщик—մատակարարող, մատակարար
предназначение—նախանշանակում
препарат—1. պատրաստուկ, 2. դեղորայք
провайдер—см. *поставщик*

псевдосфинктер—կեղծ սեղմամկան
размерность—չափողականություն
расходимость—см. *дивергенция*
регулировщик—կարգավորող
редуцированный формат—հատյալ ձևաչափ
резекция—մասնահատում
реинсталляция—վերաներակայում
рентгеноконтрастное исследование—ռենտգենացայտում հետազոտություն
рецидив—1. կրկնություն, 2. ախտադարձ, 3. կրկնահանցանք
родословная—см. *генеалогия*
рубцовая стриктура—սպիական նեղացում
сепсис—նեխավարակում
синдром эмоционального выгорания—հուզական սպառման համախտանիշ
сопло—ծայրափողակ
соустье—см. *анастомоз*
средостение—см. *перегородка*
сходимость—см. *конвергенция*
тактика поручений—հանձնարարությունների մարտավարություն
ткань—1. գործվածք, կտոր, 2. հյուսվածք
торакотомия—կրծքավանդակահատում
транснационализм—վերազգայնականություն
трансплантат—փոխպատվաստուկ
утечка информации—տեղեկույթի հոսակորուստ
ушиб нервных корешков—նյարդարմատների սալջարդ
феодал—ավատատեր
форматизация—ձևաչափում
цивилиархия—քաղաքացիավարություն
чрескожная вертебропластика—մաշկանց ողնապլաստիկա
эндотрахеальный наркоз—շնչափողային թմրեցում
эпидуральная аналгезия—վերկարծրենային անցավազգայություն
эшелон—շարակարգ

## ENGLISH-ARMENIAN DICTIONARY

accessibility—հասանելիություն
alienation—օտարվածություն
anastomosis—ծայրակցում
—invaginated anastomosis—ներագուցումային ծայրակցում
anastomotic sutures deficiency—ծայրակցման կարանների անկատարություն
apparent component—տեսանելի բաղադրատարր, առերևութային բաղադրատարր
approachability—հասանելիություն
approximation—մոտարկում
asthenia—անուժակություն
availability—1. պիտանիություն, 2. see *accessibility*
basic law—հիմքային օրենք
battle—1. մարտ, 2. մարտական
—battle training—մարտական պատրաստականություն
cachexia—see *exhaustion*
cardia—see *cardiac orifice*
cardiac orifice—ստամոքսամուտք
catarrhal-erosive esophagitis—կատարալ-լորձենախախտային կերակրափողաբորբ
civiliarchy—քաղաքացիավարություն
closing plate—միակցիչ սկավառակ
column of acetabulum—քացախափոսի սյուն
combat—1. մարտ, 2. մարտական
—combat readiness—մարտական

պատրաստություն
—combat training—մարտական պատրաստում
compression fracture—սեղմումային կոտրվածք
confrontational paradigm—առճակատումային հարացույց
convergence—զուգամիտում
corporate body—1. see *corporation,* 2. իրավաբանական անձ
corporation—մեկուսախումբ
corrosive stricture—սպիական նեղացում
democratic setup—ժողովրդավարական կացութաձև
dimension—1. չափում, 2. չափողականություն, 3. մեծություն
dimensionality—see *dimension 2*
divergence—տարամիտում
diverticulum of gullet—կերակրափողի ծոցակ
drug—1. see *medicine 2, 3,* 2. թմրանյութ
echelon—շարակարգ
emotional burnout syndrome—հուզական սպառման համախտանիշ
endotracheal anaesthesia—շնչափողային թմրեցում
epidural analgesia—վերկարծրենային անցավազգայություն
erythronormoblastic anemia—թերգունային սակավարյունություն
esophageal peristalsis—կերակրափողի գալարակծկանք
exaustion—հյուծում
feudal lord—ավատատեր
formatization—ձևաչափում
fractional feeding—մանրահաճախ կերակրում, կոտորակային կերակրում
genealogy—տոհմաբանություն, ծագումնաբանություն
graft—փոխպատվաստուկ
gulp—կլլում
identity—1. նույնականություն, ինքնություն, 2. իսկություն
—ethnic identity—էթնիկական նույնականություն
—transnational identity—վերազգային նույնականություն
image of the Armed Forces—ԶՈՒ-ի կերպարանք
inconsistency—1. անհիմնություն, 2. չկայացածություն
individual—անհատ
individuality—see *personality*
information leakage—տեղեկույթի հոսակորուստ
initialization—կանխապատրաստում
injury—վնասվածք, հաշմություն
—injury of nerve roots—see *injury of radices*
—injury of radices—նյարդարմատների սալջարդ
installation—ներակայում
intramural innervation—ներպատային նյարդավորում
liegeman—see *vassal*
local osteomyelitis—տեղային ոսկրախտ
lymphodissection—ավշահատում
marginalization—եզրահանում
mediastinum—միջնորմ
medicine—1. բժշկություն, 2. դեղորայք, 3. պատրաստուկ
metastasis—ախտօջախավորում
meteopathic reaction—եղանակազգայուն հակազդում
minimization—նվազարկում
mission-type tactics—հանձնարարությունների մարտավարություն
moderator—1. միջնորդ, 2. կարգավորող
mortar—հրասանդ
myelopathy—ողնուղեղախտ
necrosis—մեռուկացում

nonformalized perception—ոչ ձևարկված ընկալում
nozzle—ծայրափողակ
oligarchy—խմբիշխանություն
online mode—միակցված բանելակարգ
osteoporosis—ոսկրածակոտկենություն
percutaneous vertebroplasty—մաշկանց ողնապլաստիկա
person—1. անձ, 2. see *individual*
personality—անձնավորություն
pleuracotomy—see *thoracotomy*
predestination—նախանշանակում
preparation—1. պատրաստում, 2. պատրաստուկ
provider—մատակարարող, մատակարար
pseudosphincter—կեղծ սեղմամկան
purpose—1. նպատակ, 2. նշանակում
radiopaque examination—ռենտգենացայտուն հետազոտություն
realization of choicelessness—ոչ այլընտրանքայնության ըմբռնում
recidivation—ախտաղարձ
reduced format—հատյալ ձևաչափ
regulator—կարգավորող
reinstallation—վերաներակայում
relapse—1. կրկնություն, 2. see *recidivation*
resection—մասնահատում
sepsis—նեխավարակում
septicaemia—see *sepsis*
septum—միջնորմ
structure—1. կառույց, 2. կառուցվածք, 3. սարքապատում
—operational structure—օպերատիվ սարքապատում
—troop structure—զորային կառույց
stump—ծայրատ
thoracotomy—կրծքավանդակահատում
tissue—հյուսվածք
transnationalism—վերազգայնականություն
transplant—see *graft*
transplantate—see *graft*
vassal—ավատառու
xiphisternum—թրաձև ելուն

**ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
*Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Կ. Ս. Մոսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Յու. Ս. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Վ. Ս. Սարգսյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Հ. Ս. Սիսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян*, кандидат психологических наук, доцент;
*Н. У. Аракелян*, академик НАН РА;
*В. М. Арутюнян*, академик НАН РА;
*Г. Е. Багдасарян*, академик НАН РА;
*Г. А. Геворкян*, академик НАН РА;
*Р. Г. Геворкян*, доктор геологических наук, профессор;
*А. А. Манташян*, академик НАН РА;
*Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор;
*М. М. Мириджанян*, доктор медицинских наук, профессор;
*К. С. Мосоян*, доктор технических наук, профессор;
*В. С. Саркисян*, академик НАН РА;
*А. С. Сисакян*, доктор медицинских наук, профессор;
*Ю. С. Чилингарян*, академик НАН РА

**SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumtsian*, Candidate of Psychological Sciences, Docent;
*N. H. Arakelian*, Full Member, NAS RA;
*G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
*Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA;
*H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
*R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
*V. M. Haroutyounian*, Full Member, NAS RA;
*A. H. Mantashian,* Full Member, NAS RA;
*E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;
*M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;
*V. S. Sargsian,* Full Member, NAS RA;
*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Զ. Պետրոսյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*
Տեքստերի թարգմանությունը՝ *Ն. Ս. Մկրտչյանի, Ա. Մ. Մովսիսյանի, Դ. Ս. Չիլինգարյանի, Ք. Վ. Փիրոյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Գ. Ս. Դաղայանի, Վ. Ռ. Խալաֆյանի*
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝
*Մ. Ս. Ավետիսյանի, Ա. Հ. Հակոբյանի*

Լուսանկարչական ապահովումը՝
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:
URL: http://www.mil.am/arm/index.php?page=105
Էլ. փոստ՝ haykakan_banak@mail.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2011 թ.

Ստորագրվել է տպագրության 25.08.2011: Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 264 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 21 մամուլ: Տպաքանակը՝ 375:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի,
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի
և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի
այցը պաշտպանական դիրքեր.

2010 թ. դեկտեմբերի 31

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК НАІКАКАН ВАНАК 1–2 (67–68). 2011